

ՆԵՅՈՒԿ - N:1

ՆՈՐ ԿԵԱՆՔ

Ս.Գ.ԱՆԿՅԱՆ

ՆԻԱՅԻՆ

ԱՐՄԵՆՅՈՒ

ԱՐՈՒՄ

ԱՄՐՈՒՆՅՈՒՆ

ՓԱՅԼԱԿ

ՔՆԱՐ ԽՈՄԻՆԱԿ

Ս. Դ. ԱՎԱԳՅԱՆ

ՂԱՐԱԲԱՂԻ ՄԱՄՈՒԼԻ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(1828—1920)

ԳՄԴ 76.1(2Հ)

Ա.770

Գ Ր ա խ ո ս՝ ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի հայ պարբերական մամուլի և հասարակական մտքի պատմության բաժին

Ավագյան, Ա. Դ.

Ա.770 Ղարաբաղի մամուլի պատմություն (1828—1920)

/Երևանի պետ. համալս.— Եր.: Երևանի համալս հրատ., 1989.— 288 էջ.

Մենագրության մեջ հարուստ փաստերի, արխիվային վավերագրերի ու պարբերական մամուլից բաղած նյութերի միջոցով տրվում է Ղարաբաղի նախախորհրդային շրջանի (1828—1920 թթ.) մամուլի ամբողջական պատմությունը:

4502010000 39—89
Ա. 704(02)—89

ISBN 5—8084—0020—1

АВАКЯН СМБАТ ДАРЧИНОВИЧ
ИСТОРИЯ ПЕЧАТИ КАРАБАХА
(1828—1920)

(на армянском языке)

Издательство Ереванского университета
Ереван—1989

© Ավագյան Ա. Դ., 1989

Ն Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Պատմական Հայաստանի տասնհինգ մեծ նահանգներից մեկն է Արցախ աշխարհը՝ կախարդող բնությամբ, օդ ու ջրով, արգասաբեր հողերով, լեռներով, բուսականությամբ:

Ծուշին՝ Ղարաբաղի նախկին կենտրոնը, ուշագրավ էր ոչ միայն որպես վարչական քաղաք, այլև իր բնակլիմայական պայմաններով: Այս մասին լավ է ասված «Մեղու Հայաստանի»¹ 1858 թ. ապրիլի 12-ի համարում:

Բերդաքաղաք է մեր Ծուշին,
Մեջ Արցախու մեծ նահանգին,
Յերից կողմանց սարք ահագին
Բնությամբ հիմնած են պատ բերդին:

Բարձր է տեղին շատ գեղեցիկ,
Փայռին խորին, պինդ, անառիկ.
Ամռան հով, ձմռան սաստիկ.
Առողջարար օդն քաղցրիկ:

№ 6172

Ղարաբաղի հիմնական բնակիչների հիմեր են. ապրում են նաև ադրբեջանցիներ, հույներ, ուրեմեր և անազգիներ: Անցյալ դարի կեսերին այստեղ ապրում էր 200—250 հազար մարդ: Ծուշին ավելի շատ բնակիչներ ուներ, քան Բարուն: 1862—63 թթ. մարդահամարի տվյալներով հարվում բնակվում էր 14.897 մարդ, Ծուշիում՝ 19.659: Հետագա տարիներին ևս աճում է Ծուշիի և ընդհանրապես Ղարաբաղի բնակչությունը: 1904—1913 թթ. Ծուշիի բնակիչների թիվը՝ 53.100-ից հասնում է 42.700 մարդու:

XIX դարի կեսերից մասնավորապես Ղարաբաղի բնակչության ա-
՝ՔՐ Ե. Stepanak: rt

¹ Քաղաքական, բանասիրական և անկողնակառ այս թերթի (1858—1866 թթ.) էջերում տպագրվել են Ղարաբաղի մասին շատ նյութեր:

«Yunioritet Mesrop Mashtots»
Mesrop Mashtots University
№ 10039
07 11 208P.

ճին մեծապես նպաստում էր վաճառականական աշխույժ ե-
ռուզեռը: Ծուշիում կաշին առևտրական մեծ տներ, որոնք սե-
փական խանութներից բացի, առևտրական կապերի մեջ էին
ոչ միայն Ռուսաստանի, այլև արտասահմանի նշանավոր քա-
ղաքների հետ:

Ծուշեցիները հաճախ էին երևում Թավրիզում, անգլիական
և ֆրանսիական շուկաներում: Եվ եթե 1850—1860-ական թվա-
կաններին Ծուշիի վաճառականը հետամնաց ձևերով էր առև-
տուրը կազմակերպում, ապա հետզհետե նա առաջադիմում է,
ընդարձակում գործունեության ոլորտը՝ վաճառքի հանելով ըն-
տիր ապրանքներ: Ահա թե ինչ է գրում այս մասին «Մշակ»²
թերթը. «Մի երեսուն տարի արանից առաջ (խոսքը 1850—
60-ական թվականների մասին է.— Ս. Ա.) Ծուշու վաճառա-
կանն այլ տիպ էր ներկայացնում, շատ բաներում զանազան-
վում էր այսօրվա առևտրականներից: Տարվա 9 ամիսը նա
իր խանութումն էր, իսկ ամառը հասնելուն պես, նա նստում
էր իր ձին, ձիու գավակին էր գցում հին «աքբասիներով» լի-
քը «հաբգեան» և կարավանով, երբեմն առանձին, ուղևորվում
էր դեպի Ատրպատականի մայրաքաղաք Թավրիզը... Սահ-
մանի վրա մեր վաճառականը թեթև մաքս վճարելուց հետո
բերում էր Թավրիզից Ծուշի անգլիական և ֆրանսիական հա-
մեմատաբար էժանագին ապրանքներ, դարսում էր իր խա-
նութի մեջ և սկսում էր իր առևտուրը»³:

Ծուշու վաճառականական դասը գերիշխող դեր ուներ Ղա-
րաբաղում: Քաղաքի ամեն մի անկյունում կարելի էր տեսնել
իր գործով զբաղված խանութպանի ու առևտրականի: Ծուշին
իջևան էր դարձել նաև ոչ ղարաբաղցի վաճառականների հա-
մար: Այստեղ էին գալիս ու այստեղով գնում Ռուսաստանի և
արտասահմանի շատ առևտրականներ:

Ծատ շատերն են հիացել Ղարաբաղով, մասնավորապես՝
Ծուշիով: Այստեղ այցելել են մեծահամբավ հայ, օտարազգի-

² «Մշակը» 1872—1921 թթ. հանգամանորեն լուսարանել է Ղարաբաղի
կյանքը: Գրեթե յուրաքանչյուր համարում կարելի է կարդալ թղթակցու-
թյուն, նամակ, երբեմն հո.ված՝ գրված Ծուշու կամ Ղարաբաղի այլ բնա-
կավայրերի մասին: Ղարաբաղին նվիրված նյութերի հեղինակները տեղա-
ցիներ էին՝ տարբեր աշխատանքի տեր մարդիկ, որոնք մտահոգված էին
հարազատ երկրամասի բախտով:

³ «Մշակ», 1890, սեպտեմբերի 1:

գիտնականներ: Ծուշու մասին գրած հուշերում բացառիկ ջեր-
մությամբ է խոսում Հր. Աճառյանը. «Երբ բարձրանում ես
բարձունքի գլուխը, որ տեղական բարբառով «քերծ» կամ «քեր-
ծեր» է կոչվում,— առաջդ բացվում է հոյակապ մի տեսարան:
Աջդ, ձախդ և հետևդ բարձր բլուրներ են, ծածկված կարճա-
հասակ անտառներով, որոնք սև գույն ունեն և սրա համար էլ
երկիրը կոչվել է Ղարաբաղ, այսինքն՝ «սև այգի»⁴: Այնու-
հետև մեծ գիտնականը ընթերցողին ներկայացնում է Ծուշիի
քարաշեն, գեղեցիկ տները, փողոցները, տեսարանները և
այլն:

Հայտնի հայագետ Ստ. Մալխասյանցը իր «Խորենացու
առեղծվածի շուրջը» ուսումնասիրության մեջ գրել է. «Եթե
թույլ կտրվի՝ կավելացնեն և մի գիծ Խորենացու բնութագրու-
մից: Նա հայտնի է իր խիզախ, համարձակ բնավորությամբ,
հոգեկան արիությամբ: Նույն այս գործերով հնուց ի վեր բնո-
րոշվում է Լեոնային Ղարաբաղի հայ ժողովուրդը, որին կոչում
են «Քաջ ղարաբաղցի»⁵:

Ղարաբաղի աշխատավորության բարձր արժանիքները
հիանալի են ներկայացված Ռաֆֆու աշխատություններում
(«Դավիթ Բեկ», «Խամսայի մելիքությունները», «Ջրաբերդը»,
«Երկու ամիս Աղվանից և Սյունյաց աշխարհում» և այլն): Մու-
րացանը, առանձնապես «Ռուզանում», հերոսական գծերով
մարմնավորել է ղարաբաղցի կնոջ կերպարը, նրա խոհակա-
նությունը և հարուստ ներաշխարհը:

Խորհրդահայ ստեղծագործողները ևս (Ս. Գրաշի, Լ. Հու-
րունց, Բ. Ուլուբաբյան, Մ. Հարությունյան, Ս. Աբրահամյան
և ուրիշներ) իրենց գործերում վերարտադրել են Ղարաբաղի
անցյալն ու ներկան, նրա ժողովրդի կյանքը: Այսօր էլ քիչ չեն
այն գրողները, որոնք ապրում են հայրենի եզերքում և գե-
ղարվեստական խոսքի ուժով դրվատում Ղարաբաղը (Վ. Հա-
կոբյան, Գ. Գաբրիելյան, Մ. Հովհաննիսյան, Հ. Բեգլարյան,
Գ. Հովսեփյան և ուրիշներ):

Լեոնային այդ երկրամասը գրավել է նաև ռուս և այլազգի
գրողների: Ա. Ս. Պուշկինը չի եղել Ղարաբաղում, սակայն

⁴ Հ. Աճառյան, «Կյանքիս հուշերից», Ե., 1967, էջ 254:

⁵ Ստ. Մալխասյան, «Խորենացու առեղծվածի շուրջը», Ե., 1940, էջ
147:

ծանոթ էր դարաբաղցիներին: 1829 թ. մասնակցելով ռուս-թուրքական պատերազմին, Արգրումի մոտ կայացած ռազմական գործողությունների ժամանակ նա ականատես եղավ դարաբաղցի հայորդիների քաջագործություններին: Այդ առթիվ «Ճանապարհորդություն դեպի Արգրում» գրքում մեծ բանաստեղծը անմահացրել է դարաբաղցիներին. «Հունիսի 17-ին առավոտյան մենք նորից լսեցինք հրաձգության ձայներ և երկու ժամ հետո տեսանք դարաբաղցյան գունդը, որը վերադառնում էր ութ թուրքական դրոշակներով»⁶:

Ղարաբաղը հրապուրել է նաև ռուս մեծ բանաստեղծ Մ. Յու. Լերմոնտովին: Նա տարբեր առիթներով իր հիացմունքն է արտահայտել հատկապես Շուշու լեռնաշխարհի, նրա գեղեցիկ բնության և մարդկանց մասին: 1837 թ. Ս. Ա. Ռուսկոյն հրաձգում և մահկանացի է դառնում, որ ինքը եղել է Շուշիում, գիշերել է բաց դաշտում, զմայլվել նրանով:

Գերմանացի, անգլիացի և այլազգի նշանավոր գրողների, հասարակական-քաղաքական գործիչների ու գիտնականների աշխատություններում⁸ առանձին սիրով է խոսվում Ղարաբաղցիների հայրենանվեր գործերի մասին:

Այլազգի նշանավոր գործիչները կապ էին հաստատում Ղարաբաղի հետ: Հայտնի է Պետրոս Առաջինի ջերմ վերաբերմունքը շուշիքենդցի եղբայրներ Հովհաննեսի (Իվան-Կարապետի) և Ղուկասի նկատմամբ, որոնք քիչ ջանքեր չեն գործադրել Անդրկովկասը պարսկա-թուրքական բռնակալությունից ազատագրելու և Ռուսաստանին միացնելու համար:

Մեծ էր ռուս ականավոր գորավար Ա. Վ. Սուվորովի հետաքրքրությունը Ղարաբաղով: Դեռևս XVIII դարի երկրորդ կեսից նա շատ լավ գիտեր Հովհաննես Լազարևին (1735—1801), Հովսեփ Արղությանին (1743—1801) և նշանավոր այլ գործիչների, նամակագրություն է ունեցել նրանցից մի քանիսի հետ:

Ղարաբաղը դարերի խորքից իր հետ բերում է հոգևոր

մշակույթի գանձեր: Ամարասի (IV դարի սկիզբ), Գոշա, Խոթա կամ Դատիի (VI դար), Գանձասարի (XIII դարի սկիզբ) և ուրիշ վանքեր իրենց հրաշալի գեղաբանդակներով, ճարտարապետական հնարքներով և կառուցվածքի վեհությամբ հիացնում են դիտողին: Նշանակալից կոթողներ կան երկրամասի առանձին բնակավայրերում: Դրանք կառուցված են սրբատառ քարերից, ունեն պարիսպներ, ստորգետնյա անցուղիներ: Ծառերը բերդեր են՝ կաղնու դարպասներով, տուն-ամրոցներ՝ նրբաբանդակ նախշերով:

Սակայն դարերի ընթացքում Արցախը դարձել է նաև պատերազմների թատերաբեմ: 1795 թ. Իրանի շահի զորքերի արշավանքը դեպի Վրաստան ավելի է բարդացնում Անդրկովկասի ժողովուրդների վիճակը: Նրանց գլխին կախվում է ֆիզիկական բնաջնջման վտանգը: Թշնամին չի բավարարվում Թիֆլիսի ավերումով և շարժվում է դեպի Շուշի, սակայն Ղարաբաղի աշխատավորները արժանի հակահարված են տալիս:

Օտարերկրյա զավթիչների անընդհատ ասպատակությունները, արտաքին թշնամիների սպառնալիքներն ու ստրկական լուծը չեն կոտրել արցախցիների կամքը: Ավելին, առաջադեմ գաղափարների տեր մտավորականները համոզվել են, որ վաղ թե ուշ հույսը պետք է կապել ռուս մեծ ժողովրդի հետ: 1805 թ. Ղարաբաղը միանում է Ռուսաստանին: Նույն տարում ռուսական տիրապետության մեջ են մտնում Հայաստանի մի քանի շրջաններ՝ Չանգեզուրը, Լախանը, Մեղրին:

Ղարաբաղի միավորումը Ռուսաստանին խոշոր իրադարձություն էր երկրամասի պատմության մեջ, թեև ցարական բռնակալությունը, միապետական դաժան օրենքներն ու ազատ մտքի բռնադատումը օրվա ողեկիցներ էին հատկապես հայերի համար:

Հայտնի է, որ Անդրկովկասի ժողովուրդները ռուսների հետ վաղուց են քաղաքական, տնտեսական, մշակութային կապեր հաստատել: Ծառերը բարձրագույն կրթություն էին ստանում Ռուսաստանում, ջերմ բարեկամություն հաստատում ռուս գրողների, արվեստագետների ու քաղաքական գործիչների հետ:

XIX դարի սկիզբը մի կողմից նշանավորվում է Ռուսաստանին Ղարաբաղի միացումով, մյուս կողմից՝ խուլ ու հետամնաց զավառում հրատարակչական-դպրոցական գործի հիմ-

⁶ Ս. Պուշկին, Երկեր 5 հատորով, հ. 5, Ե., 1960, էջ 43:
⁷ Տե՛ս Մ. Յու. Լերմոնտով, Երկերի ժողովածու, հ. 4, 1958, էջ 450:
⁸ Հատկապես հայտնի է Մագդա Նելմանի «Армяне» աշխատությունը, որը լույս է տեսել 1899 թ. Ս. Պետերբուրգում: Հեղինակը մեծ ոգևորությամբ է պատկերում մասնավորապես արցախահայերի բարեմասնությունները:

նադրումով: Ղարաբաղում գրատպությունն ավելի վաղ է սկսվում, քան անդրկովկասյան հայաբնակ մեծ վայրերում: Եթե առաջին գիրքը այստեղ հրատարակվում է 1828 թվականին, ապա Բաքվում՝ 1872 թ.:

Դեռևս անցյալ դարի երկրորդ կեսից Շուշին դառնում է հայ մշակույթի կարևոր օջախներից մեկը: Ցարական ինքնակալության դաժան պայմաններում էլ լուսավոր միտքը հետըզհետե ընդգրկում է նոր ոլորտներ: 1874—1920 թթ. գավառում հրատարակված պարբերականների թիվը հասնում է 21-ի (19-ը՝ հայերեն, 2-ը՝ ռուսերեն): Լույս տեսած պարբերականներից մի քանիսը աշակերտական էին, որ ծնունդ էին առել հեղափոխության վերելքի տարիներին: Ուշագրավ էին հատկապես «Հայկական աշխարհ», «Գործ», «Ծիածան» հանդեսները, «Նեցուկ», «Փայլակ» և այլ թերթերը:

Մինչև այժմ հրապարակի վրա չկա Ղարաբաղի նախախորհրդային շրջանի մամուլի պատմությանը նվիրված որևէ աշխատություն, որը ցույց տա հրատարակչական գործի սկզբնավորումը, տարբեր տպագիր օրգանների ստեղծումը, նրանց կատարած դերը, հրատարակիչների ու առանձին հրապարակախոսների աչքի ընկնող ծառայությունները:

Իհարկե, կան ուսումնասիրություններ, որոնք անուղղակի կերպով առնչվում են Ղարաբաղի նախախորհրդային շրջանի մամուլի պատմությանը, հարևանցիորեն նշում տպագրական գործի սկզբնավորման և առանձին տպարանների մասին: Հարուստ փաստեր են բովանդակում մասնավորապես բազմաթեղուն գիտնական Լեոի մի քանի աշխատությունները⁹: Թեոդիկը¹⁰, անդրադառնալով հայ տպագրության առաջին օջախներին, հիշատակում է Շուշիում գործող տպարանները և նրանցում տպագրված մի քանի գրքերի անունները:

Առանձին հետազոտողներ վերջին ժամանակներս իրենց աշխատություններում անդրադարձել են Ղարաբաղում լույս տեսած երկու-երեք պարբերականի և մեկ գրական ժողովածուի հակիրճ բնութագրմանը: Ա. Ս. Պուշկինի մահվան 100-ամյակի առթիվ ՀԽՍՀ պատմության և գրականության ինս-

⁹ Տե՛ս Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, 1838—1913, Թիֆլիս, 1914, Անցյալից, Թիֆլիս, 1925 և այլն:

¹⁰ Տե՛ս Թեոդիկ, Տիպ ու տառ, Կոստանդնուպոլիս, 1912:

տիտուտի հրատարակած ժողովածուում¹¹, ինչպես նաև «Հայ նոր գրականության պատմության» երրորդ հատորում¹² շատ սեղմ կերպով խոսվում է 1881 թ. Շուշիում տպագրված «Բնար խոսնակի» մասին: Խ. Բարսեղյանը ներկայացնելով հայ բուլշևիկյան պարբերական մամուլի ամբողջական պատմությունը¹³, համատոտակի անդրադառնում է նաև «Նեցուկ» թերթի գործունեությանը: Հայկական ԽՍՀ ԳԱ հրատարակած ժողովածուում¹⁴ Մ. Մխիթարյանը հատուկ հոդվածով հանդես է եկել «Գործ» հանդեսի մասին: Հեղինակը առաջին անգամ փորձ է արել ցույց տալ հանդեսի կատարած դերը, նշելով որոշ մանրամասնություններ նրա հրատարակման, հետագա գործունեության և հրատարակչի գործադրած ջանքերի վերաբերյալ:

Ս. Սարինյանի գրչին է պատկանում «Հայ նոր գրականության պատմություն» երրորդ հատորի ներածականը: Խոսելով XIX դարի 70—80-ական թվականների հայ հասարակական կյանքի, մշակույթի և գրականության մասին, հեղինակը համատոտակի բնութագրում է «Գործ» հանդեսի խաղացած դերը և նրա խմբագիր Ս. Հախումյանի հայացքները: Մ. Մաշտոցի ծննդյան 1600-ամյակի և հայ տպագրության 450-ամյակի առթիվ Ա. Բաբայանի հրատարակած գրքուկի¹⁵ «Հայ տպագիր գիրքը» բաժնում սեղմ տեղեկություններ են հաղորդվում Շուշիում տպագրական գործի սկզբնավորման, առանձին գրքերի հրատարակման և տպարանների գոյության մասին:

Շուշիում տպագրական գործի սկզբնավորման և հետագա որոշ քայլերի մասին խոսում է նաև Գարեգին Լևոնյանը իր աշխատություններում¹⁶: Նա ընդգծում է, որ Թիֆլիսից հեռու հայ տպագրական գործում Անդրկովկասի քաղաքների մեջ ամենանշանակալից դերը խաղացել է Շուշին¹⁷, որ անցյալ

¹¹ Տե՛ս Ա. Ս. Պուշկին, Ե., 1973:

¹² Տե՛ս «Հայ նոր գրականության պատմություն», III հատ., Ե., 1964:

¹³ Տե՛ս Խ. Հ. Բարսեղյան, Բուլշևիկյան հայ պարբերական մամուլի պատմություն (1900—1920 թթ.), Ե., 1956:

¹⁴ Տե՛ս «Հայ պարբերական մամուլի պատմությունից», Ե., 1963:

¹⁵ Տե՛ս Արամ Բաբայան, Հայ գիրքն ու տպագրությունը, Ե., 1933:

¹⁶ Տե՛ս Գարեգին Լևոնյան, Հայոց պարբերական մամուլը, Ե., 1934,

Հայ գիրքը և տպագրության արվեստը, Ե., 1958 և այլն:

¹⁷ Տե՛ս Գ. Լևոնյան, Հայ գիրքը և տպագրության արվեստը, Ե., 1958,

դարի 20-ական թվականների երկրորդ կեսից սկսած առաջադիմում է հրատարակչական գործը:

Սակայն Գ. Լևոնյանի հայտնած որոշ տեղեկություններ ոչ միայն կոնկրետ չեն, այլև կարիք են զգում ճշգրտումների: Նա նշում է, որ «1880-ական թվականների սկզբից Շուշիում բացվում է նոր, արագատիպ տպարան Միրզաշան Մահտեսի-Հակոբյանի»¹⁸, բայց կոնկրետ չի ասում, թե որ թվականին սկսեց գործել այն: Արխիվներից և առանձին մարդկանց հուշերից քաղված տվյալների համաձայն Մ. Մահտեսի-Հակոբյանի տպարանը Շուշիում հիմնադրվել է 1881 թվականին, որի բեղմնավոր գործունեության մասին շեշտվում է աշխատության համապատասխան բաժնում:

1828—1850 թթ. Շուշիում հրատարակված գրքերի վերաբերյալ առավել ճշգրտված տեղեկություններ է հաղորդել Հակոբյանը իր վերջին մասնագիտական ուսումնասիրության¹⁹ մեջ: Հեղինակի նպատակն է եղել տալ տարբեր վայրերում հրատարակված հայ գրքերի անունները (շեշտելով՝ թարգմանությունն է, թե՞ ինքնուրույն), տպագրության վայրը, թվականը, էջերի քանակը, շարվածքի չափը և այլն: Ցույց է տրվում նաև, թե տվյալ գիրքը այժմ որտեղ է պահպանվում:

Հեղինակի տվյալներով 1828—1850 թթ. Շուշիում լույս է տեսել տարբեր բնույթի 31 գիրք: Բավականին պակաս է տրված այս թիվը: Ըստ նրա, Շուշիում 1841—1850 թթ. լույս չի տեսել և ոչ մի գիրք: Բայց հայոց հոգևոր դպրոցի մյուս տպարանները շարունակում էին գործել: Ըստ երևույթին այդ և այլ տարիներին հրատարակված գրքերի մի զգալի մասը կամ չի պահպանվել արխիվներում, գրադարաններում, կամ էլ ուղղակի դեռ չի հայտնաբերված:

Ցավոք, պետք է նշել, որ Ղարաքաղի, մասնավորապես Շուշիի պատմությանը նվիրված մի շարք գրքերում նկատելի են սուբյեկտիվիզմ, պատմական փաստերի աղավաղումներ ու խեղաթյուրումներ: Այդ կարգի գրքերից է Ֆիրիդուն Շուշիակու «Շուշանը» (ոուսերեն), որը 1968 թ. հրատարակեց Ադրբեջանի պետական հրատարակչությունը: Հեղինակը, մասնագետ չլինելով, ճիշտ չկողմնորոշվելով իրադարձությունների և փաս-

¹⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 229:

¹⁹ Տե՛ս Հ. Դավթյան, Հայ գիրքը 1801—1850 թվականներին, Ե., 1967:

տական նյութի գիտական շրջանառության մեջ, տարվել է առանձին անձնավորությունների կենսագրական տվյալներով, որոնք, ինչ խոսք, շահեկան են իր իսկ միտումներին: Միայն կերպով շեշտելով, որ Շուշին հիմնել է Փանահ-խանը, Ֆ. Շուշիակուն երկրորդական «փաստերին» դիմելով, ձգտել է ներկայացնել այն, ինչ հեռու է իրականությունից: Նա միտումնավոր չի օգտվել հայ և օտարալեզու աղբյուրներից, որոնք բոլորովին այլ կերպ են ներկայացնում Շուշին և ընդհանրապես նախախորհրդային Ղարաքաղը:

Մի կողմ թողնելով գրքի կուպիտ սխալներն ու աղավաղումները, որոնք դուրս են մեր աշխատության նպատակներից, նշենք միայն հեղինակի անտեղյակությունը Ղարաքաղի պարբերական մամուլի պատմությանը: Իր գրքի 74-րդ էջում նա նշում է, որ 1913 թ. սկսած Շուշիում ոուսերեն հրատարակվել է «Շուշիակալս ժիզն» թերթը, ոչինչ չասելով երկու տասնչափից ավելի հայ և ուս պարբերականների, մասնավորապես 1917 թ. լույս տեսած բուշակիյան «Նեցուկ» թերթի մասին:

Ի դեպ, այս խոշոր թերություններն անտեսել են նաև գրքի գրախոսները: Հեղինակը, ըստ երևույթին, չկարողանալով օգտվել աղբյուրներից, իրեն նեղություն չի տվել գոնե առանձին մասնագետների օգնությամբ արխիվներից և հրապարակում եղած գրականությունից նյութեր քաղել այն մասին, որ Շուշիում ոչ միայն վաղ է սկսվել հրատարակչական գործը, այլև նրա առաջադեմ մարդիկ ձգտել են հիմնել տպագիր օրգաններ և դրանց միջոցով կուլտուրական աշխատանք կատարել աշխատավորների շրջանում:

Պատմական փաստերի անտեսումն ու աղավաղումը, իսկ երբեմն էլ դրանք սուբյեկտիվորեն ներկայացնելը բացահայտորեն ապակողմնորոշել են ընթերցողներին:

Մեր նպատակն է եղել հասարակական-քաղաքական ֆոնի վրա տալ Ղարաքաղի գրեթե մի ամբողջ հարյուրամյակի (1828—1920 թթ.) մամուլի պատմությունը՝ ընդգրկելով ոչ միայն թերթերի, ամսագրերի և հանդեսների գործունեությունը, այլև հրատարակչական գործը, գրատպությունը, առանձին գրքերի երևան գալու շարժառիթները և այլն:

Մամուլի տարբեր օրգանների մասին խոսելիս շեշտը դրվում է ոչ միայն հրապարակված նյութերի վերլուծության և ժանրային կողմի վրա, այլև մատնանշվում են տվյալ պարբե-

քականի լուսավոր ու ստվերոտ կողմերը, խմբագրի և ակտիվ աշխատակիցների հաշտեցնելը:

Որոշ նյութերի վերլուծության առնչությամբ բնութագրվում են նաև քաղաքական հոսանքները, դրանց նպատակը, տպագիր օրգանները:

Մենագրական աշխատանքը կառուցված է որոշակի սկզբունքով և համակարգով: Մի ամբողջ հարյուրամյակի նյութերը մեծ դժվարություններ են հարուցել՝ պրոբլեմատիկ հարցերը առանձին-առանձին ներկայացնելու: Անխուսափելի են որոշ կրկնությունները, որովհետև տարբեր ժամանակահատվածներում պարբերական մամուլում արձարծված հարցերի մի զգալի մասը եղել է նույնը:

Աշխատության մեջ առանձին բաժին ենք տրամադրել Ղարաբաղի նախախորհրդային շրջանի պարբերական մամուլի որոշ առանձնահատկությունների, լրագրային ժանրերի, նյութերի կառուցվածքի, փաստերի օգտագործման, լեզվատնական առանձնահատկությունների լուսաբանմանը:

Քննարկել ենք նաև մամուլի, մասնավորապես գրքերի ու թերթերի ձևավորման մի քանի հարցեր՝ շեշտը դնելով՝ այն քանի վրա, թե ինչ սկզբունքով է կատարվել տեքստերի ձևավորումը, ինչ նպատակամղում են ունեցել դրանք, արդյո՞ք ուսանելի որևէ բան կա այսօր Ղարաբաղի նախախորհրդային շրջանի մամուլի, խմբագրական-հրատարակչական աշխատանքի պրակտիկայում:

Եվ ընդհանրապես, նշենք, որ մեր նպատակը չի եղել միայն ստատիկ վիճակում ներկայացնել Արցախի մամուլի պատմությունը, այլ նաև ցույց տալ, թե վերջին հաշվով, այս երկարամյա շրջանը մեր արդի լրագրությանը ի՞նչ նյութեր է մատակարարում, խմբագրական և հրատարակչական աշխատանքի ի՞նչ կարևոր կողմեր կան, որ պետք է յուրացնել:

Մույն աշխատության ստեղծման համար որոնումներ ենք կատարել ԽՄԿԿ Կենտկոմին ստղծած մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական, ադրբեջանական, վրացական մասնաճյուղերում, Մոսկվայի Վ. Ի. Լենինի անվան Կենտրոնական գրադարանում, անդրկովկասյան հանրապետությունների պետական արխիվներում ու գրադարաններում, գիտական հիմնարկների ֆոնդերում, թանգարաններում, Երևանի Մ. Մաշտոցի անվան գիտահետազոտական ինստիտուտում (Մատն-

նադարան), գրուցել ենք առանձին մարդկանց հետ, ովքեր մինչև խորհրդային շրջանը ակտիվորեն մասնակցել են Շուշիում հրատարակվող պարբերականների, գրական-գիտական ժողովածուների լույս ընծայմանը, բուլեթենային կազմակերպությունների և առանձին հայրենագուտ ընկերությունների աշխատանքին, պայքարել են Ղարաբաղում խորհրդային իշխանության հաղթանակի համար:

Օգտագործել ենք նաև տարբեր գործիչների հուշերը և առանձին հեղինակների անտիպ ուսումնասիրությունները: Սակայն, երկար տարիների պրպտումներից հետո, մեզ չի հաջողվել լիովին հայտնաբերել Ղարաբաղում լույս տեսած բոլոր տպագիր օրգանների համալիրները: Այսպես, Գ. Լևոնյանն իր «Հայոց պարբերական մամուլը» մատենագիտական աշխատության մեջ նշում է, որ 1914—1917 թթ. Շուշիում լույս է տեսել «Պաշար» քաղաքական թերթը: Երկրի ոչ մի գրադարանում, արխիվում, գիտահետազոտական ինստիտուտում կամ առանձին մարդկանց մոտ չենք կարողացել հայտնաբերել նրա որևէ համարը, ժամանակակիցներից ոչ մեկը գոնե չի հավաստում, որ այդպիսի թերթ էղել է Ղարաբաղում: Մեր կարծիքով, Գ. Լևոնյանն էլ չի տեսել այդ թերթը, քանի որ իր գրքում չի տվել նրա ճակատը, չի շեշտել (ինչպես մյուս պարբերականների դեպքում) խմբագրի ազգանունը, տպարանը, լույս տեսած համարների, էջերի քանակն ու չափը: Գրեթե նույն բանը կարելի է ասել «Աշխատանքի» (Շուշի, 1917), «Ասպարեզի» (Շուշի, 1917) մասին:

Այնուամենայնիվ, Գ. Լևոնյանի ասածը մտահոգում է, ուստի մեր հետազոտական պրպտումները կշարունակվեն «Պաշարի» և մյուս պարբերականների հայտնաբերման համար:

Վերը նշված երեք թերթերի համալիրները ձեռքի տակ չի ունեցել նաև Հ. Պետրոսյանը իր «Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիայի» երկրորդ հատորը (Երևան, 1957) կազմելիս, քանի որ նա ոչ մի նոր փաստ չի ավելացնում Գ. Լևոնյանի հաղորդածին: Ընդհակառակը, Հ. Պետրոսյանը «Պաշարի» մասին հայտնած երկու փաստերից մեկը կրճատում է. այն չի անվանում քաղաքական թերթ, այլ բավարարվում է միայն գրելով՝ «Պաշար», Շուշի, 1914—1917 թթ.»:

Սղավադումներ ու խեղաթյուրումներ կան «Հայ պարբերական մամուլի մատենագրության (1794—1967)» համահա-

վաք ցանկում, որ լույս տեսավ 1970 թ. Երևանում: Համահավաք ցանկի կազմող Ա. Կիրակոսյանը ջանադիր աշխատանք է կատարել՝ ի մի բերելով մատենագիտական տեղեկությունները հայ պարբերական մամուլի առաջնեկից՝ «Ազդարարից» մինչև մեր օրերը լույս տեսնող թերթերի, ամսագրերի և հանդեսների վերաբերյալ: Թեև անճշտություններն ու բացթողումներն անխուսափելի էին, այնուամենայնիվ, առավել բարեխիղճ լինելու դեպքում աշխատությունը չէր հրատարակվի նման վիճակում: Մի կողմ թողնելով այն անճշտությունները, որոնք վերաբերում են Խորհրդային Ղարաբաղի պարբերական մամուլին, մի երկու փաստով նշենք միայն, թե ինչ սխալներ ենք նկատել մինչև «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզ» հռչակման շրջանում լույս տեսած պարբերականների վերաբերյալ: Նախ, «Ղարաբաղի գեղջուկը» չի եղել Ղարաբաղի մարզային կոմիտեի օրգանը, որովհետև, երբ թերթը սկսեց լույս տեսնել, ինքնավար մարզ դեռ չէր ստեղծվել, երկրորդ, «Ղարաբաղի սուրհանդակը», որ ունեցել է միայն մեկ համար, եղել է «Ժողովրդական կառավարության» պաշտոնական օրգանը:

Գրականության մեջ և դիսերտացիոն աշխատություններում մինչև 1965 թվականը հիշատակվում էր, որ Ծուշու բուլձևիկների օրգան «Նեցուկը» ունեցել է ընդամենը յոթ համար: Պարզել ենք, որ որոշ ընդմիջումից հետո լույս է տեսել նաև ութերորդ համարը: Այս մասին հատուկ հոդվածով հանդես ենք եկել «Երեկոյան Երևան» թերթում՝ «Հայ բուլձևիկյան օրգանի նորահայտ համարը» վերնագրով²⁰: Սակայն, չգիտես ինչու, «Հայ պարբերական մամուլի մատենագիտության» մեջ նորից շեշտվում է թերթի յոթ համարի հրատարակությունը: Ուղղակի չի նշվում նաև, որ «Նեցուկի» խմբագիր-հրատարակիչը եղել է ականավոր պատմաբան և հասարակական-քաղաքական գործիչ Ա. Հովհաննիսյանը:

Միայնակ կան նաև թերթերի ու հանդեսների պարբերականության մասին հայտնած տեղեկություններում: Օրինակ, շեշտվում է, որ «Ազգագրական հանդեսը» լույս է տեսել սկզբում կես ամիսը, ապա՝ երեք ամիսը մեկ անգամ: Այնինչ հայտնի է, որ այն սկզբում և բավական երկար ժամանակ

հրատարակվել է տարեկան մեկ անգամ՝ ծավալուն գրքի չափով:

Մամուլի պատմության հետազոտողներից գրեթե ոչ մեկը չի վերծանել որոշ ծածկանուններ, որոնց ստորագրությամբ հեղինակները հանդես էին գալիս Ղարաբաղի տարբեր պարբերականներում:

Աշխատության համապատասխան բաժնում ցույց ենք տվել, թե ովքեր են «Փայլակում» «Ա.», «Ս. Դ.», «Սուր-Դան», «Նաուման», «Նիմանդ», «Մ. Ե.», «Մելիք. Ե.», «Նորայր» և այլ ծածկանուններով հանդես եկողները, հաղորդելով կենսագրական համատոտակի տվյալներ:

Պարզված են նաև ուսական պարբերականներում տպագրված մի քանի նյութերի հեղինակները («Ծուշինակի լիստուկում» «Ծ. Ս.-Կ.», «Ծուշինակայա ժիզնում»՝ «Si», «C», «Обозреватель» և այլն):

Իհարկե, այս ամենը չի նշանակում, թե մեր աշխատանքն այս ուղղությամբ ավարտված է և այլևս որոնումներ կատարելու կարիք չկա:

Դեռևս որոշակիորեն ճշտված տեղեկություններ չկան բոլոր աչքի ընկնող լրագրողների և ակտիվ թղթակիցների մասին: Այդ բանին խոչընդոտել են երկու հանգամանք. նախ, չի պահպանվել Ծուշու հարուստ արխիվը և երկրորդ, գործ ենք ունեցել մինչխորհրդային շրջանի արխիվային փաստաթղթերի հետ, որոնցից շատերը կամ չեն պահպանվել, կամ էլ գտնվում են մեզ անհայտ առանձին անձանց մոտ:

²⁰ Տե՛ս թերթի 1965 թ. հունվարի 7-ի համարը:

ԼՈՒՍՍՎՈՐՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ ՈՒ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ

Մինչև տպագրության գյուտը մարդկային մտքի արգասիքը սերունդներին էր փոխանցվում մասնավորապես ձեռագիր գրքերի միջոցով: Հայերը առաջիններից էին, որ արագորեն ձեռք մեկնեցին տպագրական գործին: Առաջին հայ գիրքը լույս տեսավ 1512 թվականին, Վենետիկում: Այն տպագրեց Հակոբ Մեղապարտը: Այնուհետև հանդես եկան նոր տպագրիչներ (Աբգար Թոքատեցին, Հովհաննես Տերզեանցին, Հովհաննես Անկյուրացին, Նահապետ Ագուլեցին և ուրիշներ), որոնք ձգտեցին աշխուժացնել տպագրական գործը Վենետիկում:

Մեկը մյուսի ետևից տպարաններ ստեղծվեցին Կ. Պոլսում, Լվովում, Հոռոմում, Միլանում, Փարիզում, Նոր Զուղալում, Ամստերդամում, Զմյուռնիայում, Լաչպցիզում և այլուր:

1772 թ. տպագրական եռանդուն աշխատանք է ծավալվում հատկապես Հնդկաստանում: Միխթարյանները 1776 թ. Տրիեստում և 1788 թ. Վենետիկի Ս. Ղազար կղզում հայերեն և այլ լեզուներով հրատարակում են հալոց լեզվին, գրականությանը և պատմությանը վերաբերող մի շարք արժեքավոր աշխատություններ:

Լայն տարածում է ստանում նաև լրագրության գործը: 1794 թ. հոկտեմբերի 16-ին Հնդկաստանի Մադրաս քաղաքում ծնվում է հայ առաջին թերթ-պարբերականը՝ «Ազդարարը», որի խմբագիր-հրատարակիչը Հարություն Ծմավոնյանն էր: Վե-

նետիկում 1799 թ. լույս է տեսնում «Տարեգրությունը», 1803 թ.՝ «Եղանակ բյուզանդյանը», 1807 թ.՝ «Հիշատակարանը», 1812 թ.՝ «Դիտակ բյուզանդյանը» և այլն: Ռուսաստանում ևս վաղ է սկսվում տպագրությունը: 1564 թ. հրատարակվում է ռուսերեն անդրանիկ գիրքը՝ «Առաքելոցը» («АПОСТОЛ»): Տպագրիչը Իվան Ֆյոդորովն էր: 1702 թ. Ռուսաստանում լույս է տեսնում առաջին թերթը՝ «Ведомость»-ը: Այս գործում մեծ ջանքեր է գործադրում Պետրոս Առաջինը: Նրա օրոք տպագրվում են նաև ուսումնական ձեռնարկներ դպրոցների համար: Մեծ աշխատանք է կատարում գիտությունների ակադեմիային Կից 1728 թվականից գործող տպարանը:

Տպագրական գործը ավելի լայն ծավալ է ընդունում XVIII դարի 60—80-ական թվականներին: Մոսկվայի համալսարանի՝ 1756 թ. մարտից ստեղծված տպարանում պարբերաբար լույս են տեսնում ոչ միայն գիտական աշխատություններ, այլև առանձին գրական ստեղծագործություններ՝ ռուս հայտնի գրողների գործերից:

Ռուսական պետության մեջ հայկական տպարաններ են ստեղծվում Պետերբուրգում, Մոսկվայում, Նոր Նախիջևանում, Թիֆլիսում, Էջմիածնում, Ծուշիում և այլուր: Առաջինը գործում է 1771 թ.՝ Էջմիածնում, այնուհետև 1783 թ. Պետերբուրգում: Վերջինիս տերը հարուստ վաճառական Գրիգոր Խալդարյանն էր, որի օրոք այստեղ լույս է տեսնում տասներեք տարեկան գիրք: 1789 թ. Նոր Նախիջևանի Ս. Խաչ վանքին Կից ստեղծվում է տպարան, որտեղ հիմնականում հրատարակ են գալիս կրոնական բովանդակությամբ գրքեր:

Սակայն XVIII դարի վերջերին հրատարակչական գործի առաջընթացը նշանակալից շեղվեց փակվում են մասնավոր տպարանները, սահմանափակվում են տպագրիչների հնարավորությունները, բավական կրճատվում է տպագրվող գրքերի, թերթերի, ամսագրերի քանակը: Եվ ոչ միայն այդ խավարամյուներն այրում էին այն գրքերը, որոնց մեջ գրանցված էին պաշտոնական միտքը, ազատության կոչը: Այսպես վարվեցին ռուս ականավոր մտածող, հրատարակիչ Ս. Սոլիկովի հետ: Նրա տպարանում հրատարակված է ավելի քան 20.000 օրինակ գիրք ոչնչացրին և փրկվել է քանի որ հրատարակիչը 20.000 օրինակ գիրք ոչնչացրին և փրկվել է քանի որ հրատարակիչը 20.000

Միայն XIX դարի առաջին քառորդում դրոշմակաշարժեր

ՆՁ 10839 11 2018

Են Ակատվում մամուլի, գրականության զարգացման գործում: Ալեքսանդր Առաջինը հրամանագիր է արձակում հրատարակչական գործի մասին: Նրա՝ 1802 թ. փետրվարի 9-ի հրամանագրում ասվում է, որ ռուսական կայսրության բոլոր քաղաքներում թույլատրվում է ունենալ տպարաններ և հրատարակել գրքեր, միայն այն պայմանով, որ պահպանվի «կարգ ու կանոն», ոչ մի բան չտպագրվի աստծո և կայսրության դեմ:

Սույն ռեֆորմը պարբերական մամուլի, գրականության տպագրության և ընդհանրապես լուսավորության բնագավառում ելնում էր այն բանից, որ Ռուսաստանում աստիճանաբար զարգանում էին կապիտալիստական հարաբերությունները, նոր ընթացք էր ստանում տնտեսական կացութաձևը: Ռուսաստանի շատ քաղաքներում անցած դարակազմին ստեղծվում են տպարաններ, հիմք է դրվում առանձին թերթերի, ամսագրերի ու գրքերի տպագրության: Նշանավոր էր Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի տպարանը, որն իր աշխատանքները սկսում է 1823 թվականին: Այս տպարանում լույս են տեսնում մատենագիտական գրքեր, ռուսական ձեռնարկներ, բառարաններ, ինչպես նաև գրական-գեղարվեստական ժողովածուներ:

Տպագրական գործը ծնունդ է առնում նաև ռուսական կայսրության ծայրամասային գավառում՝ Ղարաբաղում: Այստեղ առաջին հրատարակիչները օտարերկրացիներ էին: 1821 թ. Ծվեյցարիայի Բազել քաղաքի «Ավետարանական-քարոզչական ընկերությունը» ռուսական իշխանությունից թույլտվություն է ստանում Կովկասում հիմնելու ոչ միայն դպրոց, այլև տպարան: Նրանք իրենց նստավայրը ընտրում են գեղատեսիլ և առևտրական տեսակետից աչքի ընկնող Ծուշին:

Բազելցի եկվորներից առավել աչքի են ընկնում Ավգուստ Դիտրիխը և Ֆելիցիա Զարեմբան: Ֆելիցիա Զարեմբան «ի բնե լեհացի էր և ազնվական տանից, կոմսի տիտղոսով. ուսած էր Դորպատո համալսարանում և ստացած փիլիսոփայության դոկտորի աստիճան, հետո դարձած էր քարտուղար սենատի մեջ...

Գիտնական պնշարով Զարեմբայից հետ չէին մնում նորա ընկերակիցներն ևս, որոնցից մինը՝ Դիտրիխ մինչև անգամ

Մոսկվայում Սալլանջյան Միք. վարդապետի մոտ սովորել էր հայոց գրաբար լեզուն»¹:

Նրանք 1823 թ. գալով Ծուշի, նպատակ էին դրել երկար ժամանակով հաստատվել Անդրկովկասում և քրիստոնեական հավատքը տարածել այլադավան ժողովուրդների մեջ: Այլ խոսքով՝ «բազելյան ընկերությունը քարոզիչներին տվել էր հետևեալ հրահանգները. 1. Տարածել աստուծո խոսքը նույն կողմերի ազգաց և լեզուաց մեջ, առաջնորդ ունենալով Մեծ-Բրիտանիոյի և Այլստեռից Աստվածաշնչի ընկերության իմաստնաբար հօրինած կանոններն ու հաստատութիւնը. 2. սովորել տեղական նշանավոր և Աստծո խոսքը տարածելու համար կարևոր լեզուներից մի քանիսը, արաբերեն, պարսկերեն, թաթարերեն, թուրքերեն և նոր-հունարեն: Չեզանցից միևն, ասած է հրահանգների մեջ, գիտե պալոնական լեզուներն և նոր-հունարենի տարերքը. մյուսն արաբերենի և պարսկերենի սկզբունքը. 3. Հիմնել մի հարմարավոր տեղ տպարան՝ Ս. Գիրքը զանազան լեզուներով տպելու համար. տպելու նաև դասագրեանք իրանց հիմնած ռուսմանարանների համար»²:

Այս ընդարձակ ծրագիրն իրագործելու համար նրանք ջանքեր չէին խնայում: Ծուշիում կառուցեցին երեք հարկանի մեծ շինություն, որի շուրջը դարձրին պարտեզ: Իրենց ձեռնարկումները առաջ տանելու համար Ֆ. Զարեմբան և Ա. Դիտրիխը սերտ կապերի մեջ մտան առանձին ազդեցիկ անձնավորությունների հետ: Նշենք հատկապես Միրզա Ֆարուխին³, Բարսեղ և Մովսես սարկավազներին, Պողոս վարդապետին:

Բազելցի բողոքականները առավել ուշադրություն էին դարձնում երկու հանգամանքի վրա. նախ, արվեստները նոր

¹ Հ. Ղուկասյանց, «Բողոքականություն Կովկասում հայոց մեջ», Թիֆլիս, 1886, էջ 3:

² Նույն տեղում:

³ Ծնվել 1798 թ., Ծուշի գավառի Թաղուտ գյուղում: Իսկական անունը Հարություն է: 1805 թ. ռուս-պարսկական կռիվների ժամանակ, երբ նա ընդամենը 5—6 տարեկան էր, գերի է վերցվում: Պարսկական արքունիքում նա ստանում է Ֆարուխ անունը: Կարճ ժամանակամիջոցում տիրապետում է մի քանի լեզուների: Քսան տարեկանում արդեն Թեհրանի Սարդարի քարտուղարն էր: 1826 թ. ռուս-պարսկական պատերազմի օրերին հարմար առիթը օգտագործելով, Միրզա Ֆարուխը փախչում է և գալիս Ծուշի: Բազելցի բողոքականների մոտ հիմնականում նա հանդես է գալիս իբրև թարգմանիչ:

բացված ուսումնարանի աշակերտների թիվը⁴, ունենալով երկու դասարան, ապա ծավալել հրատարակչական գործը: Նըրանք իրենց հետ բերել էին նորաձույլ տառեր, տպագրական սարքեր, տպագրիչ և շատ շուտով սկսում են հրատարակել մի քանի գրքեր, գրքույկներ: Այդ գրքերը էժան գնով տարածում էին ընթերցողների մեջ: Բազելցի միսիոներների կողմից առաջին գիրքը լույս է տեսնում 1828 թվականին⁵: Դա «Պատմություն Սուրբ Գրոցն» էր, որի թարգմանությունը ռուսերենից կատարել էր Հարություն Ջուղայեցի Դավիթյանը: Առանձին հեղինակների մոտ այն սխալ կարծիքն է իշխում, թե Շուշիում առաջին հայերեն գիրքը տպագրվել է 1822 թվականին: Այսպես է գտնում, օրինակ, Գրիգոր Վանցյանը իր «Պատմական քերականություն արևելահայ լեզվի» աշխատության մեջ⁶, որը տպագրվել է Թիֆլիսում: 112-րդ էջում նա լրիվ մեջ է բերում գրքի տիտղոսաթերթի տեքստը. «Կարճատոտ աղոթքներ շաբաթի ամեն մեկ օրին համար: Թարգմանություն ի հայրապետության Տեառն Հովհաննու Կարբեցվո սրբազան սուրբ կաթողիկոսի ամենայն հայոց: Հրամանավ տեսուն Բաղդասար իշխանազնի Ջալալյան սրբազան արքեպիսկոպոսի և միտրապոլիտի հայոց համայն Աղվանից ի Շուշի ամի տեսուն 1822»:

Ստանենագետ Հ. Դավիթյանը⁷ ցույց է տալիս, որ իրոք, այդպիսի գիրք գոյություն ունի և պահվում է Թբիլիսիի պատմության թանգարանում: Բայց նրա տիտղոսաթերթի թվականը (1822) նշելը թյուրիմացություն է, տպագրական սխալ: Ավելի ճիշտ, պետք է լինի՝ 1832 թ.: Ինչո՞ւ, շեշտում է նա, որովհետև նախ, Հովհաննես Կարբեցին կաթողիկոս է դարձել 1831 թվականին, իսկ Բաղդասար Հասան-Ջալալյանը միտրոպոլիտ՝ 1830 թվականին: Ուրեմն սույն գիրքը 1829—1830 թթ. շուտ

⁴ Եթե սկզբում բազելցիների բացած ուսումնարանում 30—40 աշակերտ կար, ապա մի տարուց հետո նրանց թիվը հասնում է 130-ի: Երեխաների մեծ մասը դարաբացի հայեր էին՝ 10—18 տարեկան:

⁵ 1827 թ. արդեն գործում էին և տպարանը, և ուսումնարանը:

⁶ Գուրգեն Սևակը «Ժամանակակից հայոց լեզվի դարևնթացի» (Երևան, 1955 թ.) հավելվածում մի հատված բերելով «Կարճատոտ աղոթքներ շաբաթի ամեն մեկ օրին համար...» գրքից, հիմնվելով Գր. Վանցյանի աշխատության վրա, բնականաբար նշում է 1822 թ. Շուշիում լույս տեսած գիրքը:

⁷ Տե՛ս «Հայ գիրքը 1801—1850 թվականներին», Ե., 1967:

Պ Ա Տ Մ Ո Ի Թ Ի Ի Ն Ս Ո Ի Ր Բ Գ Բ Ո Ց :


Մարեալ Համառոտ Հարցմանք և պատասխանեօք : յաղազս դեռահասակ մանկանց :

Թարգմանելալ է Ռուս լեզուէ 'է դր՛ն Եւրոպական գրողնեան Ջաղայեցոց :

Պի Հայրապետուէ Տ՛ն ԵՓԻՄՍԻ սրբաշնորհ կաթողիկոսի ամբ Հայոց :

Հրամանաւ Մարեալ քահանայապետութեան Տ՛ն Երևանի Մարեալգործ սրճս Մ. Բ. Տիեպիկոսի և վիճակաւոր առաջարկի ամբ Հայոց վրաստանի և այլոց :

1828



ՀԵՄԼԵՕՏՈՒԹԷՒՆ

ՀԵՅԿԵԿԵՆ ՔԵՐԵ-

ԿԵՆՈՒԹԵԼՆ:

495
93-ՆԵ

Ե. շի ա ա ա ի բ ու թ ե ա մ բ

ՏՆ Պողոտի գերխնամ վարդապետի Կերտեան զա-
րտապետի ՚ի միաբանութենէ սրբոյ Սասնէի:

Պ. Տարապետութեան ՏՆ ԵՓՐԵՄԻ սրբաշնամբ
Կաթողիկոսի ամ Տայոյ:

Հրամանաւ Վճարեալ բաճանցապետութեան ՏՆ
Կերտեի Վարդապետ սրբաշնամբ Վրէժեպետապետի
Վիճակաւոր առաջարկի ամ Տայոյ



Ի ԵՄԵՒ

թեմաներ, ապա երկրորդում ճշում է, թե քերականությունը
քանի մասից է բաղկացած, նրանցից յուրաքանչյուրն ինչ է
ուսումնասիրում, ինչպիսի օրինաչափություններ ունի հայոց
լեզուն և այլն:

Ուշագրավ է նաև Հովսեփ Արցախցի վարդապետի «Հա-
մառոտ բառագիրք ի գրաբարե աշխարհաբար: Ի պետա համ-
բակաց» աշխատությունը, որ տպագրվել է 1830 թ.: Այնտեղ
տրված են գրաբար բառերի աշխարհաբար բացատրություն-
ները: Գրքի մեջ ընթերցողը գտնում է տվյալ բառի հոլովման
ձևերը և ձևաբանական մյուս հատկությունները: Սա դրական
երևույթ էր և, անկասկած, ժամանակին որոշ դեր է խաղացել
հայերենի ուսումնասիրության բնագավառում:


Բողոքականների հրատարակած գրքերի թիվը փոքր չէր:
1830-ին նրանց ունեցած և հրատարակած հայերեն գրքերի
թիվը հասնում էր 11.679 օրինակի⁹: Սակայն դրանք որևէ ազ-
դեցություն չեն գործել հայ գրականության ու լեզվի վրա: Բո-
ղոքականների մշակած լեզուն, չնայած իր մաքրությանն ու
կանոնավորությանը, «մնացած է խորթ և ստանց որևէ ազդե-
ցության մեր մտավոր շրջանների վրա...»¹⁰:

Բանասեր Գր. Վանցյանը միտումնավոր վերաբերմունք
է ցուցաբերել միսիոներների գործունեության նկատմամբ: Նա
մոռանում է, որ նրանց հրատարակած գրքերը հիմնականում
հայերեն էին (թեև սկզբնական շրջանում՝ միայն թարգմանա-
կան), բավական հոլոված աշխարհաբարով, և երկրորդ, հե-
ղինակների մեծ մասը հայ քերականներ էին, որոնք խոսում
էին ուղղախոսության, քերականության կանոնների պահպան-
ման և ուղղագրության մասին:

Լեզվաբան Գ. Սևակը պատշաճ է գնահատում Դիտրիխի
և Զարեմբայի ձեռնարկումները գրատպության գործում: «... 19-
րդ դարի առաջին քառամյակի կեսերին, — գրում է նա, —
Շուշիում բազելյան միսիոներներ Դիտրիխը և Զարեմբան ձեռ-
նարկեցին միսիոներական գրականության հրատարակությանը
այնպիսի աշխարհաբարով, որն իր մաքրությամբ և պարզու-

⁹ Բազելցի բողոքականները իրենց հիմնած տպարանում հրատարակում
էին նաև այլ լեզուներով գրքեր. պարսկերեն լույս տեսած գրքերի թիվը
728 օրինակ էր, թուրքերեն՝ 147, եբրայերեն՝ 100 օրինակ:

¹⁰ Գր. Վանցյան, «Պատմական քերականություն արևելահայ լեզվի»,
Թիֆլիս, 1906, էջ 114—115:



թյամբ գերազանց է ոչ միայն մինչև 30-ական թվականները, այլև մինչև 60-ական թվականները հրատարակած բոլոր գրքերի լեզվից»¹¹: Քննելով միսիոներների կողմից հրատարակված գրքերի լեզուն, Գ. Սևակը հետաքրքիր է համարում այն, «որ այդ գրքերի մեջ արտահայտություն է գտել անցյալ դարի 20-ական թվականների խոսակցական աշխարհաբարը առանց գրաբարյան ավելորդ համեմունքների, որպիսիք հատուկ են ուղղափառ լուսավորչականների լեզվին: Այդ օտարազգիները ժողովրդից սովորեցին կենդանի լեզուն և այդ լեզվով էլ հրատարակեցին իրենց պրոպագանդիստական գրականությունը՝ առանց լեզվաշինարարական այս կամ այն նկրտումի»¹²:

Վերը շարադրվածը հաստատելու համար բերենք մի քանի հատված 1832 թ. Ծուշիում լույս տեսած «Ժամանակի վերջըն» թարգմանական գրքից: Կարդում ենք. «Ապա պատշա՞ն է ձեզ, ով մարդիկ, որ անցկացնեք ձեր կյանքն մեղքերի մեջ, որ ձեզ անարգելի են անում և ունայնությանց մեջն որ մեռնակ մի քիչ ժամանակ կարող են մխիթարել ձեր սրտերն» (Էջ 4): Կամ՝ «Իրանց ազատ սահաթները կորցնում են միայն ունայն փուչ տեղն անց են կացնում իրանց պատվական ժամանակը, որ տվեալ նորանց շնորհք և հոգո փրկություն գտնելու համար, և կարծում են, թե իսկի մին հարկավոր գործ չկա իրենց համար: Նորանք կենում են էնպես, իբր թե անկարելի լինեք համար: Նորանք կենում են էնպես, իբր թե անկարելա լինեք իրենց կյանքի ժամանակըն ուրիշ կերպով անցկացնել, բայց միայն միշտ խմելով, և ուտելով և ուրախություն անելով: Առավտից մինչև իրիկուն միշտ կըտեսնեք նորանց, որ ունայն փուչ բաներին են հետևում. կորցնում են էն ժամանակըն, որ պետք էր Այն ընծայել, և էն էլ, որ պետք էր իրենց գործքերին համար գործածել, կորցնում են... ծուլութենով և անհոգութենով, կամ՝ մեղած և հիմարու մեջ ման գալով» (Էջ 12—13):

Ս. Ղազարյանը ևս իր աշխատություններում անդրադառնում է Ծուշիի միսիոներների հրատարակած գրքերի լեզվին, նշում, որ «ժամանակի արարատյան բարբառի հիման վրա մշակվող լեզվի առանձնահատկությունները դրսևորվում են նաև

¹¹ Գ. Սևակ, «Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց», Ե., 1955, էջ 60:
¹² Նույն տեղում:

ՔԵՐԵԿԸ ՆՈՒԹԻՒՆ
ՀԵՅԿԸ ԶԵՆԵԼԵԶՈՒՒ

Յօրինեալ է չայր Միքայէլ վարդապետ
 ա է չաճ չեանց:

Ես այժմ նորոք համապետւ աշխատեցաւ իմ զին-
 քանի ստանդարտ:

Տպագրեալ է վերնակէ յամի տեառն 1801:
 Արարին տպագրեալ:

Ի Տպագրեալն ՏՆ ՅՈՒ ՀԵՆՆՈՒ ԿԱՐԵԿԸ ԱՅ
 սրբախատուրը Կաթնի շիկոսի տմ Տայց:

Հրամանաւ ՏՆ ԲԱԳ ՏԱՄԵՐԵՅ իջտանագնի շարա-
 լեան սրբազան Երբեպիսկոպոսի և մե-
 րապօղատի Տայց հասնայն աջաւանդոյ:



Ի Ը ՈՒ Ը Ի
 Կամ տեառն 1833

թարգմանական գրականության մեջ»¹³, շեշտում է Շուշիում 1832—1835 թթ. լույս տեսած աշխատությունների աշխարհա-
 բար լեզվի գգալի հղկվածությունն ու մատչելիությունը:

Այսպիսով, Շուշիում հրատարակվող գրքերը որոշ չափով
 նպաստում են թե՛ արևելահայ լեզվի հղկմանն ու մշակմանը
 և թե՛ գրական լեզուն ավելի մատչելի և հասկանալի դարձնե-
 լուն:

Բողոքական միսիոներները երկար չեն մնում Շուշիում
 (ընդամենը 7—8 տարի): Ղարաբաղի թեմի առաջնորդ Բաղ-
 դասար միտրոպոլիտին առաջարկում են վերցնել իրենց տպա-
 րանը՝ բոլոր սարքավորումներով: Վերջինս գնում է այն և տե-
 դափոխում քաղաքի հայկական մասը: Այն վերանվանվում է
 «Տպարան վիճակավոր Առաջնորդին Ղարաբաղու բարձր Սըր-
 բազան միտրոպոլիտին Բաղդասարի», իսկ տպագրված գրք-
 քերը ունենում են հետևյալ դրոշմը. «Հրամանով տեսան Բաղ-
 դասարի իշխանագնի Ջալալյան սրբազան արքեպիսկոպոսի և
 միտրոպոլիտի հալոց ամենայն Աղվանից»:

Արդեն 1837 թվականից Շուշիում այլևս չեն հրատարակ-
 վում միսիոներների գրքերը: Բայց սա չի նշանակում, թե բա-
 զելցի բողոքականները դադարում են Ռուսաստանում գործե-
 լուց¹⁴ և հայկական գրքեր հրատարակելուց: Նրանց հետևորդ-
 ները շարունակում են Մոսկվայի¹⁵ Լազարյան ճեմարանում
 գրքեր տպագրել: Դրանցից էր, օրինակ, 1840 թ. հրատարակ-
 ված «Ավետարանի զորություն կամ՝ Մին արսբ ծառայի պատ-
 մություն, որ Քրիստոսի հավատարմունքն էրանելի էղալ» գիրքը:
 Եվ հետաքրքիրն այն է, որ բողոքականների կողմից Լազար-
 յան ճեմարանի տպարանում հրատարակված բոլոր գրքերը ա-
 նաջվա պես աշխարհաբար էին:

¹³ Ս. Ղազարյան, «Հայոց լեզվի համատես պատմություն», Ե., 1954, էջ 399:

¹⁴ 1836 թվականին էլ Շուշիում դեռ կային բազելյան բողոքականներ. նշենք Կարլ Պֆանտերին, Ֆրիդրիխ Շպիբերգին, Ավգուստ Կրեյսին, տպագրիչ Ֆրիդրիխ Իվտային:

¹⁵ Բողոքականները թեև Շուշիում տպարան ունեին՝ գրքեր էին տպագրում Մոսկվայի Լազարյան ճեմարանի տպարանում:

Անժխտելի է նաև, որ 1840 թվականից սկսած թուլանում է բողոքականների հրատարակչական գործը:

ՀԱՅՈՑ ՀՈԳԵՎՈՐ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՏՊԱՐԱՆԸ

Անուրանալի են Բաղդասար միտրոպոլիտ Հասան-Ջալալյանի ջանքերը դպրոցաշինության և գրատպության ասպարեզներում:

Բոլոր վանքերին կից նրա հիմնած դպրոցներում սովորում էին տասնյակ աշակերտներ: Նշանավոր էին հատկապես Գանձասարի, Ս. Հակոբի և Ծուշիի վանքապատկան դպրոցները: Նա բացում է եռալեզվյան (հայերեն, ռուսերեն և թաթարերեն) ուսումնարան, որի մասին վկայում է իր ազգական և խոշոր մշակութային գործիչ Սարգիս Ջալալյանը¹:

Ամբողջությամբ վերցրած՝ չի կարելի ժխտել այդ դպրոցների դերը. սրանք լուսավորության ճանապարհին կայծեր էին, որոնցից ջերմություն էին ստանում դպրոցահասակ երեխաները, մյուս կողմից, սրանք կարծես հիմքերն էին այն մեծ դրպրոցի, որ պիտի բացվեր Ծուշիում՝ իր մեջ առնելով հարյուրավոր այլ երեխաների:

Թեև Բ. Հասան-Ջալալյանը կանոնավոր ուսում չէր ստացել, բայց ձգտում էր մշակութային որոշ ձեռնարկումներ իրականացնել: Նա բավական մեծ գումար ուղարկեց Վեներտիկի Մխիթարյանների վանքը, բերել տվեց մի-մի օրինակ նրանց բոլոր հրատարակություններից և կազմեց հոգևոր դպրոցին կից մի հարուստ գրադարան՝ այնտեղ հավաքելով և Ղարաբաղի վանքերում գտնված նշանավոր գրչագիր մատյանները: Այդ գրքերը հետզհետե տպագրելու դիտավորություն ուներ իր սեփական տպարանում²:

Լինելով ուսումնական գործի ջատագով, Բ. Հասան-Ջալալյանը տպագրել է տալիս հատկապես այնպիսի գրքեր, ո-

րոնք ըստ էության գիտական-ուսումնական են՝ նվիրված հասագիտությանը, մայրենի լեզվի օրինաչափություններին: Նրանց մեջ էր Միքայել Չամչյանի «Բերականություն հայկազյան լեզվի» աշխատությունը, որը մինչ այդ լույս էր տեսել Վեներտիկում, Ս. Ղազար կղզում, 1801 թ.: Աշխատությունը փաստորեն ուսումնական ձեռնարկ է, որի մեջ հետազոտված են հայոց լեզվի բառային կառուցվածքը, հոլովները և խոսքի մասերը, տրված են դրանց սահմանումները և օրինակները:

1837 թվականից տպագրական գործը Ծուշիում անցնում է հայ եկեղեցական վարչական կազմակերպություններին, տրպարանն էլ կոչվում է Հայոց հոգևոր տեսչության տպարան կամ ուղղակի՝ «Վիճակավոր ստաշնորդին Ղարաբաղու բարձր սրբազան միտրոպոլիտի Բաղդասարի»: Այն գործում է կանոնավոր. հարստանում է Մոսկվայից բերված տառատեսակներով և տպագրական պարագաներով:

Սուաշին գիրքը, որ լույս է տեսնում այս տպարանում, 1837 թվականին, Ջ. Գ. Բալբոնի «Ծիլիոնի կալանավորն» էր: Սա անգլիացի մեծ բանաստեղծի հայերեն սուաշին գիրքն էր, որը հաջողությամբ թարգմանել էր հայոց լեզվի հմուտ գիտակ, գրականագետ Մովսես Զոհրապյանը: Ուշագրավ հետազոտություն է Խաչատուր քահանա Տեր-Օհանյանի «Համառոտ Հայկազյան քերականության...», որը լույս տեսավ 1839 թ., Ծուշիում: Այն պարունակում է մի քանի բաժիններ: «Հաղագւ քերականության» մասում տրվում է, թե ինչ է ուսուցանում և հետապնդում քերականությունը, որոնք են եզակի և հոգնակի հոլովները, խոսքի մասերը, նախադասության տեսակները և այլն: Գիրքը ուսուցողական է, տեսականը ողեկացվում է բազմաթիվ մատչելի օրինակներով, վարժություններով:

1839 թ. հրատարակվում են Եսայի կաթողիկոս Հասան-Ջալալյանցի «Պատմություն կամ հիշատակ ինչ-ինչ անցից՝ դիպելոց աշխարհին Աղվանից»³, այնուհետև 1840 թ.՝ Միքայել Սալլանթյանցի «Կրոնագիտություն կամ Հոգեվարժություն քրիստոնեական», ինչպես նաև «Ծիսարան, որ կոչի Մաշտոց» և այլ գրքեր:

¹ Տե՛ս Սարգիս Ջալալյանց, «Ճանապարհորդություն ի մեծն Հայաստան», մասն Բ, Տիֆլիս, 1858, էջ 355:

² Տե՛ս Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 10, Հայպետհրատ, Ե., 1964, էջ 326—327:

³ Այս անգամ գրքերի վրա նշված էին. «Ծուշի, տպ. բարձր սրբազան ապետափառ մետրոպոլիտին Բաղդասարի», կամ՝ տպ. «Արքեպիսկոպոսին Բաղդասարի...»:

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ւ Ի Ն

Հանձնատան

Ինչ ինչ անցից՝ դեպք լոց յաշխարհին
Լոզուանից, համառօտագրել ՚ի Սրբազ-
նակատար Կաթողիկոսին Լոզուանից
՚ի Տէր եպսկոպ Տասան Չալալէնց,
՚ի Թուականին հայոց իւճկ. իսկ ՚ի
Թուականի Տեառն մերոյ փրկչին
Յիսուսի 1711. և

Տպագրեալ ՚ի հայրապետութե Լմբ.
նայն հայոց Տեառն և Տեառն ՅՈՒ.
ՀԼՆՆՈՒ գերբնախր Կաթողի-
կոսի և Լոպեախի



՚ի 1839. ՚ի ՇՈՒՇԻ ՚ի իւճը

Ծատ գրքերի ծախսերը հոգում էր ինքը՝ Բաղդասար Հասան-Չալալյանը: Եսայի Հասան-Չալալյանի գրքի վրա կարդում ենք. «Հրամայեցաք մուծանել ի տիպ սեփական ծախսոք մերովք վիճակավոր Առաջնորդ Ղարաբաղու և այլոց՝ Սրբեպիսկոպոս և Ասպետ միտրոպոլիտ Բաղդասար Հասան-Չալալյանց: Ի 7 հունիսի 1839 ամի»:

Եսայու գրած առաջաբանում նշվում է, որ ինքը մտադիր է տալ ներկա օրերի պատմությունը, շարադրել հայ ժողովրդի անցյալում կրած տառապանքները, կանգ առնելով կոնկրետ փաստերի վրա: Հեղինակը իր պատմությունը սկսում է պարսիկների տիրապետության ժամանակաշրջանից, ներկայացնում հաչոց երկրի ներքին երկպառակությունները, պատերազմական գործողությունները, թշնամիների արշավանքները, նկարագրում լեզգիների բարբարոսությունները և այլն: Աշխատության մեջ բավականին ծավալուն կերպով ներկայացվում են ժամանակի դեպքերը, խոսվում ժողովուրդների, մասնավորապես հայերի ու վրացիների բարեկամության մասին: Մեծ էր Ե. Հասան-Չալալյանի համակրանքը Վրաստանի նկատմամբ, և պատահական չէր նրա քննադատությունն այն խաների (Գյանջալի, Կախեթի, Ղազախի և այլն) հասցեին, որոնք ձրգտում էին կործանել Վախթանգի տիրապետությունը: Գիրքը օգնում է հաչոց պատմությունն ուսումնասիրողներին՝ որոշակի գաղափար կազմելու 17—18-րդ դարերի իրադարձությունների, առանձին նշանավոր մարդկանց գործունեության, հայերի և հարևան ժողովուրդների հարաբերությունների և նրանց համագործակցության մասին:

Բաղդասար միտրոպոլիտի օրոք տպագրված գրքերի մեծ մասը եկեղեցական էր (ինչպես, օրինակ, 1838 թ. լույս տեսածները՝ «Խորհրդատեր սրբազան պատարագի», Եփրեմ Խորի Ասորիի «Գիրք աղոթից» և այլն), մի մասն էլ՝ ուսումնագիտական:

Միքայել Սալլանջյանցի «Առաջին մասն փոքր քերականության գրաբար լեզվի հաչոց...» գիրքը, որ առաջին անգամ լույս է տեսնում Մոսկվայում, 1827 թվականին, ապա՝ Ծուշիում 1840 թ., միտրոպոլիտ Հասան-Չալալյանի հրամանով ու ծախքերով, ամփոփում է քերականական սահմանումներ և վարժություններ:

Գրքի հեղինակը առաջին մասում բացատրում է քերական

նության կոչումը, ապա կանգ է առնում նրա առանձին բաժինների վրա, պարզաբանում բառերի էությունը, մասնիկները, պարզ և բաղադրյալ բառերը, ձայնավորներն ու բաղաձայնները: Օգտակար բացատրություններ են տրվում մասնավորապես դերանունների և բայերի մասին: «Պատկեր հոլովադասության» բաժնում բերվում են բազմաթիվ օրինակներ բառերի եզակի և հոգնակի ձևերի մասին: Գիրքը հարուստ է խոսքի մասերին նվիրված քարտեզներով, ունի հավելված առանձին քերականական հարցերի վերաբերյալ: Կան բառերի վերլուծումներ՝ ըստ խոսքի մասերի և կազմության:

Բաղդասար միտրոպոլիտը հրատարակում էր և՛ թարգմանական, և՛ հայ հեղինակների գործեր (իհարկե, բոլորն էլ հայերեն):

Առաջին հայ հեղինակներից էր ավագ սարկավագ Գրիգոր Տեր-Ավագյանը: Օժտված գիտական կարողությամբ և գրական աշխատանք կատարելու շնորհքով, նա հրապարակ է հանում մի քանի ուսումնասիրություններ, որոնք աշակերտների համար ծառայում են իբրև դասագիրք կամ ձեռնարկ: Նա այլ լեզուներով լույս տեսած դասագրքերը հարմարեցնում էր հայ դպրոցին: Ավելին, առանձին բարդություններ կազմող քերականական գրքերը մատչելի էր դարձնում ցածր դասարանների կամ հենց նոր դպրոցական քերականությունը սովորող աշակերտների համար: Այդպես նա վարվեց, օրինակ, Միքայել Սալլանջյանցի «Համառոտություն փոքր քերականության գրաբառ լեզվի հայոց» աշխատության հետ: Նա կազմեց դյուրին, հասկանալի աղյուսակներ՝ քերականական հարցերով ու պատասխաններով:

Տպագրական-հրատարակչական գործում քիչ ջանքեր չի գործադրում նաև Խաչատուր Ղարաբեկյանը:

Բաղդասար միտրոպոլիտի մահվանից (1854 թ.) հետո տպարանը իր տնօրինության տակ է վերցնում Գևորգ Եպիսկոպոս Վեհապետյանը: Նոր թեմակալ առաջնորդը նպատակ է դնում ամենից առաջ լույս ընծայել ուսումնական ձեռնարկներ և գիտական աշխատություններ, բայց դրան խոչընդոտում է դրամական միջոցների պակասը: Այս հարցով նա դիմում է Շուշիի բնակիչներին, հատկապես հարուստներին, բայց նրանք ոչ մի օգնություն ցույց չեն տալիս: Տպարանը շարունակում է գործել ըստ սահմանափակ հնարավորություններով:

1864 թ. տպարանը անցնում է Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցին:

ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԴՊՐՈՅԸ
ԵՎ ՀՐԱՏԱՐԱՐԱԿՉՍԿԱՆ ԳՈՐԾԸ

Անցյալ դարի 20—30-ական թվականներին Ղարաբաղում գոյություն ունեցող դպրոցները սահմանափակ գիտելիքներ էին հաղորդում աշակերտներին: Դրանք հիմնականում տալիս էին հոգևորական-եկեղեցական դաստիարակություն, սովորեցնում էին սուրբ գիրքը, ավետարանը, իսկ մայրենի լեզուն և թվաբանությունը անցնում էին մասնակիորեն:

Կենսական պահանջ էր դարձել Ղարաբաղի պես մեծ գավառում ունենալ գոնե մեկ այնպիսի դպրոց, ուր ավանդեին հանրակրթական առարկաներ, ձեռք բերեին նվազագույն գիտելիքներ, ուսուցումը տարվեր համեմատաբար առաջադիմական մեթոդներով ու մանկավարժական հմտությամբ, ուր լինեին կարգ ու կանոն, դպրոցական ծրագիր, կանոնադրություն: Այդպիսին էր 1838 թ. հունիսի 22-ին Շուշում բացված Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցը, որը գոյատևեց մինչև 1920 թվականը (ութաուն տարուց ավելի): Նրա պատմության, անցած ուղու մասին ծավալուն աշխատություն է գրել ականավոր պատմաբան Լեոն¹:

Իրոք, դպրոցը մեծ ուղի է անցնում: Նրա հիմնադրման առաջին տարին, ճիշտ է, քիչ աշակերտներ են ընդգրկվում մի դասարանում (ընդամենը 20—30 հոգի), բայց համեմատած մյուս՝ վանքապատկան և միսիոներական դպրոցների հետ, այստեղ ավելի կանոնավոր է տարվում առարկաների ուսուցումը: Դպրոցի առաջին ուսուցիչներն էին քահանաներ Առաքել Յուզբաշյանն ու Սարգիս Աթաբեկյանը. առաջինն աշխատում է իբրև հայոց լեզվի ուսուցիչ, իսկ երկրորդը՝ թարգմա-

¹ Աշխատությունը կոչվում է «Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի», լույս է տեսել 1914 թ., Թիֆլիսում, նույն լրագրոցի հոգաբարձության հրատարակությամբ:

նիչ: Երկուսն էլ իրենց պարտականությունները կատարում էին ստանց աշխատավարձի:

Հետագայում փոխվում են և՛ ուսուցիչները, և՛ աշակերտները: Նոր մտցված պարսկերեն լեզվի ավանդումը իր վրա է վերցնում Մ. Ալահվերդիկը:

Որոշ չափով կանոնավորվում են ուսաց և հայոց լեզուների, թվաբանության, երգեցողության և այլ առարկաների պարսկամունքները: Արդեն երկրորդ-երրորդ տարում դպրոցն ուներ վաթսուհից ավելի աշակերտներ, որոնք սեր, հետաքրքրություն են հանդես բերում մասնավորապես մայրենի լեզվի և հայոց պատմության նկատմամբ:

Դեռ նոր հիմնված դպրոցը մեծ խոչընդոտների է հանդիպում. սուղ էին նյութական միջոցները և այդ բանը շատ էր մտահոգում Բաղդասար միտրոպոլիտին: 1844 թ. մարտի 1-ին դպրոցը փակվում է: Սակայն նորից է բացվում հաջորդ տարվա հուլիսի 17-ին:

Բաղդասար միտրոպոլիտը դիմում է ժողովրդին՝ հանգանակություն և նվիրատվություն կազմակերպելու կոչով: Թեև քիչ դրամ է հավաքվում, բայց մի կերպ պահպանում է դրպրոցի գոյությունը: Նրա պահպանման համար քիչ ջանքեր չեն գործադրում ուսուցիչները: Նրանց մի մասը շարունակում է աշխատել ձրի:

Թեմական դպրոցում սովորում էին ոչ միայն հոգևորականների, այլև աշխարհական մարդկանց երեխաները: Սա նրպաստավոր հանգամանք էր, որ դպրոցի մասին հոգ տանեին բոլորը:

1854-ին մահանում է միտրոպոլիտը, և նույն տարում դրպրոցը փակվում է: Սակայն որոշ միջոցներ ձեռք առնելու շնորհիվ այն նորից բացվում է հաջորդ տարվա նոյեմբերին, ըստ որում, եթե մինչև այդ դպրոցը երկդասյան էր, ապա Ղարաբաղի նոր թեմապետ Գևորգ եպիսկոպոս Վեհապետյանի օրոք դառնում է երեքդասյան:

Լուրջ ուշադրություն է դարձվում կարգ ու կանոնի սահմանմանը, որոշակի գործ է կատարվում նյութական միջոցների հայթայթման և ուսուցչական կազմի որակավորման ուղղությամբ: Այդ բոլորը հեշտությամբ չի կատարվում: Մի քանի

անգամ հարց է բարձրացվում, որպեսզի Պետրոս Ծանշյանը² դառնա հայ հոգևոր դպրոցի տեսուչը:

1863 թ. դեկտեմբերի 1-ից Պետրոս Ծանշյանը Ծուշիում էր: Նա իր ամբողջ եռանդը և գիտելիքները նվիրաբերում է Ղարաբաղի թեմական դպրոցին՝ կարգավորելու ուսումնական գործերը:

Նրա օրոք դպրոցի աշակերտների թիվը հասնում է 245-ի, ավելանում են դասարանները, բարձրորակ ուսուցիչներ են հրավիրվում հաչաբնակ վայրերից:

Մեր գրողներից և սկանավոր մանկավարժներից շատ-շատերը (Պ. Պողոսյանը, Ղ. Աղայանը, Վ. Փափազյանը, Լեոն, Ս. Մանդինյանը և ուրիշներ) տարբեր ժամանակներում դասավանդել են Ղարաբաղի թեմական դպրոցում: Պերճ Պողոսյանը ոչ միայն դասավանդել է հայ գրականություն, հայոց լեզու և հայ ժողովրդի պատմություն, այլև եղել է դպրոցի տեսուչի օգնականը և մեծ ջանքեր գործադրել, որպեսզի երեխաները գիտելիքներ ձեռք բերեն հայ մշակույթի պատմությունից:

Հիրավի, Ղարաբաղի թեմական դպրոցը լուսավորական հիմնական օջախն էր, որը երբեմն ընդհատումներով, երբեմն մեծ դժվարությունների հանդիպելով գործում էր Ծուշիում՝ նրպատակ ունենալով կրթել, դաստիարակել հարյուրավոր երեխաների: Դպրոցի առաջադեմ ուսուցիչները մտածում էին նաև տպագիր խոսքի զարգացման մասին, որ պատանիներն ու աղջիկները մայրենի լեզվով կարդան անհրաժեշտ գրականություն, տեղյակ լինեն հոգևոր մշակույթի պատմությանը, ուսումնասիրեն լեզուներ: Վերադաս մարմիններին ուղարկված բազմաթիվ դիմումներում ու նամակներում դպրոցի ղեկավարները խընդրում էին միջոցներ ձեռնարկել ոչ միայն ուսերեն, այլև ազգային լեզուներով հրատարակելու ուսումնական ձեռնարկներ, բայց նրանց դիմումները գրեթե միշտ մնում էին անհետևանք:

² Ծնվել է 1819 թ., Թիֆլիսում: Ստացել է բազմակողմանի կրթություն: Ներսիսյան դպրոցը և Լազարյան ճեմարանն ավարտելուց հետո նա սովորում է Մոսկվայի և Պետերբուրգի համալսարաններում: Արտասահմանի մի քանի համալսարաններում ունկնդրում է նշանավոր գիտնականների: 1851—1857 թթ. Ներսիսյան դպրոցի տեսուչն էր: Նշանակվում է նաև Ծուշիի թեմական դպրոցի տեսուչ և ամենուրեք իրեն դրսևորում իբրև փորձված մանկավարժ:

Առաջադեմ գաղափարներով տոգորված մտավորականները ստիպված օգտագործում էին միայն տեղական փոքր հնարավորությունները: Հրատարակչական գործին նվիրված առանձին մարդիկ ձգտեցին վերակենդանացնել Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի տպարանը, կարգավորել նրա աշխատանքը, ձեռք բերել ոչ միայն կանոնավոր տասեր և տպագրական պարագաներ, այլև ունենալ գրաշար և տպագրիչ:


Ծուշիի ուսուցչական կոլեկտիվները հոգ տարան նաև, որպեսզի տպագրիչ Մինաս Տառլիճյանը և ուրիշ մասնագետներ աշխատեն տպարանում և մի քանիսին էլ սովորեցնեն տպագրական ու գրաշարական գործը:

Առաջին տարում հրատարակված գրքերի մեջ հատուկ տեղ է գրավում հայ անվանի վիպասան Պերն Պոռչյանի «Ղարաբաղու Տիրամայր սուրբ Մարիամու օրհորդաց ուսումնարանի բացվելը», որ, ի դեպ, հեղինակը մեծ ջերմությամբ է նկատագրում այն պահը, երբ հիմնադրվեց հայ կանանց կրթության գործը Ծուշիում: 1864 թ. լույս է տեսնում նաև Կ. Եզյանի աշխատությունը («Ներքին կյանք հին Հայաստանի, պատմարանական քննությունը»), որ ռուսերենից թարգմանել էր Պ. Պոռչյանը³:

Ծիշտ է, սկզբում տպարանը լույս էր ընծայում ուսումնական բնույթի գրքույկներ, բայց հետագայում, սկսած 1865 թվականից՝ ուսուցիչների ակտիվ աշխատակցությամբ տպագրվում էին լուրջ ուսումնասիրություններ: Առաջին հերթին նրանք 1866 թ. լույս տեսած «Համառոտ պատմություն հայոց» աշխատությունը, որի հեղինակը նպատակ էր ունեցել օգնել հայ երեխաներին՝ պատկերացում կազմելու մայր ժողովրդի անցած ողու մասին:

1870—1872 թթ. այստեղ են տպագրվում նաև «Բարեկարգությունը, տնօրինելաբ ի վիճակավոր առաջնորդին հայոց թեմին Ղարաբաղու ի Սարգիս արքեպիսկոպոսեն Հասան-Ջալալյանց յաղագս կարգի կատարման ինչ-ինչ հոգևոր ծիսից հայոց ժողովրդականաց ի նմին վիճակի», «Ավետարան» և այլ գրքեր: Տպագրվում էին առանձին գրական գործեր, մեծ մասամբ ոտանավորներ: Ավելին, որոշ մտավորականներ մտա-

³ Փաստը վերցված է Լեյի «Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի» աշխատությունից (էջ 374):



ծում էին հրատարակել ոչ միայն գրքեր և գրքույկներ, այլև պարբերականներ: Նրանք համոզված էին, որ առանց մաշրեմի լեզվով պարբերաբար լույս տեսնող թերթի կամ հանդեսի դրժվար է գաղափար կազմել աշխարհի անց ու դարձի մասին, իմանալ նոր իրադարձությունները: Նրանք համոզված էին, որ հանդեսներն ու թերթերը հնարավորություն կստեղծեն հաղորդակից դառնալ առօրյա կյանքին, օգտակար խորհուրդներ կտան աշխատավորներին, կդառնան նրանց մտքերի ու ցանկությունների արտահայտիչը:

Թերթեր և հանդեսներ հրատարակելու ստյոխի դիմումներ են ներկայացվում Կովկասի փոխարքայության մամուլի գործերի կոմիտե, բայց վերջինս գրեթե ամեն անգամ մերժում էր՝ բերելով մի շարք «պատճառաբանություններ»: Նշվում են, օրինակ, թե տպագիր օրգան ունենալու համար իբր ժամանակը չի հասունացել, հրատարակիչների և խմբագրի հարմար թեկնածուներ չկան և այլն:

Ղարաբաղի աշխատավոր ժողովուրդը մտահոգված էր ըստեղծելու դպրոցներ ու տպագիր օրգաններ և ձգտում էր իր ճանապարհին վերացնել առաջացած խոչընդոտները:

ՅԱՐԱԿԱՆ ԳՐԱՔՆՆԵՐԻ ԹՅՈՒՆՆԵՐԸ
ԼՈՒՍԱՎՈՐ ՄՏՔԻ ԹԾՆԱՄԻ

Արևելահայաստանի միացումը Ռուսաստանին բարերար ազդեցություն ունեցավ հայ ժողովրդի տնտեսական և մշակութային կյանքի զարգացման վրա: Այնհաստ էր հատկապես կրթության և հրատարակչական գործի որոշ աշխուժացումը: Ըստ հայ երիտասարդներ բարձրագույն կրթություն էին ստանում Ռուսաստանի խոշորագույն քաղաքներում, շփվում էին առաջավոր մարդկանց, գիտության, գրականության, արվեստի անվանի գործիչների հետ, շատերն էլ մտնում էին հասարակական-քաղաքական կյանքի հորձանուտը, մտահոգվում աշխատավորության հոգսերով:

19-րդ դարի սկզբին, իրոք, նկատելի էր լուսավորական մտքի որոշ արթնացում. լույս աշխարհ էին գալիս տարբեր բլուրթի և ուղղության պատկանող գրքեր, թերթեր, հանդեսներ,

որոնց մեջ ավել կամ պակաս չափով արծարծվում էին հայրենասիրական ու մարդասիրական գաղափարներ: Սակայն ցարական գրաքննչությունը դաժանորեն ճնշում էր ամեն մի լուսավոր միտք: Նրա աչքից չէր վրիպում ոչ միայն աշխարհիկ, այլև հոգևոր, եկեղեցական գրականության լույս ընծայումը: Գրաքննիչները հսկում էին, որ տպագիր օրգանների ու աշխատությունների մեջ սառը խոսք չսալի պետական կարգերի, բարձրաստիճան պաշտոնյաների, եկեղեցու և նրա տերերի հասցեին:

Այդ ժամանակ և հետագայում մամուլի մեջ շեշտակիորեն նկատելի էր ցարի և նրա ստեղծած կարգերի փառաբանումը, հաճախ էին թագավորների և փոխարքաների նկարները (դըրվատական խոսքերի ուղեկցությամբ) տեղ գտնում պարբերականների առաջին էջերում՝ ներկայացնելով իբրև ժողովրդի «փրկարարներ», «իմաստուն» գործիչներ, մարդկանց բարօրության գործով մտահոգված անձնավորություններ: Մամուլի պատմության մեջ քիչ փաստեր չկան, երբ ցարական գրաքննչությունը հենց տպաբանում, դեռ լույս չտեսած գրքի կամ հանդեսի ու թերթի վրա իր ծանր թալթալ էր դնում՝ նկատելով «վտանգավոր» միտք: Հիմնականում հսկվում էր աշխարհիկ գրականությունը, իսկ եկեղեցին շահագրգռված էր իր օրենքները գովերգող և սրբագործող գրքերի լույս ընծայմամբ: Նա ցարական պահնորդական մարմիններին կամ ուղղակի ցարին հաղորդում էր եկեղեցուն վարկաբեկող տպագիր խոսքի մասին: Դեպքեր են եղել, երբ էջմիածնի կաթողիկոսի բողոքի համաձայն բռնագրավվել են գրքեր, թերթեր և ավելի է ուժեղացվել հոգևոր գրաքննչությունը:

Այնպես որ մի կողմից՝ ցարական գրաքննչությունը, մյուս կողմից՝ տեղական իշխանություններն ու եկեղեցին վերակացու էին հրատարակչական գործի վրա, արգելում էին առաջադիմական մտքի հրապարակումը:

Ցարական գրաքննչական մարմինները ժամանակի քաղաքական իրադարձությունները հաշվի առնելով՝ ավելի խստացնում էին հսկողությունը տպագիր խոսքի հրապարակման վրա: Նրանք չէին կարող անտարբեր լինել 1825 թ. դեկաբրիստների շարժման նկատմամբ, որի նպատակն էր տապալել ցարիզմը, վերացնել ճորտատիրական իրավունքը և ստեղծել դեմոկրատական կարգեր: Դեկաբրիստները ձգտում էին նաև ստա-

նալ խոսքի ազատություն, հասնել այն քանին, որ Ռուսաստանում առաջադեմ միտքը ազատորեն ներթափանցի լայն զանգվածների խորքը:

Ի պատասխան նրանց խիզախ ելույթի, ցարական կառավարությունը սահմանել էր գրաքննչության դաժան ռեժիմ: Յուրաքանչյուր գիրք, թերթ, հանդես ստուգվում էր մի քանի անգամ, երկու-երեք գրաքննիչի կողմից: Փոքր կասկածի դեպքում հանվում էր սովյալ հատվածը կամ ուղղակի ցրվում էր ամբողջ շարվածքը:

Գրեթե ամեն օր գրաքննչական կանոնադրությունը լրացվում էր ժամանակի պահանջներից բխող հոդվածներով ու ծանոթություններով: Նոր, լավ բան չէր խոստանում 1826 թ. գրաքննչական կանոնադրությունը: Այն թեև ավելի «ներկայացուցչական» էր, բայց ավելի խիստ էին դարձել կանոնները:

Կանոնադրությամբ գերագույն գրաքննչական կոմիտեի մեջ մտնում էին ոչ միայն ներքին գործերի մինիստրն ու մի քանի այլ բարձրաստիճան պաշտոնյաներ, այլև լուսավորության և արտաքին գործերի մինիստրները: Այդ նշանակում էր, որ «վրտանգավոր» գրականություն կամ «թշնամական» ուղղության պարբերականներ հրատարակելու գործում պատասխանատու են երեք մինիստրներն էլ, և նրանք ցարի կողմից կպատժվեին, եթե թուլացնեին հսկողությունը հակապետական ելույթների հանդեպ: Խիստ պատիժներ էին սահմանվում նաև բոլոր նրանց նկատմամբ, ովքեր կհանդգնեին լիբերալիզմ ցուցաբերել հրատարակչական գործում, անփույթ կլինեին իրենց պաշտոնական պարտականությունների կատարման մեջ:

Նույն ոգին էր իշխում 1828 թվականին ընդունված գրաքննչական կանոնադրության մեջ:

Իհարկե, սխալ կլիներ կարծել, թե ցարական Ռուսաստանում բոլոր գրաքննիչները եղել են ռեակցիոներներ: Հրատարակչական գործի պատմությանը հայտնի են առանձին գրողներ, գիտնականներ, որոնց ակտիվ մասնակցությամբ և գրաքննչությամբ լույս են ընծայել այս կամ այն կարևոր գիրքը, պատմական արժեք ներկայացնող գիտական աշխատությունը: Այլապես գիտական որևէ արժեքավոր հետազոտություն այդ ժամանակաշրջանում չէր հրատարակվի Ռուսաստանում կամ նրա ծայրամասային գավառներում: Խորհրդահայ գրականագետ Ս. Արեշյանը նշում է, որ 19-րդ դարի սկզբին գրաքննչու-

թյամբ թույլատրվել էր ռուսերեն հրատարակել գրքեր Հայաստանի վերաբերյալ: Գրքերի հրատարակման գործը կապված էր երկու պայծառ անունների՝ Ս. Տ. Ակսակովի և Ի. Ա. Գոնչարովի հետ¹:

Գիտական աշխատություններից զատ լույս տեսնող գրական որոշ գործերում հնչում էին ազատության կոչեր, մարմնավորվում աչքի ընկնող գործիչների կերպարները, տրվում մարդկային հարուստ ներաշխարհը, առաքինությունն ու վեհանձնությունը:

Հարկ է նշել, որ եթե ռուսական գրքերը սկզբից կեթ պարբերաբար նախնական գրաքննչության էին ենթարկվում, ապա մի քիչ այլ կերպ էր դրված մյուս ժողովուրդների լեզուներով լույս տեսնող գրքերի կամ պարբերականների գրաքննչությունը: Ուղղակի ասենք, որ հայկական մամուլը մի որոշ ժամանակ, հատկապես 1830—1840-ական թվականներին, հրատարակվում էր առանց նախնական գրաքննչության և միայն տրպագրվելուց հետո էր դատաստան տեսնվում նրա հետ:

Բազմաթիվ փաստեր կան այն մասին, որ գիրքը կամ ամսագիրն ու հանդեսը հրատարակվելուց հետո ամբողջ տպաքանակով հասել է բաժանորդներին և նոր միայն գրաքննչական կոմիտեից կարգադրվել է հավաքել բոլոր օրինակները, հանձնել համապատասխան մարմիններին: Իհարկե, գործը հեշտ ու խաղաղ չէր վերջանում: Պատժվում էին և՛ հրատարակիչը, և՛ հեղինակը. կամ դադարեցվում էր տպարանի գործունեությունը, կամ էլ հրատարակչին գրկում էին որևէ բան հրատարակելու իրավունքից: Երբեմն էլ դատաստան էին տեսնում հրատարակիչների ու խմբագիրների նկատմամբ:

Գրաքննչության պատմությունից հայտնի է նաև, որ մի որոշ ժամանակ, հատկապես ծայրամասային գավառներում, լույս տեսնող գրքերի վրա չէր նշվում գրաքննիչների թույլտվությունը: Մի քանի տպարաններ աշխատում էին առանց գրաքննիչի: Այդպես է գործել Շուշիի տպարանը 1830—1840-ական թվականներին:

Այս երևույթը չէր կարող երկար շարունակվել, հետզհետե դաժան կարգ է սահմանվում նաև գավառներում հրատա-

¹ Տե՛ս Ս. Գ. Արեշյան, «Армянская печать и царская цензура», Ереван, 1957 г., с. 105:

րակվող գրքերի և թերթերի համար: Ավելին, շատ գրքեր էլ որոնք հրատարակվել էին գրաքննիչի թույլ հսկողության կամ ուղղակի թողնվության պայմաններում, իրենց «ամհուսալիության» պատճառով բռնագրավվում էին, խիստ հսկողություն էր սահմանվում հրատարակիչների ու տպարանների գործունեության նկատմամբ: Այդպես է պատահել 1837 թ. Շուշիի հայոց հոգևոր տեսչության տպարանում լույս տեսած Բայրոնի «Շիլիոնի կալանավորի» հայերեն թարգմանության հետ²: Միայն 1845 թ. Շուշիի տպարանում հրատարակված գրքերից առանձերկուսը բռնագրավվում են³:

Շուշիում և ընդհանրապես Անդրկովկասում տպագրվող գրքերի գրաքննչությունը ավելի է խստանում, երբ դրանց վերահսկողությունը 1849 թվականից դրվում է Կովկասի գրաքննչական կոմիտեի վրա: Այն հսկում է նաև արտասահմանից ստացվող գրականությանն ու պարբերականներին:

Եվ այսպես, ժամանակի ոգուն համապատասխան, հեղափոխական պողոթյունների, բանվորական և գյուղացիական շարժումների կապակցությամբ ցարական կառավարությունն ավելի ու ավելի էր խստացնում գրաքննչությունը, թույլ չտալով, որ լուսավոր միտքը ներթափանցի լայն մասսաների շրջանը: Այդպես վարվեց Նիկոլայ Առաջինը 1848 թ. ֆրանսիական հեղափոխությունից հետո: Նա երկյուղ էր կրում այն բանից, որ ֆրանսիական բանվորների շարժումը իր արձագանքը կգտնի նաև Ռուսաստանում:

Նիկոլայ Առաջինը վտանգ էր տեսնում ամեն ինչում, ամեն մի նոր թերթում, հանդեսում, գրքի մեջ: Եվ պատահական չէր, որ 1840—1850-ական թվականները տխուր շրջան էին հատկապես պարբերական մամուլի և գրատպության պատմության մեջ: Եթե վերը նշված ժամանակահատվածում աշխարհի տարբեր վայրերում (մասնավորապես Կ. Պոլսում, Կալկաթայում և այլուր) լույս էր տեսնում 11 հայ պարբերական, ապա Արեվելյան Հայաստանում՝ միայն մեկը: Շատ ու շատ առաջավոր գործիչներ մեծ ջանքեր էին թափում որևէ տպագիր օրգան հիմնելու համար, բայց՝ ապարդյուն:

² Տե՛ս Պետական կենտրոնական պատմության արխիվ (Լենինգրադի մասնաճյուղ), ֆ. 722, ց. 4, գ. 148993:

³ Տե՛ս С. Г. Арешян, «Армянская печать и царская цензура», Ереван, 1957 г., էջ 105:

Պարբերական մամուլը զգալիորեն կրճատվում է նաև մշակութային կարևոր օջախներում: Կարելի է միայն մատների վրա հաշվել ամբողջ Ռուսաստանի հայաբնակ վայրերում միատարակվող թերթերը. Թիֆլիսում 1846—1847 թթ. լույս է տեսնում «Կովկասը», իսկ 1850—1851 թթ.՝ «Արարատ» շաբաթաթերթը: Սրանց էջերում էլ գերազանցապես տպագրվում էին վիճակագրական տվյալներ, կարճ հաղորդումներ, ինֆորմացիաներ ներքին կյանքի վերաբերյալ: Անկեղծ խոսքը կամ քաղաքական երևույթի նկատմամբ որևէ վերաբերմունք ցույց տալը արգելված էր մամուլում:

Մի՞թե ցարական գրաքննչության դաժան կարգի մասին չի վկայում այն փաստը, որ Խ. Աբովյանի և մեր մյուս անվանի գրողների, լուսավորիչների ստեղծագործությունները տրպագրվում էին ուշացումով: Հայտնի է, որ «Վերք Հայաստանին» հրատարակվեց գրվելուց ուղիղ 18 տարի անց՝ 1858 թվականին: Գրաքննչությունը ոչ միայն աղճատել էր տեքստը, այլև վեպից հանել էր առանձին էջեր, մասնավորապես հոգևորականության հասցեին Աբովյանի արդարացի մերկացումները և ամբողջ «Զանգի» հավելվածը:

Հետագայում էլ ցարական կառավարությունը գրաքննչական նոր կանոնադրություններ էր մշակում, հանում կամ ավելացնում էր նոր հոդվածներ, որոնց նպատակն էր խեղդել առաջավոր միտքը, թույլ չտալ մասսայական շարժումների կազմակերպում, քաղաքական զգոնության բարձրացում:

Բայց Նիկոլայ Առաջինն ու նրա հետևորդները իրենց «երկաթյա» օրենքներով ու դաժան դատաստանով այլևս անկարող էին կանգնեցնել Ռուսաստանում սկսված պրոլետարական շարժումը, քաղաքական և տնտեսական պայքարը:

**ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏՔԻ
ՈՐՈՇԱԿԻ ԱՇԽԱՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ**

ԿՈՒԼՏՈՒՐ-ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐ

1850-ական թվականների տնտեսական զարգացումը մի կողմից, գյուղացիական լայն մասսաների շարժումը՝ մյուս կողմից, նպաստեցին ճորտատիրական իրավունքի վերացմանը:

Հետզհետե ուժեղանում էր ճորտատերերի և աշխատավորների հակամարտությունը, սրվում նրանց միջև եղած հակասությունը: Մթնոլորտը շիկացել էր հատկապես Ղրիմի պատերազմից (1853—1856 թթ.) հետո: Եթե երրորդ բաժանմունքը 1858 թ. գրանցել էր 86 հուզում, էլույթներ, իսկ 1859 թ.՝ 90, ապա 1860 թ. դրանց թիվը հասնում է 108-ի¹: Այլևս հնարավոր չէր անտարբեր մնալ մասսաների ձայնին: Եվ 1861 թ. փետրվարի 19-ին՝ ցարը օրենք հրապարակեց ճորտատիրական իրավունքը վերացնելու մասին: Բայց սա միայն խոսքով էր. ճիշտ է, կալվածատերերը ճորտին այլևս չէին համարում իրենց սեփականությունը, բայց նրա տնտեսական դրությունը գրեթե մնում էր նույնը:

Բացահայտելով ճորտատիրական իրավունքի վերացման և ընդհանրապես ցարիզմի ռեֆորմների ամբողջ էությունը, Վ. Ի. Լենինը գրել է. «... 60-ական թվականների ամբողջ «ռեֆորմների դարաշրջանը» գյուղացուն թողեց աղքատ, ընկճված, խավար, կալվածատեր-ճորտատերերին ենթարկված և՛ դատա-

րանում, և՛ կառավարման մարմիններում, և՛ դպրոցում, և՛ զենասովորում»²:

Հետոռեֆորմյան ժամանակաշրջանում ձևավորվեց բանվոր դասակարգը, որը հեղափոխական, ազատագրական պայքարին նոր թափ հաղորդեց: Նա պայքարում էր իր պայմանները բարելավելու, աշխատաժամանակը կրճատելու, աշխատավարձը բարձրացնելու համար:

Առաջընթացի համար աշխատավորներին ստաշարկում էին երկու ուղի: Հեղափոխական շարժման ռազմաչին-դեմոկրատները գտնում էին, որ շահագործումից ազատագրվել կարելի է միայն զենքի ուժով: Լիբերալ գործիչները բոլորովին այլ ուղի էին նշում. նրանք գտնում էին, որ կարիք չկա զենք վերցնելու, կյանքի պայմանները հետզհետե կբարելավվեն «վերևից»՝ ռեֆորմի միջոցով:

Հեղափոխական-դեմոկրատական շարժումը Ռուսաստանում գլխավորում էին Ն. Գ. Չերնիշևսկին, Ն. Ա. Դոբրոլյուբովը, Ա. Ի. Գերցենը, Ն. Ա. Նեկրասովը և ուրիշներ:

Ռեֆորմի կողմնակիցները հիմնականում բուրժուազիայի շատագուվներն էին, նրա գաղափարախոսները, որոնք ոչ մի խոսք չէին ուզում լսել դասակարգային պայքարի մասին:

Ռուսական հեղափոխական-դեմոկրատները հատկապես իրենց մարտական օրգանում՝ «Սովրեմեննիկում», հանդես էին գալիս գյուղացիների շահերի օգտին, ուղղակիորեն դնում էին նրանց ազատագրության հարցը, պահանջում բարելավել աշխատավորների վիճակը, գյուղացուն տալ հող, իսկ բանվորին՝ աշխատանք և փող: Հեղափոխական-դեմոկրատները միայն տնտեսական վիճակի բարեփոխման հարցը չէին բարձրացնում. նրանք ձգտում էին հասնել այն բանին, որ մարդը լիակատար ազատություն ստանա, կախված չլինի որևէ մեկից, գործի բանականության, խելամտության ուժով:

Եվ կարծես բոլոր հեղափոխական-դեմոկրատների անունից էր «ոռու մարդը» (Չերնիշևսկին, կամ նրա խմբակի անդամներից մեկը) հանդես գալիս «Կոլոկոլում»³, կացնի կոչ անում Ռուսաստանին, աշխատավոր մասսաներին մղում հե-

² Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 20, Ե., 1979, էջ 212:

³ Ռուսական այս պարբերականը տպագրվում էր Լոնդոնում (մի քանի համար՝ Ժնևում): Լույս է տեսել 1857—1867 թթ.:

¹ «История СССР», II часть, М., 1962, էջ 207:

դափոխական պայքարի՝ ընդդեմ ցարիզմի և հանուն արդար օրենքների:

Ռուսական հեղափոխական-դեմոկրատական շարժումը իր քարերար ազդեցությունն ուներ ողջ երկրի վրա:

Կենտրոններում և գավառներում տնտեսական ծանր դրությունը ոտքի էր հանել բոլոր ժողովուրդներին: Հեղափոխական գաղափարներով տոգորված այլազգի մտավորականները ձրգտում էին միանալ ռուսներին և միասնական ճակատով մաքանել ազատության համար:

Ուշագրավ էր հատկապես Միքայել Նալբանդյանի մեծաձավալ գործունեությունը, որ լայն կապերի մեջ էր ռուս 60-ականների հետ: Փաստորեն նա հայ հեղափոխական-դեմոկրատական շարժման առաջնորդն էր այդ ժամանակահատվածում: Եվ եթե ռուսական շրջաններում «Սովրեմեննիկը» հանդես էր գալիս իբրև հեղափոխական-դեմոկրատների գաղափարակիրը, ապա «Հյուսիսափայլը» հայ իրականության մեջ Միքայել Նալբանդյանի ակտիվ աշխատակցության շրջանում (1858—60 թթ.) որոշակիորեն տարածում էր ազատաբաղձ մտքեր: Ուղղակի ասենք, որ իր գործունեության առաջին շրջանում «Հյուսիսափայլը» հայ ամենատաջավոր պարբերականն էր, որ պայքար էր մղում կղերաֆեոդալական հոսանքի դեմ: Այդ հոսանքի կողմնակիցները ամուր էին կառչել ֆեոդալական հարաբերություններին և պրոպագանդում էին եկեղեցու պահպանման գաղափարները: Սրանց հեճարանը փաստորեն ցարիզմն էր՝ նորը, առաջադիմականը արգելակող իր ապարատով ու օրենքներով:

Հայ ռեսակցիոներների դեմ պայքարը ուժեղացել էր նաև Արևմտահայաստանում: Առանձնապես վճռական դիրքերից էր հանդես գալիս Հարություն Սվանյանը: Նա Միքայել Նալբանդյանի լավ բարեկամն էր, նրա գաղափարների, մտքերի կողմնակիցը: Իր «Մեղու»⁴ թերթի էջերում նա տպագրում էր Մ. Նալբանդյանի ստեղծագործություններն ու առանձին հոդվածները, դրվատական խոսք ուղղում հեղինակին:

Անցյալ դարի 60-ական թվականներին որոշակի աշխու-

⁴ «Մեղու» պարբերականի (1856—1874 թթ.) խմբագիրն ու տնօրենը մինչև 1863 թվականը եղել է Հ. Սվանյանը, իսկ 1872-ից՝ Հակոբ Պարոնյանը:

ծացում է նկատվում գրականության, արվեստի, դպրոցական, հրապարակախոսության և հրատարակչական գործի ապարեզներում: Միքայել Նալբանդյանից բացի հրապարակ են գալիս Սմբատ Ծախազիզը (1841—1907), Մկրտիչ Պեշիկաշյանը (1828—1869), Պետրոս Դուրյանը (1852—1872), Ռաֆայել Պատկանյանը (1830—1892) և ուրիշներ, որոնց հայրենաշունչ խոսքը, արտաբովս ստեղծագործությունները ընթերցողին համակում են ազատատենչ մտքերով:

Որոշակի քայլեր են նկատվում հայ թատրոնի զարգացման մեջ: Դեռևս անցյալ դարի սկզբներին հայաբնակ շատ վայրերում ստեղծվում են թատերական խմբեր: Առանձնապես աչքի են ընկնում Թիֆլիսում, Բաքվում և Կ. Պոլսում գործողները: Հետևելով ռուսական ռեալիստական արվեստին, Գ. Չըմբշկյանը և իր խաղընկերները ձգտում են ունկնդիրներին ներկայացնել հայ և ռուս դասական գործեր, որոնք մարմնավորում են ժամանակի ոգին ու շունչը: Գ. Չըմբշկյանը իր խմբով շրջում է Անդրկովկասի քաղաքները, բեմական ճշմարիտ արվեստով հիացմունք պատճառում աշխատավորներին:

Հայ անվանի դերասանը հաճախ այցելում էր նաև Արցախ (մասնավորապես Ծուշի): Ահա ինչ է պատմում մեծանուն արվեստագետ Հ. Աբելյանը, որի ծննդյան 100-ամյակը 1965 թ. դեկտեմբերին մեծ շուքով տոնեցին Անդրկովկասի ժողովուրդները. «1865 թ. ամառը Ղարաբաղի հին քաղաքին մտնելու էր մի ֆուրգոն, որի մեջ հոգևած ու շարդված գալիս էին երեք ճանապարհորդներ: Դրանք էին Գ. Չըմբշկյանը, Մ. Ամերիկյանը⁵ և Ս. Մանդիկյանը... Առաջին անգամ խաղացին Հեքիմյանի «Սամվել» ողբերգությունը, որը հաջող անցավ: Երկրորդ անգամ ներկայացրին «Վարդան Մամիկոնյանը»⁶:

1860-ական թվականներին թատերական խաղացանկում մեծ տեղ են գրավում հայրենասիրական պիեսները: Սա պա-

⁵ Միհրդատ Ամերիկյանը ծնվել է 1843 թ.: Սկզբում սովորել է Ալալայցիայի ծխական ուսումնարանում, ապա՝ Ներսիսյան դպրոցում: Այստեղ սովորելիս նա տարվել է գրականությամբ ու թատրոնով: Ներսիսյան դպրոցում նա ղեկավարել է թատերական խումբ և հիմնել ձեռագիր թերթ: Բեմ է դուրս եկել 1860 թ., Թիֆլիսում, «Արշակ Բ» ողբերգության մեջ: 1861—73 թթ. եղել է Գ. Չըմբշկյանի խաղընկերը: Մահացել է 1879 թվականին:

⁶ Տե՛ս «Մշակ», № 161, 1900, օգոստոսի 30:

տահական շէր, արվում էր նպատակով՝ ժողովրդի մեջ ներարկելու ջերմ հայրենասիրություն ու ժողովրդասիրություն, աշխատավորական լայն մասսաներին հասցնելու դրվագներ մեր նախնիների սիրագործություններին:

Հայ թատերական արվեստի զարգացմանը մեծապես նրպաստում է Գաբրիել Սունդուկյանի դրամատուրգիան: Նրա գործերից շատերը ուղղակի և անուղղակի կերպով քննադատում էին շահագործող դասակարգին, մերկացնում հեշտ վատակի տերերին, արտահայտում աշխատավոր մարդու մտորումներն ու ակնկալությունները:

Պարբերական մամուլը աշխուժորեն էր լուսաբանում թատրոնի, գրականության հարցերը: Հենց միայն Թիֆլիսում լույս տեսնող «Մշակ», «Մեղու Հայաստանի» թերթերը և մի քանի հանդեսներ տարբեր ստիթներով հրատարակում էին արվեստին և գրականությանը նվիրված նյութեր:

Ինչ խոսք, վերը նշված պարբերականներից յուրաքանչյուրը յուրովի էր պարզաբանում այս կամ այն խնդիրը, բայց դրականն այն էր, որ ժամանակի մամուլը արձագանքում էր մշակույթի հարցերին, հրատարակում հոդվածներ՝ ստեղծագործությունների բովանդակության, կերպարների մարմնավորման և ընդհանրապես բեմադրությունների հաջող կամ անհաջող լինելու մասին:

Անցյալ դարի 60-ական թվականներին ստաջընթաց քայլեր են նկատվում դպրոցական-կրթական բնագավառում: Ըստեղծվում են նոր դպրոցներ, և որոշակի կարգ ու կանոն է մտցվում դրանց կյանքի մեջ: Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցից գառ, բացվում են օրհորդաց և տղաների ստանձին ուսումնարաններ: Հայտնի էին Ծուշիում Գարեգին Մուրադյանի և այլոց կազմակերպած մասնավոր դպրոցները, որոնց նպատակն էր տարրական կրթություն տալ հայ պատանիներին և աղջիկներին:

Ստանձին կանաք, որոնք հոգով ու սրտով շահագրգռված էին գավառում լուսավորության տարածմամբ, մեծ ջանքեր էին թափում հատկապես աղջիկ երեխաների կրթության գործը կազմակերպելու համար: Ուշագրավ էր շուշեցի Մարիամ Հախումյանի կատարած աշխատանքը: Նրա խնդրանքով Ստեփանոս արքեպիսկոպոսը համաձայնություն է տալիս Ծուշիում հիմնելու օրհորդաց ուսումնարան:

ԿԱՐԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԴԱՐԱԲԱՆՈՒ

ՍՈՒՐԵ ՏԻՐԱՄԱԸՐ ՄԱՐԵԱՄԱԹ ԾՈՒՇԻՈՒՄ

ՌԻՍՈՒՄՆԱԲԱՆԻ



1864

Մ. Հախումյանի կազմած ծրագրով ու գործադրած եռանդի շնորհիվ 1864 թ. ապրիլի 7-ին Շուշիում բացվում է օրիորդաց դպրոց, որի «նպատակն է պատրաստել լուսավորչալ վարժապետուհիք և լուսավորչալ մայրեր»։ Այս դպրոցի բացումը մեծ ուրախություն է պատճառում ոչ միայն շուշեցիներին։ Ժամանակի պարբերական մամուլը ջերմությամբ է արձագանքում այդ նախաձեռնությանը։ «Մեղու Հայաստանի» թերթը գրում է. «Մեր բարեկամներից մեկը հաղորդում է մեզ շատ ուրախարար և մխիթարական լուր Շուշիից, լուր, որն որ ամեն բարեմիտ հայերին անշուշտ պետք է ուրախություն պատճառե և իրան Շուշու հարգո հայ հասարակության հարգ և պատիվ սէտք է բերե։ ... Առանց իզական սեռի կրթության ազգի կրթությունը և հասաչադիմությունը բարոյապես աներևակայելի բան է։ Այս հիման վրա Ղարաբաղու մեր հարգո հայրենակիցները ներկա տարուս մեջ... առաջարկել են ի հաստատություն իրենց առաջնորդին ուսումնասեր և արժան հարգ սրբազան Ստեփանոս արքեպիսկոպոսին, օրիորդաց դպրոցի կանոնադրությունը»⁷։ Այն կոչվել է «Ղարաբաղու սուրբ Մարիամի օրիորդաց դպրոց»։

Նույն թերթը ուղիղ 20 օր հետո «Ազգային» խորագրի տակ գրում է, որ ուրախ է կանանց նախաձեռնություններից հատկապես «բարեգործական և ազգի լուսավորությանը նըպաստող գործքերի մեջ» և որ ձգտելու է պարբերաբար լուսաբանել այդպիսի հայրենակներ նախաձեռնումները։ Թերթն ի լուր բոլորի հայտարարում է հայ կնոջ մարդասիրական մի քայլի մասին, որը «հանձն է առել պահելու նույն դպրոցի մեջ երկու աղքատ աշակերտուհիներ, հոգալով նոցա բոլոր ծախսերը թե՛ ուսման և թե՛ հագուստի համար ու տարեկան էլ խոստացել է վճարել ուսումնարանին նշանակված գումար իր սեփականությունից»⁸։

Տիկին Մարիամը ոչ մի խոչընդոտի առաջ կանգ չի առնում իր սկսած գործը առաջ տանելիս. նա իր բնակարանը, որը բաղկացած էր հինգ սենյակից, տրամադրում է նորաստեղծ դպրոցին և հոգ տանում ուսումնական անհրաժեշտ պարագաներ հայթայթելու համար։ Դպրոցն իր գոյությունը

պահպանում է՝ օգտվելով «երեք տեսակ աղբյուրից. հոգաբարձուհյաց տարեկան տուրքերից, որդեգրուհյաց թոշակից և բարերարաց նվիրատվությունից»⁹։ Այն Շուշիի թեմական դըպրոցին կից էր, այստեղի ուսուցիչներն էլ դասավանդում էին Մարիամյան դպրոցում։ Սակայն առանձին մարդկանց ապիկար գործելակերպը և դրամական միջոցների սուղ վիճակը մի շարք դեպքերում խանգարիչ գործոն են եղել և՛ դպրոցական-կրթական գործում, և՛ կուլտուր-լուսավորական աշխատանքի բնագավառներում։

Վրացական ԽՍՀ պետական կենտրոնական պատմության արխիվում, Կովկասի փոխարքայությանը կից մամուլի կոմիտեի գործերի մեջ որոշ գրագրություններ են պահպանվել այն մասին, որ դեռևս անցյալ դարի կեսերից դարաբաղցիներից մի քանիսը փորձեր են արել գավառում հիմնելու պարբերականներ՝ լուսաբանելու տեղական և արտասահմանյան կյանքը։ Բայց մի շարք պատճառներով նրանց մտահղացումները չեն կենսագործվել։ Հիմնականում երկու խոչընդոտներ կաշին. առաջին՝ ցարական մարմինները շահագրգռված չէին գավառներում տպագիր օրգաններ ստեղծելու, երկրորդ՝ հրատարակիչները նյութական ծանր վիճակի մեջ էին։ Տվյալ դեպքում մեզ համար կարևորն այն է, որ պայքար էր տարվում տեղերում թերթեր և ամսագրեր ստեղծելու համար։

Ինչևէ, 19-րդ դարի 60-ական թվականները հասարակական կյանքի պատմության մեջ հայտնի են իբրև գաղափարների որոշակի զարթոնքի ժամանակաշրջան։ Մի կողմից՝ քաղաքական շարժումները, հեղափոխական տրամադրությունների անը, առաջադեմ գաղափարներով տոգորված գործիչների ակտիվացումը, մյուս կողմից՝ գրականության, արվեստի, դպրոցի, մամուլի, հրապարակախոսության զարգացման համար պայքարը ամուր հող են ստեղծում Ռուսաստանում և նրա ծայրամասային գավառներում՝ ուժեղացնելու դասակարգային պայքարը։

⁷ «Մեղու Հայաստանի», № 11, 1864, մարտի 14։

⁸ «Մեղու Հայաստանի», № 14, 1864, ապրիլի 4։

⁹ Լեո, «Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգեվոր դպրոցի», 1914, էջ 301։

Ծուշիի հոգևոր հայրերի տպարանը շարունակում է տպագրել նոր հրատարակություններ: Ամենից ուշագրավը «Հայկական աշխարհ» գրական, մանկավարժական և կրոնական¹ ամսագրի 1874 թվականի մի շարք համարների տպագրությունն էր և 1875 թ.² համարներում զետեղվող տեքստերի խմբագրումը Ծուշիում: Ուստի կխոսենք պարբերականի երկու տարիների նյութերի, նրանց նշանակության և սովորոտ կողմերի մասին:

Հայտնի է, որ ամսագիրը սկսել է լույս տեսնել 1864 թվականից Թիֆլիսում և հրատարակվել է մինչև 1879 թվականը³: Սա փաստորեն Մ. Աղաբեկյանի «Կոունկ հայոց աշխարհի» ամսագրի շարունակությունն էր, որը հետագայում, վերանվանվում է «Հայկական աշխարհ»:

Ամսագրի տերն ու տնօրենը Խորեն Ստեփանեն էր⁴, զարգացած մի մարդ, որ ավարտել էր Մոսկվայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը և ստացել գիտական աստիճան: 1873 թվականին հրավիրվում է Արցախ՝ թեմական դպրոցում ոռոսաց լեզու դասավանդելու: Նրա և տեղի հաշտարար դատավորի ջանքերով հիմնվում է օրիորդաց դպրոց: Նա ձրգտում է որոշ չափով բարելավել մայրենի լեզվի ուղղագրությունը: Այդ մասին խոսք է բացվում դեռևս 1865 թվականին: «Ծանուցմունք խմբագրության կողմից» հոդվածում ուղղակի գրված է. «Մեր կարդացողները արդեն կտեսնեին, թե ինչ կերպով կամենում էինք մենք նշանակել բառերը. գրել այնպես, ինչպես խոսում ենք, և խոսել այնպես, ինչպես գրում ենք, գրել այնպես, ինչպես արտասանում ենք, և արտասանել այնպես, ինչպես գրում ենք, ահա այն մեծ, բարձր և նշմարիտ

¹ Մի քանի համարներում գրված է միայն՝ «գրական և մանկավարժական»:

² «Հայկական աշխարհ», 1875, № 12, էջ 195:

³ Նրա 1874—75 թթ. առանձին համարները լույս են տեսնում Գանձակում, 1876 թ.՝ Թիֆլիսում, 1877—1879 թթ.՝ Բաքվում, այնպես որ հանդեսը խմբագրի հետ շրջագայում էր Անդրկովկասի քաղաքներում:

⁴ «Ստեփանեն», «Հայասեր», «Իշխան Բագրատունի», «Թիֆլիզեցի Հայ» և այլ տոորագրություններով Խ. Ստեփանեն հաճախակի հանդես է գալիս պարբերական մամուլի էջերում:

ակիզքը, որ քարոզում ենք և որին կամենում ենք հետևել մենք: Այս պատճառով մեր կարդացողները կտեսնեն, որ դժվար բանը մենք չենք գրում **դժուար**, ինչպես գրվել է մինչև այսօր. գրում ենք **գրվել** և ոչ **գրուել**⁵: «Հայկական աշխարհի» հրատարակիչը առաջարկել էր բառակարգում յ-ն գրել **հ** (որտեղ **հ**-է արտասանվում), ձայնավորից առաջ **ու**-ն գրել **վ**, եթե հընչում է **վ**, **ո**-ն տատարածել **օ**, չգրելով բառավերջում **ա**-ից և **ո**-ից հետո չհնչվող ու չլավող յ-ն:

Մի խոսքով, Խ. Ստեփանենի «ուղղագրության ռեֆորմի» ակզբունքն էր՝ գրությունը համապատասխան դարձնել արտասանությանը:

Ավելացնենք նաև, որ Ստեփանենի բոլոր առաջարկները չէ, որ ընդունելի էին: Ժամանակին նրա նույնիսկ հիմնավոր առաջարկների դեմ առարկել են շատերը, բայց նա այն համոզմունքին մնաց, որ, ինչպես ինքն էլ ասում՝ «նոր ուղղագրությունն ընդունվելու և տարածվելու է անշուշտ մի օր հայերի մեջ»: Եվ ուղղագրության նրա որոշ բարելավումները հետագայում ընդունվեցին:

Մի շարք նախաձեռնությունների հեղինակ էր Խ. Ստեփանեն: Ուշագրավ հանգամանքներից մեկն այն էր, որ նա հանձն առավ Ծուշիում հրատարակել «Հայկական աշխարհը»: Նա մեծ ջանքեր թափեց, որպեսզի իր պարբերականի համար կենդանացնի Արցախի հայոց թեմական հոգևոր դպրոցի տպարանը և այն հագեցնի անհրաժեշտ սարքավորումներով:

«Հայկական աշխարհը» լայն ծրագիր ուներ. Ծուշիում տրպագրված հենց առաջին՝ ապրիլյան համարում Խորեն Ստեփանենի՝ ութ էջի վրա զետեղված խոսքում ասվում է, որ ամսագիրը հետապնդում է միայն լուսավորական, դաստիարակչական նպատակ: Նշվում է նաև, որ Ծուշիում հրատարակվելիք պարբերականը հանդես է գալու նոր ծրագրով: Այդ մասին հաղորդում է տրվում Անդրկովկասի մի շարք պարբերականներում: Ահա թե ինչ է գրված «Մշակի» 1874 թ. մարտի 14-ի համարում. «Կատավարությունից թույլատրված նոր պրոգրամայով այս 1874 թվի ապրիլ ամսից պետք է հրատարակվի նոր օրագիր՝ «Հայկական աշխարհ», որը կբովանդակի՝

⁵ «Հայկական աշխարհի կոունկ», № 3—4, 1865, էջ 114:

ՀԱՅԿԱԿԱՆ

ԱՇԽԱՐՀ

ԳՐԱՆԱԳՐԻ ԲԱՐՈՎՈՒՄ ԵՒ ԿՐՕՒՄԻՆ ԳՐԱԳԻՐ

ԱՐՄԱՆԱԳՐՈՒՄ ԵՒ ԵՐԹՆԵՐՈՒՄ ԵՍՏՈՒՄ ԵՎ ԲՐԱՆՈՒՄ

ԲՈՎԱՆՆԵՐԻ ԲԱՐՈՎՈՒՄ:

Կրթութիւն

1	Կրթութիւնի ինքնակրթութեան համար	—	—
2	Հայկական լեզուի դասագրքեր	—	—
3	Ինքնակրթութեան համար լեզուի (բարբառ)	—	—
4	Ինքնակրթութեան համար լեզուի (բարբառ)	—	—
5	Ինքնակրթութեան համար (Կաթողիկոսական)	—	—
6	Ինքնակրթութեան համար (Կաթողիկոսական)	—	—
7	Ինքնակրթութեան համար (Կաթողիկոսական)	—	—
8	Ինքնակրթութեան համար (Կաթողիկոսական)	—	—
9	Ինքնակրթութեան համար (Կաթողիկոսական)	—	—
10	Ինքնակրթութեան համար (Կաթողիկոսական)	—	—
11	Ինքնակրթութեան համար (Կաթողիկոսական)	—	—
12	Ինքնակրթութեան համար (Կաթողիկոսական)	—	—
13	Ինքնակրթութեան համար (Կաթողիկոսական)	—	—
14	Ինքնակրթութեան համար (Կաթողիկոսական)	—	—

ԸՄԻՐԻ

1874

ԸՄԻՐԻ Հայկական Գրքերի Տպարան
(Կրթութեան նպատակով հիմնադրուած)

24

1. Մանկավարժական ընտիր հոդվածներ, մանկավարժության ներկա դրության և զարգացման տեղեկություններով զանազան լուսավորված աշխարհների մեջ:

2. Օրիորդներին և պատանշակներին օգտավետ ընթերցանության համար գրվածներ պատմական, բնագիտական, կենսագրական, ճանապարհորդական, ստողջասպահական և այլն:

3. Կրոնական գրվածներ, քարոզներ: Ս. Գրքի թարգմանություններ աշխարհաբար լեզվով:

4. Աշխարհաբար լեզվի կանոնների և ոճերի քննություններ:

5. Մանկավարժական և դպրոցական գրվածների քննություն. հոգևորականների և հոգևոր դպրոցների մասին տեղեկություններ և այլն:

Իրոք, ամսագրի մի քանի համարները պարունակում են հետաքրքիր տեղեկություններ առանձին ժողովուրդների միատուկացի, սովորությունների, բնակչության կազմի, զբաղմունքի, տարբեր երկրների աշխարհագրական դիրքի, պատմական անցքերի ու կարևոր իրադարձությունների մասին, որոնք հայ բնակչությանը հաղորդակից են դարձնում գիտական արժեք ներկայացնող փաստերի, հայ և արտասահմանյան գրականության առանձին մտուշների, թատրոնի, գեղարվեստի նորությունների հետ:

Ամսագրում տպագրվում են հատվածներ Մովսես Խորենացու «Հայոց պատմությունից» և մեր նախնիների հերոսական գործերից: Նրա էջերում լայն տեղ է տրվում դպրոցական կյանքին: Մասնավորապես նշվում է, որ 1860—1870-ական թվականներին գալատում որոշ չափով ավելացել են ուսումնառանները, համեմատաբար բարելավվել ուսուցման մեթոդները, համարվել ուսուցչական կոլեկտիվները:

Քննադատելով ուսուցման հին եղանակները, ամսագիրը գրում է, որ աշակերտները ուսուցիչներին հարգում էին ոչ թե սիրելուց, այլ երկյուղից և համարձակություն չունեին որևէ մեկից բացատրություն պահանջել այս կամ այն հարցի վերաբերյալ: Իհարկե, ընդգծում է «Հայկական աշխարհը», այսպիսի պայմաններում շատ դժվար է զարգացնել սովորողների մտավոր հորիզոնը, պետք է հասնել այն քանին, որ աշակերտները սիրեն ուսուցչին, դիտեն այն իբրև կենսական պահանջ:

«Հայկական աշխարհը» շեշտում է նաև ուսուցիչների հա-

մակողմանի զարգացման անհրաժեշտությունը. «Ուսուցիչները
ևարոտ են երկու բանի,— կարդում ենք այստեղ,— նոքա պետք
է ունենան ուսուցանելու և ուսանելու ոգի: Նոքա ոչ միայն
սովորեցնելու, այլև սովորելու հարկավորություն ունին»⁶:

Ավելին, ամսագիրը տպագրում է «Գործնական խրատներ
անփորձ ուսուցիչին» վերնագրով հոդվածների շարք, ուր խոս-
վում է ուսուցիչների մանկավարժական վարպետության, աշա-
կերտների մեջ դեպի կրթությունը, ուսումը սեր պատվաստելու
մասին: Ուսուցումը հաճելի պետք է լինի ոչ միայն աշակերտ-
ների, այլև ուսուցիչների համար: Լրջությամբ և խոհեմությամբ
կատարելով իրենց պարտականությունները, ընդգծում է պար-
բերականը, ուսուցիչները երբեք չպետք է անպատրաստ մըտ-
նեն դասարան:

Ամսագրի էջերում բազմաթիվ նյութեր են գետնդրվում նաև
աշակերտների դաստիարակության, դպրոցներում ֆիզիկական
կուլտուրայի զարգացման, մի շարք առարկաների օգտակա-
րության, տեսության և պրակտիկայի խելացի զուգորդման և
այլ հարցերի մասին: Ընթերցողները ծանոթանում էին առան-
ձին դպրոցների աշակերտների քանակի, առաջադիմության,
ուսումնական ծրագրերի հետ:

«Հայկական աշխարհը» հանդես էր գալիս նաև իբրև գի-
տությունը պրոպագանդող. «Բայց եթե մի գիտնական և հմուտ
անձ կամենա, որ իրենից հետո եկողները կամ ապրողները
յուր ուսումից և գիտությունից օգուտ քաղեն, այն ժամանակ
նա գործ կածե կենդանի խոսքի տեղ գրությունը»⁷: Եվ նա
առիթը օգտագործում է քննադատելու նրանց, ովքեր թերա-
գնահատում են կանանց՝ գիտության մեջ խորանալու կարո-
ղությունը: «Աղջիկների համար օգտավետ գիտությունները»
վերնագրով հոդվածում մատնանշվում է այն նշմարտությունը,
որ կանանց համար էլ պետքական են ոչ միայն հասարակա-
կան գիտությունները, արվեստը, գրականությունը, այլև մա-
թեմատիկան, ֆիզիկան, երկրաբանությունը, կենդանաբանու-
թյունը, բուսաբանությունը և այլն:

Ամսագիրը պատշաճ տեղ է հատկացնում մարդու՝ կյանքի
տարբեր բնագավառներում ունեցած դերի պարզաբանմանը,

⁶ «Հայկական աշխարհ», 1875, № 8—9, էջ 133:

⁷ «Հայկական աշխարհ», 1875, № 1, էջ 24:

նպատակ ունենալով զարգացնել այն միտքը, որ լինելով աշ-
խարհի էակներից ամենազարգացածն ու կատարյալը, միայն
նա հնարավորություն ունի ամեն ինչ ըմբռնել գիտակցությամբ:
Ուստի պետք է այդ կարողությունը օգտագործի խելամտորեն,
բանականության ուժով:

Առաջ է քաշվում գիտության տվյալները ժողովուրդների
բարօրությանը ծառայեցնելու հարցը, կոչ է արվում բարձրաց-
նելու գիտության մշակների հեղինակությունը: Բայց էական է
նաև, ընդգծում է «Հայկական աշխարհը», որ գիտությամբ
զբաղվեն ոչ թե առանձին անհատներ, այլ կոլեկտիվներ, խըմ-
բեր: «Իբրև ընդհանուր մարդկային դաստիարակության էական
մաս», աստիճանաբար գիտությանը պետք է տիրապետեն մաս-
սաները: Իսկ դրա համար ամսագիրը առաջարկում է հիմնո-
վին փոխել գիտելիքների ձեռքբերման մեթոդները, դնել դը-
րանք առաջադեմ ուղղությունների վրա, թույլ տալ մարդուն
ինքնուրույն մտածել ու դատել, հրապարակ հանել իր կար-
ծիքը: Գիտության զարգացման գլխավոր պայմաններից են,
ինչպես իրավացիորեն նշում է հայ պարբերականը, անհրա-
ժեշտ միջոցներ ունենալը, մեծ խոշընդոտների շհանդիպելը,
հալածանքի չենթարկվելը, մի բան, որ պակասում էր այդ ժա-
մանակներում:

Գիրքը մարդու համար մեծ բարիք է, նրա խորհրդատուն,
առաջընթացի ուղեհիշը: Այն ուղղակի հրաշալիք է՝ հրաշալիք-
ների մեջ: Եվ հասկանալի է, թե ինչու տասնյակ տարիներ ա-
ռաջ «Հայկական աշխարհը» բազմաթիվ մանկավարժական,
գրական հարցերի հետ միասին նշել է գիրքը սիրելու կարևո-
րությունը: Նրա հրատարակիչ-խմբագիր Խորեն Ստեփանեն,
խմբագրության անդամներ Համբարձում Առաքելյանը և Հով-
հաննես Քուչուրեկյանը, առավել աչքի ընկնող հոդվածագիր-
ները՝ մեր մամուլի անխուճ մշակներից Գրիգոր Արծրունին,
Ներսիսյան ուսումնարանի հոգաբարձու Գրիգոր Իզմիրյանը
և ուրիշներ գիրքը համարում էին մարդու հոգևոր սնունդը:

«Հայկական աշխարհը» մտահոգվում է նաև այն բանով,
որ կարդալ կարողանան բոլորը, յուրացվեն գրքում արժարձ-
ված մտքերը և դրանք օգտագործվեն բարի նպատակով: Ավել-
ին, կարդալը ոչ միայն ընդարձակում է մարդու մտավոր կա-
րողությունը, այլև նրան օժտում է լավ բանի համար պաշքա-
րելու ձգտումով: Եվ «Հայկական աշխարհը» բացեիքաց հայ-

տարարում է, որ առանց գրքի շատ դժվար կլինի գիտությանը զարգացումը: Չէ՞ որ մարդիկ առանց իրենց նախորդների գիտական աշխարհը ճանաչելու չեն կարող վիթխարի քայլերով առաջ գնալ և հասնել նոր նվաճումների: Գիտության թոփշքը, նշում է «Հայկական աշխարհը», մարդկային սերունդների բանականության արգասիք է: Պարբերականը զարգացնում է իր առաջ քաշած թեզը, ուղղակի կերպով բարձրացնելով դրա հետ առնչվող նոր հարցեր: «Ինչպե՞ս եք կարդում գիրքը», — ահա մի նոր հարց, որի պատասխանը ևս տրվում է այստեղ: Ուստի պետք է կարողանալ լավ գիրքը զանազանել վատից, ապա ընտրածը կարդալ շատ ուշադիր, այն հաշվով, որ ընկալվեն նրա մտքերը: Հետևյալ համեմատությունն է արվում. «Այն կերակուրը, որ մտնում է ստամոքսի մեջ, բոլորովին չի կազմում մարմին, այլ միայն նորա մի մասը, որին մարսում է ստամոքսը, նմանապես և մարդու միտքը չի լուսավորվում առհասարակ այն ամեն գրքերով, որոնց կարդում ենք մենք այստեղ բացատրված կանոնների համաձայն»⁸:

Գիրքը պետք է կարդալ խոր համոզմունքով ու նպատակով: Այս միտքն արտահայտելով՝ «Հայկական աշխարհը» շարունակում է. «Հայկական աշխարհը» երաշխավորում է առաջին հերթին կարդալ այն գրքերը, որոնք մարդու մեջ զարգացնում և արմատավորում են հայրենասիրություն և ժողովրդասիրություն, բարձրացնում են առնական ոգին, խիզախությունը, օժտում իր նախնիների նկատմամբ խոր սիրով ու հարգանքով: Ահա թե ինչու նրա էջերում տպագրվում են Մուսկես Խորենացու «Հայոց պատմությունից» դրվագներ, Հովհաննես Քուչուքեկյանի օգտակար պատմվածքները («Անբախտ Սելիմը և յուր պատմությունը», «Բաղդասար մուստաֆան և յուր պատմությունը» և այլն), գրական չափածո գործեր:

«Հայկական աշխարհը» ակտիվ գործոններ է համարում նաև շրջապատը, հասարակական վայրերը, կուլտուր-լուսավորական օջախները՝ շեշտը դնելով կոլեկտիվ կերպով կատարվող ձեռնարկումների հաջող անցկացման վրա: Նա գերադասում է ընտանիքի դերը մարդու դաստիարակության ասպարեզում: Կրթության և դաստիարակության խնդիրները բաղա-

տելով, պարբերականը հանգում է այն հետևության, որ երկուսն էլ մեծ զորավիգ են հասարակության «առաքինի, բարոյական և օգտակար անդամներ» պատրաստելու, մարդու սիրտը և հոգին հարստացնելու գործում: «Հայկական աշխարհի» մտահոգությունը հիմնականում դա էր, այսինքն՝ տպագիր խոսքի ուժով ու ներգործությամբ, օգտակար խորհուրդներով, ընթերցողին գրքի հետ կապելու միջոցով կրթել ու դաստիարակել հայրենիքի, ժողովրդի մասին մտածող քաղաքացիներ:

Բավականաչափ հարուստ ծրագրեր ունեւորած ամսագիրը, և ամեն անգամ, յուրաքանչյուր նոր տարվա շեմին հրապարակելով դրանք, ընթերցողներին տեղյակ էր պահում կարևոր հարցերի մասին: Բայց այն գործում էր շատ դժվարին պայմաններում: Նյութերը մի քանի անգամ գրաքննչության էին ենթարկվում Թիֆլիսում, իսկ տպագրությունը կատարվում էր ուրիշ քաղաքներում (Բաքվում, Գանձակում կամ այլ տեղ): Լ'ա դեռ բավական չէր, պարբերականը և առաջին հերթին նրա հրատարակիչը ենթարկվում էին դաժան հալածանքի՝ ոչ միայն ցարական պահնորդական մարմինների, այլև առանձին անձնավորությունների ու խմբագրությունների կողմից: 1870 թ. № 1-ում զետեղված խմբագրականում ուղղակի կարդում ենք. «Հայկական աշխարհը» ամեն տեսակ հալածանքին ենթարկվեցավ միշտ: Ի տրտմություն թշնամիներին, որքան հալածանքը խիստ էր, այնքան «Հայկական աշխարհը» հաստատ հողի վրա կանգնեց, ավելի մարդասեր ուղղություն բռնեց, ավելի ճշմարտություն ու սեր քարոզեց, ավելի հարգողներ գտավ»:

«Հայկական աշխարհում» հրապարակվող նյութերը բազմաժանր էին. հոդվածների, ինֆորմացիաների, թղթակցությունների, նամակների կողքին զետեղվում էին բանաստեղծություններ, արձակ գործեր, առակներ, որոնք հագեցված էին հայրենիքի տխուր ու մոռյալ վիճակը փոխելու տրամադրությամբ: Ընդհանրապես Խ. Ստեփանյան եկեղեցու նկատմամբ մեծ հավատ ուներ և հնազանդ էր եկեղեցական ծիսակատարությունների: Եվ պատահական չէր, որ ինչպես Թիֆլիսում, Գանձակում և Բաքվում, այնպես էլ Շուշիում լույս տեսած համարներում «Հայկական աշխարհը» բավական տեղ էր հատկացնում նաև եկեղեցական, կրոնական նյութերին, տպագրում էր քարոզներ, սաղմոսներ, Աստվածաշնչից հատվածներ, պրո-

⁸ «Հայկական աշխարհ», 1875, № 1, էջ 24:

պագանդում հոգևորականության «մեծ» դերը կյանքի բոլոր քննազավառներում:

Տպագրվում էին նաև խրթին, կենդանու պատմություններ ու գրույցներ՝ առանձին տերությունների դատարանական կարգի, սիստեմի, ինչպես նաև բնական երևույթների մասին: Հրապարակված առածների մի զգալի մասը կապ չունեին բարոյականության հետ, թեև տպագրվում էին «դաստիարակչական» նպատակով, «Բարոյական» խորագրի տակ:

Իր էությունը «Հայկական աշխարհը» պահպանողական էր, չէր տեսնում ժողովրդի ներսում տեղի ունեցող շերտավորումը, դասակարգային պայքարի սրումը, կյանքի առաջընթացի պայքարը կապում էր միայն տգիտության, խավարից Իրսու բերելու, կուլտուր-լուսավորական օջախներ ստեղծելու, հայրենագուտ նախաձեռնումներ կատարելու հետ:

1870-ական թվականներին հալոց հոգևոր տեսչության տըպարանում, «Հայկական աշխարհից» բացի տպագրվում են գրքեր և գրքույկներ: Սակայն հետագա տարիներին թուլանում է նրա գործունեությունը (գրեթե շարքից դուրս են գալիս տները, տպագրական մեքենան և շարվածքի սարքերը):

Ծիշտ է, բացվում է նոր՝ մասնավոր տպարան, բայց դա էլ աղքատիկ էր, չունեին հայերեն մի քանի տատատեսակներ, տպագրությունը կատարվում էր շատ անորակ: Այս նոր տպարանում լույս տեսած գրքերը արատավոր էին մասնավորապես տեխնիկական տեսակետից, և ժամանակի մամուլը քննադատական խոսք էր ասում այդ մասին: Լույս տեսած առաջին գրքերից էր Ջոն Վիլյամ Դրեյկերի «Պատմություն մտավոր զարգացման Եվրոպայի»: Գրքի թարգմանությունը կատարել էր Արիստակես Վարդապետ Սեդրակյանը: Նա Ծուշիի թեմակալի փոխանորդն էր և որոշ ժամանակ վարում էր թեմական դպրոցի տեսուչի պաշտոնը: Նրա՝ թարգմանության մասին գրած փոքրիկ գրախոսականում հեղինակը, անդրադառնալով տպագրության որակին, գրում է. «Ինչ վերաբերում է տպագրության, պետք է ասել, որ արտաքին կողմից շատ լավ չէ, մանավանդ շատ տպագրական սխալներով, տեղ-տեղ անորոշ և անկանոն տատերով: Բայց այդ ամենը առաջ է եկել ոչ թե իր՝ թարգմանչի անուշադրությունից կամ խնայողությունից, այլ տպարանատիրոջ կողմից իր պարտքը անբարեխղճաբար կատարելուց: ... թեև այդ տպարանը Վ. Սեդ. հետ պայման է

կապել օրինավոր կերպով տպագրելու, բայց գրքից երևում է, որ նա շատ տատեր չի ունեցել. Օրինակ «ի» տառը չունենալով, նա «ի» և «ւ» է գրել»⁹:

1880—1881 թթ. Արցախի թեմական դպրոցի հոգաբարձությունը ամեն կերպ ձգտում էր ոտքի կանգնեցնել իր տպարանը¹⁰: Եվ այդ նպատակով Մոսկվայից բերել է տալիս տպագրական նոր մեքենաներ ու տատատեսակներ, սակայն դրանք կանոնավոր չեն բանեցվում: Մինչև տպագրական գործի որոշ չափով կարգավորումը Ծուշիում, առանձին մարդիկ, հատկապես կանաչ, զբաղվում էին գրքային տեքստերի արտագրությամբ ու վաճելչագրությամբ:

Ուշադրության արժանի են հատկապես Մարգարիտ Ալեքսանյանի (1838—1902)¹¹ հայրենամուկեր ջանքերը: Դեռ փոքր հասակից նա մեծ սեր ուներ դեպի գիրն ու գրականությունը: Տարթի վանքում նա տես-



Գեղանկարչուհի
Մարգարիտ Ալեքսանյան

⁹ «Մշակ», № 69, 1880, ապրիլի 29:

¹⁰ Այդ տպարանը աշխատեցնելու համար մի րոշ ժամանակ տալիս են շուշեցի Մելքոն Բաբաջանյանին, սակայն վերջինս հրաժարվում է և բացում է իր սեփական տպարանը, որն ուներ անհրաժեշտ սարքավորումներ ու տպագրական մեքենաներ:

¹¹ Ծնվել է Ծուշիում: Գրագետ է, արձեղ Արեւ-Եղիսաբեթի օրհորդաց դպրոցում, ուր սովորում էին 10—15 աղջիկ: Սկզբից էս տարված էր ձեռագործությամբ, բայց հետագայում թողնում է այն և զբաղվում հսկայական գեղագրությամբ: Նա մտահոգված էր իր ձեռքի աշխատանքի տպագրությամբ. ձեռագիրն ուղարկվում է Վենետիկ՝ իր ծախքով հրատարակելու համար: Այդ իրականացնում է միայն հետագայում:

նում է շքեղ կազմված մի ավետարան և մտահղանում է գրադ-
պել գեղանկարչությանը: Երիտասարդ Մարգարիտը իր սեն-
յակը դարձնում է նկարչական արվեստանոց: Նա պատրաս-
տում է «Հայկական գեղանկարչություն» պրոմը և հրատարա-
կում: Նրա ձեռնարկած գործերի մեջ ուրույն տեղ է գրավում
այն ձեռագիր ավետարանը, որն այժմ պահվում է Էջմիածնի
եկեղեցու թանգարանում: Հինգ տարվա (1867—1872 թթ.) ըն-
թացքում հայ կինը բացառիկ գեղեցիկ ձեռագրով արտագրել
է ծավալուն գիրքը՝ շխնայելով իր աչքերի լույսն ու ֆիզիկա-
կան տկարությունը:

Բարձր գնահատելով Մ. Ալեքսանյանի վայելչագրությունը,
Լեոն գրել է. «Պետք է հասկանալ նրա զծած յուրաքանչյուր
գծի պատմությունը, պետք է իմանալ ինչպիսի հանգամանք-
ների մեջ ձեռքն աշխատի նրբությամբ, ճաշակավոր դասավո-
րության է հասել, և այն ժամանակ ամենայն իրավամբ կարող
ենք գովել կամքի ուժը, համառ ու չարքաշ աշխատության
պտույղը, որ անկասկած ստեղծագործողի բնականից բարձր
ընդունակություններն է հայտնում»¹²: Մարգարիտ Ալեքսան-
յանի օրինակը եզակի չէր Շուշիում:

Դպրոցների համար համեմատաբար մեծ տպաքանակով
ձեռնարկների, մայրենի լեզվով գեղարվեստական և այլ տիպի
գրականության տպագրումը և, ընդհանրապես, հասարակական-
գիտական մտքի զարգացումը թելադրում էին ունենալ տպա-
գրական որոշ բազա, արագատիպ տպարաններ՝ ժամանակի
տեխնիկական ասրքավորումներով հագեցած: Այդպիսին էր
1881 թվականին Շուշիում բացված Միրզաջան Մահտեսի Հա-
կոբյանի տպարանը:

Տպարանի ստեղծման և հետագա գործունեության մասին
հետաքրքիր հուշեր է պատմում Արցախի հրատարակչական
և ընդհանրապես մշակույթի պատմությանը քաջածանոթ Պետ-
րոս Զաքարյանը: Նա գրել է. «Շուտով Բաքվից արքայից վե-
րադարձավ Մահտեսի-Հակոբյան Մ., հիմնեց իր տան կից հա-
տուկ շենքում մի տպարան, որտեղ աշխատում էին իր որդի-
ները: Ծիշտ է, տպագրական մամուլը նոր երևույթ չէր Ղարա-
բաղում... Ծվեյցարիայից՝ Բազելից եկած միսիոներները հիմ-

նել էին Շուշիում հայկական տպարան, որտեղ լույս էին տեսել
աշխարհաբար ավետարանը և ուրիշ շատ գրքեր, ապա թե-
մական դպրոցը բանեցրել էր նույն մամուլը միաժամանակ:

Իմիջիայրոց, այստեղ իր գրական մկրտությունը ստացավ
մեծ գրող Լեոն, որը տպարանի սուսչին արքագրողն էր. այս-
տեղ սկսեց իր հրատարակչական գործունեությունը Տիգրան
Նազարյանը, հրատարակելով Սենկևիչի «Պոզնանի ուսուցչի
օրագրից» պատմվածքը, Ն. Տեր-Ավետիքյանի «Քնար խոս-
նակը» և այլն, այստեղ երիտասարդ վաճառականական գոր-
ծակատար Աբել Ապրեսյանը կատարեց Րաֆֆու «Խեղճի» ա-
ռաջին տպագրությունը, Արիստակես Սեդրակյանը տպագրեց
«Դրեպերը» և այլն»¹³:

Րաֆֆու «Խեղճի»¹⁴ տպագրությունը ուշագրավ երևույթ
էր և ունի հետաքրքիր պատմություն: Ոչ միայն հեղինակը,
այլև ստանձին ուսանողներ ու մտավորականներ ցանկանում
էին «Խեղճը» տեսնել շքեղ հրատարակությամբ, բավականին
մեծ տպաքանակով: Եվ ահա 1880 թ. Մոսկվայի համալսա-
րանի ուսանող Գ. Միրզոյանը դիմում է հեղինակին՝ տպագրու-
թյան թույլտվություն ստանալու: Սակայն այդ մտահղացումը
Մոսկվայում չի իրագործվում, որովհետև Րաֆֆին արդեն իր
համաձայնությունն էր տվել այն տպագրելու Շուշիում: Ի դեպ
նա գոհունակությամբ է խոսում Մ. Մահտեսի-Հակոբյանի տը-
պարանի բարձրորակ աշխատանքի մասին:

1886 թվականին այս տպարանում սուսչին անգամ հայե-
րեն լույս է տեսնում ռուս մեծ գրող Ն. Գոգոլի «Տարաս Բուլ-
բան»: Սա բնագրի ողղակի թարգմանություն չէր, այլ ստան-
ձին հատվածների բովանդակության շարադրանքը: Երկի թարգ-
մանությունն անհաջող էր: «Մուրճը» 1891 թ. № 10-ում գրում
է. «Այս փոխադրությունը երբեք չի կարող փոխարինել իսկա-
կան «Տարաս Բուլբան», ցանկալի է այս վերջինի լիակատար
թարգմանությունը»: Պատահական չէր «Տարաս Բուլբայի»
թարգմանությունը հայերեն. այն արտահայտում է ուկրաինա-
կան ժողովրդի ազատագրական պայքարը, մարմնավորում

¹³ «Նորք» գրական, գիտական և քաղաքական հանդես, գիրք 1, Ե.,
1922 թ., էջ 83:

¹⁴ Այն սկզբում հատվածաբար լույս էր տեսել «Մշակ» թերթի էջերում:

¹² «Տարագ», № 22, 1891 թ., էջ 324:

1691
ԳՕԳՕ՝Լ

ՏԱՐԱՍ ԲՈՒԼՔԱ

«ԱՆՆԱԿԱՆ ՄԱՍԻԿՈՆՅԱՆՆԵՐ» ԻՐ ԻՆՏԵՆՍԻՎՆԵՐ ԵՎ ԵՆԻՆԵՐ

(Համառոտ փոխադրութիւն)

ՇՈՒՇԻ

Տպարան Միքայելան Մաշտոցի-Յակոբեանցի

1891

աշխատավորության ուժն ու ցասումը բռնակալների Ակառմամբ:

Ծուշիում լույս տեսավ նաև Մանուկ Աբեղյանի «Նմուշներ» բանաստեղծությունների ժողովածուն, որ հիմնականում գետեղված էին ժողովրդական ավանդույթներն ու լեզունները՝ հեղինակի մշակմամբ: 1889 թ. հրատարակվում է նրա մի շատ կարևոր աշխատությունը՝ «Դավիթ և Մհեր» ժողովրդական դրամատիկական վեպ» վերնագրով, որը հենց սկզբից ջերմ ընդունելություն է գտնում ընթերցող հասարակայնության կողմից: Գրականագետները իրենց հիացական խոսքերն էին հրատարակում մամուլի էջերում:

Լեոյի աշխատությունների մեծ մասը ստաշին անգամ տրպագրվեցին Ծուշիում: «Վե՛պ թե պատմությունը» (1887 թ.), «Կույր աղջիկը», «Վահան Մամիկոնյանը» (1888 թ.), «Իմ հիշատակարանը», «Սպանված հայրը» (1891 թ.), «Թաթախման գիշերը» (1892 թ.) և այլ գրքերի ստաշին ընթերցողները շուշեցիներն էին:

Արժեքավոր էր նաև Մակար վարդապետ Բարխուդարյանի¹⁵ «Արագը տարին կտարի» վերնագրով աշխատությունը, որը լույս տեսավ 1883 թ. Ծուշիում: Արցախի բարբառով գրված այս գրքի հերոսները համազուտացիներ Ստեփանն ու Թաքվին են, Լահապետական ընտանիքի ներկայացուցիչներ, որոնք պարզ հոգու տեր մարդիկ են, մտածում ու գործում են ազնվաբար: Նոր հրատարակություններից էին նաև «Ուխտավորի հիշատակարանը» (1885 թ.), «Նոր ցալ» (1886 թ.), «Պանդուխտի հիշատակարանը» (1888 թ.) և այլ գրքեր ու գրքուկներ:

Ուշադրություն է գրավում նաև Միրզա Տեր-Սարգսյանի

¹⁵ Ծնվել է 1832 թ. Արցախի Խաճաճախ գյուղում: Մանուկ հասակում եղել է դերձակի աշակերտ և միաժամանակ ինքնակրթությամբ առաջ է գնացել այն աստիճան, որ հետո Ծուշիում դարձել է ռեպական դպրոցի ուսուցիչ: Այնուհետև տեղափոխվում է Էջմիածին և զբաղվում գրականությամբ: Գրել է նաև հայրենի բարբառով: Նրա գրչին են պատկանում «Պրլըպուղի», «Միրզա Աննա», «Ձաշխարհիկ տղա», «Ձորանն ու Աշաճաճը», «Բարոյական ստամբեր» և այլն: Վերջինիս մեջ ամփոփված են Արցախում տարածված բարոյախոսական ստամբերը: Նա գրել է նաև գիտական աշխատություններ («Աղվանից երկիր և դրացիք», «Պատմություն Աղվանից», «Արցախ» և այլն): Մահացել է 1906 թ., Էջմիածնում:

ԼԵՕ

ՎԷՊ ԹԷ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

(Էստրադայի անկեղծ Սարին Քեկեղանքանոյի գրքի մասի)

ԼԵՍՏՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Գ. ԲԱՆԿԱՆ

Շ Ո Ւ Շ Ո Ւ
Տարածան Հարց Հարկար Տնօրէնած
1887

վեպը՝ «Ռուշան և Հերիզարը», որի նյութը վերցված է Արցախի անցյալից: Գիրքը լույս է տեսնում 1889 թ. Շուշիում: Հեղինակը ձգտել է տալ Արցախի մի գյուղում բնակվող երկու երիտասարդի՝ Ռուշանի և Հերիզարի սիրո պատմությունը: Սակայն նրանց սերը խափանվում է՝ ժամանակի արգելքներից հանդիպելով: Աղջկան բռնությամբ հարեմ են տանում, իսկ տղան ինքնասպան է լինում:

Վեպը գաղափարական ու գեղարվեստական տեսակետից ունի որոշ արժանիքներ և, իհարկե, սուվերտո կողմեր: Հիմնական թերությունն այն էր, որ հեղինակը ստավել ուշադրություն չէր դարձրել կերպարների ռեալիստական կերտման վրա:

Թույլ է վեպի լեզվական կուլտուրան, անհարկի շատ է օգտագործվում բարբառը, պատկերները բռնազբոսիկ են, շինծու, կստուցվածքը կոտ, տրամաբանական չէ:

1899 թ. Մ. Մահտեսի-Հակոբյանի տպարանում լույս տեսած Հ. Ծաղարբեկյանի գիրքը՝ «Հարստության ավետարան» վերնագրով, հիմնականում նվիրված է հարստության անհավասար բաժանմանը, մարդկային ազահության մերկացմանը: Հեղինակը ողղակի գրում է, որ հարստության «մեծագույն մասը կենտրոնացած է սակավաթիվ ձեռքերում»¹⁶: Հատկապես բնատրամադրված է Կերևեջին, միլիոնատեր մի մարդ, որ ծնվել է Անգլիայում և ապա գաղթել է Ամերիկայի Միացյալ Նահանգներ՝ արագությամբ յուրացնելով կապիտալի աշխարհի բարքերը: Հ. Ծաղարբեկյանի միտքն այն է, որ բնության բարիքները մարդկանց պետք է բաշխել հավասարապես՝ ծախսելով դրանք նպատակահարմար ու բոլորի համար շահեկան ձևով:

Հեղինակը, իհարկե, իրավացի է, երբ փորձում է մերկացնել հարստություն կուտակելու բուրժուական աշխարհին հատուկ միջոցները, բայց դա ընթերցողին է ներկայացվում շատ պարզմանակ, հասարակ ձևով:

Հետաքրքիր երևույթ էր «Աղբյուր տարագի» հրատարակությամբ առանձին գրքուկների տպագրումը Շուշիում: 1897 թ. աչտեղ լույս տեսավ «Սաֆո» պոեմը հենց այդ մակնիշով՝ «№ 51 հրատարակություն աղբյուր-տարագի»:

Մ. Մահտեսի-Հակոբյանի տպարանում լույս են տեսնում նաև թարգմանական գործեր՝ մեծ մասամբ գեղարվեստական

¹⁶ Հ. Ծաղարբեկյան, «Հարստության ավետարան», Շուշի, 1899, էջ 6: 69

ԼԵՕ

Մ Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ն Ը

Երևանի մեր 1324 թվականի մեր անհատի անհատի

(ՏՐԱԿՆՈՒԹԻՒՆՆԵՐ ՄԵՐ ՍԱՐԳՅԱՆ ՈՒ ԶՈՐԵՆԻՑ)



ԶՈՒՇԻ

Զարթան Լայոց Լայոսը Տնայանեան

ԿՆԵՆՈՒԹԻՒՆՆԵՐ ՄԵՐ 1890 ԿՆԵՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Աշանավոր ստեղծագործություններ: Սամվել Գյուլգաղյանը¹⁷ պարսկերենից հայերեն է թարգմանում Ֆիրդուսու «Ռուտամ և Սոհրաբը» «Ծահնամեից» և 1893 թվականին տպագրում Ծուշիում: Հաջորդ տարում նույն Սամվել Գյուլգաղյանի թարգմանությանը լույս է տեսնում Ֆիրդուսու «Զոհակ Բուրասայի Ածդահակը»: Թարգմանություններն աչքի էին ընկնում ամենից սուս պնագրին հարազատ լինելու տեսակետից: Այդ մասին որվատական խոսք է ասում ժամանակի մամուլը:

Հետզհետե նոր ծավալներ է ընդունում Մ. Մահտեսի-Հակոբյանի տպարանի գործունեությունը: Փաստորեն քսան տարուց ավելի այն դառնում է Արցախի միակ տպագրական օջախը: Հրատարակված աշխատությունների զգալի մասի բովանդակությունը հիմնականում հայրենասիրությունն էր, ժողովրդասիրությունը, դեմոկրատական գաղափարների արտահայտումը, ազատագրական պայքարի նշմարումը: Սա միաժամանակ նշանակում էր, որ 1870-ական թվականներից Արցախում ևս մի նոր հոսանք է սկսվում դեպի՝ լուսավոր աշխարհը՝ քաղաքակրթությունը:

«ԲՆԱՐ ԽՈՍՆԱԿԸ»

Ճորտատիրական իրավունքի վերացումից հետո էլ Ռուսաստանում գյուղացիների շահագործումը շարունակվում էր: 60-ական թթ. խորացող՝ գյուղացիների հողազրկման պրոցեսը, ռուսաստանյան արդյունաբերության թույլ զարգացումը՝ կապված աշխատանքի ցածր արտադրողականության հետ, ներքին շուկայի հատվածայնությունը վկայում էին, որ Ռուսաստանում կապիտալիզմը դանդաղ էր զարգանում: Երկրի պետական համակարգը՝ ցարական ինքնակալությունը, իր հերթին արգելակում էր այդ զարգացումը:

Ցարիզմի հետադիմական քաղաքականությունը 1870—

¹⁷ Նա Ծուշիի թեմական դպրոցի հալոց լեզվի, ֆրանսերենի, գծագրության և վայելչագրության ուսուցիչն էր. ուներ կանոնավոր կրթություն և զբաղվում էր թարգմանությամբ: Նրա հողվածները լույս են տեսել ոչ միայն Կովկասի, այլև արտասահմանի հայ մամուլի էջերում:

1880-ական թթ. խիստ նկատելի է նաև լուսավորության ապարեզում: Լուսավորության միևնույն շրջաբերականով արգելվում էր «հասարակ» մարդկանց երեխաների մուտքը գիմնազիա (բացի արտակարգ ընդունակներից): Փոխվում է համալսարանական կանոնադրությունը: Համալսարանների խորհուրդներն այլևս իրավունք չունեին ընտրելու դասախոսներ, պրոֆեսորներ: Լավագույնները վտարված էին բուհերից: Զորեղ հարված հասցվեց համալսարանական ինքնավարությանը: 1870—1880-ական թթ. ուժեղանում է ազգային-գաղութային ճնշումը, որ նորանոր երանգներ էր ստանում: Ուկրաինայում, օրինակ, արգելված էր մայրենի լեզվով գրքերի հրատարակումը, իսկ Բելոռուսիայում և այլ տեղեր՝ ազգային լեզուն: Ցարական ազգահալած քաղաքականությունը նպատակ ուներ թուլացնել մասսաների հեղափոխական տրամադրությունները: Սակայն դա արդյունավետ չէր: Հետզհետե սրվում էր աշխատավորների պայքարը ընդդեմ կեղեքողների, բռնադատիչների: Հեղափոխական տրամադրությունների, գաղափարների վերելքն ընդգրկեց նաև կայսրության ծայրամասերը:

Մնացած գավառների պես Արցախն էլ գտնվում էր տընտեսական և հասարակական հետամնաց պայմաններում: Նա կարծես մեկուսացել էր կենտրոններից և ամփոփվել իր մեջ, սակայն հույսն ու հավատը չէր կորցրել ապագայի հանդեպ:

Այդ տարիների մասին Լեոն գրում է. «Իմ ծննդավայրը, Շուշի քաղաքը, մեկն էր մեր չափազանց խեղճ ու խուլ գավառական անկյուններից: Հեծած իր բարձրաբերձ ժայռերի կատարները, հեռու նետված կենտրոններից ու մեծ ճանապարհներից, դրսի աշխարհի հետ հաղորդակցություն պահպանելով շաբաթն երկու անգամ ստացվող փոստի միջոցով, նա ստանձնացած, լնացած էր ինքն իր մեջ, ապրում էր իր ներքին, մանր ու ողորմուկ շահերով»¹:

Այսպիսի պայմաններում էլ չի մարում բոցը լուսավորության տարածման, գրատպության և մշակութային որոշ ձեռնարկումների ասպարեզում: Շուշիում շարունակում են գործել տպարանը, հոգևոր թեմական դպրոցը, քաղաքային ակումբը և գրադարանը: Եվ եթե սկզբում լույս աշխարհ էին գալիս մեծ մասամբ խրատական, ուսումնական, կրոնական գրքեր ու զրր-

քույկներ, ապա 1880-ական թվականներին գերիշխողը հայրենասիրական լիցք ունեցող հրատարակություններն էին:

Առանձին հրատարակված ժողովածուներում ամփոփվում էին բանաստեղծություններ, փոքրիկ պոեմներ, պատմվածքներ, որոնց հիմնական նյութը հայրենիքի անմար սերն էր, հոժ մասսաների ինքնագիտակցության աճը, ազատաբաղձ տենչերը, երջանիկ օրերի երազանքը:

Այդպիսի ժողովածու էր Մ. Մահոտսի-Հակոբյանի տպարանում 1881 թ. տպագրված Նիկողայոս Տեր-Ավետիքյանի² «Քնար խոսնակը»: Ինքնատիպ այդ հրատարակության մեջ զետեղվում են ոչ միայն ինքնուրույն, այլև թարգմանական գործեր: Թարգմանությունները կատարված էին ռուս և եվրոպական դասականներից՝ Պուշկինից, Լերմոնտովից, Հայնեից, Գյոթեից, Շիլլերից, Բայրոնից և այլ հեղինակներից:

Սա պատահական երևույթ չէր. ժողովածուի հեղինակը լինելով կրթված, զարգացած մարդ, գործեր ընտրելիս առաջին հերթին հաշվի էր առնում դրանց գաղափարական բովանդակությունը, քաղաքական իմաստը: Նշենք, որ Ն. Տեր-Ավետիքյանը նոր դեմք չէր գրական աշխարհում. նրա գրչին են պատկանում 12 անուն գրքեր, այդ թվում և «Տեղագրական ցանկանի», որ լույս տեսավ 1888 թ., Թիֆլիսում, Մ. Ռոտինյանի տպարանում:

Զհաշված Հայնեի «Մանկիկ» ռոտանավորը, «Քնար խոսնակի» առաջին բաժինը բովանդակում է ինքնուրույն, մասնավորապես Ն. Տեր-Ավետիքյանի ստեղծագործությունները: Ուշադրություն է գրավում նրա «Պուշկինի արձանը» բանաստեղծությունը՝ գրված 1880 թվականի հուլիսի 6-ին, Մոսկ-

² Ն. Տեր-Ավետիքյանը ծնվել է 1856 թվականի նոյեմբերի 5-ին, Շուշիում: Սկզբնական կրթությունը ստացել է հայրենի քաղաքում, ապա՝ Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: Տաս տարի զբաղվել է ուսուցչությամբ: Վարել է Արցախի հայկական դպրոցների տեսուչի պաշտոնը: Ուսումնասենց մարդ էր. Մոսկվայում լսել է սոսջավոր գիտնականների դասախոսությունները:

1883 թվականից սկսած աշխատակցում էր «Աղբուր» ամսագրին: Լ. Մելիք-Արամյանի հետ նա «Փայտաշեն խրճիթից մինչև սպիտակ տունը» ստեղծագործությունը փոխադրում է հուլերենի և հրատարակում ամսագրի 4-րդ համարում: Գրել է «Վերածնության դար» գրական երկը և հրատարակել Շուշիում:

¹ Լեո, «Անցյալից» (հուշեր, թղթեր, դատումներ), Թիֆլիս, 1925, էջ 20:

(ՀՐԱՆՔԻ ՆԱԽԻՐԻՆ ԳԻՏՈՒՆԵՑ Ե. ՆԱԽԻՐԵԱՆ)

Ք Ն Ա Ր Խ Օ Ս Ն Ա Կ

ՆԻԿՈՂԱՅՈՍԻ ՏԵՐ-ԱԼԵՏԻՔԻԱՆ



ԸՄԻՇԻ

Ի Տպարանի Միջոցով Մոսկովի (Կազմակերպի)

1881

վայում: Հեղինակը շատ բարձր է գնահատում ուսու մեծ բանաստեղծի ստեղծագործությունները, համարելով դրանք բացառիկ բանբարի և շուրջ տաղանդի արտահայտություններ: Ժողովուրդն իր չխամրող սերը պոետի նկատմամբ արտահայտել է ջերմորեն: Հայ հեղինակը նրան անվանում է հայրենի աշխարհի «ազատության արուսյակ»: Ստեղծագործությունն ավարտվում է այս խոսքերով.

Որախացիր, ո՛վ հանճար,
Ահեղագոր եմ խոսքերդ,
Ազնիվ դարձան սրտեր քար
Եվ ծաղկեցին չո փշերդ:

Նա բարձր է գնահատում նաև Բայրոնի տաղանդը՝ նվիրելով նրան ձոն:

Ն. Տեր-Ավետիքյանը դրվատում է առանձին պատվարժան անձնավորությունների, փորձում է գեղարվեստական խոսքի ուժով արտահայտել աշխատավորների իղձերն ու ցանկությունները, մարմնավորել նրանց միտքն ու խոսքը: Հեղինակը որոշ իմաստով հրապարակ է հանում ժողովրդի ներաշխարհը, ցույց տալիս նրա սոցիալական վիճակը և քաղաքական տրամադրությունները, քննդատական խոսք ասում նրանց հասցեին, ովքեր գոփում են խեղճ գյուղացու արդար վաստակը: Այդ մասնավորապես արտահայտվում է նրա «Հյուսիսի աշունը» և «Հյուսիսի ձմեռը» բանաստեղծություններում: Ծիշտ է, այստեղ հեղինակն իր միտքը ուղղակի չի արտահայտում, դիմում է խորհրդանշական միջոցների, բայց, այնուամենայնիվ, հասկացնել է տալիս ընթերցողին, որ Ռուսաստանում տարվա բոլոր ամիսներին ձմեռ է, ցուրտ, մարդիկ կարոտ են ջերմության: Թե երբ կծագի արևը, բանաստեղծը պատասխան չի տալիս, միայն հույս է հայտնում, որ աշխարհը չի մնա այդպես:

Հայ աշխատավորի ողբերգական վիճակը արտացոլվել է Ն. Տեր-Ավետիքյանի «Սով» բանաստեղծության մեջ: Նա ցավով հրապարակում է այն փաստը, որ կյանքի անտանելի պայմանները հայ գյուղացուն կաշկանդել են մահվան ճիւղաներում և նա ստիպված է ամեն մի դժվարություն տանել, նվաստանալ, մի կերպ քարշ տալ իր ֆիզիկական գոյությունը: Բայց հեղինակը չի բավարարվում սոսկ անհատի ցավագին վիճակն արտահայտելով, որոշ չափով ներկայացնում է մասսաների դժգոհությունը ցարիզմի նկատմամբ:

Դստն օրեր էին սպրում նաև հայ երիտասարդը, ուսա-
ճելու գնացած հայ աղջիկն ու պատանին: Նրանք զրկված էին
ուսրելու անհատի տարրական իրավունքներից, մի կերպ կի-
սաքաղց անցկացնում էին իրենց անուրախ, մոռյլ օրերը: Կար-
դում ես հեղինակի «Ուսանող» փոքրիկ պոեմը և լցվում խոր
վշտով:

Գաղափարական որոշ նպատակամղում ունեին Ն. Տեր-
Ավետիքյանի չափածո գործերը: Հիմնականը հայրենիքի շե-
նացումն էր, ժողովրդի համար ցանկալի կյանքի ստեղծումը:
Նա համոզված էր, որ դա հնարավոր կլինի իրագործել, եթե
էռանդով գործեն առանձին երևելի անհատներ: Այդպիսի տրա-
մադրություններով է սոգորված «Հասարակություն» բանաս-
տեղծությունը: Նա մի կողմից նկարագրում է հայրենասնվեր
գործի հասարակական նշանակությունը, մյուս կողմից՝ երա-
զում Հայաստանի բարգաւաճումը, ծաղկումը: Եվ հեղինակը
փառք է տալիս նրանց, ովքեր թողած հայրենի տունը, հա-
րազատներին՝ ստիպված են հեռու երկրներ գնալ, կրթվել,
«ուսման պաշար» հավաքել և ծառայեցնել հայրենիքին: Նա
կոչ է անում հայ երիտասարդներին՝ նպաստել ժողովրդի քա-
ղաքական և կուլտուրական զարթոնքին:

Քեզ՝ որ թողած մեր սուրբ վայրեր,
Բարեկամներ և ծնողներ,
Թողած ամեն զվարճություն,
Մատաղ հասակդ դու զոհել ես,
Որ ծնվելուն դու նպաստես՝
Մեր կործանված հայրենիքին,
Որ շուտ հասնի իր հին փառքին:
Դեհ, անվեհեր, քաջ հայկորդի,
Լուսի տանար փութա մտնի.
Ուսման պաշար մեծ հավաքե,
Եվ Հայաստան տար՝ ծավալե:

Հեղինակը ծաղրում է նրանց, ովքեր «լուս», «հայրենիք»
քարքառելով՝ իրենց բարձրացնում են հայրենասերի պատվան-
դանին: Այդպիսիներին հասարակությունից ձերբազատված է
ցանկանում տեսնել բանաստեղծը.

Դե՛հ, հեռացե՛ք, գնացե՛ք, կորե՛ք...

Լավի, բարու գաղափարն է զարգացնում հեղինակը «Գա-
րուն», «Վիթխարի բարերար», «Պաշտոնապետ» և այլ ստեղ-

Ճագործություններում: «Գարունը» փաստորեն լավ օրերի ե-
րազանք էր, իդ՝ արևոտ գարնան ու նորոգ մի կյանքի, որ
հարատևելու է անվերջ: Այս չէ միայն բանաստեղծության ի-
մաստը: Ն. Տեր-Ավետիքյանը փաստորեն մարդասիրության
գովքն է անում, մարդը մարդուն օգնելու, ապավեն լինելու կոչ
անում:

Ընկած մարդուն զարունն է հույս
Նորոգ կյանքի ծնվելուն,
Նա օրինակ է խնդահույզ՝
Մեռածների հառնելուն:
Մինչդեռ շրջում է երկրագունդ,
Մինչդեռ փայլում է արև,
Եվ մինչ հեին մի նոր սերունդ
Կհաջորդե հարստն՝
Միշտ հանապազ նոր զարուն
Կը գա չքնաղ, նրկարեն
Եվ կառնե նոր դրվատ սիրուն
Յուր նոր գեղի փոխարեն:

Ն. Տեր-Ավետիքյանը գեղարվեստական ստեղծագործո-
թյան թեմա է դարձրել նաև ժողովրդասիրությունը: Անհրա-
ժեշտ էր գեղարվեստական խոսքով ներգործել մարդկանց ըզ-
գացմունքների վրա, ջերմ սեր առաջացնել ոչ միայն հայրենի-
քի, այլև մյուս ժողովուրդների նկատմամբ, հաստատ հոմոզ-
ված լինելով, որ բարեկամությունն է ամենամեծ ուժն ու հզո-
րությունը:

Ժիշտ է, «Քնար խոսնակի» մի քանի գործեր գաղափա-
րապես և արվեստով շատ են թույլ, ցածր է դրանց պոետա-
կան կուլտուրան, երբեմն նույնիսկ աշակերտական գրչի ար-
դյունք են թվում, բայց ժողովածուի որակը ի վերջո բնութա-
գրվում է նրա հաջողված բանաստեղծություններով:

Կարդալով պարբերական-ժողովածուում ամփոփված թարգ-
մանական և ինքնուրույն ստեղծագործությունները, ընթերցողը
սոգորվում է մարդկային վեհ հատկություններով՝ ազնվության,
բարոյականության, արժանապատվության զգացումով: «Քնար
խոսնակը» նպաստում է կյանքի արատների դեմ պայքարին,
ընթերցողին ներշնչում քաղաքացիական առաքելության զգա-
ցումներով:

Հեղինակը նկատելիորեն կրել է նարդոնիկական հայացք-
ների ազդեցությունը. նա մեծ տեղ է հատկացնում առանձին

անձնավորությունների, երկրորդ պլան է մղում ամբոխին, ժողովրդին: Նա համոզված էր, որ երևելի անհատները կարող են փոխել աշխարհը, ստեղծել ցանկացած հասարակարգ: Ուժեղ անհատի մեծարումը, մյուս կողմից, նշանակում էր մարտահրավեր նետել գորշ, քաղքենիական կյանքին:

Ինչևէ, Ն. Տեր-Ավետիքյանի ժողովածուն, որ իր տեսակի մեջ առաջինն էր ծայրամասային գավառում, որոշակի դեր խաղաց 19-րդ դարի 80-ական թվականներին Արցախում գրական մտքի առաջընթացի ասպարեզում:

«ԳՈՐԾ» ՀԱՆԴԵՍԸ

Անցյալ դարի 70—80-ական թվականներին ավելի էին սրվել դասակարգային հակասությունները աշխատավորների և շահագործողների միջև: Ուժեղացել էր շահագործումը ոչ միայն քաղաքում, այլև գյուղում:

1861 թ. գյուղացիական ռեֆորմը նոր թափ է հաղորդում բուրժուական հարաբերությունների զարգացմանը: Թեև գյուղացին իրավունք է ձեռք բերում օգտվելու որևէ հողակտորից, բայց նրա տերն առաջվա պես մնում է կալվածատերը: Այս պայմաններում գյուղում խորանում է սոցիալ-դասակարգային շերտավորումը:

Գյուղացիական հուզումները մասսայական և սուր բնույթ են ստանում: Աշխատավորների ըմբոստությունը թեև ճնշվում էր տեղական իշխանությունների կողմից, այնուամենայնիվ Ռուսաստանում՝ և՛ կենտրոնում, և՛ ծայրամասերում պարբերաբար պողոթնում էին գյուղացիական հուզումներ: Սակայն գյուղացիները հանդես էին գալիս միայնակ, առանձին-առանձին, դեռևս բացակայում էր կազմակերպված ուժը, պայքարը տարերային բնույթ ուներ:

Դրությունը ծանր էր ոչ միայն Ռուսաստանի կենտրոնում, այլև առանձին երկրամասերում, գավառներում: Աշխատավորների վիճակը ոչնչով չի փոխվում ցարի՝ 1870 թ. Անդրկովկասի գյուղացիական ռեֆորմով:

Մտավորականները մամուլի տարբեր օրգաններում տարբեր կերպ էին մեկնաբանում ժամանակի կարևոր երևույթները

ու իրադարձությունները, դասակարգային հակամարտությունների դրևադրումները: Ծայրունակվում էր պայքարը գաղափարական հոսանքների միջև: Երկրի տնտեսական ու քաղաքական խնդիրները հիմնականում լիբերալիզմի դիրքերից էր զնահատում Գրիգոր Արծրունին իր «Մշակի» միջոցով: Նա առաջին պլան էր մղում տնտեսական խնդիրները և ցանկանում էր դրանք լուծել խաղաղ ճանապարհով, առանց հեղափոխական շարժման: Գր. Արծրունին փաստորեն շարունակում էր Սո. Նազարյանցի գիծը: Լինելով լիբերալ-ռեֆորմիստ, նա չէր ընդունում բանվորական մասսաների պայքարը բուրժուազիայի դեմ: Բայց մի բան պարզ էր, որ հայ ժողովրդի ազատագրության բախտը Գր. Արծրունին կապում էր Ռուսաստանի հետ և սա նրա հայեցության առաջավոր կողմերից մեկն էր:

Պահպանողականները կառչած էին հնին և մեծ դեր էին հատկացնում եկեղեցուն: Նրանք արտահայտում էին երկրի ներքին շուկաներում գործող առևտրական կապիտալի խոհերը՝ դրանք լծորդելով «ազգային եկեղեցու» հետ կապված հայրենասիրությանը: Պահպանողականները համախաբված էին «Մեղու Հայաստանի» և «Նոր դարի» շուրջը, որոնցից առաջինի խմբագիրն էր Պետրոս Սիմեոնյանցը, երկրորդինը՝ Սպանդար Սպանդարյանը:

Դեմոկրատական հոսանքը հիմնականում արտահայտում էին «Մշակի» շուրջ խմբված մի շարք գործիչներ և ամենից առաջ՝ հայ մեծ պատմավիպասան, հրապարակախոս Բաֆֆին: Այդ հոսանքը նկատելի էր առանձնապես գեղարվեստական գրականության մեջ:

Դեմոկրատական-առաջադիմական մտքերը մարմնավորվում էին նաև Գաբրիել Սունդուկյանի, Հակոբ Պարոնյանի, Պերճ Պողոջանի, Ծիրվանզադեի, Մուրացանի, Նար-Դոսի, Ղազարոս Աղայանի և մյուս հեղինակների գործերում, որոնց գրական գործունեությունը հատկապես ծավալվում է 70—80-ական թվականներին: Նրանք գեղարվեստական միջոցներով արտացոլում են ժամանակի ոգին, ցույց տալիս հայ գյուղի ռեալիստական պատկերը, քննադատական խոսք ասում վաշխատուների, քեղիտղանների և մյուս հարստահարիչների մասին, ծաղրում «մեծապատիվ մուրացկաններին», որոնք հանդես են գալիս ազգի անունից, բայց գործում են նրա շահերի դեմ:

Ավելին, մեծ երգիծաբան Հ. Պարոնյանի մի քանի պարբերականներում («Մեղու», «Թատրոն», «Խիկար» և այլն) որոշ չափով մերկացվում էին ճնշումն ու հալածանքը, քննադատվում էր ինպերիալիզմի քաղաքականության Լույծունը՝ մասնավորապես հայկական հարցում, ծաղրի էին ենթարկվում հոգևորականները, ստորաքարշ և երկերեսանի մտավորականները, ծախս գրչակները, պորտաբույծները: Գրողների քննադատական վերաբերմունքը և դրա օբյեկտի ընտրությունը պայմանավորված էր հայ երկու հատվածների սոցիալական-քաղաքական և ազգային պայմանների յուրահատկությամբ: 1880-ական թթ. քաղաքական ըմբոստ տրամադրություններ են նրկատվում նարոդնիկորեն տրամադրված որոշ գործիչների մշտայնության մեջ, ինչպես ցույց են տալիս «Գործի» (Շուշի) և «Պսակի» (Երևան) նյութերը:

1870—80-ական թվականներին որոշակի առաջխաղացում է նկատվում հայ թատրոնի և կրթության բնագավառներում: Գաբրիել Սունդուկյանի ստեղծած դրամատիկական գործերը մեծապես նպաստում են թատրոնի զարգացմանը: Պետրոս Ադամյանը, Գևորգ Չմշկյանը, Սիրանուշը և մեր մյուս տաղանդաշատ դերասանները արվեստի ուժով շարունակում են ներկայացնել արդարության և ճշմարտության համար պայքարող հեղինակների գործերը, ստեղծում ռեալիստական կերպարներ, խարազանում վատը, չարն ու խարդախը, դրվատում լավը, բարին, ազնիվ աշխատանքով սպրող մարդուն:

Հայ մշակույթի, հասարակական մտքի զարգացման վրա բարերար ազդեցություն են ունենում հատկապես ռուսական առաջավոր արվեստը, գրականությունը, որոնք հիմնականում զարգանում էին ռեալիստական ուղիով:

Ցարական ազգահալած քաղաքականությունը և դրա դրսևորումները, այնուամենայնիվ, չկարողացան փակակնքի տակ դնել լուսավոր միտքը: Դպրոցների ու կուլտուրական առանձին օջախների ստեղծմանը զուգընթաց, լույս աշխարհ էին գալիս առանձին հրատարակություններ ու պարբերականներ ոչ միայն ռուսերեն, այլև հայերեն, վրացերեն և այլ լեզուներով:

Այս մասին հետաքրքիր փաստեր է տալիս պարբերական մամուլը: Ահա թե ինչ ենք կարդում Գր. Արծրունու խմբագրած թերթում. «1880 թվին փոխարքայության (Կովկասի— Ս. Ա.) սահմաններում բոլոր պարբերական հրատարակությունների

թիվը 30 էր. դրանցից ռուսաց լեզվով՝ 21, հայոց լեզվով՝ 5, վրաց լեզվով՝ 3 և թուրքաց լեզվով՝ 1... Վերոհիշյալ 30 հրատարակություններից կատարչական էր 6, իսկ մասնավոր և հասարակական՝ 24. դրանցից տեսակների բաժանելով՝ էին ընդհանուր-գրականական՝ 21, մասնագիտական՝ 9, ամենօրյա՝ 7, շաբաթական՝ 9 և միամյա կամ անորոշ ժամանակներում հրատարակվող՝ 14: Բոլոր ամենօրյա և այլ հրատարակությունների մեծ մասը Թիֆլիսին է վերաբերում, բացի 7-ից, որոնք հրատարակվում են գավառներում, որով մեր քաղաքը, Պետերբուրգից, Մոսկվայից և Վարշավայից հետո կայսրության մեջ պետք է չորրորդ տեղը բռնի, բարձր կանգնելով Օդեսայից, Ռիգայից և բոլոր համալսարանական քաղաքներից, որոնցից ոչ մեկը չի կարող հաշվել իր մեջ 33 պարբերական հրատարակություններ:

Նույնպես հետաքրքիր են կովկասյան ավելի ծանր մամուլի ընթացքի մասին տեղեկությունները, որոնք արտահայտվում են գրքերով և բրոշյուրներով: Տպագրական գործի այս ճյուղի մեջն ևս Կովկասում չի կարելի նշանավոր առաջադիմություն չնկատել: Այսպես, 1880 թվին գրքեր և բրոշյուրներ բոլոր լեզուներով 300 հատ ունեինք, այնինչ, 1874 թվին նրանց թիվը 65-ից չէր անցնում, ուրեմն ցեղագործարարականությունների քանակությունը համարյա 5 անգամ մեծացավ, այսինքն՝ ռուսաց լեզվով առանձին հեղինակություններ 1,876 երեսներով, 65 հատ, վրաց լեզվով առավելապես բրոշյուրներ՝ 6,529 երես. 134 հատ: Հայերեն լեզվով առավելապես բրոշյուրներ՝ 7,325 երես. 96 հատ: Թուրքաց լեզվով առավելապես բրոշյուրներ՝ 83 երես. 5 հատ»¹:

Հետաքրքիր էր նաև ճյուղային թերթերի և ամսագրերի հայտնությունը, որոնք ունեին լուսաբանման որոշակի բնագավառ:

«Մշակին», «Մեղու Հայաստանիին», «Փորձ» հանդեսին զուգընթաց ուշագրավ էին, օրինակ, գրական-պատմական և մանկավարժական «Պսակ» շաբաթաթերթը (Երևան, 1880—1884 թթ.), «Առողջասահական թերթը» (Երևան, 1881—1884 թթ.), Աբգար Հովհաննիսյանի գրական և քաղաքական «Արձագանք» լրագիրը (Թիֆլիս, 1882—1898 թթ.), Տիգրան Նա-

¹ «Մշակ», № 50, 1881, մարտի 19 (31)

Վարչանի «Աղբյուր» պատկերազարդ մանկական ամսագիրը (Թիֆլիս, 1883—1918 թթ.) և ուրիշներ:

Կարևոր էր նաև շուշեցի Սիմոն Գասպարի Հախումյանի «Գործ» գրական, քաղաքական և ազգային հանդեսը: Ո՞վ էր նա և ի՞նչ նպատակ էր հետապնդում: Այս մասին կան ոչ սակավ փաստեր:



«Գործ» անդեսի խմբագիր-հրատարակիչ Սիմոն Հախումյան:

կական, ռուսական և արտասահմանյան գրականությունների գծով, տիրապետել է մի քանի լեզուների: Սովորել է Փարիզի Սորբոնի համալսարանի բժշկական ֆակուլտետում:

Ս. Հախումյանը իր գործունեությունը նախապես ծավալել է մանկավարժության ասպարեզում: 1879 թ. 20-ամյա Ս. Հախումյանը եղել է Կարսի հայկական դպրոցի ուսուցիչն ու տեսուչը, իսկ 1880—1882 թթ.՝ Ծուշի թեմական և օրիորդաց

«Լ ու մ ա»² ամսագիրը 1905 թ. 4-րդ համարում հարուստ տեղեկություններ է հաղորդում Սիմոն Հախումյանի կյանքի և գործունեության մասին: Նա ծնվել է 1859 թ. փետրվարի 4-ին, Ծ ու շ ի քաղաքում: Սկզբնական շրջանում աշակերտել է Պետրոս Ծանչյանին, ավարտել է տեղի թեմական դպրոցը: Այնուհետև սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: Երիտասարդ դարաբաղցին չի բավականացել միջնակարգ կրթությամբ, խորամուխ է եղել առանձին գիտություն և ներսի մեջ, հարուստ գիտելիքներ ձեռք բերել մասնավորապես հայ-

դպրոցների հայոց և ռուսաց լեզուների դասատուն: Արգասավոր են եղել նրա ջանքերը նաև Թավրիզի հայոց երկսեռ դպրոցներում:

Ս. Հախումյանի հրապարակախոսական-ժողովրդավարական աշխատանքը սկսվում է «Մշակ» թերթից: Այստեղ նա հանդես է եկել 1885—1890 թթ., իսկ 1890—1892 թթ.՝ «Տարազ» և «Աղբյուր» ամսագրերում, 1894—1897 թթ.՝ «Արձագանքում», 1899 թ.՝ «Նոր դարում» և այլուր: Ս. Հախումյանը պարբերաբար ելույթներ է ունեցել ռուսական մամուլի էջերում, մասնավորապես «Новое обозрение», «Тифлисский листок», «Кавказ», «Русский курьер» և այլ թերթերում: Իբրև թղթակից, նա Թավրիզից, Կ. Պոլսից, Լոնդոնից, Փարիզից աշխատակցել է հայերեն և ռուսերեն լույս տեսնող պարբերականներին: Հաճախակի նրանց էջերում տպագրել է այնպիսի հոդվածներ, որոնց մեջ արժարժվում էին ոչ միայն մշակութային հարցեր, այլև որոշակիորեն արտահայտվում էին աշխատավորության ձգտումներն ու ցանկությունները: Բացի հոդվածներից, թղթակցություններից, ֆելիետոններից ու մամուլի տեսություններից, նա տպագրել է պատմվածքներ, վիպակներ և դրամատիկական գործեր, զբաղվել է նաև թարգմանությամբ:

Հրապարակախոսական նյութերի տակ իր իսկական անունից և անվանատուներից (Ս. Հ.) բացի ստորագրել է «Ահրիման» («Տարազ» և «Արձագանք»), «Эго» («Тифлисский листок»), «Кавказ», «Новое обозрение» և այլն), «Ծերուկ» («Աղբյուր»), «Մար-Ամառ» և այլն: Նրա տաղանդը դրսևորվել է նաև թատերական բնագավառում. տարբեր տարիների Հախումյանը ղեկավարել է Թիֆլիսի թատերական խումբը, իսկ Բաքվում հանդես եկել իբրև հայկական խմբի ռեժիսոր:

«Լումա» ամսագիրը, նրա մահվան ստրիվ, բնութագրելով 46 տարվա կյանքի ուղի անցած մարդու գործունեությունը, գրում է՝ «Բայց Հախումյանի արժանիքը ոչ թե այն է, որ նա երկար տարի գործել է իբրև լրագրող և հրապարակախոս, այլ որովհետև նորա գրիչը միշտ և ամեն տեղ բուրել է մաքուր հայկական հոգի, անօրինակ և անձնվեր սեր դեպի մայրենի լեզուն, մամուլն ու գրականությունը, որովհետև նորա գրվածները դյուրիչ են, անկեղծ սրտից բխած, տպավորիչ, սուր ու ջախջախիչ»:

Լինելով ժամանակի կրթված երիտասարդներից մեկը, Ս.


² Բաղաբանական և գրական այս ամսագիրը (որը սկզբում կիսամյա էր) լույս է տեսել 1896—1911 թթ., Թիֆլիսում:

Հախումյանը տոգորված էր ազնիվ նպատակներով՝ օգտակար լինել հայրենիքին և ժողովրդին: Տարբեր առիթներով է նա իր բարի և հանրօգուտ նպատակների մասին հանդես եկել հրապարակով: «Մշակում» նա տպագրում է Շուշիից ուղարկած մի հայտարարություն, որտեղ ասված է. «Մենք դուրս ենք գալիս ժողովրդի առաջ՝ նրան գրեթե բոլորովին անձանոթ և ստանց աշխատելու կանխավ հեղինակություն և անուն ստանալ: Այդ սովորական կարգից դուրս է, խոստովանում ենք: Բայց մենք դուրս ենք գալիս նորա առաջ անարատ զգացմունքներով և մի միակ ցանկությամբ— ծառայել ժողովրդին:

Ոչ մի քաջալերական օրինակ չկա մեր առաջ՝ անցյալից կամ ներկայից. բայց կա, հավատացած ենք, մի գորեղ ու անըրկուն նեցուկ, որի վրա մենք կարող ենք կոթնել: Դա այն մատաղ սերունդն է, որի միտքը դեռ մաքուր, անխմոր է, որն ապրում է ընկերի համար և ապա իրեն համար. այն երիտասարդությունը, որի մեջ եռում, եփում են կյանք և հասարակական զգացմունքներ: Մեր հույսն այդ մատաղ սերնդի վրա է, որը պետք է ազատ լինի ներկա բորժուական ոգուց և չըպետք է մասնակցի սուտ ինտելիգենցիայի խարդավանքներին³: Միմոն Հախումյանը փափագում էր ունենալ տպագիր օրգան, ոչ թե դրա միջոցով հեղինակություն ձեռք բերելու, այլ ժողովրդին օգտակար լինելու համար: 1881 թ. փետրվարին նա Կովկասի փոխարքայությանն է ներկայացնում դիմում, խընդրելով թույլ տալ լույս ընծայելու սեփական ամսագիր: Մամուլի գրաքննչական մարմինները սկզբունքորեն չեն ստարկում Ս. Հախումյանի՝ ամսագիր հրատարակելու վերաբերյալ ներկայացրած ծրագրին և նույն թվականի նոյեմբերի 27-ին թույլատրվում է նրան հիմնելու «Գործը»: Կովկասի փոխարքայության մամուլի գործերի կոմիտեն այս որոշումն ընդունում է միայն այն պայմանով, որ ամսագրի բոլոր նյութերը ենթարկվեն խիստ գրաքննչության: Ըստ Ս. Հախումյանի ներկայացրած ծրագրի⁴, «Գործ» հանդեսը պետք է ունենար յոթ բաժին, որտեղ լուսաբանվեր տեղական, անդրկովկասյան և արտասահմանյան կյանքը, տրվեր հայ և մյուս ժողովուրդների ստորյան,

³ «Մշակ», № 243, 1881, դեկտեմբերի 30:

⁴ Ծրագրի նախագիծը լույս է տեսնում «Մշակի» 1881 թ. դեկտեմբերյան մի քանի համարներում:



տպագրվեին բաղաբալան և ներքին տեսություններ, գիտական, մանկավարժական և բարոյախոսական նյութեր, գրույցներ, մատենախոսություններ, գրախոսություններ, հրատարակվեին պաշտոնական մարմինների կարգադրություններ և այլն: «Գործի» հրատարակիչը նախատեսում էր իր հանդեսում լայն տեղ տալ գրականության զարգացմանը նպաստող հարցերին՝ հրատարակելով ոչ միայն ինքնուրույն, այլև թարգմանական ստեղծագործություններ: Հանդեսը պետք է ունենար 5—6 մամուլ ծավալ՝ բաղկացած 80—90 էջից:

Սկզբից նեթ Ս. Հախումյանը հրատարակախոս-հրատարակչի հմտություն է հանդես բերում՝ հարուստ և խելացի ծրագիր նախատեսելով «Գործի» համար: Բազմաթիվ հարցերի լայն լուսաբանման համար նա նկատի ուներ պարբերաբար, ամիսը մեկ անգամ հրատարակել «Գործը»: Սակայն ֆինանսական անելանելի դրությունը և ցարական գրաքննչությունը թույլ չեն տալիս նրան իրագործելու ծրագիրը: 1882 թվականին լույս է տեսնում «Գործի» միայն մեկ համար⁵, այն էլ նրվազ տպաքանակով:

Ս. Հախումյանը նյութական ծանր կացության մեջ էր: Եվ դա էր թերևս հիմնական պատճառը, որ նա չի կարողանում հաջորդ տարում հրատարակել հանդեսի մի լիարժեք համար: Բայց որպեսզի հրատարակչի իրավունքը չկորցնի, ստիպված 1883 թվականին լույս է ընծայում 13 էջանոց մի տետր՝ «Գործ» անունով:

Թեև այս անշուք համարում հրատարակիչը խոստանում է կարգավորել իր հանդեսի լույս ընծայումը, բայց դա նրան չի հաջողվում, հրատարակվում է ընդամենը երեք համար (վերջինը՝ հաջորդ տարում): Առանձին փաստեր վկայում են, որ 1885 թ. Ս. Հախումյանը ձեռնարկել է «Գործի» չորրորդ համարի հրատարակությունը, որ պիտի զետեղվեր նաև իր «Կորածներ»⁶ վիպակը, բայց դա մնում է լոկ ցանկություն: Ցա-

⁵ «Գործի» անդրանիկ համարի մասին փոքրիկ հաղորդագրություն է տպագրվում «Մշակի» 1882 թ., № 84-ում:

⁶ Այժմ այն շարված վիճակում (մի մասը նույնիսկ սրբագրված) պահպանվում է Վրացական ԽՍՀ պետական կենտրոնական պատմության արխիվի 480-րդ ֆոնդի գործերի մեջ:

րական գրաքննչությունը հանդուգն մտքին կապանք է դնում, և «Գործը» դադարում է գոյություն ունենալուց:

«Ընթերցողներին» վերնագրով խմբագրականում նա ուղղակի գրում է. «Ծանր է ընդհանրապես գրական անձի պաշտոնը, մանավանդ հայ գրական անձինը. ևս ավելի ծանր է հայ ամսագրի խմբագրի վիճակը, եթե այդ խմբագիրը կամ ամսագիր հրատարակող անձինք իրենց այդ հրատարակության մեջ տեսնում են ոչ թե մի արհեստ, եկամտի մի աղբյուր, եթե նոքա չեն մղվում առաջ, որտեղից որ քամին փչում է, այլ ազատ կամքով ընտրելով իրենց համար մի նպատակ, հիմնը վաճ որոշ, հաստատ և անխախտ համոզմանց ու իդեալների վրա՝ ձգտում են հասնել նրան»⁷:

Ս. Հախումյանի միտքը պարզ էր. նա արտահայտում էր հայ առաջադեմ հրատարակիչների սրտի խոսքը, ցույց տալիս այն դառն իրականությունը, որի մեջ գտնվում էին նրանք: «Գործի» հրատարակիչը այն հրատարակախոսներից էր, որոնք ձգտում էին խոսքը գործ դարձնել: Այդ են վկայում «Գործի» երեք համարների նյութերը: Ծիշտ է, դրանցում քիչ տեղեկություններ կան երկրի ներքին ու արտաքին դրության վերաբերյալ, սակայն եղածներն էլ արժեքավոր են, ինքնատիպ և հրատարակախոսական որոշակի հետաքրքրություն են ներկայացնում:

Հենց առաջին համարի «Երկու խոսքը» (հեղինակ՝ Ս. Հախումյան), որով սկսվում է հանդեսի գործունեությունը, արժարժում է ժողովրդասիրության գաղափարը, ձգտելով ընդգծել ժողովրդի և մտավորականության սերտ կապի անհրաժեշտությունը: Ով ձգտում է օգուտ տալ ժողովրդին, պետք է լինի նրա հետ, առում է Ս. Հախումյանը: «Ժողովրդի իդեալական հայրենիքի հիմքը,— գրում է նա,— նրա իրական հայրենիքի շոշափելի հողը պետք է լինի. իսկ ժողովրդասերի իդեալական հայրենիքը այդ ժողովրդի իրական կյանքը պետք է լինի:

Ով կամենում է օգնել ժողովրդին, պետք է նրա հետ զգա այն ամենը, ինչ որ նա զգում է: Չի կարելի մի ժողովրդի զգացածը զգալ, առանց նրան նախաչելու»:

Խոսելով ժողովրդի «հասարակ» դասի՝ աշխատավորների

⁷ Հրատարակված է հանդեսի վերջին համարի առաջին էջում:

մասին, երիտասարդ հրատարակիչը արտի անհուն կակիծով է գնում նրանց ծանր վիճակը: Միաժամանակ նա քննադատում է բուրժուազիային, որը «բարոյապես ապականված լինելով, չի կարող զգալ ժողովրդի ցավը»⁸:

Նա հատուկ ուշադրություն է դարձնում երիտասարդությանը, որի «սուսը ընդարձակ ասպարեզ կա գործելու, ժողովրդի դրությունն ուսումնասիրելով և նրա վիճակը բարվոքելով»⁹: Հանձին երիտասարդության, Ս. Հախումյանը տեսնում էր ապագան կերտողին, նրան, որին վիճակված էր որոշելու ժողովրդի, հայրենիքի բախտը: Նա երիտասարդությանը կոչ էր անում առաջադիմության համար պայքարել՝ սուսն ընկնելու ու դժվարություններից վախենալու: «Չվախենալ վրտանգից, չխրտնել խոնավ բնակարաններից, կիսավեր խրթիններից, մաշող հիվանդությունից, մտնել համարձակ դոցա մեջ. ընկեր դառնալ արհեստավորին գործի ժամանակ, գյուղացուն յուր ցանքի ժամանակ. գտնել թշվառներին, համեմատել դրանց՝ յուրի առատությունից տրաքվողների հետ. նկարագրել դոցա դրությունը, բացատրել պատճառները. տալ ժողովրդին յուր աշխատանքը, յուր անձը, յուր կյանքը, ահա ինչ անող երիտասարդներ են հարկավոր»¹⁰: Եվ պատահական չեն «Գործի» հենց առաջին համարում տպագրված նյութերը՝ «Հայրենիքի ուսումնասիրության կարևորությունը», «Արցախու աշխարհ (Ղարաբաղ)», «Ծղթայակապ Պրոմեթեոս (Էսքիլեսի ողբերգական վերջին արարվածը)»¹¹ և հատվածներ գրական այլ գործերից, որոնք ոչ միայն ցույց են տալիս Ս. Հախումյանի հրապարակախոսական գործունեության բուն նպատակը, այլև բնութագրում են «Գործի» ուղղությունը:

Հետաքրքիր են Ս. Հախումյանի ինչպես հրապարակախոսության, այնպես էլ մամուլի հարցերին նվիրված մտքերը: Նա շեշտում է, որ մամուլի օրգանները, այդ թվում նաև «Գործը», պետք է քաղաքական որոշակի ուղղություն ունենան, պար-

⁸ «Գործ», 1882, էջ 1:

⁹ Նույն տեղում:

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Հեղինակը Ն. Տեր-Ավետիսյանն է և այն գրել է 1882 թ. մարտին, Ծուշիում:

զաբանեն առօրյա խնդիրները, օգնեն թեթևացնելու ժողովրդի հոգսերը:

Հանդեսի հատկապես առաջին և երրորդ համարների նյութերը այն համոզմանն են հանգեցնում, որ Ս. Հախումյանը մեկուսացած մարդ չէր, սերտ կապեր ուներ հայ, ռուս և մյուս ժողովուրդների առաջադեմ մտածողների ու տպագիր օրգանների հետ: Ծիշա է, մի քանիսը, նույնիսկ առանձին տպագիր օրգաններ, նրան համարում էին մեծամիտ, գոռոզ ու ամբարտալան, բայց նման հեղուրանքները չէին ազդում Ս. Հախումյանի գործունեության վրա: Եվ նա այդ մասին գրում է, «Որքան մութ անկյուններից ձայներ լինեն, «Գործը» գնալու է իրեն ճանապարհով և նորան հանգամանքները կարող են միայն ժամանակավորապես դադարեցնել, բայց երբեք շեղել իրեն ուղիղ ճանապարհից»¹²: Ս. Հախումյանը խնդիր էր դնում մտոնկից ուսումնասիրել նաև մյուս ժողովուրդների կյանքը և հատկապես Ռուսաստանի իրավիճակը: Ահա թե ինչու նա իր հանդեսի երրորդ համարում գրում էր. «Ռուսաստանի կյանքը շատ սերտ կապ և հարաբերություն ունի մերին հետ, բայց այդ երկրի հասարակական կազմակերպությունը, ներքին կյանքը մեզ համար terra incognita է (անհայտ երկիր է)...»: Դրա պատճառներից մեկը նա համարում էր ժամանակի պարբերական մամուլի առանձին օրգանների անբարյացակամ վերաբերմունքը, թերթերի և հանդեսների վատ աշխատանքը:

Նա մեծ ապագա էր տեսնում ռուս գրականության, արվեստի համար: Ցավն այն է, սակայն, բողոքում էր Ս. Հախումյանը, որ հայ ընթերցողը շատ քիչ է ծանոթ ռուս գրականությանը: Այնպիսի հսկաներ, ինչպիսիք են Գոգոլը, Տուրգենևը, Տոլստոյը, Դոստոևսկին, Սալտիկով-Շչեդրինը և ուրիշներ, ինչպես նաև եվրոպական շատ առաջնակարգ գրողներ, հիմնականում թարգմանված չեն հայերեն, չեն դարձել հայ ընթերցողների սեփականությունը:

«Գործի» հրատարակիչը կողմնակից չէր եվրոպական քաղաքակրթությունը կորորեն ընդունելուն: Ընդհակառակը, նա պահանջում էր քննադատական մոտեցում. «Համաձայն և ջերմ ջատագով ենք այն մտքին՝ թե մեր ժողովուրդը պետք է օգուտ քաղի եվրոպական մտավոր և հոգեկան ահագին ժառանգու-

¹² «Գործ», 1884, էջ 89—90:

թումնից, բայց այդ ժառանգությունը ընդունելիս՝ պետք է միշտ քննել, թե եվրոպական կուլտուրայի մեջ ինչ բան ճշմարիտ ընդհանուր մարդկային է, ինչ բան պողպեթի է, ինչ բան կարևոր է մեր հայրենիքի զարգացման և բեղմնավորման համար և ինչ բան նրա մեջ մասնավոր է, անցողական՝ մինչև անգամ կեղծ և վնասակար»¹³:

Ս. Հախումյանը գրեթե նույն կարծիքն ուներ ուս գրականության մասին: Նալ բարձր էր գնահատում ուս գրողների այն ստեղծագործությունները, որոնք իրականությունն արտացոլում են ռեալիստորեն, ճշմարտացի, ներկայացնելով կյանքի ոչ միայն դրական, այլև անմխիթար կողմերը: Ս. Հախումյանը խորն էր ըմբռնում բարձրարժեք գրական գործի էությունը՝ դրա մեջ տեսնելով ոչ միայն ազգային, այլև համամարդկային գրծեր: Եվ նա իր միտքը ամփոփում է այսպես. «Մենք պետք է ծանոթանանք ուս գրականության այն արտադրությանց հետ, որոնք թեև նկարագրում են ուսաց կյանքը իր բոլոր գեղեցիկ և հոռի, մխիթարական և անմխիթար կողմերով, բայց որոնց մեջ միևնույն ժամանակ երևում են հանրամարդկային գծեր, որոնք համահավասար կերպով սիրելի են բոլոր մտահոյ և ամեն ազգի լավագույն մարդկանց համար: Այդ տեսակից են, օրինակ՝ Տուրգենևի, Տոլստոյի գրվածները, և հենց դրա համար է, որ ամբողջ Եվրոպան այնքան սիրում էր Տուրգենևին, թեև նա նկարագրում էր ըստ մեծի մասին ուս տիպեր»¹⁴:

Ս. Հախումյանը կարծում էր, որ պետք է մտածված ընտրություն կատարել, որոշել որևէ գրական գործի գաղափարական և գեղարվեստական արժանիքները և նոր հասցնել ընթերցողներին: Յուրաքանչյուր գեղարվեստական գործ պետք է հետապնդի որոշակի նպատակ և իր էությամբ օգնի ընթերցողին, հոգևոր սնունդ տա նրան, գեղարվեստական հաճույք պատճառի: Ավելին, իր կերպարների, հերոսների վեհ հատկություններով այն պետք է վարակի մարդկանց, տոգորի նրանց լավի, վեհի, գեղեցիկի զգացումով: Եվ, ընդհակառակն, սարկազմով ծաղրված տիպերն ու նրանց անվայել բարքերը պետք է խորշանք պատճառեն լայն մասսաներին:

Պատահական չէր, որ Ս. Հախումյանի հրատարակած «Գործում» տեղ էին գտնում Սալտիկով-Շչեդրինի («Անձնագրի նապաստակը»), Մուպասանի («Սիմոնի հայրը»), Էսքիլեսի և այլ հեղինակների առանձին գործեր: Հանդեսում միաժամանակ տպագրվել են Շիրվանզադեի «Երևում են» (պատկեր) պատմվածքը, Ն. Տեր-Ավետիսյանի «Անի» բանաստեղծությունը և ուրիշ ստեղծագործություններ: Նա բարձր է գնահատում թարգմանական արվեստը, ընդգծելով, որ հատկապես գեղարվեստական գործը պետք է այլազգի ընթերցողին հասցվի համ ու հոտով, պոետական կուլտուրայով, լեզվաոճական առանձնահատկությունների պահպանմամբ: Նա պայքարում էր այն բանի համար, որ թարգմանությունը կատարվի ոչ թե գործին անտեղյակ, սպաշնորհ մարդու, այլ տաղանդավոր գրողի, արվեստագետի կողմից, ընթերցողին զգացնել տալով հեղինակի բարձր ճաշակը, գեղարվեստագետի շնորհքը և ընդհանուր զարգացման մակարդակը:

Ս. Հախումյանը զարգացնում էր այն միտքը, որ գեղարվեստական գործերից բացի, հատկապես մամուլում, պետք է լայն տեղ հատկացվի գրախոսություններին: Սակայն գրախոսություններն էլ չպետք է միայն համատոտակի ներկայացնեն այս կամ այն գործը, այլ արծարծեն գրականագիտական մրտքեր, սուսք քաշեն նոր հարցեր, շեշտեն գրականության զարգացմանը նպաստող հանգամանքները: Եվ պատահական չէր, որ «Գործի» էջերում տպագրվում էին գրական որոշակի սկզբունքներով սուսշնորհվող գրախոսականներ: Հիրավի, հրատարակված գրախոսությունների մեծ մասը քննադատական բնույթ ուներ և բարձրացնում էր ոչ միայն գրականագիտական, այլև ուրիշ հարցեր: Ուշագրավ էր, մասնավորապես, այն գրախոսականը, որի հեղինակը քննադատում էր Մ. Բլոկի «Ձեռնարկ գործնական տնտեսության» աշխատության Ս. Պալասանյանի թարգմանությունը, համարելով այն ձախողված:

Ս. Հախումյանը ձգտում էր «Գործում» տպագրել այնպիսի նյութեր, որոնք հետամտում էին ժողովրդի շահերը և կոչված էին որոշակի պարզաբանումներ տալու հասարակությանը: Աշխատավորներին հուզող հարցերից մեկը հողատիրության հարցն էր: Հայտնի է, որ 1861 թվականի փետրվարի 19-ի ռեֆորմը, «տխրաբոնչակ «ազատագրումը» գյուղացիների ամենասակիող կողոպուտն էր, բռնությունների շարան և կատարյալ ծաղ-

¹³ «Գործ», 1884, էջ 4—5:

¹⁴ «Գործ», 1884, էջ 5—6:

րանք էր նրանց նկատմամբ»¹⁵։ Նման վիճակը չէր կարող արդարացի բողոք չառաջացնել գյուղացիական լայն շրջաններում և այդ վրդովմունքն ու զայրույթը չարտահայտվեր մամուլի առաջադեմ օրգաններում։

«Գործը» ևս հրապարակում է մի շարք նյութեր։ Ուշագրավ է «Համայնք և նրա նշանակությունը ժողովրդական կյանքում» հոդվածը, որը զետեղված է հանդեսի անդրանիկ համարում։ Հոդվածագիրը պարզ ու որոշակի ասում է, որ «տնտեսական հարցերից, որոնք վերջին ժամանակներում բարձրացրել են Ռուսաստանում և սոհասարակ բոլոր Եվրոպայում, ամենից մեծ ուշադրություն է դարձնում յուր վրա հողային հարցը և սրա հետ կապված պրոլետարական հարցը»¹⁶։ Նա հատկապես կանգ է առնում «համայնական» հողատիրության էության վրա, բացատրելով, թե ինչ է նշանակում այդ, ինչպես պետք է Ռուսաստանում և այլ երկրներում ամրապնդել այն, ինչ անել, որ աշխատավորը դառնա հողի տերը։ Մինչև հարցի պատասխանը, դժգոհություն է արտահայտվում աշխատավոր մարդու անմխիթար վիճակի մասին, այն մասին, որ հողը լինելով բոլոր հարստությունների աղբյուրը, չի պատկանում իր իսկական տիրոջը։ «Հողը բնության պարգևն է, ինչպես և օդը, արեգակի տաքությունը, և ամեն մարդ, որ ապրում է այժմ աշխարհում, իրավունք ունի մյուսների հետ հավասար վայելել բնության բոլոր պարգևները, դոցա թվում է հողը։ Բայց դժբախտաբար, վաղուց արդեն հողը մասնավոր անձանց սեփականություն է դարձել»¹⁷։

Հոդվածագիրը հողատիրության արդյունավետ ձևը համարում է «համայնքը»։ Նա կողմնակից է այն բանին, որ հողը պատկանի ոչ թե առանձին անձնավորության, այլ մի խումբ մարդկանց, «որոնք միմյանց հետ կապված են լինում կամ իրանց ծագումով, կամ մի ուրիշ հանգամանքով»¹⁸։ Սակայն այդ անդամներից ոչ մեկը իրավունք չունի գործածել այդ հողի մի մասն անգամ՝ իբրև կատարյալ սեփականություն, «իրավունք չունի ո՛չ ծախել, ո՛չ պարգևել ուրիշին. նա նուսն է պատ-

կանում մինչև այն ժամանակ, քանի որ նա հողը մշակում է»¹⁹։

Հանդեսը տպագրված հոդվածի միջոցով լայն բացատրություններ է տալիս համայնական հողօգտագործման վերաբերյալ. «Համայնքը շատ անգամ հողը բաժանում է յուր անդամների մեջ՝ նայելով աշխատավոր ուժերին. մեծ և ուժեղ ընտանիքը ավելի հող է ստանում, քան թե փոքրիկը, բայց և միևնույն ժամանակ եթե հանգամանքները փոխվում են, օրինակ, ուժեղ ընտանիքը յուր մշակների մահվան կամ ուրիշ պատճառով թուլանում է, համայնքը կարող է նրա ձեռքից առնել հողը, մի ուրիշ ընտանիքի տալ, որ կարող է հերկել հողը»²⁰։

Հեղինակը կանգնած լինելով նարողնիկական հայացքների վրա, ճիշտ չպատկերացնելով աշխատավոր մարդու՝ աղքատությունից դուրս գալու ելքը, փորձում է խորհրդածություններ անել հողատիրության հավասարության մասին։ Նա կարծում է, որ եթե «գյուղացիք աղքատ են, դրանում մեղավոր չէ ինքը համայնքը, այլ նրա դրության այլանդակ պայմանները, գործիճակ, հողի եկամտին անհամապատասխան հարկերը, տուրքերի մեծությունը և հողաբաժինների փոքրությունը»²¹։

«Հողատիրության և կալվածական խնդիրը Անդրկովկասում» հոդվածում հանդեսը սուր քննադատության է ենթարկում հայ պարբերական մամուլի օրգաններին, որոնց չեն հուզում հողատիրության հարցերը և միայն թարգմանաբար արտատպում են ճառեր, ճամփորդական նոթեր, նկարագրություններ։ Բննադատության սուր պաթը առաջին հերթին ուղղված էր պոլսահայ մամուլին։

Հոդվածագիրը մասնավորապես Արցախի օրինակով ցույց է տալիս, որ գրեթե բոլոր լավորակ հողերը պատկանում են առանձին կալվածատերերի, իսկ գյուղացի աշխատավորները ոչ մի միջոց չունեն ապրելու համար։ Նշված է, որ Ղարաբաղի բեկերից մեկը՝ գեներալ Աղալարովը, ունի 500 հազար դեսյատին հողամաս։ Հանդեսը բողոքում է դրա դեմ և ուղղակի ասում. «Սա սարսափելի բան է, զարհուրելի անիրավություն է, որ միայն սրբագործված է ժամանակով»²²։ Բերված

¹⁵ Վ. Ի. Լեւին, ԵԼԺ, հ. 20, Ե., 1979, էջ 211։

¹⁶ «Գործ», 1882, էջ 41։

¹⁷ «Գործ», 1882, էջ 41—42։

¹⁸ Նույն տեղում, էջ 42։

¹⁹ Նույն տեղում։

²⁰ Նույն տեղում։

²¹ Նույն տեղում, էջ 45։

²² Նույն տեղում, էջ 63։

փաստերը մի ավելորդ անգամ համոզում էին ընթերցողին, թե ինչպիսի անարդարություն էր տիրում երկրում՝ որտեղ գյուղացիները գրկված են մի կտոր լավ հողամաս ունենալու հնարավորությունից:

Հողվածագիրն անհրաժեշտ է համարում հայրենիքի նյութական ու հոգևոր միջոցների խոր ուսումնասիրությունը: Այդ նպատակով նա գրում է. «Մի ժողովուրդ, որ չի ուսումնասիրված, այսինքն չունի հաստատ տեղեկություն յուր նյութական և հոգեկան զորության վերա, որ չի կարող կշռել յուր կյանքի պայմանների ազդեցության չափը— այդպիսի ժողովուրդը կանոնավոր կերպով սուսջ գնալ չի կարող և շուտ թե ուշ նա կպատժվի: Հասարակական միտքը և զարգացումը միշտ թույլ կմնան, անհաստատ, վայրիվերո, երերուն»²³:

«Գործը» իր ընթերցողներին խորհուրդ է տալիս քննական մոտեցում ունենալ հասարակական-պատմական իրադարձությունների նկատմամբ, միշտ վերլուծել փաստերը և երեվույթները, ուշադրություն դարձնել կյանքի կարևոր կողմերի վրա: Նա սուսջ է քաշում «Հայրենիքի ուսումնասիրության կարևորությունը», շեշտը դնում է այն բանի վրա, որ մարդը չպետք է կյանքում լինի պասիվ, անտարբեր դեպի իր շրջապատն ու հասարակությունը, այլ ակտիվորեն հետաքրքրվի դրանցով, ուսումնասիրի իր հայրենիքի պատմությունը, տեղյակ լինի կարևոր իրադարձություններին: Այդ այն բանի համար, կարդում ենք այնտեղ, որպեսզի «հնի» վրա կառուցենք «նորը», շրջվենք դեպի կյանքի լուսավոր կողմը: Այնուհետև ընդգծվում է մի այլ միտք. չպետք է սահմանափակվել միայն ազգայինով, այլ վերցնել ու օգտագործել ուրիշ ժողովուրդների լավը և ուսանելին: «Գործը» «Հայրենիքի ուսումնասիրության կարևորությունը» հողվածում ասում է. «Խոր ուսումնասիրություն, անկեղծ սեր դեպի ժողովրդի ընդհանրությունը, ուրիշ ազգերի փորձը...: Ժողովրդի ուսումնասիրությունը ամենագորել մի ավանդ է հաստատ զարգացման համար»²⁴:

Այստեղ զուգահեռաբար շոշափվում է մի ուրիշ հարց և՛ բնակչության լայն խավերի առաջխաղացման կարևորությունը, ընդգծելով մասնավորապես կանանց ազատագրման, զարգաց-

ման, կրթական մակարդակի բարձրացման և նրանց ուժերի՝ լիակատար գործադրման անհրաժեշտությունը կյանքի տարբեր բնագավառներում: Այս տեսակետից պակաս ուշադրություն չի գրավում «Բժիշկ կանայք Հնդկաստանում» հողվածը:

Պատմական էքսկուրսով հանդեսը ցույց է տալիս, որ կանանց հարցը միշտ էլ հուզել է ամբողջ Եվրոպային, որ թեև դրանով զբաղվել են շատ ու շատ անգամ, բայց և այնպես մինչև հիմա կինը հիմնովին դուրս չի եկել իր խավար վիճակից: Սակայն մի բան ակնհայտ է վերջերս, շեշտում է «Գործը», որ նույնիսկ մահմեդական կանայք ձեռք են բերել որոշ իրավունքներ: Այլ խոսքով՝ «մահմեդական կինն էլ, որ մինչև այժմ ստրկության մեջ էր դեգերում, նմանապես սկսել է փոքր առ փոքր ազատություն ստանալ և լույս աշխարհի դուրս գալ»²⁵:

Հետաքրքիր է նաև Հնդկաստանի կանանց մասին հեղինակի վերաբերմունքը: Նա պատմում է, որ աստիճանաբար հնդիկ կինը ձեռք բերելով որոշ իրավունքներ, դառնում է լուսավոր, լրջախոհ և բանիմաց: Դրան մեծապես նպաստում են բացված կուլտուր-լուսավորական օջախները և ուսումնական հաստատությունները: Նա կոչ է անում հայ կանանց՝ հետևել Հնդկաստանի առաջավոր կանանց օրինակին: Այս կապակցությամբ էլ գրված է. «Հնդկաստանի բժիշկ կանայք մեծ ապագա կունենան, որով և մեծապես կարող կլինեն օգնել իրենց թշվառ զանանայի մեջ փակված քույրերին: Մեզ մնում է միայն ցանկանալ, որ Կովկասի կանանց մեջ էլ զարթնի բարի նախանձ՝ այդ Հնդկաստանի իրենց քույրերին նմանվելու, որովհետև մեր կնոջ դրությունն էլ շատ քշով է զանազանվում Հնդկաստանի զանանայում փակված կանանց դրությունից»²⁶:

Հանդեսը հետզհետե զարգացնում է կրթության վերաբերյալ արտահայտած իր մտքերը և հստակորեն արծարծում մանկավարժական առաջադեմ գաղափարներ, պայքարում դպրոցական գործը որոշ չափով կարգավորելու համար: Նա գտնում է, որ ամեն մի բարեկիրթ և հասկացող հասարակություն, որ ունի իր սեփական, ազգային կրթական հաստատությունները, պետք է հաշիվ պահանջի ուսումնական օջախների գլուխ կանգնած անձնավորություններից: Ժողովրդի առջև հաշվետվությամբ

²³ Նույն տեղում, էջ 12:

²⁴ Նույն տեղում:

²⁵ «Գործ», 1884, էջ 21:

²⁶ Նույն տեղում, էջ 23:

հանդես գալը բարձրացնում է ղեկավարների պատասխանատվությունը: Այս նպատակով հանդեսի էջերում զգալի տեղ էր հատկացվում Ղարաբաղում գործող դպրոցների գործունեության յուսաբանմանը:

Խոսելով Արցախի հայոց հոգևոր թեմական և Ծուշիի օրիորդաց դպրոցների անցած ողու մասին, «Գործը» չէր կաշտոլ անտարբեր անցնել Սեդրակ Մանդինյանի մանկավարժական ծառայության կողքով, որի շնորհիվ նշանակալից առաջադասում է նկատվում ժողովրդական կրթության ասպարեզում: Սեդրակ Մանդինյանը աչքի էր ընկնում ոչ միայն իր գիտելիքներով, այլև կազմակերպչական ընդունակություններով: Նրա ջանքերը եռանդուն էին, մասնավորապես, ուսուցչական կադրեր պատրաստելու և ուսուցման առաջադիմական մեթոդներ կիրառելու ուղղությամբ:

Հրապարակելով երկու դպրոցների հաշվետվությունը, «Գործը» առաջին համարում գրում է, որ 1880 թ. սեպտեմբերից մինչև 1881 թ. սեպտեմբերը հոգևոր թեմական դպրոցը աչքի է ընկել իր ուսուցիչներով, աշակերտներով և ուսուցման ձևերով: Դպրոցի տասներկու ուսուցիչներն ու նրանց ութ օգնականներն ամեն կերպ ձգտել են աշակերտության մեջ սեր պատվաստել դեպի գիտությունն ու գրականությունը, ուսումը, քաղաքակրթությունը: Նշվում են հատկապես Ղազարոս Աղաջանի, Սիմոն Հախումյանի, Հակոբ Խոջամիրյանի, Սամվել Գյուլգադյանի, Գաբրիել Գյուլիքևյանի և ուրիշների՝ իբրև հայ մշակույթի, գրականության ու արվեստի տարբեր բնագավառների մշակների անունները: Հանդեսը որոշ մանրամասնություններ է հաղորդում դպրոցների կառուցվածքի, դասարանական կազմի և աշակերտների քանակի մասին: Օձեշտվում է, որ հոգևոր թեմական դպրոցը բաղկացած է երեք պատրաստականից, չորս դասատուից և մի մասնագիտական-մանկավարժական բաժնից, որի ուսման տևողությունը մեկ տարի է:

Աշակերտների թիվը մասնագիտական բաժանմունքում սովորող 11 պատանիների հետ միասին հասնում էր 386-ի: Նրանց մեծ մասը սովորում էր «Ա», «Բ» և «Գ» պատրաստականներում, յուրաքանչյուրում ընդգրկված էին միջին հաշվով 80 աշակերտ:

Հետաքրքիր են նաև այն տեղեկությունները, որոնք վերաբերում են աշակերտների խրախուսանքին. ոչ միայն ցուցա-

հանդեսներ էին կազմակերպվում շնորհալի աշակերտների աշխատանքներից և աղջիկների ձեռագործերից, այլև ուսուցչական ժողովի որոշմամբ ուսման գերազանցիկները ստանում էին մրցանակագրեր և վարժապետական (դասատվական) կոչումներ, այսինքն՝ իրավունք էր տրվում ուսուցիչ լինելու հայ ծխական և սկզբնական ուսումնարաններում:

Բացի դրանից, ուսուցչական կոլեկտիվները երաշխավորում էին այս կամ այն աշակերտին՝ մտնելու Էջմիածնի ձեմարանը կամ որևէ բարձրագույն դպրոց:

«Գործը» հայտնում է նաև, որ որոշ հաջողություններ է ձեռք բերել օրիորդաց դպրոցը, ուր աշակերտների թիվը հասնում է 149-ի: Մի շարք սուարկանների հետ միասին հայ աղջիկները սովորում են ձեռագործի արվեստը, որ ուսուցանում էր նրանց Զատի Արզումանյանը: Ծուշեցի այս տարեց կինը քիչ ջանքեր չի թափել հայ օրիորդների կրթության գործը Ղարաբաղում կազմակերպելու համար:

Այստեղ էլ պատշաճ ձևով էր դրված աշակերտուհիներից խրախուսելու գործը. առաջադեմ սովորողները, կազմելով «Հայոց օրիորդական դպրոցի առաջին երախայրիքը, իրենց գեղեցիկ հատաշաղիմությամբ և զարգացմամբ, պիտի միշտ այդ դպրոցի զարդը կազմեն» և օրինակ հանդիսանան իրենց հաջորդներին: Այդպիսիներից էին Վարսենիկ Գյանջեզյանը, Մարիամ Բահաթրյանը, Ոսկի Թավրիզյանը, Բալախանում Առաքելյանը, Կատարինե Դոլոխանյանը, Մագրաֆինե Մասումյանը, Ծուշանիկ Բեգլարյանը և ուրիշներ:

Ղարաբաղի պարբերական մամուլը հետագայում հայտնում է, որ օրիորդները խորանում են գիտության տարբեր ճյուղերում, դառնում բարձրորակ ուսուցչուհիներ հայկական դրպրոցներում, ակտիվորեն մասնակցում գավառի հասարակական-մշակութային կյանքին: Նրանցից մասնավորապես Ոսկի Թավրիզյանը և Բալախանում Առաքելյանը Սեդրակ Մանդինյանի մոտ հմտանում են մանկավարժական ձևերի ու մեթոդների մեջ:

Դրվատելով ուսումնական այդ օջախը, հանդեսը գրում է, որ դպրոցը տալիս է «... հայ հոգով և հայ կրթությամբ դաստիարակված, մեծացած օրիորդներ և ապագա մայրեր, որոնք նույն ուղղությամբ և հոգով պիտի դաստիարակեն իրենց զա-

վակներին և մեր հասարակության խորթացած կյանքի մեջ
նոր, թարմ կյանք պիտի մտցնեն»²⁷:

Ի դեպ, նման կարգի նյութերը և մտքերը եզակի չէին ոչ
միայն «Գործում», այլև մյուս պարբերականներում, մասնա-
վորապես «Հայկական աշխարհում», ուր շոշափված էր ազ-
գային զգացումները, շեշտված էր այն հանգամանքը, որ հար-
կավոր է պատանհներին ու աղջիկներին, ամբողջ երիտասար-
դությանը դաստիարակել «հայ հոգով», «հայ կրթությամբ»:

Նման կոչերը կարծես անխուսափելի էին, որովհետև ազ-
գակագրամավորման պրոցեսը թևակոխել էր նոր, ավելի բարձր
փուլ և մամուլը համընթաց էր գնում այդ իրողությանը:

Նշելով ուսուցչական խմբերի և դպրոցների տեսուչների
ջանքերը սովորողների բարոյական դաստիարակության ուղ-
ղությամբ, «Գործը» կարևոր է համարում օրիորդաց կրթական
օջախների դերը կանանց զարգացման ու առաքինություններով
օժտելու ասպարեզում: Ծեշտում է հատկապես Թիֆլիսի Գա-
յանյան դպրոցի ուսանելի օրինակը, որը մեծ աշխատանք է
կատարում «ազգային և ընտանեկան կյանքի համար», զգալի
ավանդ մուծելով «ազգային բարոյական վերածնության գործի
մեջ»:

Սիմոն Հախումյանի հանդեսը նշում է, որ Ծուշի օրիոր-
դաց դպրոցը պետք է ընդօրինակի իր ավագ քրոջը, առա-
ջադեմ մեթոդներով կազմակերպի իր ուսուցման ու դաստիա-
րակության գործը օրիորդների շրջանում, հասնի այն բանին,
որ Ծուշիում նույնպես պատրաստվեն ազգի բարոյական վերա-
ծննդի համար լիարժեք քաղաքացիներ: Հանուն այս վեհ նպա-
տակի Ծուշիի հայ բնակիչները, որոնց թիվը հասնում է 20.000-ի,
պետք է դպրոցին օգնեն նյութապես ու բարոյապես, ապահո-
վեն լուսավորության գործի առաջընթացը:

Հանդեսն առաջ է քաշում դպրոցական լայն ցանցի ստեղծ-
ման, մի քանի օրիորդաց դպրոցներ ունենալու, աշակերտու-
հիներին տարբեր մասնագիտական գիտելիքներ հաղորդելու
հարցը: Ինչո՞ւ Կակաթայում, Բոմբեյում և Մադրասում կգոր-
ծեն մանկաբարձուհիների պատրաստման դպրոցներ, իսկ հա-
յերի մեջ՝ ոչ, հարց է տալիս «Գործը»:

Հաշվի առնելով այս, Ս. Հախումյանը «Ընթերցողներին»

խմբագրականում գրում է. «Ժողովրդի առաջադիմությունը
պետք է ամեն գործչի և հաստատության ձգտումն ու հոգա-
ցողության առարկան լինի: Բայց հառաջադիմությունը պտուղ
է միայն խորին մտածողության և առանց ամբողջ ազգաբնակ-
չության՝ նա չի կարող ծնվել. ուստի, նախ և առաջ պետք է
ժողովրդին անկախ մտածել սովորեցնել: Այդ մեծ գործի մեջ,
օրագիրն էլ յուր պատվավոր տեղն է բռնում՝ ժողովրդի ան-
կախ, ինքնուրույն մտածող մասի օրգանը, մտքի արտահայ-
տիչը դառնալով...»²⁸:

Ժողովրդի առաջընթացի համար տարվող պայքարում հան-
դեսն առաջին պլանի վրա է դնում մի կողմից՝ կուլտուր-լու-
սավորական օջախների, դպրոցների և մյուս կողմից՝ մամուլի
տպագիր խոսքի դերը, նրա ազդեցության կարևորությունը:

Արտահայտելով առաջադիմական մտքեր, Ս. Հախումյանը
միաժամանակ գերազանահատում է մտածողության, լուսավո-
րության դերը, անտեսելով նրանց պայմանավորվածությունը
հասարակության նյութական կյանքի պայմաններով:

«Գործը» ընթերցողին համակում էր վաղվա՛ հույսով: Նրա
ըմբռնմամբ մարդն ի վիճակի է նվաճելու իր իրավունքն ու
ազատությունը՝ կործանելով հազար ու մի արգելք: Այս միտքը
հանդեսը հանախ արտահայտում էր գեղարվեստական խոսքի
ուժով: Մի բանաստեղծության մեջ ուղղակի կոչ է արվում.

Բայց, սիրելիք, չվհասովենք,
Գործենք, տքենք միշտ անդադրում.
Ամեն արգելք կործանելով
Անհաղթ լինենք մեր գործերում...
Մեր առաջնորդն է այն հույսը,
Որի առաջ ամեն չարեր՝
Ոչնչանում, փշրվում են
Որպես չնչին թույլ սծեղներ²⁹...

Ս. Հախումյանը ձգտում էր, այնուամենայնիվ, անցկաց-
նել այն միտքը, որ սկսած գործի մեջ չպետք է թուլամտություն
հանդես բերել, այլ միշտ՝ վճռականություն և խոր հայրենասի-
րություն:

«Գործի» հեղինակությունը ոչ միայն բարձրացնում էին նրա

²⁸ «Գործ», 1884, էջ 3:

²⁹ Նույն տեղում, էջ 41:

²⁷ «Գործ», 1882, էջ 89:

խմբագիր-հրատարակիչը, այլև նրա շուրջը համախմբված ակտիվ աշխատակիցները, մտավորականները: Ծուշեցիներից օժանդակում էին հատկապես Համբարձում Առաքելյանը³⁰, բրժիշկ Մարգար Առուստամյանը, Նիկողայոս Տեր-Ավետիքյանը, Օսինկա Տեր-Մովսիսյանը և ուրիշներ: «Գործի» էջերում հաճախակի էին գետնադրվում Հակոբ Խոջամիրյանի և Ալեքսանդր Քալանթարի³¹ հոդվածները, որոնք վերաբերում էին, մասնավորապես, հողային հարցին:

Ս. Հախումյանի սկսած գործը մնաց կես ճանապարհին: Նա մտադիր էր պարբերաբար տպագրել հետաքրքիր հոդվածներ հայերի և հարևան ժողովուրդների տնտեսական ու հոգեվոր դրության մասին, լույս ընծայել ճանապարհորդական նոթեր (ինքնուրույն և թարգմանական), քաղաքական, հրապարակախոսական բազմաթիվ նյութեր, իբրև հավելված հրատարակել եվրոպացի և ռուս անվանի հեղինակների գործերի բազմաթիվ թարգմանություններ և այլն: Սակայն մոլեգնում էր ցարական գրաքննչությունը, և մամուլի գործի գլխավոր վարչությունը մի քանի անգամ կոկկասյան գրաքննչական մարմիններին հայտնում է այն մասին, որ Ս. Հախումյանի «Գործը» «վտանգավոր ուղի» է բռնել և իր էջերում տալիս է «հակակառավարական» հոդվածներ:

«Գործի» «վտանգավորության» մասին կարգադրություններ են արվում 1882 թվականի մայիսի 20-ին և հոկտեմբերի 18-ին: 1882 թվականի դեկտեմբերի 31-ի № 6019 գրությանը մամուլի գործերի կոմիտեն ուղղակի հայտնում է, որ «Գործի» № 1-ի մի շարք հոդվածներ «սոցիալիստական» են և ունեն

³⁰ Ծնվել է 1855 թ., Ծուշիում: Մինչև 10 տարեկանը ուսանել է հայրենի քաղաքի վանքերից մեկում: 1865 թ. ծնողների հետ տեղափոխվում է Թավրիզ, աշակերտում հայագետ Սամվել Գյուլգաղյանի դպրոցում: Այստեղ նա ձեռնամուխ է լինում մի շարք լեզուների ուսումնասիրությանը: 1874 թ. նա վերադառնում է հայրենիք, այնուհետև՝ Բաբու: 1879 թ. ավարտում է տեղի ռեալական ուսումնարանը: Սովորում է նաև Մոսկվայի երկրագործական ակադեմիայում: 1881 թ. վերադառնում է Ծուշի և նշանակվում տեղի թեմական, ապա օրհորդաց դպրոցների տեսուչ: Աշխատում է նաև որպես ֆրանսերենի և աշխարհագրության ուսուցիչ: 1892 թ. «Մշակի» մշտական աշխատակիցն էր, 1908 թ. նրա երեք խմբագիրներից մեկը, իսկ 1913 թ.՝ խմբագիր-հրատարակիչը: Վախճանվում է 1918 թ.:

³¹ Ս. Քալանթարը (1855—1913) աչքի էր ընկնում իր հրապարակախոսական ելույթներով: 1892 թ. «Մշակի» խմբագիր-հրատարակիչներից էր:

«քաղաքական վտանգավոր ուղղություն» և, ահա, գրաքննչական 178-րդ հոդվածի հիման վրա ստաջարկվում է կալանքի տակ վերցնել այդ համարը, թեև նրա լույսընծայումը թույլատրված էր նահանգական գրաքննչի կողմից:

Հանդեսի մասին (գրաքննչության կապակցությամբ) իր հիշողություններում առանձին մանրամասնություններ է պատմում Պետրոս Զաքարյանը³²: «Հատուկ ցենզոր չլինելու պատճառով կառավարությունը գրաքննչությունը հանձնում է գավառական ոստիկանության վարչության քարտուղար Ն. Ներսիսյանին: Սահմանափակ ուսման տեղ ցենզորը վախենալով, որ միգրացի ամսագրում սպրդեն արգելված մտքեր, իրեն խորհրդատու է ընտրում ուսումնական մեկին, քաղաքային բրժիշկ Մ. Առուստամյանին և նրա հավանությամբ է բաց թողնում հոդվածները: Եվ ամսագրի № 1 համարը ստացվում է Թիֆլիսի գրաքննչական ատյանում և այդտեղ նկատում են վրճաակար, կործանիչ մտքեր, առավել Հ. Առաքելյանի հոդվածում, որը վերաբերում էր Ղարաբաղի հողային հարցին. ամսագրի համարը դրվում է արգելքի տակ և բացվում է քննչություն: Նա պարզում է բժ. Մ. Առուստամյանի մասնակցությունը, որի պատճառով ոչ-պաշտոնական ցենզորը նահանգապետ Նակաշիձեի կարգադրությամբ աքսոր է ուղարկում Հյուսիսային Կովկաս. «Գործի» խմբագրությունն այնուհետև զրկվում է Ծուշիում ցենզորայի ենթարկվելու իրավունքից և այդպիսով ամսագիրը մեռնում է...»³³:

«Գործի» կարճ կյանքի հիմնական պատճառներից մեկը, ինչպես նշեցինք, հրատարակչի նյութական անմխիթար վիճակն էր: Այն շատ քիչ ընթերցողներ ուներ (մասնավորապես

³² «Նորք» հանդեսի № 1-ում Պետրոս Զաքարյանի մահախոսականով հանդես է եկել Ստ. Զորյանը: Նա Պ. Զաքարյանին բնութագրում է իբրև հիանալի մարդու, որի սիրած հեղինակներն էին Չեռնիշևսկին, Գլեք Ռուպենսկին, Կորոլենկոն և ուրիշներ: Մի շարք հարցերի նվիրված (քաղաքական, ֆինանսական և գրական) նրա հոդվածները լույս են տեսել «Մշակում», «Մուրճում», «Անկախ մամուլում» և այլուր: Նրա վերջին հոդվածը հենց «Նորքում» էր տպագրվել: Եղել է «Կարմիր աստղ» թերթի պատասխանատու քարտուղարը:

³³ «Նորք» գրական, գիտական և քաղաքական հանդես, գիրք № 1, 1922, Ե., էջ 84:

վերջին համարը): Հրատարակիչը նշում է, որ «Գործի» բաժանորդների թիվը հասնում է 70-ի:

Ինչ խոսք, որ «Գործը» հնարավորություն չունեցավ մեծ ծրագիր կենսագործելու, թեև հրատարակչանորեն իր ընթերցողներին հայտնել էր իր նպատակների և հարուստ ծրագրերի մասին: Այնուամենայնիվ, անուրանալի է, որ հրատարակված բոլոր համարներում էլ խոսվում էր գյուղացիների և ընդհանրապես աշխատավորների հոգսերի մասին, շեշտվում էր բնակչության լուսավորական գործի կարևորությունը, առաջ էր քաշվում ռուս և եվրոպական առաջավոր արվեստին և գրականությանը հաղորդակից լինելու անհրաժեշտությունը: «Գործի» արժեքը բարձրանում է ամենից առաջ հենց նրանով, որ արժարժված հարցերը հրատարակվում էին, հուզում էին ժողովրդական լայն մասսաներին:

Ծիշտ է, հանդեսը խորապես ցավում էր մասսաների ծանր դրության համար, շեշտում էր հատկապես գյուղացիների դաժան աշխատանքը, պայքարը մի կտոր հացի համար, սակայն ունենալով նարողնիկական հայացքներ, ամեն ինչ կապում էր հողի հետ, այն համարելով ոչ միայն գյուղական կյանքի հիմունքը, այլև բոլոր սոցիալ-տնտեսական հարցերի լուծման բանալին: Նա դնում էր հողի հավասար բաշխման հարցը, ընդգծում չքավորներին բերրի հողամասերով ապահովելու կարելիությունը, բայց չէր գիտակցում, որ համայնքի ներսում էլ տեղի էր ունենում շերտավորում, առաջանում էին չքավորներ և կուլակներ, որովհետև չքավորները հնարավորություններ չունեին մշակել իրենց հողը: Փաստորեն չքավորը կախման մեջ էր գտնվում կուլակից:

Քննադատելով Անգլիայում, Շվեյցարիայում և այլ երկրներում հողի օգտագործման համակարգը, նա կարծես համամիտ էր Ռուսաստանում տիրող հողատիրության ձևերի հետ: Գերադասելով համայնքը՝ համայնական հողատիրության այդ ձևը, հանդեսը շեշտում էր նրա պայմանների բարելավման անհրաժեշտությունը, այսինքն՝ հարկերի և տուրքերի համապատասխանեցումը հողից ստացվող եկամտին:

Հանդեսը, արտահայտելով նարողնիկական հայացքներ, գյուղացիներին համարում էր «ուժեղ և անկեղծ ազգային

տարր»³⁴: Նա կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում համարում էր պատահական երևույթ, չէր տեսնում բանվորական մասսաների աճը և նրանց առաջատար ուժը շահագործողների դեմ մղվող պայքարում:

«Գործը», բարի նպատակներ հետապնդելով, բարեմտորեն կարծում էր, թե տպագիր խոսքի, մամուլի, գրականության, կրթական հաստատությունների, լուսավորության և պրոպագանդայի ու գաղափարախոսության այլ միջոցներ արդյունավետ գործադրելու դեպքում ամեն ինչ կգնա ցանկացած ուղիով: Երբեմն էլ «Գործը» հույսը դնում էր առանձին «բարերարների» վրա, մտածելով, որ եթե նրանք օգնեն աղքատներին, ապա զգալի չափով կբարելավվի բնակչության վիճակը:

Հայ պարբերականը, իհարկե, շատ հարցեր էր արծարծում, շատ խնդիրներ բարձրացնում, բայց, այնուամենայնիվ, ճիշտ ուղի չէր ցույց տալիս աշխատավորների տնտեսական կյանքի արմատական բարելավման համար, թերագնահատում էր բանվոր դասակարգի դերը գլխավոր խնդիրը լուծելու գործում:

Որոշ իմաստով հետևելով ռուսական «Дело» (1866—1888) ամսագրին, մասնավորապես գյուղի աշխատավորությանը ծանր վիճակը լուսաբանելու ասպարեզում, Ս. Հախումյանի հանդեսը ելնում էր լիբերալ դիրքերից և իր իսկ հասարակական-քաղաքական սուր հարցադրումները չափավորում լիբերալ լուծումներով:

³⁴ «Գործ», 1882, էջ 18:

ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐՅԱՆԸ ԵՎ ՈՒՐԻՇՆԵՐ

Ինչպես նկատեցինք, Մ. Մահուեսի-Հակոբյանի տպարանում՝ բավական թվով գրքեր ու ժողովածուներ են լույս տեսնում 19-րդ դարի 90-ական թվականներին Շուշում գործնա-

¹ 1890-ական թթ. այն հագեցել էր նոր սարքավորումներով: Յավոք, Մ. Մահուեսի-Հակոբյանի տպարանը կործանվեց 1905 թ. հայ-ադրբեջանական ընդհարումների ժամանակ, ոչնչացավ Շուշիի հրդեհի պատճառով: Հետագայում այն վերանորոգվել և շարունակել է գործել մինչև 1920-ական թվականները Թիֆլիսում՝ «Մամուլ» անվան տակ:

կան հիմքերի վրա է դրվում գրքեր հրատարակելու գործը: Ակտիվություն է հանդես բերում Հայոց բարեգործական ընկերությունը: Նրա՝ Ծուշիի տեղական վարչության միջոցով որոշվում են հրատարակելիք գրքերի ուղղությունն ու թեմատիկան: Մամուլը լայնորեն է արձագանքում հայրենասիրական այդ նախաձեռնությանը, որի հիմնական նպատակն էր՝ աշխատավորական զանգվածների համար լույս ընծայել օգտակար գրքեր, ընդարձակել նրանց մտավոր հորիզոնը, սեր առաջացնել դեպի գիտությունը, վերացնել սնոտիապաշտությունը, հոռի սովորությունները:

«Ծուշիի տեղական վարչության ձեռնարկած գործը համակրելի գործ է և խրախուսանքի արժանի,— գրում է «Մշակը»,— մեր հասարակ ժողովուրդը զուրկ է բոլորովին որևէ մտավոր սնունդից... Հենց այդ պատճառով ժողովրդական գիրք հրատարակելը մի վերին աստիճանի լուրջ գործ է, որին պետք է ձեռնարկել որոշ ծրագրով և պատրաստությամբ: Ժողովրդական գիրքը նպատակ պիտի ունենա հասարակ դասի, ամբողջի մտավոր հորիզոնը լայնացնել, բարոյական ձգտումներ առաջ բերել նրա մեջ, ներշնչել նրա մեջ գիտակցություն և ինքնուրույնության զգացմունք, տգիտությունը և նորա հետեւյալնք զանազան թյուր գաղափարները, սնոտիապաշտությունները, որոնք կարելի է՝ ցրել, գիտության էական ճշմարտությունները պարզ լեզվով ավանդելով նորան, և ի վերջո գրգռել սեր, ձգտում դեպի ընթերցանությունը»²:

Եվ արդեն մեկ ամիս անց՝ «Մշակում»³, Հայոց բարեգործական ընկերության Ծուշիի տեղական վարչությունը հայտնում է ժողովրդական գրքերի հրատարակության ծրագիրը, որտեղ մատնանշվում է, որ առավել ուշադրություն է դարձվելու իրական կյանքի հետ կապված ինքնուրույն և թարգմանական գործերի լույս ընծայմանը: Հրատարակվելիք գրքերի մի մասը պետք է լինի **գիտական՝** լայն առումով, այն է՝ ընթերցողներից օգտակար տեղեկություններ հաղորդվեն գյուղատնտեսության, արհեստների, առողջապահության և այլ բնագավառների մասին: Ծրագրի մեջ նախատեսվում է նաև հրապարակ հանել

հանրամատչելի գրքույկներ՝ պատմական գործիչների, նշանավոր մարդկանց կյանքի ու գործունեության առթիվ:

Իրականացվում է ծրագրի մի մասը միայն, որովհետև այն հունդիպում է բազմաթիվ դժվարությունների, առաջին հերթին՝ ցարական իշխանությունների դիմադրությանը: Այդ գործում մեծ շանքեր է ներդրում հատկապես Տիգրան Նազարյանը⁴: Նա Ծուշիում հիմնում է հրատարակչական գրասենյակ: Այդ առթիվ էլ հայտարարություն է տպագրում «Մշակում». «Ես կազմում եմ Ծուշիում «Հրատարակչական գրասենյակ». առաջին սերիան իմ հրատարակությունների՝ կլիներ հետևյալ վեց գրքույկները. երեխաների համար «Երկու մանրավեպ» Ալֆոնս Դոդեից թարգմանած (գինն է 15 կոպ.), ծնողների և դաստիարակների համար «Պոզնանի ուսուցչի օրագրից» հեղ. Լեոպոլսի թարգմանած «Вестник Европы» ամսագրից (գինն է 20 կոպ.). ժողովրդի համար «Ծաղիկ և ծաղկահատություն» (գինն է 15 կոպ.): Նույնպես հետևյալ ընթերցանության գրքույկները. «Ծանապարհորդություն Ղարաբաղում» (գինն է 30 կոպ.), «Պարսպ ժամեր» (գինն է 25 կոպ.) և «Բնար խոսնակ»՝ ինքնուրույն և թարգմանական բանաստեղծություններ



Արցախի հրատարակչական գրասենյակի տնօրեն Տիգրան Նազարյան:

⁴ Նա ծնվել է 1858 թ., Ծուշիում: Չորս տարեկանում սովորել է գրել-կարդալ, այնուհետև լեզուների է տիրապետում Գալուստ Փափազյանի դպրոցում: Կատարելագործվում է հատկապես ֆրանսերենի մեջ: Պատանի հասակից նվիրվում է հրապարակախոսությանը և մինչև կյանքի վերջը զբաղվում է ժողովրդասիրական-հրատարակչական գործունեությամբ: Մահացել է 1926 թ., Թիֆլիսում:

² «Մշակ», 1887, օգոստոսի 20:

³ Տե՛ս թերթի 1887 թ. հոկտեմբերի 10-ի համարը:

(գինն է 50 կոպ.)⁵: Նախապատրաստական մեծ աշխատանքից հետո նա կազմակերպում է հրատարակվելիք գրքերի բաժանորդագրություն:

Տպագրված գրքույկների տարածման համար Տիգրան Նազարյանը տեղերում աշխատակիցներ է ընտրում, բայց երեք գրքույկ հրատարակելուց հետո առաջ են գալիս մի շարք արգելքներ. հատկապես մեծ դժվարություն է ստեղծվում նյութական միջոցների հայթայթման գործում՝ այն էլ ցարական իշխանությունների մշտական հալածանքների պայմաններում:

Այդ և այլ պատճառներով լիովին չեն իրականանում Տիգրան Նազարյանի սկսած օգտակար նախաձեռնումները: 1881 թ. վերջերին նա տեղափոխվում է Թիֆլիս և նոր եռանդ ներդնում սկսած գործը առաջ մղելու: Այս մասին նա 1881 թ. դեկտեմբերի 26-ին նամակ է հղում «Մշակի» խմբագրին, խընդրելով տպագրել այն՝ ի գիտություն ընթերցողների: Նա գրում է. «Մեր հայտարարական նամակներից, որ տպվեցան հայ պարբերական թերթերում, իհարկե, արդեն հայտնի կլինի մեր հարգելի բաժանորդներին, որ մեզնից բոլորովին անկախ և անակնկալ արգելափոխներ խոչընդոտն եղան Շուշիում կանոնավորապես նոցա լույս ընծայելուն և մենք ստիպված էինք անորոշ ժամանակով հետաձգել հրատարակությունների շարունակելը: Առ ժամանակ տեղափոխվելով Թիֆլիս, պատիվ ունենք հայտնել մեր բաժանորդներին, որ այստեղ շուտով լույս կտեսնի մեր հրատարակությունների 4-րդ համարը և անմիջապես կողարկվեն նրանց, իսկ մյուս համարների շուտ, թե քիչ ուշ լույս ընծայելը կախված է կարևոր իրավունքներ ստանալուց, որոնք ձեռք բերելու՝ մասամբ էլ սրանց համար եկած են Թիֆլիս»⁶:

Մի շարք ծրագրեր ուներ նա Թիֆլիսում. ոչ միայն շարունակել նախատեսված գրքերի հրատարակությունը, այլև հիմնել ինքնուրույն պարբերական, ստեղծել սեփական տպարան: Եվ ահա 1883 թ. ~~այս հիմք է դնում մանկական պատկերազարդ «Սոցիալ» ամսագրին, որը գոյատևում է շուրջ 35 տարի: 1880 թ. մինչև 1919 թ. նա հրատարակում է նաև «Տա-~~

⁵ «Մշակ», 1881 թ., սպրիլի 22 (մայիսի 4):

⁶ «Մշակ», № 9, 1882, հունվարի 21 (փետրվարի 2):

րագ» գրական, երգիծական շաբաթաթերթը (հետագայում՝ ամսագիրը):

Հետաքրքիր են Տ. Նազարյանի կողմից պատրաստված «Սոցիալի» և «Տարագի» հավելվածները: Ուշագրավ են մասնավորապես «Գեղարհնչիկը» (1907—1912 թթ.), «Կովկասի ստավոտը» (1907—1908 թթ.), «Առողջապահիկը» (1911—1912 թթ.), «Փարիզի մոդաները» (1910—1918 թթ.), «Լրաբերը» (1918 թ.) և այլն:

Տիգրան Նազարյանը 1891 թ. Թիֆլիսում ստեղծում է «Արոր» տպարանը: Իր ակտիվ գործունեության համար դառնում է Թիֆլիսի հալոց հրատարակչական ընկերության անդամ: Նա «Շուշեցի» և «Արցախեցի» ստորագրություններով շարունակ հանդես էր գալիս «Մշակ», «Մեղու Հայաստանի» և այլ պարբերականներում:

Լայն էր Տիգրան Նազարյանի լրագրական-հրատարակատեսակական գործունեությունը: Նա մտահոգվում էր ապագա հրատարակիչների ու լրագրողների պատրաստման գործով: Եվ այդ նպատակով դիմում է կառավարությանը՝ թույլատրել երկու տարվա դասընթացներ բացելու երիտասարդ լրագրողների համար: Նրա նպատակն էր, մայրենի լեզվից բացի, նրանց սովորեցնել անգլերեն, իտալերեն, գերմաներեն, ֆրանսերեն, պարսկերեն, թուրքերեն և էսպերանտո լեզուները, զինել հայ, ռուս, վրաց գրականության ու պատմության իմացությամբ, կովկասագիտությամբ ու հոգեբանությամբ: Տիգրան Նազարյանի «Նպատակն է՝ առանց ազգի խտրության տալ պրոֆեսիոնալ ուսում երկսեռ լրագրողների»,— գրում է «Մշակը» 1912 թ. հունիսի 29-ի համարում:

Նա մեծ հոգատարություն է ցուցաբերում այն մարդկանց նկատմամբ, ովքեր իրենց գրական գործերով ցանկանում են օգնել Ղարաբաղի աշխատավորությանը և իրենց համեստ ավանդն են մուծում ժողովրդի լուսավորության համար մղվող պայքարում: Նրանցից էր կոստանդին Մելիք-Ծահնագարյանը⁷, որը գրական աշխարհում հայտնի է «Տմբլաչի Խաչան» անունով:

⁷ Ծնվել է 1856 թ., Շուշիում: Սկզբում սովորել է Ղարաբաղի թեմական դպրոցում, ապա՝ Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: 1879 թ. նա

Տ. Նազարյանի ջանքերով 1882 թ. Ծուշիում հրատարակվում է Կ. Մելիք-Ծահնագարյանի «Ղըլըցե կնանոց պընը փեշակը» գիրքը, որը գրված է Ղարաբաղի բարբառով: Հեղինակի գրվածքները լույս են տեսնում ոչ միայն Ծուշիի, այլև ուրիշ տպարաններում. 1907 թ. Վաղարշապատի (Էջմիածնի) Էլեկտրաշարժ տպարանում տպագրվում է Տմբլաշի Խաչանի ֆելիետոնների սուվար ժողովածուն՝ «Զուռնա-տմբլա» ընդհանուր խորագրով, որը նա նվիրում է իր մեծ ու փոքր հայրենակիցներին: Ժողովածուի երգիծական նյութերով Տմբլաշի Խաչանը ձգտել է երևան հանել «ընտանեկան նիստ ու կացի և հասարակական գործերի ու գործիչների աչքի ընկնող պակասությունները»:

Ինչ խոսք, հեղինակը բարի նպատակ է ունեցել: Այս մասին գրքի սուսջաբանում («Երկու խոսքում») նա գրել է. «Երանի կարողանայինք սորանով մի փոքրիկ ծառայություն անել մեր հայրենակիցներին, որոնց մտավոր ու բարոյական սուսջադիմության ջերմ փափագողներից մինն է տողերիս գրողը»:

Կ. Մելիք-Ծահնագարյանը միաժամանակ հոդվածներով հաճախակի հանդես է գալիս անդրկովկասյան մի շարք թերթերում, ամսագրերում և հանդեսներում, ակտիվորեն աշխատակցում է հատկապես «Նոր դար» թերթին ու «Աղբյուր» ամսագրին: Մասնագիտությամբ լինելով գյուղատնտես, նա մասնակցում է միջոցով օգտակար խորհուրդներ է տալիս բույսերի խընամքի, հողային աշխատանքների կատարման, ցանքատարածությունների մշակման, այգիների բարձր բերքատվության մասին: Իր հայրենակներ, մարդասիրական գործերով Կ. Մելիք-Ծահնագարյանը սեր ու հարգանք էր վայելում ոչ միայն Արցախում, այլև նրա սահմաններից դուրս:

Իրավացի է «Աղբյուր» ամսագիրը, որը նրա գրական-հրապարակախոսական գործունեության 35-ամյակի առթիվ գըրել է. «Ահա «Աղբյուրի» մի կենսաբար ջինջ ու բյուրեղ ակն,

վարում է Դերբենտի Մարիամյան օրիորդաց սուսջին ուսումնարանի ավագ ուսուցչի պաշտոնը, իսկ 1882 թ. Թիֆլիսում աշխատում է որպես հայոց լեզվի ուսուցիչ: Մի տարի հետո արտասահմանում ավարտում է Մոնպելիեի հայտնի երկրագործական դպրոցը: Զբաղվում է նաև մասնագիտությամբ: Մահացել է 1940 թվականին, Երևանում:

որ 35 անընդհատ տարիներ ջրել, ոռոգել է մանկական անդաստանը:

Հեգ, իբրև գարնանաբույր մանուշակ, Կոնստանդին Մելիք-Ծահնագարյանը, գիտնականին հատուկ համեստությամբ, ամբողջապես ծախերից ազատ մեր արդի ականավոր մանկական գրողն է և նշանավոր ֆելիետոնիստ, **Տմբլաշի Խաչանը**⁸:

Արցախի գրական-հասարակական, հրապարակախոսական-հրատարակչական գործի բարելավումը շատ-շատերին էր մտահոգում: Ծատերն էլ, թեև իրերի բերումով գտնվում էին հայրենիքից դուրս, բայց կարողացան որոշակի օգնություն ցույց տալ տեղի մտավորականությանը՝ ի կատար ածելու իրենց հայրենակներ նախաձեռնումները: Նրանցից էր մասնավորապես Համբարձում Առաքելյանը:

Լինելով ժամանակի կրթված անձնավորություններից մեկը, նա վաղ է սկսում իր ժողովրդավարական-հրապարակախոսական գործունեությունը, ակտիվորեն աշխատակցում է ոչ միայն հայ, այլև ռուսական պարբերականներին, մասնավորապես «Русские ведомости»-ին, «С. Петербургские ведомости»-ին, «Новости»-ին, «Новое обозрение»-ին և այլ թերթերի:

Նրա գործունեությունն ավելի բեղմնավոր էր 1880-ական թվականներին: 1881 թ. Ծուշիում հիմնում է Կովկասի հայոց բարեգործական ընկերության սուսջին գալառական ճյուղը, դառնալով նախագահության անդամը, ապա՝ ղեկավարը: Հ. Առաքելյանը պարբերաբար աշխատակցում է թերթերին ու ամսագրերին, ձգտելով լուսաբանել իր հայրենիքի սոփյան, հրապարակ հանել նրա խղճով վիճակը: Նա նախաձեռնում է «Մեսրոպյան հանրամատչելի գրադարան» գրքերի հրատարակության գործը:

Թիֆլիսում աշխատակցելու ժամանակ, մասնավորապես «Մշակի» խմբագրության մշտական անդամ եղած տարիներին նա քիչ ջանքեր չի թափում Ծուշիի հրատարակչական գործը աշխուժացնելու համար: Նրա օգնությունը հատկապես նկատելի էր անհրաժեշտ տառատեսակներ և տպագրական մեքենաներ հայթայթելու գործում:

Հ. Առաքելյանը հայտնի է ոչ միայն որպես հրատարակիչ, հրապարակախոս, այլև գրող: «Ծահրիար» գրական անունով

⁸ «Աղբյուր», 1917, մայիս-հունիս, էջ 89:

նա հեղինակել է մի քանի գործեր (մեծ մասամբ պատմվածքներ), որոնք այս կամ այն չափով արտացոլում են պարսկահայ կյանքը: Նրա գրչին են պատկանում մի շարք թարգմանություններ, ինչպես և «Հանրագիտական բառարանը»:

Ծուշիի հրատարակչական գործում մեծ ավանդ է մտնում ասկնավոր պատմաբան ու գրող Լեոն: Դեռևս 1870-ական թվականներին, երբ ուսանում էր Ծուշիի թեմական և քաղաքային դպրոցներում, հետաքրքրություն էր հանդես բերում դեպի պարբերական մամուլը: Նա ակտիվորեն աշխատակցում էր «Մշակին», «Արձագանքին», «Տարագին», «Աղբյուրին»:



Ակնավոր պատմաբան, գրող և հրատարակախոս Առաքել Բարսիսյանցան (Լեո):

Տիգրան Նազարյանի և մյուսների անան Լեոն մշտահոգված էր հայրենիքի լուսավորության և առաջադիմության խնդիրներով: Նա գործնական քայլեր է կատարում Ծուշիի տպարանները կարգավորելու, տպագրական անհրաժեշտ հարմարանքներ հայթայթելու ուղղությամբ:

Լեոն Ծուշիում հրատարակում էր ուսումնական և գրական-գեղարվեստական աշխատություններ, որոնց նյութը պատմական էր՝ հագեցած հայրենասիրական գաղափարներով: Նրա առաջին գրքույկը լույս է տեսնում հենց Ծուշիում, 1884 թվականին:

Լեոն սիրում էր հրատարակչական գործը. երբեմն կատարում էր խմբագրական, երբեմն էլ՝ սրբագրական աշխատանք: Ակնավոր գործիչը մտահոգված էր, որպեսզի իր ծննդավայրում աճեն հրատարակչական գործի նվիրյալներ և բարձր աստիճանի վրա լինի գրատպությունը Ղարաբաղում:

Ոչ միայն Ծուշիում, այլև Բաքվում և Թիֆլիսում աշխատելու ժամանակ Լեոն իր կապերը չէր խզում Ղարաբաղից, հետաքրքրվում էր մշակութային կյանքով և հնարավորին չափ նպաստում նրա զարգացմանը: 1893 թ. Բաքվում «Արոր» տրպարանի կառավարիչ եղած ժամանակ նա տպագրական որոշ նյութեր է ուղարկում Ծուշի:

1895 թ. մշտական աշխատանքի անցնելով «Մշակի» խմբագրությունում, Լեոն ձգտում էր հնարավորին չափ մեծ տեղ տալ Ղարաբաղի ստորյալի լուսաբանմանը, պարբերաբար նյութեր տպագրել և՛ Ծուշիից, և՛ ուրիշ բնակավայրերից:

Գավառի ժողովրդական լուսավորության մարզում շարունակում էր զգալի ավանդ մուծել հայ ակնավոր մանկավարժ Սեդրակ Մանդինյանը: Հատկապես 1878—1880 թթ., երբ նա ուսուցչություն էր անում Ծուշիում, աշխատում էր աշակերտներին ապահովել ուսումնական ձեռնարկներով: Այդ նպատակամղումով նա թեմական ու քաղաքային ուսումնարանի առջավոր ուսուցիչների աշխատանքները հրապարակել էր տալիս Ծուշիի տպարանում: Նրա օգնությունը զգալի էր մասնավորապես հոգևոր դպրոցի տպարանը գործի գցելու բնագավառում:

Սեդրակ Մանդինյանը հանդես էր գալիս որպես մանկավարժ-հրապարակախոս: Նրա մի շարք հոդվածներ, որոնք մինչև հիմա էլ պահպանում են իրենց գիտական արժեքը, լույս են տեսնում «Մեղու Հայաստանի», «Արարատի», «Վարժարանի» էջերում:

Նրա բանավիճային հոդվածները ուղղվում էին այն հեղինակների դեմ, որոնք հստակ չէին պատկերացնում պատանիների ու աղջիկների դաստիարակությունը՝ որպես գիտություն, դպրոցը չէին դիտում իբրև ժողովրդի մտավոր վերածնության օջախ: Սեդրակ Մանդինյանը հետևում էր ռուս առաջավոր մանկավարժությանը և պայքարում էր, որ Ծուշիի թեմական և մանկավարժությանը և պայքարում էր, որ Ծուշիի թեմական և մյուս դպրոցները օգտագործեն նրա նվաճումները: Եվ նրան մյուս ուղղությամբ հաջողվել է, որ, ի դեպ, ուշագրավ է հայ ռուսական մանկավարժական մտքի շփումների տեսակետից:

Ղարաբաղի ազգային ուսումնարանների առաջադիմության և ընդհանրապես լուսավորական գործի աշխուժացման բնագավառներում անուրանալի են նաև Գրիգոր Տեր-Ղազարյանի ջանքերը: Նա անձնվիրաբար աշխատում էր իր գիտելիքները

հաղորդել մատաղ սերնդին, երեխաների մեջ սեր պատվաստել դեպի ուսումը, գիտելիքները, դաստիարակել նրանց հայրենասիրության և ժողովրդասիրության ոգով:

Գրիգոր Տեր-Ղազարյանը եռանդ չի խնայել հրատարակչական ասպարեզում: Նա կազմում է մայրենի լեզվի ձեռնարկներ և տպագրել տալիս Ծուշիում, վերահսկում, որ աղպիսի աշխատանքները լույս տեսնեն բարձր որակով, լավ ձևավորմամբ:

Գր. Տեր-Ղազարյանը իր համեստ վաստակից երբեմն օգնություն էր ցույց տալիս Ծուշիի հրատարակչական գործին: Նրա հայրենակներ աշխատանքը նկատի առնելով Մեդրակ Մանդինյանը գրում է. «Մեր դպրանոցը անցյալ հունվար ամսին մի մեծ կորուստ կրեց, այն է՝ նորա հարազատ և ժրաջան աշխատողներից մեկը՝ Գրիգոր Տեր-Ղազարյանց վախճանվեցավ... Այդ ինքնուս ուսուցիչը 20 տարի ծառայել է ազգային ուսումնարանին, միշտ կատարելագործվել է, միշտ հոգացել է յուր աշակերտների և աշակերտուհեաց առաջադիմության մասին, բայց չի վարձատրվել յուր աշխատությանց և հմտության չափով, այնպես որ վերջին շունչը բերանին՝ էլի յուր ուսումնարանն էր հիշում՝ կարծես մոռանալով յուր գերդաստանն ու գավակներին: Նա Ծուշի քաղաքին ծառայել է այնպես, ինչպես ոչ-ոք շուշեցիներից»⁹:

Եռանդուն էր նաև Հովհաննես Տեր-Գրիգորյանը, բազմաշնորհ մի մարդ, որ ձգտում էր դպրոցներ բացել և՛ Ծուշիում, և՛ Ղարաբաղի գյուղերում, լուսավորություն տարածել, տպագիր խոսքը ծառայեցնել իր նպատակին, սեր առաջացնել դեպի թերթը, ամսագիրը, տպագրել օգտակար գրքեր և տարածել աշխատավորության մեջ:

Առաքել Բահաթրյանը նույնպես հետաքրքրվում էր Ծուշիի մշակութային կյանքով: 1870-ական թվականներին, իր մանկավարժական, գիտական գործունեությանը զուգընթաց, նա աշխատակցում է մի շարք պարբերականների (մասնավորապես «Մանկավարժական թերթին»), որոշ օգնություն ցույց տալիս Ծուշիի հրատարակչական գործին:

Անուրանալի են Սոֆյա Առաքելյանի ջանքերը ոչ միայն դպրոցը, այլև գրականությունը, արվեստը, մամուլը աշխատա-

վորությանը ծառայեցնելու գործում: Լինելով զարգացած, կրթված օրիորդ, նա գիտեր մի քանի լեզուներ, զբաղվում էր բարոյախոսական գրքերի թարգմանությամբ, հրատարակայնորեն հանդես էր գալիս մամուլի էջերում և իր խոսքն էր ասում ժամանակի հուզող հարցերի մասին: Նա գտնում էր, որ առավել ուշադրություն պետք է դարձնել կնոջ զարգացմանը, կրթությանն ու դաստիարակությանը, ուստի անհրաժեշտ էր համարում օգտակար գրքերի հրատարակությունը: Ինքն էլ նախաձեռնում էր որևէ գրքի թարգմանությունն ու հրատարակությունը: Այս տեսակետից մեծ հետաքրքրություն է ներկայացնում «Մշակի» մեջ տպագրված նամակը Ծուշիից: Այդտեղ կարդում ենք. «... Աշխարհի մեջ երջանիկ սարելու համար պետք է կրթված, զարգացած ընտանիքներ ունենալ և որովհետև ընտանիքներին կենդանություն տվողը և նրա ծաղիկը կինն է, ուստի և կնկան տղամարդուց ավելի հարկավոր է կրթվել, ուսում ստանալ ... Մեր հայ ընտանիքները համարյա թե դեռ ստրկական վիճակի մեջ են. տան մեջ տիրապետողը, հրամայողը՝ տղամարդիկ, բռնապետական իշխանությունն է, որին պարտ են հնազանդվել անպայման կերպով. կինը համարվում է միայն այդ իշխանության համը մեքենայական գործիք: Այդպիսի մի աննախանձելի վիճակ բարվոքելու համար մեր ազգային գրականության պարտականությունն է ժողովրդի մեջ տարածել ստողջ մտքեր, թե ինչ ասել է ընտանիք, ինչ ասել են ամուսիններ, որոնք են տղամարդու և կնկա առանձին պարտականությունները»¹⁰:

Այս նամակում օր. Ս. Առաքելյանը հայտնում է նաև, որ ինքը մտադիր է թարգմանել մի քանի հատորից բաղկացած ֆրանսերեն մի աշխատություն: Այդ աշխատության թարգմանությունը հանձն էր ստել այն նպատակով, որ նպաստի բընակչության դաստիարակության, ընտանիքների ամրապնդման, կանանց և տղամարդկանց պարտականությունների պարզաբանմանը:

Նա Ծուշիի այն կանանցից մեկն էր, որ նախաձեռնել էր կարգավորել աղջիկների ուսուցման գործը, հատուկ ուշադրություն դարձնել նրանց զարգացմանն ու գեղագիտական ճաշակի բարձրացմանը: Այդ նպատակով Սոֆյա Առաքելյանը մի

⁹ «Մեղու Հայաստանի», 1881, Ռուսիսի 16:

¹⁰ «Մշակ», 1876, Այդեմբերի 16:

քանի կրթված կանանց հետ ձգտում էր Շուշիում կազմակերպել «Կանանց հանրամատչելի գրադարանի» թողարկումը: Այդ մատենաշարը պետք է լույս տեսներ Շուշիում և տարածվեր դարաբաղցիների մեջ: Բայց, դժբախտաբար, մտահոլացումը չի իրականանում՝ ոչ միայն տպագրական գործի անբավարար վիճակի, այլև ֆինանսական միջոցների չգոյության, ցարական իշխանությունների անբարյացակամության պատճառով:

Այսպիսով և՛ Տ. Նազարյանը, և՛ մյուսները մեծ տեղ էին տալիս կուլտուր-լուսավորական միջոցառումներին, կրթությունը, դպրոցը, մամուլը դիտում էին իրականության խոշոր թերությունները վերացնելու մեծ ուժ:

19-րդ դարի երկրորդ կեսից սկսած Շուշին դարձել էր Անդրկովկասի նշանավոր քաղաքներից մեկը, ուր լայն ծավալ էին ստանում ազգային ինքնագիտակցության վերելքը պայմանավորող տպագրության, մամուլի, հրատարակչական գործի, մանկավարժության և դպրոցի զարգացման մղումները: Դա անդրադարձնում էր բուն Արևելյան Հայաստանում ծավալված՝ մշակույթի և հոգևոր ու մտավոր զարգացման նոր փուլը, որի բնութագրման իմաստով կարևոր նշանակություն ունեն 19-րդ դարի երկրորդ կեսին Շուշիում կատարված տեղաշարժերը: Հետզհետե Շուշին դառնում էր հայ մշակույթի կարևոր օջախը՝ մտավորականության ուրույն բանակով, որտեղ առկայծող հասարակական միտքը լայն ճանապարհ էր բացում առաջադիմական գաղափարների տարածման համար:

Գ. Լ. Ի. Խ 3

ԺՈՂՈՎՐԳԱԿԱՆ ԶԱՆԳՎԱԾՆԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Ռուսական կապիտալիզմը մեծապես նպաստեց Անդրկովկասում բուրժուական հարաբերությունների զարգացմանը՝ հատկապես 19-րդ դարի վերջերին:

Վ. Ի. Լենինը գրել է, որ «Ռուսական կապիտալիզմը Կովկասը ներգրավում էր համաշխարհային ապրանքաշրջանառության մեջ, համահարթում էր հիմնավորց նահապետական ինքնամոլիվածության մնացորդ հանդիսացող նրա տեղական առանձնահատկությունները, իր ֆաբրիկաների համար շուկա էր ստեղծում: Հետեֆորմյան ժամանակաշրջանի սկզբին նուրբնակեցված կամ լեռնականներով բնակեցված երկիրը, որ համաշխարհային տնտեսությունից և նույնիսկ պատմությունից դուրս էր կանգնած, դառնում էր նավթարդյունաբերողների, գինու առևտուր անողների, ցորենի ու ծխախոտի ֆաբրիկաների երկիր»¹:

Անդրկովկասի մի շարք քաղաքներում՝ Երևանում, Թիֆլիսում, Բաքվում, Շուշիում և այլուր ստեղծվում են կապիտալիստական ձեռնարկություններ: Եվ եթե Բաքվում հայտնի էին նավթարդյունաբերական, Ալավերդում՝ պղնձաձուլական գործարանները, ապա Ղարաբաղում հիմնվել էին մի քանի մետաքսամշակման գործարաններ, որոնց տերերը մեծ եկամուտ էին քանում էժան բանվորական ուժի և այն չափից շատ շահագործելու հաշվին:

¹ Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 3, Ե., 1975, էջ 755:

Գյուղում սոցիալ-դասակարգային շերտավորման հետևանքով շատ հողագործ գյուղացիներ ապրուստի միջոցներ հայթայթելու համար ստիպված էին բռնել արտագնացության ուղին, աշխատանք փնտրել մեծ քաղաքներում:

Ղարաբաղցիների հոսանքը հատկապես մեծ էր դեպի Բաքու: Նավթային այդ աշխարհը կլանում էր հազարավորների: Աշխատավորության տնտեսական ու քաղաքական ինքնագիտակցության վերելքի պայմաններում սուաջադեն գաղափարներով տոգորված մտավորականները համախմբվում էին մաքր-սիստական խմբակներում, որոնց անդամները գործնական օգնություն էին ցույց տալիս բանվորական շարժումներին: Նրանք երկրի խոշոր կենտրոններում տպագրում էին հեղափոխական կոչեր ու թուղիկներ և տարածում աշխատավորների շրջանում:

Մեծ ուժ էր ներկայացնում մամուլը: 1885 թվականին Պետերբուրգում լույս տեսավ «Рабочий» սոցիալ-դեմոկրատական թերթը, որը թեև երկու համարի կյանք ունեցավ, բայց նպաստեց բանվորական շարժման ակտիվացմանը:

Վ. Ի. Լենինի նախաձեռնությամբ 1895 թ. Պետերբուրգում ստեղծված «Բանվոր դասակարգի ազատագրության պայքարի միության» կողմից պատրաստվեց «Рабочее дело» թերթի անդրանիկ համարը, բայց լույս չտեսավ, որովհետև ցարական ոստիկանությունը բռնագրավեց պատրաստված նյութերը:

1897 թ. օգոստոս և դեկտեմբեր ամիսներին սոցիալ-դեմոկրատներին հաջողվում է հրատարակել «Рабочая газета» թերթի երկու համար, սակայն ՌՍԴ(բ)Կ սուսջին համագումարից հետո դադարեցվում է թերթի գործունեությունը:

Բանվորական մամուլին զուգընթաց Ռուսաստանի կենտրոնական քաղաքներում և սոսանձին երկրամասերում ծնունդ են առնում օպորտունիստական ուղղության մի շարք պարբերականներ: Միայն Բաքվում անցյալ դարի 80—90-ական թթ. սկսում են հրատարակվել «Каспий», «Баку», «Биржевые ведомост» և ուրիշ թերթեր, որոնք բուրժուազիայի կամքն էին թելադրում մամուլի էջերում: Սա միաժամանակ նշանակում էր, որ հեղափոխական ելույթներն արդեն վտանգ էին ներկայացնում և ցարական կառավարությունը բռնում է բանվորների դասակարգային պայքարը կազմալուծելու ուղին:

Ռուսական հեղափոխական և հասարակական մտքի զար-

գացումը չէր կարող իր ազդեցությունը չթողնել նաև մյուս ժողովուրդների վրա: Առաջընթացը նկատելի էր մասնավորապես դարոցական ասպարեզում: Բավական է նշել, որ եթե 1880 թ. երկրում կար 239 ազգային միջնակարգ և տարրական դպրոց՝ 10.950 աշակերտով, ապա 1895 թ.՝ 244 դպրոց՝ 20.824 աշակերտով²:

Նոր դպրոցներ են բացվում Անդրկովկասի հայաբնակ մի շարք վայրերում՝ Երևանում, Ծուշիում, Թիֆլիսում, Բաքվում: Գործում են նաև իգական դպրոցներ: Նշանավոր էին Թիֆլիսի Գալանյան, Բաքվի Հոնիփսիմյան, Ծուշիի Մարիամյան և այլ ուսումնական օջախները:

Սակայն սա չի նշանակում, թե 19-րդ դարի վերջերին ամեն ինչ խաղաղ էր անցնում, և ստեղծվում է հայ դպրոցի ու կուլտուր-կրթական մյուս օջախների լայն ցանց: 1885—1895 թթ. ցարական կառավարության հրամանով փակվում են մի շարք հայկական դպրոցներ, արգելվում է հայագիտական առարկաների ուսումնասիրությունը:

Այդ տարիներին հանդես եկող հայ գրողների ստեղծագործություններում արտացոլվում են հայ մարդու ծանր վիճակը, նրա շահագործումը կեղեքիչների կողմից:

1890-ական թվականներին լույս են տեսնում մի շարք նոր պարբերականներ՝ մասնավորապես Թիֆլիսում և Կ. Պոլսում: Միայն մեկ տասնամյակում Թիֆլիսում հրատարակվում են ութ նոր անուն թերթ և հանդես: Անդրկովկասի հայաբնակ վայրերից Թիֆլիսն ու Ծուշին շարունակում են պահպանել իրենց կարևորությունը՝ իբրև մշակույթի օջախներ:

Մի քանի մտավորականների ուժերով Ծուշիում կազմակերպված հայրենօգուտ ընկերությունները և Կովկասի հայոց բարեգործական ընկերության Ծուշիի ճյուղը որոշակի քայլերի են դիմում՝ օգնելու դպրոցական գործին, օժանդակելու արհեստների տարածմանը, լույս ընծայելու գրքեր, հիմնելու տպարաններ, ընթերցարաններ:

Ծուշիում աշխուժանում է հատկապես թատերական կյանքը: Ժամանակի մամուլը նշում է այս հանգամանքը: «Տարագրը» գրում է. «Այսօր համարյա թե միայն Ծուշին է ուսահայ

² Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», մաս 2, Հայպետունամակհրատ, 1957, էջ 165:

գավառական քաղաքներից, որ ունի հատուկ թատրոն և այն էլ գեղեցիկ, գողտրիկ թատրոն՝ լիովի հարմարություններով և սա բնական հետևանք է այս քսանհինգ տարվա ընթացքում գավառական թատրոնի զարգացման...

Ոչ միայն գավառում, այլ նույնիսկ Թիֆլիսում էլ անկարելի է մի ամսվա ընթացքում 10—12 ներկայացում տալ հայերի համար միայն, որպեսզի ամեն անգամ թատրոնը այս կամ լիքը լինի և կամ թե համարյա թե լիքը, բայց Շուշին այս ամստ (խոսքը 1893 թվականի մասին է.— Ս. Ա.) ապացուցեց իր սերը դեպի գեղարվեստը և գոհունակություն տվավ այնտեղ գնացող բոլոր արտիստներին»³:

Բեմական ներկայացումները հիմնականում տեղի էին ունենում Ն. Խանդամիրյանի⁴ շենքում: Բեմադրվում էին և՛ պատմական, և՛ արդիական թեմաներով գրված պիեսներ:

Տարբեր ժամանակներում Շուշիում բեմադրվում են Սունդուկյանի կատակերգություններից «Պեպոն», «Ամուսինները», Հակոբ Պարոնյանի «Պաղտասար աղբարը», Մուրացանի «Ռուզանը», Օստրովսկու «Աննեղ մեղավորները», Մոլիերի «Ժլատը», Կլոմաս որդու «Քամելիազարդ տիկինը» և դասական շատ պիեսներ:

Հաջողված ներկայացումներ էին տալիս մասնավորապես Թիֆլիսից և Բաքվից եկած դերասաններն ու դերասանական խմբերը, որոնք ձգտում էին իրենց արվեստով հագորդ տալ շուշեցիների գեղարվեստական պահանջներին: Այդ անվանի արվեստագետներից էին Հ. Արեվյանը, Գ. Ավետյանը, Վրույրը, Գ. Պետրոսյանը, օր. Վարդիթերը, տիկին Զաբելը, Մարի-Հրանուշը, Սաֆրազյան ամուսինները և ուրիշներ:

Ժամանակի մամուլը ջերմորեն էր արձագանքում Ղարաբաղում կատարվող կուլտուրական ձեռնարկումներին: Հատկապես հաճախ էր հանդես գալիս «Մշակը»: Նա տպագրում էր Շուշիի մտավորականներից ստացված այն նամակները, ինֆորմացիաները և թատերախոսականները, որոնցում այս կամ այն չափով լուսաբանվում էին գավառում տեղի ունեցած բեմադրությունները, նշվում գլխավոր դերակատարների հաջող

կամ անհաջող լինելը: Այսպես, թերթը դրվատանքի խոսք էր ուղղում դերասանուհի Զաբելի հասցեին, որն իր շնորհալի արվեստը ծառայեցնում էր ժողովրդին: Կարդում ենք. «Երբորդ ներկայացումը հուլիսի 20-ին տվեց Թիֆլիսից նոր եկած դերասանուհի տ. Զաբելը: Դրված էր «Մայրական սեր» անունով թարգմանական դրաման: Զաբելը առաջին անգամ Շուշի է եկել սրանից տասը տարի առաջ, հանգուցյալ Ադամյանի հետ: Շուշիում է տիկինը առաջին անգամ բեմ դուրս եկել Ադամյանի տված ներկայացումների ժամանակ և, որքան հիշում ենք, դեռ այն ժամանակ, նա համակրանք էր գտել թատրոն հաճախող հասարակության մեջ»⁵: Այնուհետև «Մշակը» վերլուծում է նրա խաղը, մանրամասներ հաղորդում նշանավոր դերասանուհու խաղամիջոցների, տեմպերամենտի և կատարման արտահայտչական երանգների մասին:

Այս բովանդակության նյութերը ընթերցողներին համառոտակի ծանոթացնում էին տվյալ պիեսի բովանդակությանը, ցույց տալիս հեղինակի նպատակը, բացահայտում առանձին կերպարներ, նշում նրանց լիարժեք կամ թերի լինելը:

Մամուլը բացառիկ ջերմությամբ է արտահայտվել հայ մեծատաղանդ արտիստ Հովհաննես Արեվյանի խաղի մասին: Մեծ դերասանը իր արվեստը անդամաբան կերպով ծառայեցնում էր ժողովրդին՝ միշտ էլ գեղարվեստական հաճույք պատճառելով ունկնդիրներին: 1894 թ. հուլիսի 16-ի թատերախոսականում «Մշակը» հատկապես բարձր է գնահատում Հ. Արեվյանի կողմից Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» կատակերգության մեջ Արխանդուր աղայի ճշմարտացի կերպավորումը: Դերասանը կարողանում է արվեստի հմայիչ ուժով ցույց տալ գավառացի սեփականատիրոջ ինքնագոհությունը, նրա մեծամտությունը, փառասիրությունը և խավարամիտ ըմբռնումները ամուսնական հարցերում:

Դրվատական խոսք է ասվում դերասաններ Վրույրի Հարպագոնի («Ագահը»), օր. Վարդիթերի Մարգարիտ Գոսիեի («Քամելիազարդ տիկինը»), քույր Թերեզայի («Քույր Թերեզա»), Գ. Պետրոսյանի Օթելլոյի և մյուս դերակատարումների մասին:

«Մշակը» գրեթե յուրաքանչյուր համարում հաղորդումներ

³ «Տարագ», № 35, 1893, էջ 546:

⁴ Շուշեցի հարուստ այդ մեկեմասը 1891 թվականին իր հաշվին պատրաստել էր տվել մի մեծ շենք՝ թատերական բեմով և դեկորացիաներով:

⁵ «Մշակ», 1891, օգոստոսի 6:

հրապարակելով Շուշիի մշակութային կյանքից, տեղեկություններ է տալիս այլևայլ բեմադրությունների մասին: Տարբեր առիթներով գրված թատերախոսականներում գնահատվել են «Համլետ», «Օթելլո», «Պաղտասար աղբար», «Պեպո», «Ամուսինները», «Փարիզի աղբատները», «Անմեղ մեղավորներ», «Կյանքի խնջուպում», «Շրջմոլիկ կրակներ», «Օտարներ», «Ուրվականներ», «Անջելո» և շատ այլ դրամատիկական գործերի ու վոդևիլների բեմադրությունները:

Թատերական կյանքը որոշ չափով աշխուժացել էր գավառի գյուղերում: Փրջամալ գյուղից թղթակիցը գրում է. «Ահա երկու տարի է, որ մեր գյուղացիները բախտ են ունենում, մի խումբ թատերասերների շնորհիվ երեկույթներ ունենալու: Այս տարի էլ, ինչպես և անցյալ տարի, մի երեկույթ տեղի ունեցավ, բաղկացած երգերից և ներկայացումից: Ներկայացրին «Կըոթ-կըոթ» և «Մկինի հարսանիք» վոդևիլները: Որքան ուրախալի էր տեսնել, որ գյուղացիները ամեն կերպ աշխատում էին ներկա լինել երեկույթին, այնինչ առաջները թատրոնից խորշում էին»⁶:

Նման հաղորդումներ մամուլը տպագրում էր Արցախի տարբեր վայրերից: Ավելին, ընթերցողները տեղեկանում էին, որ Հովհաննես Աբելյանը իր խմբով շրջում է գավառի գյուղերը, բեմադրություններ տալիս, գրույցներ ունենում գյուղացիների հետ, ձգտում իր արվեստի ուժով թեթևացնել նրանց հոգսերն ու տխրությունները:

Շուշիի Ն. Խանդամիրյանի թատերական շենքը երկար ժամանակով զբաղեցնում էին երաժշտագետները, երգիչներն ու երգչուհիները: Բնակչությունը ջերմորեն էր ընդունում հայ նշանավոր երաժշտագետ Կարա-Մուրզայի 100 հոգուց բաղկացած խմբին, թեմական դպրոցի երգեցողության ուսուցիչ Ստեփան Դեմուրյանի ղեկավարած քառաձայն երգեցիկ խմբի ելույթները:

Հետաքրքիր էին դպրոցականների ուժերով կազմակերպվող միջոցառումները: «Գրական-ձայնական առաւիտի» ժամանակ տրվում էին և երաժշտական և գրական բաժիններ, կատարվում էին երգեր, արտասանվում հայրենասիրական բանաստեղծություններ: Շուշիում, մասնավորապես Կովկասի բա-

շեգործական ընկերության տեղական ճյուղի վարչության նախաձեռնությամբ, անցկացվում էին երեկոներ՝ նվիրված առանձին գրողների, նշանավոր մարդկանց հոբելյաններին: Մամուլը հայտնում է, որ 1898 թ. ապրիլի 26-ին Շուշիում տեղի է ունեցել Խաչատուր Աբովյանի հիշատակին նվիրված ցերեկույթ, որին ակտիվորեն մասնակցել են թեմական դպրոցի ուսուցիչները, աշակերտները և հասարակության ներկայացուցիչները:

Բնակչության մտահորիզոնի ընդլայնմանը նպաստում էին նաև Շուշիի գրադարան-ընթերցարանները: Բավական հարուստ էր 1889 թ. մարտի 10-ին Շուշիում բացված բարեգործական ընկերության գրադարանը: Այստեղ հայերեն, ռուսերեն և այլ լեզուներով ստացվում էին թերթեր, ամսագրեր պահվում էին նշանավոր գրողների ստեղծագործությունները, առանձին գիտական աշխատությունները:

Եթե Շուշիում այս կամ այն չափով գործում էին գրադարան-ընթերցարաններ, ապա գյուղը զուրկ էր դրանցից: Ծառերը բողոք էին հայտնում տեղական մարմիններին, ոմանք էլ նամակ էին հղում խմբագրություններին, խնդրելով օգնել իրենց՝ գյուղում կուլտուրական որևէ օջախ ստեղծելու համար: Ահա թե ինչ ենք կարդում Հաղրութից⁷ գրած մի նամակում. «Ի՞նչ է անում Հաղրութի գյուղական երիտասարդությունը. ինչո՞ւ Հաղրութը չունի գրադարան-ընթերցարան. ինչո՞ւ այստեղ չեն տրվում ներկայացումներ: Մի՞թե հասարակությունը հակասակ է այսպիսի բաների: Ոչ. եթե այստեղ արծարծված լինեք գրադարան-ընթերցարանի օգուտը, համոզված ենք, որ հասարակությունը ոչ մի ջանք չէր խնայի գլուխ բերելու այդպիսի համակրելի գործ: Ուստի ցանկալի է, որ Հաղրութի երիտասարդները դուրս գան իրենց քնած դրությունից և ընթացք տան մեր գյուղական օգտակար գործերին»⁸:

Նամակը վկայում է, որ 19-րդ դարի վերջերին միտում է նկատվում Ղարաբաղի գյուղական երիտասարդության շրջանում հատկապես գրքի հետ կապվելու և ընդհանրապես հանրօգուտ որևէ գործ կատարելու ուղղությամբ: Գյուղական երիտասարդը հրապարակալնորեն զանգաստվում էր գրադարան-

⁷ Հաղրութը Լեռնային Ղարաբաղի խոշորագույն գյուղերից մեկն է:

⁸ «Մշակ», № 6, 1898, հունվարի 17:

⁶ «Մշակ», № 106, 1897, սեպտեմբերի 11:

ընթերցարան չունենալու համար, նա արդեն լավ էր հասկանում, թե կոլտուր-յուսավորական օջախները ինչ օգուտ կարող են բերել աշխատավորներին, ինչ է հարկավոր նրանց մտավոր և հոգևոր զարգացման համար:

Ղարաբաղի աշխատավորության գիտական, գաղափարական աճի վրա մի կողմից նպաստում էին Թիֆլիսից և այլ տեղերից ստացվող պարբերականները, մյուս կողմից՝ Շուշիում հրատարակվող հայերեն և ռուսերեն գրքերն ու գրքույկները: Մամուլի հաղորդումների համաձայն, Շուշի քաղաքն ու գավառը 1894 թ. ստանում էին 188 օրինակ հայերեն պարբերականներ (այդ թվում 25 օրինակ «Արձագանք», 58 օրինակ «Մշակ», 7 օրինակ «Մուրճ», 82 օրինակ «Նոր դար», և 16 օրինակ «Տարազ»)⁹:

1895 թվականին այդ թիվը որոշ չափով աճում է (31 օրինակով) «Արձագանքի», «Նոր Դարի», «Տարազի» և «Մշակի» ավելացման շնորհիվ: Եվ եթե 1894 թ. ամբողջ գավառի բաժանորդների թիվը հասնում էր 600-ի, ապա հաջորդ տարում՝ 694-ի: Այդ տարիներին Արցախ մուտք էին գործում նաև ռուսերեն պարբերականներ և յուրաքանչյուր տարի ավելանում էր դրանց թիվը: Այսպես, 1894 թ. ստացվում էր 412 օրինակ, 1895 թվականին՝ 475, իսկ 1896 թվականին՝ 523 օրինակ թերթեր և ամսագրեր:

1890-ական թվականներին շարունակում էին գործել հայոց հոգևոր տեսչության և Մ. Մահտեսի-Հակոբյանի տպարանները, ըստ որում երկրորդը աչքի էր ընկնում հրատարակած գրքերով, տպագրական տեխնիկայով, տառատեսակներով: Մինչև 1897 թվականը Մ. Մահտեսի-Հակոբյանի տպարանը հրատարակում էր 83 անուն գիրք: Ինչ խոսք, սրանց մի մասը գիտական էր, մի մասը՝ ուսումնական, մի մասն էլ՝ գրական: Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ ուրիշ հեղինակներից բացի, տպարանատեր Մ. Մահտեսի-Հակոբյանը ևս իր թարգմանությամբ հրատարակ էր հանում դպրոցական մի շարք օգտակար գրքեր: Դրանցից է մանուկների համար պատրաստված գրքույկը, որի տիտղոսաթերթին գրված է. «Մայրենի լեզու, այբբենարան, հայ մանուկների համար. առաջին տարի, երկրորդ տպագրություն, թարգմանություն Մ. Մահտեսի-Հակո-

բեանց. Շուշի. տպարան Մ. Մահտեսի-Հակոբյանի, 1886»:

Գրքույկը պատրաստված էր առաջին անգամ դպրոցական շենին ոտք դնող երեխայի համար: Հենց սկզբից տրվում են տառերի գրատեսակները (բոլորագիր, երկաթագիր և այլն), ապա բառերը՝ ըստ վանկերի, տեղեկություններ են հաղորդվում կետադրական բոլոր նշանների մասին: Երկրորդ մասը բովանդակում էր կենցաղային խորհուրդներ, կրոնա-բարոյախոսական ոգով գրված խրատներ և այլն:

Մ. Մահտեսի-Հակոբյանի և այլ տպարաններում լույս են տեսնում տարբեր բնույթի գրքեր. նշենք դրանցից երկուսը. Միրզա Տեր-Սահակյանի «Գյուղի շուրջը» վեպը¹⁰ (Շուշի, 1894—1895 թթ.), Կովկասի հայոց բարեգործական ընկերության գրադարանի՝ Շուշի քաղաքի գրացուցակը (Շուշի, 1894 թ.):

Կովկասի հայ մամուլը պարբերաբար հաղորդումներ էր տալիս Շուշիում հրատարակչական գործի մասին: Բարձր գնահատական է տրվում տպարանների աշխատանքին: Ահա այս մասին ինչ էլ գրում «Տարազը». «Տպագրության արհեստը Շուշիում լավ է դրված. այստեղ կան երկու հարուստ տպարաններ, որոնց մեջ գործում են արագատիպ մեքենաներ: Կովկասում Շուշին Թիֆլիսից հետո առաջին տեղն է բռնում հայերեն գրքերի հրատարակության գործում. և այդ կողմից նա առաջ է անցել այնպիսի մեծ ու հայաշատ քաղաքից, որպիսին է Բաքուն»¹¹:

Թերթերի տեղեկություններից երևում էր նաև, որ զգացնել է տալիս դեռևս կենսունակ գալառականությունը. գեղարվեստական ոչ բավարար մակարդակը («Արդարադատ աղջիկը» գրքույկը, հեղինակ Մ. Տեր-Մինասյան) ուղեկցվում էր հրատարակչական ցածր որակով: Այդ գրքույկի թերությունների մասին «Մշակը» հանդես է եկել 1891 թ. հունիսի 29-ի և հուլիսի 2-ի համարներում: Բացասական կարծիք է հայտնվում նաև «Պատկերներ կյանքից» վերնագրով մի աշխատանքի վրա՝ մասին, որի հեղինակը հանդես է եկել «Ծավարը» ստորագրությամբ: Առհասարակ «Մշակը» չթուլացող հետաքրքրություն է ցուցաբերել Շուշիում տպագրվող գրքերի գեղարվեստական-

⁹ Տե՛ս «Ազգագրական հանդես», Բ գիրք, 1897, էջ 106—107:

¹⁰ «Մշակ», 1890, նոյեմբերի 1:

¹¹ «Տարազ», № 22, 1891, էջ 319:

1890-ական թվականներին Ղարաբաղի պարբերական մամուլի պատմության մեջ հայտնի է ականավոր բանասեր Երվանդ Լալայանի «Ազգագրական հանդեսի»¹⁴ առաջին գրքի լույս ընծայումը: Այն հրատարակվում է Մ. Մահուտեի-Հակոբյանի տպարանում, 1896 թվականին¹⁵:

Իհարկե, հանդես հրատարակելու միտքը միանգամից չի ծնվել. Ե. Լալայանը երկար ժամանակ է այդ մասին խորհել և ջանքեր ներդրել: Նրա նպատակն էր հրատարակել այնպիսի նյութեր, հոդվածներ, փաստեր, որոնք գերազանցապես վերաբերեին հայ ժողովրդին, նրա պատմությանը, տնտեսական դրությանը, մշակույթին: Այս մասին Ե. Լալայանը գրում է. «Մենք չենք խոստանում հրաշքներ գործել, որովհետև այս ձեռնարկությունն անհատական գործ չէ և սուկ մին տաղանդից չէ կախված. ազգի ուսումնասիրությունն ամբողջ առաջավոր դասակարգի գործն է. երբ ժողովուրդը սիրով կբանալու սիրուն ազգագրի առաջ, երբ վերջինս կուսանկարե նրան յուր բոլոր ճշտությամբ, երբ կանխակալ և կուսակցական գաղափարները չեն պղտորիլ ոչ ժողովրդի և ոչ էլ հետազոտողների միտքը, մեր հանդեսը կդառնա ժողովրդական կյանքի մի ճշմարիտ հայելի, մի շտեմարան, որտեղից վիպասանն յուր նյութը կվերցնի ազգային վեպ ստեղծելու, լեզվաբանը՝ բառեր և ոճեր կբաղե՛ ազգային լեզուն հարստացնելու և օտարանալուց ազատելու... Բժիշկը՝ նրա ցավերը կտեսնե՛ սպեղանիներ հասցնելու, ուսուցիչը մանկան ընտանեկան կյանքը կըմբռնե՛ այն բարեփոխելու, իսկ գիտնականը՝ յուր նյութը կվերցնե՛ գծելու Էվոլյուսիոնի օրենքները: Այսպես՝ այս ձեռնարկությունը ծառայում է ինչպես ազգության, այնպես և գիտության. առանց հասարակական դեր կատարելու՝ այս գործը հասարակական ինքնուրույն կյանքի հիմունքն է ձգտում և ընդհանուր գիտության նպաստում»¹⁶:

«Ազգագրական հանդեսի» առաջին իսկ գիրքը սկսվում է «Ազգագրություն» բաժնով: Այստեղ գետնդրված մի շարք հող-

¹⁴ Նրա հրատարակության մասին հայտարարություն են տպագրում շատ տպագիր օրգաններ: «Հանդես ամսօրյան» իր 1896 թ. փետրվարյան համարում Երվանդ Լալայանի ստորագրությամբ ծանուցում է, որ շուտով Շուշիում լույս կտեսնի կիսամյա պատկերագրող «Ազգագրական հանդեսը»:

¹⁵ Հանդեսի 2-րդ էջի վրա գրված է 1895 թվական:

¹⁶ «Ազգագրական հանդես», 1896, Ա. գիրք, էջ 5—6:

վածներում ու հաղորդագրություններում տրվում է հայ ազգագրության համառոտ տեսությունը: Այն բացվում է հանդեսի խմբագրի ընդարձակ հոդվածով, ուր շեշտը դրվում է հայ ազգագրության առանձին գոհարների արժեքի, դրանց ուսումնասիրման և որպես անգնահատելի մասունքներ՝ պահպանելու վրա: Ըստ արժանվույն գնահատվում են այն մատենագիրները, որոնք լուրջ ուսումնասիրություններ են կատարել՝ հրատարակ հանելով հայ ժողովրդի հոգեկան ու մտավոր կյանքն արտահայտող շատ նյութեր: Հեղինակը պատմում է գողթան երգերի ու գրույցների կարևորության մասին, նշելով, որ դրանք «հայոց հոգեկան ու մտավոր կյանքի փառավոր արշալույսի պայծառ հայելին են»:

Ե. Լալայանը ընթերցողներին ծանոթացնում է նաև հայ ժողովրդական գրույցների ու երգերի աղբյուրներին, կանգ առնում դրանց տեղի, ժամանակի և հեղինակի հարցի վրա: Նա իրավացիորեն գրում է. «Ամեն մի գավառ, ամեն մի հետաքրքրավոր բան ավելացնում է արդեն բոլորին ծանոթ անցքի վերաբերմամբ և այդպես կազմվում է մի ժողովրդական գրույց»¹⁷:

Ծատ կարևոր են հեղինակի հայտնած մտքերը երգերի տեսակների, երգիչների, պարերի, լեզվի մասին:

Գիտական հետաքրքրություն է ներկայացնում Լ. Բաբայանի «Խոջալուի»¹⁸ գերեզմանները» հաղորդումը, որը նվիրված է Պետերբուրգի հնագիտական ընկերության անդամ Է. Ռեոսլերի՝ 1896 թ. Ղարաբաղում կատարած հնագիտական պեղումների: Գերմանացի գիտնականը զավառին անձանոթ մարդների: Գերմանացի գիտնականը զավառին անձանոթ մարդների: Ըստ բավական ժամանակ աշխատել էր Շուշիում՝ իբրև ռեալական դպրոցի գերմաներենի ուսուցիչ և գիտական կապերի մեջ էր պրոֆեսոր Ռ. Վիրխովի և մյուսների հետ: Նրանց հանձնարարությամբ էլ է. Ռեոսլերը 4—5 տարի հայ գավառում պեղումներ է կատարում հատկապես Խոջալու և Առաջաձոր¹⁹ գյուղերում և լույս աշխարհ հանում շատ արժեքավոր հնություններ: Գերմանացի հետազոտողը գտնում է,

¹⁷ Նույն տեղում, էջ 9:

¹⁸ Գտնվում է Ստեփանակերտ քաղաքի և Ասկերան ավանի միջև: Այժմ էլ նույն անունն է կրում:

¹⁹ ԼՂԻՄ Մարտակերտի շրջանի Առաջավոր բնակավայրերից մեկն է:

որ հայտնաբերված հնությունները դարերի պատմություն ունեն
և ամենից առաջ վկայում են տեղի բնակիչների զբաղմունքի
և մշակույթի զարգացման բարձր աստիճանի մասին:

Հայտնաբերվում են զգալի թվով շինությունների մնացորդ-
ներ, անոթներ, դրամներ, զենքեր, զարդարանքներ, մուրճեր,
ասեղներ, գնդակներ, գործիքներ, մատանիներ, սափորներ և
այլն, որոնք մեծ մասամբ ծածկված են գեղեցիկ զարդաքան-
դակներով և «ցույց են տալիս այդտեղի բնակիչների գեղար-
վեստական զարգացած ճաշակը»²⁰: Լ. Բաբայանի հաղորդու-
մը բովանդակում է հարուստ տվյալներ՝ սիստեմավորված նյու-
թերով և անհրաժեշտ հետևություններով:

Ուշադրության է արժանի գերմանացի հոշակավոր գիտ-
նական Ռուդոլֆ Վիրխովի «Կովկասի տեղը քաղաքակրթու-
թյան պատմության մեջ» ուսումնասիրությունը, որը թարգմա-
նաբար զետեղվում է հանդեսում: Ի դեպ, վերջինիս հոդվածի
լուսանկարների պատճառով ուշանում է հանդեսի առաջին հա-
մարը: Եվ ստիպված՝ Երվանդ Լալայանը 1896 թ. հունվարի
10-ին Շուշիից ուղարկած նամակով «Մշակում» ծանուցում է.
«Ազգագրական հանդեսի» լույս տեսնելը մի քանի օր ևս ու-
շանալու է, որովհետև պ. Վիրխովը հիվանդության պատճառով
փոքր-ինչ ուշացրել էր Բեռլինում տպագրել տալ իր «Կովկասի
տեղը քաղաքակրթության պատմության մեջ» հոդվածի պատ-
կերները, որոնք զետեղվելու են հանդեսի ներկա համարում:
Այժմ այդ պատկերները ստացվել են Օդեսա և այստեղ հաս-
նելուն պես՝ համարը լույս կտեսնի և կուղարկվի բաժանորդ-
ներին»²¹:

Հանդեսը ցանկալի է գտնում հոդվածի հրապարակման
հետ միասին հայ ընթերցողներին ծանոթացնել Ռ. Վիրխովի
կյանքի կարևոր դրվագներին. տրվում են կենսագրական տե-
ղեկություններ և գիտնականի լուսանկարը, որ պատճենահան-
ված էր Վիեննայի Մխիթարյան տպարանում:

Գերմանացի գիտնականն իր ծավալուն հոդվածում ցույց
է տալիս Կովկասի կարևոր դերը քաղաքակրթության պատ-
մության մեջ, մեկ առ մեկ քննում փորագրությունների և ա-
ռանձին առարկաների էությունը, շեշտելով այն բանը, թե Կով-

²⁰ «Ազգագրական հանդես», 1896, Ա գիրք, էջ 39

²¹ «Մշակ», № 51, 1896 թ., հունվարի 13:

կասի վրա ինչ ազդեցություն են ունեցել Ասորեստանն ու մյուս
երկրները: Հոդվածի արժեքը բարձրանում է տպագրված նը-
կարներով, քարտեզներով, որոնք հիմնականում ներկայաց-
նում են պրոֆ. Ռ. Վիրխովի հայտնաբերած հնությունների
պատկերները:

Հեղինակը ջանք չի խնայել ամենայն լրջությամբ շարա-
դրելու իր դրույթները, շրջանառության մեջ դնելու չհրապարակ-
ված շատ փաստեր, պարզելու նրանց էությունը, միտքը,
գաղափարը: Առանձին դեպքերում այնպիսի մանրամասներ
են հաղորդվում, որ ընթերցողը լրիվ գաղափար է կազմում
տվյալ փաստի մասին, և ընկալում գիտական ընդհանրացումը:

«Ազգագրական հանդեսի» հարուստ բաժին էր «Գավա-
ռը»: Այստեղ տպագրվում էին հայ գավառների պատմությանը
վերաբերող հետաքրքիր դրվագներ, թվերով ու փաստերով
ցույց էին տրվում նրանց նախկին և արդի վիճակը, մանրա-
մասնություններ հաղորդվում տվյալ բնակավայրի, նույնիսկ
տեղանքի մասին: Օրինակ, Ջավախքը ներկայացնող հոդվա-
ծում Ե. Լալայանը նշում է նրա սահմանները, դաշտավայրերը,
լեռները, լճերը և գետերը, կլիման, հանքային ջրերը, բուսա-
կանությունը, կենդանական աշխարհը, բնակչության կազմը,
դպրոցների քանակը, պատմում թատրոնի, գրադարանի, ըն-
թերցարանի, բարեգործական ընկերությունների մասին, կանգ
է առնում տեղի հայերի սովորույթների, ընտանեկան բարքե-
րի, զգեստների, զբաղմունքների վրա:

«Հնություններ» բաժնում թեև մեծ մասամբ խոսվում էր
թագավորների կյանքի և գործունեության մասին, բայց այնու-
ամենայնիվ, այնպիսի նյութեր կային, որոնք պատմական տե-
սակետից հետաքրքիր էին և գիտական որոշակի արժեք ու-
նեին: Մասնավորապես պատմվում էր Հեթում Ա. թագավորի
հավաքած նշխարների տուփի մասին:

Հանդեսի էջերում լույս տեսած աշխատություններից ու-
շագրավ են նաև «Համառոտ տեսություն հայ ազգագրության»,
«Ծիսական կարգեր հայոց մեջ» և այլն, որոնք այս կամ այն
չափով ընթերցողին ծանոթացնում են մի կողմից մեր ժողո-
վրդի ծեսերի, սովորությունների, մյուս կողմից՝ դրանց պատ-
մության ազգագրական հիմքերի ու հետագա ընթացքի հետ:
Մրանք, իհարկե, կարևոր են ոչ միայն պատմական, այլև տղվ-

յալ ժողովրդի հոգեկան կերտվածքը, խառնվածքը, բնավորության որոշ գծերը մոտիկից ճանաչելու տեսակետից:

«Մարդաբանություն» բաժնում գետեղված պրոֆ. Պետրիի «Պատմական զարգացումը» հոդվածը մի օրինակ-նմուշ է այն բանի, թե ինչպես պետք է գիտական հարցերը լուսաբանել մատչելի կերպով, փաստերի վերլուծումներով, տեսական համոզիչ նյութերով: Այստեղ հեղինակը նախ և առաջ խոսում է գիտության խնդիրների, դրանց լուծման դժվարությունների, նաև ժամանակաշրջանը այլևայլ կողմերով բնութագրելու անհրաժեշտության մասին: Իր միտքը պարզելու և անցյալի ժառանգությունը գիտականորեն օգտագործելու համար պրոֆ. Պետրիին կանգ է առնում մի քանի նշանավոր գիտնականների՝ Ֆ. Բեկոնի, Մ. Վեգալիի, Ռ. Դեկարտի, Բ. Սպինոզայի, Ջ. Լոկիի, Դ. Հյումի, Ժան-ժակ Ռուսոյի և ուրիշների դրույթների վրա, վերլուծում նրանց մտքերը մարդաբանության, մտածողության և հասարակական վիճակի, առանձին ժողովուրդների հոգեկան կերտվածքի, բարոյականության, մտավոր զարգացման, անհավասարության ծագման և այլ հարցերի շուրջ: Պրոֆ. Պետրիի ծավալուն հոդվածը, որը բաղկացած է երեք մասից, նպաստում է ընթերցողների գիտական մտահորիզոնի ընդլայնմանը, ծանոթացնում մարդաբանության համակարգերին, փիլիսոփայական մտքի զարգացման առանձին ուղղությունների և ականավոր ներկայացուցիչների հետ:

Անդրանիկ համարի ծավալուն հոդվածներից մեկը պատկանում է ֆրանսիացի հոչակավոր գիտնական Ծառլ Լետտրոնյին: Այն նվիրված է ամուսնության զարգացման փուլերին:

Հանդեսը հարուստ էր վիճակագրական տեղեկություններով: Աղյուսակների մեջ ամփոփվում էին թվեր ու փաստեր քաղաքի ու գյուղի բնակիչների զբաղմունքի, ամուսնության, ծննդաբերության և մահացության մասին: Նյութեր էին հրատարակվում նաև մանուկների դաստիարակության, գերդաստանի իրավիճակի, առանձին հիվանդությունների, ժողովրդական բուժամիջոցների և այլ հարցերի կապակցությամբ:

Հանդեսին ակտիվ աշխատակցում էին անվանի գիտնականներ Մ. Աբեղյանը, Սո. Մալխասյանը, Հր. Աճառյանը, Թ. Թորամանյանը, Ե. Ծահագիզը, Լ. Մելիքսեթ-Բեկը, Խ. Սամվելյանը, գրող Վր. Փափազյանը, հայ մամուլի անխոնջ մշակ Գ. Լևոնյանը և ուրիշներ: Այս անունները նույնիսկ բավական

են նյութերի գիտական կարևոր արժեքը բնութագրելու համար: «Ազգագրական հանդեսը» ունեցել է 26 գիրք²² և հրատարակվել է մինչև 1916 թ.:

Ուշադրության արժանի է նաև այն փաստը, որ հանդեսը որոշ ժամանակ լույս է տեսել հրատարակչի անձնական միջոցներով: Հետագայում Ե. Լալայանի անմիջական ջանքերով հիմնված Ազգագրական ընկերությունը միջոցներ է տրամադրել նրա հրատարակման համար:

«Ազգագրական հանդեսը» հայ ընթերցողներին ոչ միայն գիտական հարուստ նյութեր էր մատակարարում անցյալի ու ներկայի մասին, այլև սեր էր առաջացնում դեպի հայրենի հողն ու ջուրը, ժողովուրդը, դեպի ազգային առողջ և մարդասիրական ավանդույթների պահպանումն ու զարգացումը:

Ժամանակին մի շարք պարբերականներ դրվատական խոսքերով են արժեքավորել Ե. Լալայանի հրատարակչական գործունեությունը: «Հանդես ամսօրյան» 1896 թ. 5-րդ համարում մատենախոսական է տպագրում, ցույց տալով նորաստեղծ պարբերականի անդրանիկ գրքի լույսընծայման հրատապությունը և գետեղված նյութերի գիտական օգտակարությունը:

«Մուրճ» ամսագրի տեսադաշտից ևս դուրս չի մնում «Ազգագրական հանդեսը»: Վերջինիս 1—10-րդ գրքերի մասին ընդարձակ գրախոսություն է տպագրվում («Քննադատություն և մատենախոսություն» վերնագրի տակ) 1904 թ. 2—4-րդ համարներում: Գրախոսը հանգամանորեն կանգ է առնում ամուսնության հարցից յուրաքանչյուրը, ինչն է կազմում նրանց հենքը, ինչպիսի տպավորություն են թողնում, և ապա շարադրում է համատոտ բովանդակությունը: Հատկապես վերլուծվում են պատմության հարցերին նվիրված նյութերը:

«Մուրճը» ընդհանուր առմամբ բարձր գնահատելով Երվանդ Լալայանի ջանքերը, որոշ տեղերում, վերլուծումներ կատարելիս սխալներ է թույլ տալիս՝ մեծ ազգագրագետին մեղադրելով իրական փաստերի աղավաղման մեջ: Սա, իհարկե, ճիշտ չէր և բխում էր նրա գրախոսի՝ ոմն Արս. Վ. Ղլտրճ-

²² «Բ» գրքից սկսած (1897 թ.) հրատարակվում Թիֆլիսի Մ. Դ. Ռոտինցանցի տպարանում:

յանի («Ա. Վ. Ղ.» ստորագրությամբ) միակողմանի մոտեցումից: Ե. Լալայանն ստիպված հանդես է գալիս նույն «Մուրճ» ամսագրի 1904 թվականի 4-րդ համարում, փաստերով ապացուցելով իր առաջ քաշած թեզերի ճշմարտացիությունը: Նա Ա. Վ. Ղլտնյանի վերոհիշյալ մատենախոսությունը համարում է անաչտությունից զուրկ և խեղաթյուրումներով լի. «Եվ եթե ես պատասխանում եմ մի այնպիսի գրության,— այդ միայն այն պատճառով, որ այդ տպված է ինձ համար համակրելի մի ամսագրում»:

Մեր կարծիքով Երվանդ Լալայանի «Ազգագրական հանդեսը» որոշ չափով հետևում էր 1879—1917 թթ. Վարշավայում ռուսերեն լեզվով լույս տեսնող «Русский филологический вестник»-ին և 1880—1918 թթ. Պետերբուրգում հրատարակվող «Русское богатство» գիտական-գրական ամսագրին: Հատկապես առաջինի նպատակն էր հրատարակ հանել գիտական մեծ հետաքրքրություն ներկայացնող նյութեր, որոնք վերաբերում էին ոչ միայն լեզվաբանությանն ու բանասիրությանը, այլև ուրիշ գիտություններին:

Այսպիսով, 19-րդ դարի վերջին տասնամյակում որոշակի զարգացում է նկատվում Արցախի կուլտուր-լուսավորական և հրատարակչական կյանքում: Հրատարակված գրքերի ու պարբերականների հարատևությունը, ինչպես և նրանց այնքան արժեքավոր ու իմաստալից նյութերը որոշակիորեն նպաստեցին ժողովրդական զանգվածների լուսավորմանն ու զարգացմանը: Մասնավորապես Ս. Հախումյանի «Գործ» և Ե. Լալայանի «Ազգագրական հանդես» պարբերականները ունեին ոչ թե տեղական, այլ համազգային ընդգրկումներ և նշանակալից դեր խաղացին հայ հասարակական մտքի ու ազգագրական մշակույթի զարգացման գործում:

ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՊՈՌՓԿՈՒՄՆԵՐ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐ ԽԱՎԵՐՈՒՄ

1896 թվականից՝ «Ազգագրական հանդեսի» լույս ընծալումից հետո, մինչև 1911 թվականը մեզ հայտնի չէ որևէ պարբերական, որ հրատարակված լինի Ղարաբաղում: Մամուլի հեմոտ հետազոտող Գ. Լևոնյանը մի առիթով նշում է, որ 1890—1906 թթ. տխուր շրջան էր հայ մամուլի համար: Դրա հիմնական պատճառը, իհարկե, քաղաքական իրավիճակն էր, ցարական գրաքննչության դաժանությունը: Ցարիզմն ամեն կերպ ձգտում էր փակակնքի տակ դնել լուսավոր միտքը և ոչ մի կերպ թույլ չտալ հրատարակ հանելու մասսայական գրականություն, հրատարակելու թերթ, ամսագիր, հանդես, որտեղ կարող են թափանցել հակակառավարական և հեղափոխական մտքեր:

Ավելին, գրաքննչության կանոնադրության 140-րդ հոդվածով և մամուլի գործերի գլխավոր վարչության 1902 թ. հունիսի 22-ի կարգադրությամբ խիստ արգելվում է բանվորների ելույթների մասին հաղորդումների տպագրումը: Հետզհետե ավելի դաժան է դառնում գրաքննչությունը, հատկապես 1905 թ. հեղափոխության նախօրյակին և ընթացքում: Ցարական կառավարությունը միջոցների միջև խտրություն չէր դնում՝ առաջադիմական մամուլի գործունեությունը խափանելու համար և, ընդհակառակն, ավելացնում էր ռեակցիոն թերթերի ու ամսագրերի հրատարակումը:

Ցարիզմը փաստորեն ժողովրդին խաբեց 1905 թ. հոկտեմբերի 17-ի մանիֆեստով ներկայացնելով խոսքի և մամուլի

կեղծ ազատություն: Մանիֆեստից անմիջապես հետո մշակվեցին պարբերական մամուլի մասին կանոններ, որոնք ուղղված էին խոսքի ազատության դեմ:

1906 թ. մարտի 24-ին նոր օրենք է հրատարակվում բարձրաստիճան պաշտոնյաների վերաբերյալ հաղորդումներ չտպագրելու և մեղավորներին քրեական պատասխանատվության ենթարկելու մասին: 1906 թ. ապրիլի 26-ի օրենքով գրաքննչությունը ավելի էր խստացել և ոչ մի լավ բան չէր խոստանում գրատպության համար: Սակայն ինչքան դաժան էր ցարական օրենքը, սուսվել հնարամիտ էին մամուլի անվարան գործիչները: Ինչպես ամենուրեք, նույնպես և Շուշիում, դեմուկրատական ու հեղափոխական մամուլն իր գործն է տեսնում:

Տակավին 1900 թ. նոյեմբերի 21-ին Թիֆլիսում ստեղծվում է Ազգագրական հրատարակչական ընկերություն, որը նպատակ է դնում կարգավորել ոչ միայն սուսնձին պարբերականների, այլև մայր ժողովրդի հոգևոր հարստությունը բովանդակող աշխատությունների լույս ընծայումը: Այդ ընկերության վարչության նախագահը Ալեքսանդր Ազատյանն էր, իսկ խմբագրական հանձնաժողովի նախագահը՝ Երվանդ Լալայանը: Ընկերությունն իր մասնաճյուղերն ուներ մի շարք քաղաքներում՝ Երևանում, Ալեքսանդրապոլում, Պետերբուրգում, Օդեսայում, Մոսկվայում և այլուր:

Շուշիում նրա գործակալն էր Մովսես Յուզբաշյանը, հրատարակչական գործին տեղյակ մի մարդ, որը կրթություն էր ստացել հեղինակավոր դպրոցներում, լավ տիրապետում էր հայերենին, ռուսերենին, մի քանի օտար լեզուների: Ազգագրական հրատարակչական ընկերության Շուշիի ճյուղը հիմնականում լույս էր ընծայում բարոյախոսական և հայ եկեղեցու իրավունքների պաշտպանությանը նվիրված գրքույկներ: Միայն 1903 թ. Շուշիում տպագրվում է «Հայոց եկեղեցական իրավունքը»¹ գրքի առաջին մասը, որի առաջաբանը պատկանում է ոչ անհայտ Ն. Վ. Մելիք-Թանգյանին:

Հավաստի փաստեր կան նաև այն մասին, որ Շուշիի Բ. Տեր-Սահակյանի տպարանում սուսնձին տպագրվում է Զի-

¹ Աշխատության մասին գրախոսություն է հրատարակված «Ազգագրական հանդեսի» 12-րդ գրքում (Թիֆլիս, 1904 թ.) «Իրավաբան» ստորագրությամբ:

վանու «Նվեր Շուշի քաղաքին»² երգը և արագ սպառվում է: Այդտեղ Զիվանին մեծ սիրով է երգում հիմնալուրց Շուշին, նրա փառքը, անունը, բնաշխարհը: Հեղինակն այս երգը հորինել է Շուշիում, 1902 թ., երբ Ժամհարության այգում բացօթյա ելույթներ էր ունենում:

Գարասկզբին որոշ աշխուժություն է նկատվում գեղարվեստական գործունեության, թատերական արվեստի և այլ բնօժանոթներում: Ն. Խանդամիրյանի թատերական շենքի դահլիճում 1901—1902 թթ. համերգներ է տալիս ճանաչված երաժշտագետ Կարա-Մուրզան:

1902 թ. ամռանը Շուշի է գալիս Սո. Դեմուրյանը, որը երկսեռ երգչախումբ ուներ: Նա ձգտում էր շարունակել իր մեծ բարեկամի՝ Թիֆլիսում նոր հանկարծամահ եղած Կարա-Մուրզայի գործը: Շուշիում կազմակերպվող համերգներին (հատկապես 1902 թ.) ակտիվորեն մասնակցում էր կոմպոզիտոր Սարգիս Բարխուդարյանը:

Գավառի աշխատավորության կուլտուրական սպասարկման համար անհանգստացած էին նաև այն շուշեցիները, որոնք գտնվում էին հայրենիքից դուրս, ուսանում էին կենտրոնական քաղաքների երաժշտական օջախներում: «Մշակը» 1901 թ. 172-րդ համարում հաղորդում է, որ օգոստոսի մեկին Պետերբուրգի կայսերական կոնսերվատորիայի աշակերտ Ե. Բաղդասարյանը Շուշիի թատերական դահլիճում տվեց իր առաջին համերգը, որն անցավ հաջողությամբ: Նա համերգներով հանդես է գալիս նաև հաջորդ տարի: Հաջողությամբ է անցնում կոնսերվատորիայի մեկ այլ ուսանողի՝ Գր. Միրզոյանի համերգը 1903 թ. հուլիսի 24-ին Շուշիի հոգևոր դպրոցի դահլիճում:

Շուշիի երաժշտաժողովը հասարակայնությունը գոհունակությամբ է ունկնդրում Ք. Կարա-Մուրզայի ելերը՝ Մ. Կարա-Մուրզային: Նրա համերգը, որ տեղի ունեցավ 1903 թ. հուլիսի 4-ին, նվիրված էր ելերոյ հիշատակին: Երիտասարդ կոմպոզիտորի ծրագիրը կազմված էր հանգուցյալի մշակած ու հորինած երգերից: Նրա խումբն էլ բավական մեծ էր (շուրջ 70 հոգի) և բաղկացած էր աղջիկներից ու տղաներից: Երգչա-

² Այդ երգը տեղ է գտել Հայպետհրատի կողմից 1959 թ. հրատարակված «Զիվանու քնարը» ժողովածուում (տե՛ս էջ 695):

խումբը լավ տպավորություն է թողնում հատկապես «Բամբորոտան» և «Վարդ կոշիկ» ժողովրդական երգերի կատարմամբ: Դպրոցներում կայացած համերգներից ստացված գումարը հիմնականում տրվում էր չքավոր երեխաների օգնության ֆոնդին:

«Նոր Դար» թերթը իր 1901 թ. նոյեմբերի 23-ի համարում ինֆորմացիա է տպագրում այն մասին, որ թատերասերները հոգուտ Շուշիի քաղաքային օրիորդաց ուսումնարանի Ն. Խանդամիրյանի թատերական դահլիճում ներկայացրին Մոլիերի «Ակամա բժիշկը» և Չեխովի «Առաջարկություն» վոդևիլը:

Շուշիում կազմակերպվում էին նաև գրական, երաժշտական ցերեկույթներ, որոնց մասնակցում էին ոչ միայն աշակերտներն ու աշակերտուհիները, այլև զինվորականները: Դրանք նվիրվում էին առանձին կարևոր իրադարձությունների, նշանավոր գրողների, արվեստագետների, գիտնականների հոբելյաններին: Կազմակերպված են անցել մասնավորապես 1902 թ. փետրվարի 21-ին թեմական դպրոցի ուսուցչական խմբի և փետրվարի 22-ին ռեալական դպրոցի վարչության նախաձեռնությամբ տեղի ունեցած գրական-երաժշտական ցերեկույթները, նվիրված ռուս հայտնի գրող Գոգոլի հիշատակին:

1901—1904 թթ. Շուշիում հյուրախաղերով հանդես են գալիս Կովկասի դերասանական խմբեր: Նրանք հիմնականում բեմադրում էին հայկական և ռուսական պիեսներ: Մամուլը մեծ գովեստով էր խոսում Հովհաննես Աբելյանի, տիկին Սիրանուշի, օր. Քնարիկի, Ի. Ալիխանյանի, Ա. Արմենյանի, Գ. Ավետյանի, Բերոյանի, Զարիֆյան ամուսինների և մյուսների մասին:

Նշանավոր պատմաբան Ա. Հովհաննիսյանը գրում է. «90-ական թվականների վերջերում հույզերի ու հույսերի այդ աշխարհում էր ապրում նաև Շուշի քաղաքի երիտասարդությունը: Նոր սերնդի մտայնությունը տակավին չէր բոլորել իր կյանքի հերոսական շրջանը: Հղի հանդուգն ծրագրերով՝ ստեղծվեց հոգևոր մի մթնոլորտ, որտեղ ծնվում էր և սնվում նաև դրպրոցում սովորող մաստաղ աշակերտությունը: Հասակակից ընկերներ էին, սոգորված վառ ցնորքներով, լի եռանդով, պատրաստ ամեն զոհաբերության... դպրոցից դուրս կար ժողովատեղի, որտեղ հետևում էին քաղաքական գրականության, լրսում էին գեկուցումներ «երկրի» մասին, վեճի բռնվում, որո-

շումներ ընդունում, խմբագրում ձեռագիր թերթը՝ «Կոկոնը»: Մոտ հինգ տարվա կյանք ունեցավ «Կոկոնը»³: Այնուհետև Ա. Հովհաննիսյանը պատմում է, որ առաջադեմ երիտասարդներից կազմված խմբակը ստանում է «Կոկոն» անունը և գործում է բավականին եռանդուն:

«Կոկոնի» ղեկավարներից էր Ալեքսանդր Ծատուրյանը⁴ («Ալ. Ռուբենին»), որն իր ընկերների շրջանում հայտնի էր «Ծատուր» անունով: Խորհելու, դատելու, տրամաբանելու ընդունակության, ուղղամտության ու սկզբունքայնության համար նա վայելում էր շատերի համակրանքն ու հարգանքը: «Ծատուրը ամենից ուշագրավ դեմքն էր խմբակի՝ խոսելու և գրելու ձիրքով,— գրում է Ա. Հովհաննիսյանը,— խորհելու և վիճելու կարողությամբ: Պակաս ազդու չէր արտաքինը: Այսօր իսկ պատկերանում է նա ինձ աշակերտական գորշ բլուզի մեջ, հասակը պարթև, քայվածքը դանդաղ ու խոհուն, նայվածքը խորաթափանց, ժպիտը հեզկոտ: Իր շուրջն էր փոխում ընկերների պատկառանքը, ակնածությունը: Եվ հասկանալի է: Դերձակի որդին գալիս է գրչի ու խոսքի սուր ասեղներով և տրամաբանական ամուր դերձանով իրար կցելու լսածն ու կար-

³ «Կոմունիստ», Բաբու, № 43, 1923, ապրիլի 13:

⁴ Ծնվել է 1881 թ., Շուշիում: Սկզբնական կրթությունն ստանում է Շուշիի թեմական դպրոցում, որ աչքի է ընկնում իբրև առաջադեմ և հեղափոխական մտքերով սոգորված պատանի: 1903 թ. մտնում է աշակերտության կոշիկով «Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության» մեջ: 1909—1913 թթ. Ալ. Ծատուրյանը սովորում է Մոսկվայի տնտեսագիտական ինստիտուտում: Նա շուտով զգում է «Սպեցիֆիկների» գաղափարական սխալները, հեռանում է նրանցից և 1912 թ. մտնում բոլշևիկյան կուսակցության շարքերը:

1913 թ. Շուշիի թեմական դպրոցի ուսուցիչ էր. հեղափոխական մեծ գործ էր կատարում իր հայրենիքում: 1919 թ. հուլիսին դառնում է Ղարաբաղում ստեղծված բոլշևիկյան կոմիտեի ղեկավարը: Նա հեղինակ է մի քանի աշխատությունների: Նշենք «1905 թ. հայ-թուրքական ընդհարման քաղաքական ու տնտեսական պատճառները», «Սոցիալ-դեմոկրատիայի կազմակերպական սխառները», «Դաշնակցությունը և նրա քաղաքական-տրեւտեսական հայացքները» և այլն: Ասենք, որ այս աշխատությունների մեջ օգտակար մտքերի հետ կան նաև որոշ սխալներ, որ հետագայում զգաց Ալ. Ծատուրյանը: 1920 թվականի մարտին ողբերգական մահով կտրվեց նրա կյանքի թելը:

դասածը՝ ընկերների մերկ հույզերը մտքի հանդերձով ծածկելու համար»⁵:

Ալեքսանդր Ծատուրյանը և «Կոկոնի» մյուս ղեկավարները շարունակում էին ցույցեր կազմակերպել թեմական դպրոցի հոգևոր տերերի դեմ: Նրանք իրենց դասընկերներին մղում էին արդարության համար պայքարի ուղին, մտնելով «կյանքի աղմկահույզ հրապարակը»:

Արցախի հասարակության քաղաքական գիտակցության բարձրացմանը նպաստում էին նաև այն երիտասարդները, որոնք սովորում էին երկրի տարբեր քաղաքների միջնակարգ ու բարձրագույն դպրոցներում: Ամռան ամիսներին վերադառնալով հայրենի քաղաք՝ նրանք իրենց հետ բերում էին հեղափոխական գաղափարներ և ձգտում էին կազմակերպել մարքսիստական խմբակներ: Այդպիսի խմբակ է ստեղծվում Ծուշիում 1902 թվականին, որի մասին 1903 թ. փետրվարի 5-ին հաղորդում է անում Թիֆլիսի նահանգի ժանդարմական վարչության պետը:

Ցարական պահնորդական մարմինները բազմիցս նշում են, որ հատկապես Ծուշին «վտանգավոր» է դարձել հակապետական գաղափարներով: Այստեղ են թափանցում հեղափոխական գրքեր, թոռցիկներ, կոչեր, պարբերականներ: Մեծ գործ է կատարում լենինյան «Իսկրան»: 1901—1903 թթ. այդ թերթի առանձին համարները գավառի մարդկանց են հասնում ամենից առաջ լենինի աշակերտ, մեծ դարաբաղցի Բոգդան Կնունյանցի միջոցով: «Իսկրայի» 19-րդ⁶ և մի քանի այլ համարներ Ծուշի են ուղարկվում արտասահմանից՝ Լաչպցիզ քաղաքից: Այժմ Ստեփանակերտի պատմաեղբայրագիտական թանգարանում է գտնվում թերթի առաջին համարի բնօրինակը, որը հայտնաբերվել է 1946 թ. Ստեփանակերտի շրջանի Սարուշեն գյուղի մի բնակչի մոտ: Յոթնամասն տարուց ավելի է, ինչ այդ համարը մեծ խնամքով պահպանվում է Ղարաբաղում: Կասկած չի հարուցում, որ լենինյան «Իսկրան» Ղարաբաղ էր հասնում Բաքվից: Հայտնի է, որ 1901 թ. Բաքվում ստեղծված «Նիևա» ընդհատակյա տպարանի նպատակն էր արտասահմանից ուղարկվող «Իսկրայի» սովարաթղթից պատրաստված

մատրիցաները տպագրել և գաղտնի տարածել Անդրկովկասում:

Ղարաբաղի մտավորականները, հատկապես առաջադիմական գաղափարներով տոգորված ուսուցիչները, շատ բան էին անում, որպեսզի լենինյան «Իսկրան» կարդան նաև գյուղական ուշխատավորները:

Առանձին համարներում «Իսկրան» անդրադառնում էր Ղարաբաղի, մասնավորապես Ծուշիի բնակչության ծանր պայմաններին, նրա հեղափոխական ոգուն, հանդուգն մտքին: Թերթըն իր ընթերցողներին հաղորդում է, թե Ղարաբաղի աշխատավորներն ինչպիսի մասսայական ցույցեր, միտինգներ են կազմակերպում ցարական կառավարության անմարդկային օրենքների դեմ: Նշվում է նաև, որ «խաղաղ կուլտուրական ձեռնարկությունների սխտեմատիկ հետապնդումները, տխրահոշակ «ոռուսիֆիկացման քաղաքականությունը», 300-ից ավելի հայկական դպրոցների փակումը, բարեգործական հիմնարկների գործունեության սահմանափակումը, հրատարակչական ընկերության փակումը և մի ամբողջ շարք նման միջոցառումներ կամաց-կամաց առաջ բերեցին սուր հակամարտություն հայկական ազգաբնակչության և կառավարության միջև, որը վաղ թե ուշ պետք է պայթեր»⁷:

Ղարաբաղի աշխատավորությունը խիստ դժգոհ լինելով ցարիզմի քաղաքականությունից, ատելությամբ էր լցված ցարական գործիչների և ընդհանրապես բարձրաստիճան պաշտոնյաների նկատմամբ: Եվ պատահական չէ, որ սուր ընդհարումներ են տեղի ունենում գորքի ու խաղաղ բնակչության միջև: Այս մասին «Իսկրան» գրում է. «Ամենուրեք ժողովուրդը գենքը ձեռքին էր դիմավորում ցարական աստիճանավորներին, ամենուրեք եղան ընդհարումներ գորքի հետ և ամեն մի քաղաքի իրադարձությունների մանրամասն նկարագրությունը խիստ կերկարացներ թղթակցությունը: Կնշենք հետևյալ բացարձակ ստույգ, չնայած կուրյուզային, բայց բնորոշ փաստը: Անկարգությունները սանձելու համար Ծուշի քաղաքում գոր-

⁵ Աշոտ Հովհաննիսյան, «Երկու բնութագիր», Ե., 1927, էջ 20—21:

⁶ Լույս է տեսել 1902-ի ապրիլի 1-ին:

⁷ «Լենինյան «Իսկրան» Անդրկովկասի մասին», հոդվածների ժողովածու, Հայպետհրատ, 1960, էջ 160:

քերի հետ այնտեղ ուղարկվեց հրետանի, իսկ և իսկը ինչպես պատերազմի ժամանակ»⁸:

Կասկած չի հարուցում, որ հողվածի հեղինակը քաջատեղյակ էր Կովկասի քաղաքական իրադարձություններին, գիտեր այնտեղ տեղի ունեցող խմորումների, հուզումների և ըմբոստացումների մասին: Հենց վերը հաղորդվող փաստը «Նոր կողոպուտ» վերնագրով իր հողվածում օգտագործել է Բոգդան Կնունյանցը, որը հանդես է եկել «Կավկազեց» ստորագրությամբ⁹:

Ղարաբաղի աշխատավորությանը հեղափոխական ոգով գաստիարակելուն նպաստում են Բաքվում և երկրի մյուս խոշոր արդյունաբերական քաղաքներում ծայր սուած բանվորական հուժկու ելույթները:

Հեղափոխական շարժումը Ղարաբաղում նոր լիցք է ըստանում 1905 թ.: Դա այն ժամանակահատվածն էր, երբ կապիտալիզմի զարգացումն իր ոլորտի մեջ էր առել նաև գյուղը: Գյուղում տեղի էր ունենում շերտավորում. գյուղացիների մի մասը տնտեսապես քայքայվում էր, զրկվում հողից և անասուններից, մի մասն էլ դառնում էր պրոլետար:

Բանվորն ու գյուղացին ծայրահեղ չքավորության մեջ էին, անտանելի էին դառնում աշխատանքային և կենցաղային պայմանները: Ամենուրեք թագավորում էին կամայականությունը, ծեծը, վիրավորանքը, պատիժը: Եվ պատահական չէր, որ օրօրի բանվորները քաղաքական ու տնտեսական նոր պահանջներ էին ներկայացնում:

1905 թվականին ամբողջ Ռուսաստանում զարգանում էր հեղափոխական շարժումը: Բանվորները դուրս էին գալիս քաղաքային քաղաքական գործադուլների: Գործադուլներ էին տեղի ունենում նաև Անդրկովկասի մի շարք քաղաքներում՝ Թիֆլիսում, Քութայիսում, Բաթումում, Բաքվում, Ալեքսանդրապոլում և այլուր: Բոլշևիկներն ակտիվացնում էին բանվորներին, նրանց ընդգրկում արհմիությունների մեջ, սովորեցնում՝ ինչպես պետք է պայքարել տիրող կարգերի դեմ: Նրանք բանվորներին ու գյուղացիներին կոչ էին անում չխաբվել ցարի

⁸ Նույն տեղում, էջ 167:

⁹ Տե՛ս «Իսկրայի» 1903 թ. հոկտեմբերի 1-ի համարը:

ստահող խոստումներով ու նրա «ժողովրդական» ելույթներով, լինել միշտ անասան՝ պայքարի դիրքերում:

Մեծ աշխատանք է կատարվում նաև ցարական ինքնակալությանն աջակցող կուսակցությունների քաղաքականությունը մերկացնելու ուղղությամբ: Բոլշևիկները բացահայտում էին մեղքակալների օպորտունիստական դիրքը և միաժամանակ բանվորներին պատրաստում համառուսաստանյան քաղաքական ելույթի, որը տեղի ունեցավ 1905 թվականի հոկտեմբերին:

Հեղափոխական շարժումը Ղարաբաղում նոր լիցք էր ըստացել 1905 թ. համառուսաստանյան գործադուլներից: Անհրաժեշտ էր ամեն կերպ ղեկավարել բանվորների ու գյուղացիների ելույթները, ճիշտ ուղիով տանել աշխատավորական զանգվածներին, նրանց հասցնել բոլշևիկների կուսակցության օրվա լոզունգը, բարձրացնել գործադուլավորների ոգին: Այս աշխատանքով զբաղվեցին Բաքվից եկած ստանձին սոցիալ-դեմոկրատներ:

Եռանդուն գործունեություն ծավալեց 1905 թ. ամռանը Շուշիում ստեղծված սոցիալ-դեմոկրատական խումբը, որն ամուր կապեր էր հաստատել Վ. Ի. Լենինի և նրա կողմից ղեկավարվող բոլշևիկյան «Պրոլետարի» թերթի հետ: Այդ խումբն ունեցել էր իր անլեզավ տպարանը: Խմբի անդամների ջանքերով Շուշիում գործի է գցվում ընդհատակյա տպարան, որ տպագրվում էին հեղափոխական կոչեր, թոուցիկներ:

Գաղտնի տպարաններ են ստեղծվում ոչ միայն Շուշիում, այլև գյուղական վայրերում: «Մշակը» 1906 թ. մարտի 1-ի համարում գրում է, որ Շուշիի գավառի Ջամիաթ (Ննգին, որ ծնվել է Բոգդան Կնունյանցը— Ս. Ա.) գյուղում գործերը խուճկվել է Բոգդան Կնունյանցը և գտել են գաղտնի տպարանը, մեծ զարկություն են կատարել և գտել են գաղտնի տպարանը, մեծ քանակությամբ թոուցիկներ, արգելված գրականություն ու թղթակցություններ, մի քանի պատրաստի ռումբեր և պայթուցիկ նյութեր: Թերթը մի այլ հաղորդման մեջ ասում է, թե ինչպես է հայտնաբերվել ընդհատակյա տպարանը:

Դժգոհ լինելով տեղական կառավարողների անմարդկային վերաբերմունքից, 1905 թ. հուլիսին մեծ գործադուլ է սկսվում Շուշիի և նրա մերձակա գյուղերում գտնվող մետաքսագործական ձեռնարկություններում: Գործադուլավորները առաջ են քաշում 17 կետից բաղկացած պահանջներ, որոնք ուղղված էին մի կողմից՝ բռնադատիչների կամայականություններին

վերջ տալուն, մյուս կողմից՝ աշխատավորների կենսամակար-
դակը բարելավելուն:

Շուշիի սոցիալ-դեմոկրատական խումբը ղեկավարում էր
Ղարաբաղի գյուղերում (Չանախչի, Բարին-տակ, Զարդանաշեն
և այլն) ծայր սուած ըմբոստացումները և գործադուլները մաս-
նավորապես 1905 թ. սեպտեմբերին: Հայտնի է, որ գյուղացի-
ները չհամբերելով ու չզսպելով իրենց զայրույթը, ոչնչացնում
էին կալվածատիրական անտառները, փչացնում հարուստնե-
րին պատկանող ունեցվածքը:

Ղարաբաղցիները սոցիալ-դեմոկրատական խմբի օժան-
դակությամբ հնարավորություն են ունենում կարդալու մարք-
սիստական գրականությունը, լենինյան տպագիր օրգանները
(մասնավորապես «Վպերյոդը», «Պրոլետարին»), ինչպես նաև
Բաբվում և Թիֆլիսում լույս տեսնող թերթերն ու հանդեսները,
տարածելու անլեգալ թղթակցություններ:

Ցարական կառավարությունն ավելի էր ուժեղացրել ազ-
գային ճնշումը: Փակվել էին շատ դպրոցներ, կուլտուր-կրթա-
կան օջախներ, հնարավորություն չկար նկատելիորեն սուսջ
տանելու մշակույթը, արվեստը, գրականությունը: Դադարեց-
ված էր նաև բարեգործական ընկերությունների աշխատանքը:
Ցարական գրաքննչությունն իր սև թաթն էր դնում ամեն մի
տողի, ամեն մի բառի վրա, եթե դրանք «վտանգ» էին ներկա-
յացնում:

Ցար Նիկոլայ Երկրորդի 1903 թ. հունիսի 12-ի ընդունած
օրենքը, որի համաձայն հայկական եկեղեցական ունեցվածքը
պիտի անցներ կառավարության տնօրինությանը, նշանակում
էր ոչ մի հնարավորություն չտալ կուլտուր-լուսավորական և
կրթական գործը զարգացնելուն, քանի որ այդ ժամանակ ա-
ռանձին դպրոցներ պահվում էին գրեթե միայն եկեղեցիներից
ստացված միջոցների հաշվին:

Օրսվուր աճող հեղափոխական շարժումները և հակահայ-
կական այդ օրենքների դեմ ծագած ելույթները ստիպեցին
ցարին որոշ զիջումներ կատարելու. 1905 թ. օգոստոսին Նի-
կոլայ Երկրորդը վերացնում է 1903 թ. հունիսի 12-ի օրենքը:
Կուլտուր-լուսավորական աշխատանքը սկսում է որոշ կենդա-
նություն ստանալ: Կրկին բացվում են առանձին դպրոցներ:
Բավականին դժվարությամբ է իր գոյությունը վերականգնում
65 տարվա կյանք ունեցած Ղարաբաղի հայոց թեմական հո-

գևոր դպրոցը: Սկզբնական շրջանում նրան նյութապես օժան-
դակում է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի հոգաբարձությունը:
Աշոտ եպիսկոպոսի խնդրանքով հոգաբարձությունն օգնություն
է ցույց տալիս 5.000 ռուբլի գումարով: Այս առթիվ «Մշակի»
1906 թ. մարտի 11-ի համարում հրատարակվում է Շուշիի
թեմի սուսջնորդի շնորհակալական խոսքը:

Առանձին միջոցներ են ձեռնարկվում կենդանություն տա-
լու Շուշիում և Ղարաբաղի մյուս վայրերում փակված դպրոց-
ներին: Այդ եկեղեցական դպրոցների փոխարեն բացվում են
ճիսականները, որոնց մեծ մասը պահպանվում է եկեղեցիներից
տրված միջոցներով:

Փաստեր կան, որ ռեալական ուսումնարանի աշակերտ
Արսեն Գյուրջյանցի 1903 թ. նոյեմբերին կազմակերպած խըմ-
բակի անդամ-աշակերտները բավականին ակտիվ էին գործում
Շուշիում, առիթը բաց չէին թողնում և թոռուցիկներ էին տա-
րածում քաղաքում: Արսեն Գյուրջյանցի աշակերտական խըմ-
բակը դարձավ մարտական մի կազմակերպություն և փաստորեն
հանդիսացավ Շուշիի սոցիալ-դեմոկրատական խմբակի
հիմքը:

Շուշիի դպրոցներից յուրաքանչյուրը հանդես էր գալիս իր
պահանջներով: Ծատ հետաքրքիր է իմանալ հենց թեմական
դպրոցի աշակերտների մի քանի պահանջների մասին, որոնք
ամփոփված են 41 կետի մեջ: Ահա մի քանիսը.

- «1) Դպրոցը դասել պետական միջնակարգ դպրոցների
շարքը, համապարան մտնելու հնարավորություն տալով:
 - 2) Բանալ 7-րդ դասարան:
 - 3) Չարկ տալ աշխարհաբար լեզվին, վանել գրաբարը և
ավանդել իբրև կլասիկ լեզու Ե. դասարանից:
 - 4) Ռուսերենը կանոնավոր հիմքերի վրա դնել:
 - 5) Կրոնական սուարկաները կրճատել և դրա փոխարեն
լնդայնել բնագիտականը:
 - 6) Մաթեմատիկական լրիվ անցնել իր բոլոր մասերով:
 - 7) Վերացնել թվանշանները և թվանշային աստատարը
ու մտցնել հուշանշանների նոր եղանակ»¹⁰:
- Բացի վերը նշվածից, աշակերտները պահանջում էին
դպրոցը դարձնել ժողովրդական, անտեղի չպատժել իրենց,

¹⁰ «Մշակ», № 55, 1906, մարտի 12:

վերացնել ծեծը, հարստացնել գրադարանը, հաճախակի կազմակերպել երեկոյթներ ու ցերեկոյթներ, մի խոսքով՝ ծավալել կոլտոսական միջոցառումներ:

Ակտիվ էին նաև մյուս դպրոցների աշակերտները: 1905 թ. փետրվարի 10-ին ռեալական դպրոցի աշակերտները գործադուլ են անում, ջարդում են լուսամուտների ապակիները, պատառոտում «քարտեզները, ուսուցիչների մատչանները և, մանավանդ, ամենից ատված վարքագրության ընդհանուր ցուցակը...

Հետևյալ օրը գործադուլ են անում և Մարիամյան դպրոցն ու քաղաքային դպրոցի սաները, բայց նրանց սկսածը երկար չի տևում, դասերը վերսկսվում են»¹¹:

Բաքվի «Каспий» թերթի հաղորդման համաձայն Շուշիի աշակերտների հիմնական պահանջներից մեկն էլ տեղական լեզուների ուսումնասիրումը պարտադիր դարձնելն էր: Հայտնի է, որ մինչև 1904—1905 թթ. ուսումնական տարին մայրենի լեզուները հանված էին դպրոցներից. ո՛չ հայը, ո՛չ վրացին կամ մի այլ ազգային փոքրամասնության պատկանող երեխա չէր կարող իր մայրենի լեզուն սովորել պետական որևէ դրպրոցում: Այդ լեզուները կարելի էր լսել միայն կրոնի դասերին:

Սակայն ցարական կառավարությունը քնած չէր. իբրև պատասխան աշխատավորական ցույցերի ու գործադուլների, նա ձգտում էր սեպ խրել Անդրկովկասի ժողովուրդների մեջ, հրահրել ազգամիջյան կոիվներ: Եվ դա որոշ չափով հաջողվում է նրան: 1905—1907 թթ. հայ-ադրբեջանական ընդհարումներ տեղի ունեցան Ղարաբաղում: Այրվում է Շուշի քաղաքի մեծ մասը: 1905 թ. օգոստոսի 27-ին «Մշակ» թերթն այդ մասին գրում է. «Մարասիեյի աղետ եղավ Շուշիի գլխին: Օգոստոսի 16-ին սկսվեց կատաղի զինված ընդհարում հայերի և թուրքերի (ադրբեջանցիների— Ս. Ա.) մեջ, որն անընդհատ տևեց մինչև օգոստոսի 20-ի կեսօրը: Այրվել էր հայոց թաղամասը: Կրակը կլանեց մոտ 400 տուն, որոնց թվում քաղաքային վարչությունը, հիվանդանոցը, հաշտարար դատարանը, Մարիամյան դպրոցը, դեղատունը, թատրոնը և գրեթե հայերի ամբողջ մագազինները»:

Զինված ընդհարումներ են տեղի ունենում նաև գավառի շատ գյուղերում: Արյունալի կոիվը շարունակվում է 1906 թ. մայիսին: Ժողովուրդը հյուծվել էր ծանր վիճակից. ամենուր խտվություն էր, մարդասպանություն, թալան, գողություն:

Խոսելով հայ-ադրբեջանական ջարդերի մի քանի պատճառների մասին՝ Ալ. Ռուբենին իր հոդվածներից մեկում¹² կոչ էր անում երկու ժողովուրդներին՝ այսուհետև ևս ապրել բարեկամաբար, համագործակցված, ոչ մի հավատ չընծայելով ցարական կառավարության ստահոդ հայտարարություններին:

Ժողովուրդը մտահոգվում է վերականգնելու այրվածը, կատուցելու քանդվածը, կենդանություն տալու այն ամենին, ինչը փչացել, մոխիր էր դարձել: Սրան արձագանքում են շատ կազմակերպություններ, ընկերություններ և ստանձին անձնավորություններ: Արձագանքում են նաև Թիֆլիսի հայերը, հատկապես նրանք, ովքեր ծնվել և հասակ էին առել Ղարաբաղում:

1906 թ. մայիսի 20-ին «Աղբյուր-Տարագի» խմբագրատանը տեղի ունեցած խորհրդակցությունում իր բացման խոսքում Տիգրան Նազարյանն ասում է. «Ածուխ և մոխիր կտրած մեր չթնաղ Շուշին պարտական ենք վերաշինելու. մորթված, հոշոտված մեր եղբայրների ու քույրերի անդ ու անդաստանը պետք է մի-մի գեղածիծաղ մշտադավար բուրաստան դարձնենք: Պիտի թե մտավորապես և թե տնտեսապես այնքան ուժեղանանք, որ այլևս ֆիզիկական կոպիտ ոչ մի ուժ չկարողանա մեզ դիպչել...»

Այս նպատակին հասնելու միջոցներից մեկն էլ ես համարում եմ հողային վարկի փոխադարձ ընկերությունը... Մենք անսպառ կապիտալ ունենք. այդ մեր հողն է, միացնենք սրան և մեր մյուս կապիտալը՝ աշխատանքը, և գիտակցաբար, հայրենասիրությամբ բորբոքված օգնության հասնենք մեր մայր աշխարհին»¹³:

Խորհրդակցության կոչը լայն արձագանք է գտնում հատկապես Ղարաբաղում: Տիգրան Նազարյանի անունով շուշեցիները հեռագիր են ուղարկում, որտեղ իրենց խորին շնորհակալությունն ու պատրաստակամությունն են հայտնում՝ Շուշին կարճ ժամանակում վերականգնելու կոչի համար: Սկզբ

¹¹ «Մշակ», № 53, 1905, մարտի 24:

¹² «Մուրճ», 1905, № 11—12, էջ 206:

¹³ «Մշակ», № 116, 1906, մայիսի 31:

քում բացվում են երկսեռ որբանոց և ջուլհակային արհեստանոց: Արհեստանոցը բաղկացած էր մի քանի ճյուղերից. մի տեղ սովորեցնում էին գորգ, մի այլ տեղ՝ կապերտ, շալ, սրբիչ գործել: Ուրախալի լուր էր նաև այն, որ 1906 թ. փակված քաղաքային գրադարան-ընթերցարանը 1908 թ. վերականգնվում է և սկսում իր նորմալ աշխատանքը:

Շատ-շատերը հայրենօգուտ նվիրատվություններ են անում՝ կուլտուր-լուսավորական օջախներ ստեղծելու, գրադարան-ընթերցարան բացելու, գիրք, գրականություն հայթայթելու համար: «Մշակը» 1909 թ. հունվարի 22-ի համարում հայտնում է, որ հայոց թեմական դպրոցի գրադարանը հարստացել է տիկին Նվարդ ժամհարյանի նվիրատվությամբ: Նա իր հանգուցյալ ամուսնու՝ Մարգար ժամհարյանի ամբողջ գրադարանը (բաղկացած 238 կտոր գրքից) նվիրում է դպրոցին: Մի շարք գյուղերում ևս բացվում են գրադարան-ընթերցարաններ: Լավ է գործում հատկապես Դաշբուլաղի ժողովրդական գրադարանը՝ «Քերծ» անունով:

Սկսվում է թատերական կյանքը: Ակտիվություն են հանդես բերում քաղաքի երիտասարդները: Նրանց ուժերով կազմակերպվում են բեմադրություններ, համերգներ, երեկոյթներ:

Որոշակիորեն կարգավորվում է դպրոցական գործը: Դըպրոցներ են բացվում Շուշիում և մի շարք գյուղերում: Շուշիի «Իսահակ Մաթևոսյան-Թադևոսյան» և երկսեռ դպրոցներում բարձրանում է աշակերտների առաջադիմությունը:

Թեմական տեսուչ Ստ. Տեր-Ավետիքյանի՝ 1909 թ. օգոստոսի 4-ին գրած զեկուցագրի մեջ հայտնվում է, որ «Մեղրիցոց միդասյան տղայոց դպրոցը... բացվել է 1907 թ. աշնանը... բաղկացած է երկու բաժանմունքից՝ 1-ին և 2-րդ: Սովորում են դպրոցում 70 հոգի»¹⁴: Այնուհետև ասվում է, որ «Ագիլեցոց միդասյան դպրոցը բացվել է 1908 թ. սեպտեմբերին... բաղկացած է մի բաժանմունքից: Սովորում են դպրոցում 42 հոգի, որոնցից 23-ը տղաներ են, իսկ 19-ը աղջիկներ»¹⁵:

Համեմատաբար կանոնավոր են գործում Բալլուջայի, Դաշբուլաղի, Գիշու և ուրիշ գյուղերի միդասյա երկսեռ ծխական

դպրոցները, որոնք սպահովված էին գործիմաց, խոր գիտելիքների տեր ուսուցիչներով:

Ժողովուրդը մտածում է նաև Ղարաբաղում սեփական տպագիր օրգան ունենալու մասին: Այդ առթիվ նամակ է տղպագրվում «Մշակի» 1910 թ. օգոստոսի 1-ի համարում: Այնտեղ ասված է, որ Շուշիի մտավորականության շրջանում վաղուց է միտք հղացել լրագիր ունենալու, բայց 1905—1906 թթ. դեպքերը հնարավորություն չընձեռեցին նախաձեռնությունը գլուխ բերելու: Նորից է այդ հարցը առաջ քաշվում, նույնիսկ թերթերում հայտարարություններ են տպագրվում, որ շուտով լույս կտեսնի «Շուշիակի լիստոկ» թերթը՝ Շամիրբեկ Մելիք-Ղարաբաղյանի խմբագրությամբ, բայց այն ձգձգվում է:

Ղարաբաղի աշխատավորները շատ բան զգացին 1905—1907 թթ. իրադարձություններից, համոզվելով, որ իրենց ազատությունը ձեռք կբերեն միայն սեփական ուժերով, բուլշևիկների ղեկավարությամբ: Նրանք համոզվեցին նաև, որ 1905—1907 թթ. երկու ժողովուրդների ընդհարումները ցարական կառավարության մեղքով էին:

1905—1907 թթ. դեպքերը ցույց տվին, որ անջատ-անջատ հնարավոր չէ հաղթել, այլ անհրաժեշտ է միասնական ուժերով պայքարել ցարիզմի դեմ: Այլ կերպ ասած՝ հայերի և մյուս ժողովուրդների ազատությունը կարող էր իրականանալ միայն համատուսական հեղափոխության հաղթանակով:

Այսպիսով, 20-րդ դարի սկզբի տարիները ծանր էին և՛ դպրոցական, կուլտուր-լուսավորական աշխատանքի, և՛ մամուլի, գրատպության համար: Սրա հիմնական պատճառները պարզ էին. մի կողմից՝ խոչընդոտում էին ցարական կարգերը, մյուս կողմից՝ կառավարության մեղքով տեղի ունեցած ազամիջյան կոտորածները: Շատ միջոցներ էին գործադրվում կոտորելու Ղարաբաղի աշխատավոր մարդկանց կամքն ու համատությունը, հերոսականությունն ու արիությունը: Բայց այդ չէր հաջողվում թշնամիներին. 1905—1907 թթ. դեպքերը բացել էին գավառի մարդկանց աչքերը, նպաստել բանվորների և գյուղացիների ինքնագիտակցության աճին, հեղափոխական գգոնության բարձրացմանը:

¹⁴ Հայկական ԽՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 543, թ. 25:

¹⁵ Հայկական ԽՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 543, թ. 26:

**ՄԱՄՈՒԸ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ
1910—1914 ԹԹ.**

**«ՂԱՐԱԲԱՂ» ԹԵՐԹԸ
(1911—1912)**

1910 թ. Շուշիում հիմնադրվում է Մելքոն Բաբաջանյանի տպարանը: Այդտեղ լույս տեսնող առաջին պարբերականը «Ղարաբաղ»¹ թերթն էր, որի համար մեծ ջանքեր գործադրեցին և՛ Զավեն վարդապետը², և՛ բժիշկ Նիկոլայ Յարամիշյանը: Հեշտ չէր գլուխ եկել «Ղարաբաղը»: Այդ մասին բավականին գրագրություններ կան Վրացական ԽՍՀ պետական կենտրոնական պատմության արխիվում³:

Բժիշկ Ն. Յարամիշյանը թերթ հրատարակելու իրավունք ստացել էր 1911 թ. սեպտեմբերի 13-ին, երբ Կովկասի փոխարքայության մամուլի գործերի Թիֆլիսի կոմիտեն հաստատել էր նրա ներկայացրած ծրագիրը, ուր նախատեսվում էին հետևյալ բաժինները. «1) Հեռագրեր, 2) առաջնորդող հոդվածներ, ակնարկներ, հասարակական և տնտեսական հարցերի հետազոտումներ, 3) տեղական խորհրդակա, 4) հոդվածներ և թղթակցություններ երկրամասի կարիքների մասին, 5) ֆելիետոններ, բանաստեղծություններ, արձակագրություն, հոդ-

¹ Անդրանիկ համարը հրատարակվեց 1911-ի նոյեմբերի 17-ին:

² Ղարաբաղի թեմի առաջնորդ, Վարանդայի Գիշի գյուղացի Զավեն Մախոնեպի Բաբայանը հրատարակչական գործի ջատագովներից մեկն էր:


³ Տե՛ս ֆոնդ 480, ցուցակ 2, գործ 567:

վածներ և ակնարկներ՝ պատմությունից, աշխարհագրությունից, քաղաքատնտեսությունից և այլ բնագավառներից, 6) կովկասյան կյանք և մամուլ, կայսերական կյանք և մամուլ, արտասահմանյան կյանք և մամուլ, 7) մամուլի տեսություն, 8) թղթակցություններ, 9) քննադատություն և մատենագիտություն, 10) թատրոն, արվեստ և տարբեր տեսակի ներկայացումներ, 11) դատական խորհրդակա, 12) ոստիկանական խորհրդակա, 13) այլևայլ արտաստություններ, մանրուքներ, փոստ, 14) նամակներ խմբագրությանը, 15) կողմնակի հաղորդումներ, 16) հայտարարություններ՝ հայերեն, ռուսերեն և թաթարերեն լեզուներով»⁴:

Անդրանիկ համարի «Մեր կոչումը» խմբագրականում թերթը գրում է, թե ինչ ժամանակաշրջանում է այն լույս աշխարհ գալիս և ինչ նպատակներ է հետապնդում: Նշվում է նաև, թե ինչ սկզբունքով է առաջնորդվելու, ինչն է լինելու նրա նշանաբանը. «Յուր շուրջը խմբելով բոլոր սրտացալ հարսզատ ժողովրդական տարրերին, «Ղարաբաղը» լինելու է անաչատյուր մտրակումների մեջ, հեռու թայֆայական նեղսրտությունից: Ծշմարտությունն ու արդարությունն են լինելու նրան առաջնորդողը և սկզբունք ունենալով «ամեն ինչ ժողովրդի համար» լայն նշանաբանը, լինելու է ազատ մտածող, առաջադիմական, բոլոր մղումներով շահագրգռված և լայն ժողովրդական գաղափարներով տոգորված գավառական օրգան»:

Ուսումնասիրելով «Ղարաբաղ» եռօրյա թերթի 1911 թ. № 13 և 1912 թ. № 61 համարները (վերջին համարը լույս տեսավ օգոստոսի 19-ին), չի կարելի ասել, թե գավառական տեղանքը հավատարիմ մնաց իր խոստմանը: Ամենից առաջ օրգանը հավատարիմ մնաց իր խոստման ինքնին, որ այն առաջադիմական օրգան չէր քաղաքական իմաստով, լույս դիրք էր բռնում գավառում արդեն գործող կուսակցական խմբավորումների նկատմամբ. հրաժարվում էր նրանց հարցերին դրական կամ բացասական պատասխաններ տալուց: Նրա էջերում սուր քննադատություն չէր ծավալվում այս կամ այն անընդունելի երևույթի նկատմամբ: Հարցերը բացահայտորեն չէին դրվում: Իհարկե, թերթն անդրադառնում էր գավառի տխուր կյանքին, որոշ չափով լուսաբանում մարդկանց անելելի վիճակը, բայց ոչ մի ելույթի, հոդվածի կամ

⁴ Նույն տեղում:



լրագրային այլ ժանրով գրված հյուսիս մեջ փորձ չէր արվում ասել իսկական պատճառը կամ հշել կոնկրետ մեղավորներին:

«Հարաքաղի» արժեքը հայ պարբերական մամուլի պատմության մեջ պետք է գնահատել ամենից առաջ նրա էջերում հրատարակված դպրոցական, մշակութային կյանքին, գրական-գեղարվեստական հարցերին նվիրված հյուսթերով:

Խմբագրությունը և նրանով մտահոգված մարդիկ թերթի շուրջն են համախմբում գավառում գործող մտավորականներին՝ գրողներին, ուսուցիչներին, դերասաններին, ինչպես նաև

կուլտուր-լուսավորական և ստողչապահական բնագավառներում աշխատողներին: Նշենք Կոստանտին Մեղիք-Շահնագարյանին, որը նորաստեղծ թերթին օգնության է գալիս՝ հրատարակելու ոչ միայն ֆելիետոններ, երգիծական թղթակցություններ, այլև տեսական, մասնագիտական հոդվածներ: Որ նրա մասնակցությունը խիստ անհրաժեշտ էր «Հարաքաղ» թերթին, վկայում է 1911 թ. օգոստոսի 31-ին Ջավեն վարդապետի գրած նամակը: «Սիրելի հայրենակից,— կարդում ենք այնտեղ,— ով չգիտե, որ մեր սիրելի հայրենիքի, գեղեցիկ Հարաքաղի շահերը քո սրտին խիստ մոտ են: Չեմ կասկածում, որ քո սիրտը ուրախ կբաբախի, եթե ասեմ, որ այդ սիրածոր հայրենիքի շահերին ու առաջադիմությանը նվիրված մի հայերեն «Հարաքաղ» անունով թերթի հրատարակության հիմք են դրել, որի առաջին համարը լույս կտեսնի սեպտեմբերին: Ավելորդ եմ համարում ասել, որ հենց առաջին համարում փայլելու է մեր հայրենիքի հարազատ գավառը և հայ գրականության



Հայտնի ֆելիետոնիստ Կոստանտին Մեղիք-Շահնագարյան (Տնքլաչի Խաչան):

Զեմ կասկածում, որ քո սիրտը ուրախ կբաբախի, եթե ասեմ, որ այդ սիրածոր հայրենիքի շահերին ու առաջադիմությանը նվիրված մի հայերեն «Հարաքաղ» անունով թերթի հրատարակության հիմք են դրել, որի առաջին համարը լույս կտեսնի սեպտեմբերին: Ավելորդ եմ համարում ասել, որ հենց առաջին համարում փայլելու է մեր հայրենիքի հարազատ գավառը և հայ գրականության

մեջ յոր պատվավոր տեղը բռնած բոլորի սիրելին, մեր Տըմբ-լաշին իր գեղեցիկ ֆելիտոնով...»⁵:

Թերթին պարբերաբար աշխատակցում էր Շուշիի հայ օրիորդաց Մարիամյան դպրոցի հաշոց լեզվի և գրականության ավագ ուսուցիչ Հ. Ստեփանյանը: Նրա հոդվածները հիմնականում նվիրված էին գրականագիտական հարցերին: Հեղինակը փորձ էր անում ընդարձակ կերպով բնութագրել այս կամ այն գրողի ստեղծագործությունը, սակայն ոչ բոլոր դեպքերում է ճիշտ վերլուծում ու գնահատում դրանք: Գրողի հասարակական-քաղաքական դեմքի բացահայտմամբ հանդես էր գալիս Ա. Գյանջեցյանը, մի մտավորական, որ երկար տարիներ աշխատում էր Շուշիի դպրոցներում՝ աշակերտների մեջ սեր պատվաստելով դեպի մայրենի լեզուն ու գրականությունը:

Միքա Տեր-Սարգսյանը («Միտասար» ծածկանվամբ) ոչ միայն ստեղծագործում էր, հրատարակ հանում արձակ գործեր, այլև «Ղարաբաղի» էջերում տպագրում էր մի շարք հոդվածներ և թղթակցություններ, որոնք մասնավորապես վերաբերում են գավառի մշակութային կյանքի այլևայլ կողմերին, բարեգործական ընկերությունների ստեղծմանը: Նրա մի շարք նյութերի մեջ շեշտեր կան գավառում կուլտուր-լուսավորական օջախներ ստեղծելու մասին:

Շուշի քաղաքի հրատարակչական և դպրոցական գործերի մասին մի քանի անգամ «Ղարաբաղի» էջերում ելույթ է ունենում Պ. Զաքարյանը, իր հայրենակիցներին պատմելով այն մասին, որ Արցախը հայ մշակույթի կարևոր օջախներից մեկն է, որ ստեղծագործել ու բարի անուն են վաստակել շատ ու շատ մարդիկ, գիտության գործիչներ:

Ղարաբաղի տխուր առօրյան իրենց հոդվածներում, թղթակցություններում և ինֆորմացիաներում որոշ չափով լուսաբանում էին նաև Շուշի քաղաքի ուսուցիչներ Տ. Տեր-Գրիգորյանը, Ս. Տեր-Գասպարյանը, Ի. Զոհրաբյանը և ուրիշներ, որոնց մի մասը հանդես էր գալիս ծածկանուններով⁶ («Արաքս», «Թափառական», «Բեկ» և այլն):

⁵ Նամակը պահպանվում է Հայաստանի գրականության և արվեստի թանգարանի Կ. Մելիք-Շահնազարյանի ֆոնդում:

⁶ Մի քանի մարդկանց վկայությամբ «Արաքս» և «Թափառական» ծածկանուններով հանդես էր գալիս գրող Կրթանես Փափագյանը:

Առաջին իսկ համարներից «Ղարաբաղի» էջերում հաստատուն տեղ են գրավում «Գավառ», «Կովկաս», «Ռուսական կյանք», «Իպրոցական», «Մամուլ», «Թերթուն», «Թղթակցություններ», «Վերջին լուրեր» և այլ բաժինները:

Թերթը փորձում է խոսել աշխատավորության տնտեսական անմխիթար վիճակի մի քանի պատճառների մասին: «Գավառական իրականությունը» խորագրի տակ գետնադրված նյութերում պատմվում է այն մասին, որ հազարավոր ընտանիքներ զրկված են ապրուստի միջոցներից և հազիվ են պահպանում իրենց ֆիզիկական գոյությունը, որովհետև ամբողջ հարստությունը կենտրոնացած է մի խումբ մարդկանց ձեռքին: Եվ պատահական չեն գավառում կատարվող գողություններն ու թալանը, կողոպուտն ու մարդասպանությունը: Ղարաբաղի աշխատավորների թշվառության պատճառներից մեկը թերթը համարում է հողագրկությունը: Բարձրացնելով այս հարցը՝ նորատեղծ տպագիր օրգանը քննադատական խոսքն ուղղում է կալվածատերերի և կուլակների հասցեին, որոնք օրեցօր ուժեղացնում են ճնշումը հողագործների նկատմամբ: Ի դեպ «Ղարաբաղն» էլ «Գործ» հանդեսի նման ամեն ինչ կապում է հողի հետ, չտեսնելով աշխատավորության կյանքի բարելավման վճռական միջոցը՝ ցարական կարգերի տապալումը, շահագործողական լծի վերացումը:

Թերթը տարբեր առիթներով նշում է, որ գավառի դրությունը ծանր է ոչ միայն տնտեսապես, այլև լուսավորության բնագավառում. չկան ուսումնական կանոնավոր հաստատություններ: Եղած ուսումնարաններում ու դպրոցներում հիմնականում ընդգրկված են հարուստների երեխաները:

«Ղարաբաղը» առաջ է քաշում ոչ միայն կանոնավոր դրություններ ունենալու, այլև ուսուցումը ամուր հիմքերի վրա դնելու խնդիրը: Հենց առաջին համարում տպագրված «Թերթը և կրթական գործը», «Թերթը և հայ ուսուցչությունը» և այլ հոդվածներում ու թղթակցություններում ընդգծվում է կրթության, մատաղ սերնդի դաստիարակության և ընդհանրապես այդ բլրնագավառում պատասխանատվության բարձրացման կարևորությունը:

Թերթը հայրենակից ուսուցիչներից պահանջում է խոր զգացումով և սրտացավությամբ մոտենալ հանձնարարված գործին, մտածել լիարժեք քաղաքացիներ պատրաստելու մասին:

Նա գրում է. «Ըստ երևույթին բոլոր հայ ուսուցիչները գիտեն, որ չկա մի այլ ասպարեզ, քան ուսուցչականը, որ մարդ անհատը այնքան պատասխանատվության ենթակա լինի թե՛ հասարակական կարծիքի և թե՛ հենց իր սեփական խղճմտանքի առջև. չկա ավելի ծանր ու դժվարին պաշտոն, քան ուսուցչականը:

Ստանձնելով այդ վեճ պաշտոնը, մարդն իր մեջ պիտի զգա կոշում, սեր և պատրաստություն. նա պիտի իր կատարած աշխատանքից որոշ բավականություն ստանա և ոչ թե ձանձրույթ. նա պիտի գոհունակությամբ և լրջությամբ կատարի իր սրբազան միսիան՝ մատաղ սերնդին դաստիարակելու պատասխանատու գործը. հակառակ դեպքում անօգուտ կանցնեն նրա թափած ջանքն ու ճիգերը»⁷:

Գավառական թերթը պարզ տեսնում էր, թե ինչպես շատերը մատների արանքով են նայում դպրոցական գործին, չեն մտահոգվում դպրոցի էության և բովանդակության բարձր մակարդակով, որի պատճառով ուսուցման պրոցեսն ամբողջությամբ ձանձրույթ է, տաղտկալի և ժամանակի ապարդյուն վատնում:

1912 թ. ապրիլի 29-ի համարում («Դպրոցական հարցը» հոդվածում) «Ղարաբաղն» իր ընթերցողներին ասում է դառն ճշմարտությունը: Նա գրում է. «Դպրոցը գոյություն ունի, բայց բովանդակություն չունի, կյանք ունի, էություն չկա, դա սարսափելի է և հետին ծայր հասած մտավոր թշվառության արտահայտություն: Թերթը մտածում էր դպրոցներում բարձրորակ ուսուցիչներ ունենալու մասին, մի բան, որ ժամանակի ցավոտ հարցերից մեկն էր:

Դառն ու ողբերգական էր ուսուցչության վիճակը ցարական Ռուսաստանում: Մասնավորապես հատ ու կենտ հայ դպրոցների ուսուցիչները զրկված էին ապրուստի տարրական պայմաններից, չունեին նյութական միջոցներ: Ինչ խոսք, տրևտեսական անմխիթար դրությունը իր խոր կնիքն էր դնում ուման որակի վրա: Ծատ տեղերում ոչ միայն ուսուցիչների խիստ պակաս էր զգացվում, այլև դպրոցական շենքեր չկային, ուսուցումը տարվում էր բաց երկնքի տակ կամ չափազանց անհրապույր անկյուններում:

⁷ «Ղարաբաղ», № 1, 1911, նոյեմբերի 17:

1911 թ. 6-րդ համարում «Ղարաբաղը» հրատարակում է Ծարտարի⁸ դպրոցի անմխիթար վիճակը՝ Աերկազացնող մի փաստ, որը բնորոշ էր գավառի համար: Վրդովված թղթակիցն իր նամակը սկսում է այսպես. «Չեմ կարծում, թե գտնվի մի այնպիսի աղքատ դպրոց, ինչպիսին է Ծարտար գյուղի եկ. ծխ. միդասյան դպրոցը... Ծիանությունը վերին աստիճանի խախտ է, պատերը ծակծկոտ, և ցուրտ եղանակներին դասարանը դառնում է սառցատուն: Իսկ եթե անձրև է, սենյակում փոքրիկ լճակներ են գոյանում:

Դպրոցն ունի միայն մի քանի կոտորված նստարաններ և մի գրաստիստակ: Դպրոցը չունի գրադարան, դասական պիտույքներ, հարկավոր նկարներ, քարտեզներ, որով ավելի դժվարանում է դասատվությունը»: Հույս է հայտնվում, որ նրան վիճակը երկար չի շարունակվի, որոշ չափով կկարգավորվեն դպրոցներին հատկացված շենքերը, տները, բայց դա մնում է լոկ հույս և ուրիշ ոչինչ: Եվ ահա, անցնում է մի տարուց էլ ավելի, թերթը ստիպված կրկին անդրադառնում է այդ հարցին:

Մի այլ թղթակցության («Ծուշվա ծխական դպրոցները») մեջ թերթը բողոքում է, որ Ծուշիում հիմնական դպրոցների թիվը չի ավելանում, և միայն եկեղեցիներին կից են հիմնվում այսպես կոչված դպրանոցներ: Ավելին, «ծխական դպրոցների մեջ մանկավարժական կապ, միություն չկա: Ամեն մի դպրոց անկախ մյուսից ձգտում է ինքնուրույն կերպով առաջ ընթանալ, տալով փոքր չափով գրագիտություն իր սաներին»⁹: «Ղարաբաղը» բացեփրաց ասում է, որ ծխական դպրոցները չեն կարող հազեցնել իրենց «սաների ուման ծարավը, որովհետև երկու, երեք կամ չորս տարվա դասընթացով, այն էլ միացյալ բաժանմունքներով և փողոցից հավաքած երեխաներով, շատ դժվար է ցանկալի արդյունք տալ:

Անհանգստություն է հայտնվում նաև դպրոցական գործում եղած աչքակապությունների համար: Հրատարակվում են դրոցներում աշակերտների գիտելիքները գնահատելու մի քանի տխուր փաստեր, շեշտվում, որ հոգաբարձուները չեն մտածում աշակերտների քննությունները կանոնավոր անցկացնելու

⁸ ԼԳԻՄ Մարտունու շրջանի ամենախոշոր գյուղերից մեկն է:

⁹ «Ղարաբաղ», № 34, 1912 թ., մայիսի 10:

մասին, առանձին ուսուցիչներ քննությունը վեր են ածում մի շուրթիման խաղի. «Քննության «սարսափելի» կանաչ մահուդի շուրջը բազմաժամ են ընթերականեր, որոնք շատ անգամ թույլ հասկացողություն ունեին դրվելիք առարկայի նկատմամբ. հաճախ, նույնիսկ հայերեն չիմացողներ, որոնք աշակերտի ճոռոմ խոսքերից շացած, կամ խիստ բարեհոգի լինելով, բաշխում են նրան մի «քեռք» թվանշան:

Կարծում եք նրանք չգիտե՞ն,— շեշտում է գալատային օրգանը,— որ քննությունները իսկականը չեն, որ շատերը «անց են կենալու»: Մի՞թե նրանք անցյալ շրջանավարտների օրինակից չգիտեն¹⁰:



Արցախի մշակույթի նշանավոր գործիչ, «Ղարաբաղ» թերթի ակտիվ աշխատակից Առաքել Առաքելյան:

Ռեակցիայի տարիները ծանր սագդեցություն ունեցան հատկապես գյուղական կրթական օջախների վրա: Ծառ գյուղերում չկային դպրոցներ, եղածներն էլ գուրկ էին թեմական տեսչից: 1910—1911 թթ. ուսումնական տարվա ծանրը վիճակի մասին հանգամանակից տեղեկություններ է հաղորդում Առաքել Առաքելյանը¹¹: «Ղարաբաղի թեմի կրթական գործը 1911—1912 ուսումնական տարում» ծավալում հողվածաշարում նա նշում է, որ «անցյալ 1910—1911 ուսումնական տարում թեմի ծխական դպրոցները գուրկ են եղել թեմական տեսչից,

որոնց դեկը հանձնված է եղել տեղական հոգևոր վարիչների ձեռքը, որոնց ապիկարության և միմիայն իրենց հատուկ անհոգության պատճառով անխնամ մնացած դպրոցները հասել են իրենց քայքայման ու անկման ծանր աստիճանին, փակվել են մի շարք դպրոցներ, իսկ եղածներում կրթված ու ցենզավոր ուսուցիչներին շատ տեղերում փոխարինել են անկիրթ, անցենգ, կիսագրագետ անձնավորություններ...»¹²:

Հողվածի հեղինակը միաժամանակ ցույց է տալիս ուսումնական գործի որոշ առաջընթացը հաջորդ տարում: Ա. Առաքելյանը Ղարաբաղի եկեղեցական-ծխական դպրոցների թեմական տեսուչն էր, որի ջանքերով գալատի դպրոցները համաատարար առաջադիմում են. բարելավվում է ուսուցումը, ուսուցչական ասպարեզը հիմնականում մաքրվում է անորակ դասատուներից, կարգ ու կանոն է մտցվում դպրոցների ներքին կյանքում, հոգ է տարվում լեզուների ուսուցումը ամուր հիմքերի վրա դնելու համար:

Դպրոցական գործի որոշակի աշխուժությունը 1912—1913 թթ. նկատելի էր հատկապես Ծուշիում. գործում էին թեմական հոգևոր դպրոցը՝ 300 աշակերտներով, Մարիամյանը՝ 250 աշակերտներով, եկեղեցական-ծխական միդաւա երկսեռ դպրոցներ Ագուլեցոց մայր եկեղեցու գավթում, ուր սովորում էին 60 աղջիկ և տղա, Մեղրեցոց եկեղեցու գավթում՝ 70 երեխա, Թաղևուսյանը՝ 120 աշակերտներով, քաղաքայինը՝ 250 դպրոցականներով, ռեպականը՝ 400 աշակերտներով: Բացի սրանցից, քաղաքում կային ռուսաց Մարինակի օրիորդաց դպրոցը՝ 100-ից ավելի աշակերտուհիներով և մի մասնավոր տարրական դպրոց՝ 60 աշակերտներով:

Դրական աշխատանքի հետ մեկտեղ Ա. Առաքելյանը բացահայտում էր դպրոցներում շարունակվող թերությունները, նշում տարբեր առարկաների ավանդման խելացի կազմակերպման անհրաժեշտությունը:

աշխատանք էր կատարում հայրենի երկրի լուսավորական-կրթական գործը առաջ տանելու համար: Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր էր, դասավանդում էր Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտում: Նրա գրչին են պատկանում մի շարք մասնավոր և արժեքավոր գիտական աշխատություններ՝ մասնավորապես հայ վարու և արժեքավոր գիտական աշխատություններ՝ մասնավորապես հայ մշակույթի պատմության վերաբերյալ: Մահացել է 1981 թ.:

¹² «Մշակ», № 151, 1913, հուլիսի 13:

¹⁰ «Ղարաբաղ», № 34, 1912, մայիսի 10:

¹¹ Ծնվել է 1887 թ. Լեռնային Ղարաբաղի Սակերանի շրջանի Խաճաճախ գյուղում: Ունենալով խոր գիտելիքներ և մեծ սեր լեռնի մանկավարժությունը, Ա. Առաքելյանը նախախորհրդային շրջանում վիթխարի

Դպրոցական հարցերի լայն լուսաբանման հետ մեկտեղ թերթը ձգտում էր ընթերցողների մեջ սեր սուսչացնել դեպի գիտությունը, գրականությունը, արվեստը: Այս նպատակով նրա էջերում պարբերաբար գործում էր «Գեղարվեստ» բաժինը: Ծատ անգամ «Ղարաբաղը» տպագրում էր գրական գործեր, գրականագիտական հոդվածներ՝ հայ, ռուս ականավոր գրողների ու մտածողների մասին:



Նշանավոր գրող, «Ղարաբաղ» թերթի խմբագիր Վրթանես Փափազյան:

որ տանել չէր կարողանում գրական աշխարհը ստվերող և արատավորող գրողներին. «Ո՛վ ասես, որ գրիչ ձեռք չի առնում և, իրենից առաջ եղածները սրբել-ջնջելու մտքով, ապշեցուցիչ հանդգնությամբ և անպատկառ լեզվով չի տղմոտում թե՛ գործ, թե՛ գործիչ և թե՛ ազնվությամբ գործելու ամեն ցանկություն... Երեկվա անբարոյականն ու հրապարակով խաթարվածը՝ այսօր բարոյախտաական ճառեր է հնչեցնում աշակերտների անունից. գրական ամեն ասպարեզից զզվանքով կամ ծաղրով էտ մղված parvėnu-ները այսօր «մենք-գրողներս» են

Ընթերցողը թերթի հենց առաջին չորս համարներում «Գրական ակնարկների» տակ կարդում է նըշանավոր գրող Վրթանես Փափազյանի ծավալուն հոդվածը արվեստագետի, նրա աշխարհայացքի, արծարծվող գաղափարների և պոետական արժանիքների մասին: Հեղինակը չորս մասից բաղկացած հոդվածաշարում ձգտում էր ճշմարտացի ու ինքնատիպ պատասխանել մի քանի հարցերի, որոնք հուզում էին գրական հասարակայնությանը:

Ամենից առաջ նա խոսում է ազնվության, առողջ քննադատության և օբյեկտիվ լինելու մասին, քանի

կոչում իրենց և անցյալ մեծություններն իսկ ճգնում են վարկաբեկել»¹³:

Թերթը Փափազյանի միջոցով քննադատում է այն վայգրականագետներին, որոնք կարող են միայն գոեհկություններ դուրս տալ, վարկաբեկել բարի անուն վաստակած գրողներին, միայն թե դրանով անձնական հաշիվ մաքրեն իրենց հակառակորդից: Գրականության մեջ ամեն ինչ պետք է լինի գեղեցիկ, մաքուր, մարդկային. այս է օրվա պահանջը, շեշտում է Ղարաբաղի տպագիր օրգանը:

«Գրական ակնարկների» մեջ հեղինակն իբրև տաղանդաշատ գրող և մեծ արվեստագետ առաջին հերթին անդրադառնում է Ավետիք Իսահակյանի ստեղծագործություններին, մասնավորապես հուշակավոր «Աբու-լալա Մահարի» պոեմին:

Խոսելով գրականության մեջ Ավ. Իսահակյանի տեղի և դերի մասին՝ Վ. Փափազյանը նշում է. «Դա այն երգիչն է, որ ժողովրդին է տվել «Որսկան ախպեր», «Մանկալ ես, բեզարած ես» և նման մի շարք գոհարներ, որ հայ նորագույն գրականությունն է հարստացրել իր փոթորկող ոգու, իր զգայուն արտի տրտունջներովն ու մրմունջներովը, ըմբոստացող զգացմունքներովը, տենդոտ վարանուններովը և քնարական թախծոտ երգերովը»¹⁴:

Ավ. Իսահակյանը նաև հայրենիքի և մարդու ջերմ երկըրպագուն է, մեծ հայրենասեր, որի ստեղծագործություններում արտաբուխ կերպով դրվատում է հայրենականը, մայր հողը, մարդկային հարուստ աշխարհը՝ իր մաքառումներով ու հրաշք գեղեցկությամբ: Վ. Փափազյանը փորձում է նաև քննադատական որոշ դիտողություններ անել «Աբու-լալա Մահարի» պոեմի գաղափարների ու արծարծած հարցերի վերաբերյալ:

Հեղինակը զարգացնում է այն ճշմարիտ միտքը, որ գրողը պետք է կապված լինի իր ժողովրդի հետ, արտացոլի նրա առօրյան, մարմնավորի ժամանակի բնութագրական կողմերը: Բայց, ահա, այդպե՛ս է վարվել Հարություն Ծողողությանը «Ծիրինանց Նախշուն» վեպում: Ո՛չ: Իհարկե, Վ. Փափազյանի նպատակը չէր ստվեր գցել Հ. Ծողողության լավագույն գրական գործերի վրա, որոնք հարազատորեն ներկայացրին «հայ գյուղը իր բոլոր լավ ու վատ կողմերով: Գյուղացին-ազնիվ,

¹³ «Ղարաբաղ», № 1, 1911, նոյեմբերի 17:

¹⁴ «Ղարաբաղ», 2, 1911, նոյեմբերի 20:

խելն, միամիտ, և այդ բոլոր հատկություններիցը օգտվող-վաշխատուներ, քոխվաներ, այս ու այն պաշտոնյա, գյուղի տղաներ, քաղաքի խաբեբաներ և այլն»¹⁵: Եվ Փափագյանն ուղղակի ասում է, որ «Հափշտակությամբ կարդացվեցին ին-նըսունական թվականներին Ճողոտրյանի բոլոր այդ գրվածք-ները»¹⁶, հատկապես ընդգծելով նրա «Մոռացված աշխարհ» ընդհանուր խորագիրը կրող ժողովածուի գաղափարական և գեղարվեստական արժանիքը:

Բայց միշտ չէ, որ պետք է նույնը նկարագրել, նույն իմաս-տը, գաղափարը մարմնավորել և ընթերցողին հրամցնել կյանքի մի կողմը: Ո՞ւմ հայտնի չէ, որ ժամանակները փոխվում են, շեշտում է Վ. Փափագյանը, պետք է կարողանալ գեղարվեստորեն տալ փոփոխությունները, գտնել բնորոշը, բնութագրա-կանը, ժամանակի ոգին արտահայտող կարևոր նրբագծերը:

Ի՞նչն է հատկապես քննադատում «Գրական ակնարկնե-րի» հեղինակը. այն, որ Հ. Ճողոտրյանի գրչի տակ հայ գյուղը ընթերցողին է ներկայացել իդեալապես, անաղարտ բարքերով ու սովորություններով, մարդկային հիացնող կերպարներով: Մի՞թե Հ. Ճողոտրյանը չի տեսնում նոր ժամանակների հայ գյուղի անտանելի վիճակը, ինչո՞ւ այն չի պատկերում հարա-զատորեն, հարց է տալիս Փափագյանը և իր միտքը շատ կարճ արտահայտում այսպես. «Ըիրիհանց Նախշունը» անախրոնիզմ է: Գոնե մեր գյուղի, **այժմյան** գյուղացու կյանքի՝ պատկերը չէ. այլ գուցե հին, բարի ժամանակների, ով գիտե՞ ինչ օրերի նկարագրություն, որ շատ գրավիչ է... Բայց, ալա՜ղ, չափա-զանց երազային է և իրականությունից ցավագինորեն հե-ռու...»¹⁷:

Վ. Փափագյանի «Գրական ակնարկները» շատ բանի մա-սին է խոսում, բայց հատկապես ընդգծվում է մի հարց, որը երբեք չի կորցնի իր ուժը. գրողը ժամանակի հայելին է և պետք է կարողանա ժամանակակից կյանքը վերարտադրել բազմա-կողմանի, վարպետ գրչով:

¹⁵ «Ղարաբաղ», № 3, 1911, նոյեմբերի 24:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Նույն տեղում:

Մի խոսքով, թերթն ստաշին հերթին դրվատում էր տա-ղանդավոր գրողներին, բացահայտում նրանց ստեղծագործու-թյունների հմայքը, գաղափարական վերլուծումների ենթար-կում, միաժամանակ քննադատում նրանց, ովքեր հարազատ չէին մնում իրենց դավանանքին, իրականությունը պատկերում էին խեղաթյուրված:

«Ղարաբաղը» բողոքում էր այն բանի դեմ, որ ըստ ար-ժանիւնյն չեն գնահատվում շնորհալիները: Այս առումով նա քննադատում է այն դատապարտելի լուրջությունը, որ նկատվում է նշանավոր բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանի գործու-նեության երեսնամյա հոբելյանի առթիվ. «Լուրջուն այն աս-տիճան, որ վերջապես խնդիրը հրապարակ դրվեց սիրելի բա-նաստեղծի նախկին ճեմարանական սաների կողմից»¹⁸:

Հիշյալ օրգանն առիթը բաց չի թողնում պարսավելու գուր տեղը բարձր պատվի արժանացած անտաղանդներին: Դրանց փառքը սին է, անբնական և մի խումբ անձնական բարեկամ-ների, հասարակության մեջ դիրք ունեցողների օժանդակու-թյամբ են ձգտում հոբելյաններ կազմակերպել ու օվաքիաներ սարքել: Բայց ժամանակը այնքան մեծ ուժ ունի, անտղղակի կերպով ասում է «Ղարաբաղը», որ սին փառքերը քամուն է տալիս և միայն արժանավորներին դարձնում ժողովրդական:

Թերթը ողջունում է «տաղանդավոր բանաստեղծի գոր-ծունեության երեսնամյակի հոբելյանը տոնելու ստաշարկը» և հույս հայտնում, որ «հայ հասարակությունը, որի ինտելիգենտ, մտավորական անդամներից շատերը Հովհաննիսյանի հետե-վողները և նրա դաստիարակած սաներն են՝ բարոյական պարտքի անկեղծ գիտակցությամբ հանդես կգան տոնելու հայ բանաստեղծական տաղանդի այդ մեծ ներկայացուցչի հոբել-յանը, որովհետև դրան ամենից շատ արժանի է...»¹⁹:

Հովհաննես Հովհաննիսյանին նվիրված հատուկ հոբելյա-նական հոդվածով «Ղարաբաղը» հանդես է գալիս հիմն և կես ամսից հետո՝ 1912 թ. մայիսի 20-ին և 24-ին: Երկու մասից բաղկացած այդ հոդվածում թերթը քննական էքսկուրս է կա-տարում և համառոտակի պատմում այն մասին, որ Կովկասում լույս տեսնող ստանձին պարբերականներ հարգալից վերա-

¹⁸ «Ղարաբաղ», № 5, 1911, դեկտեմբերի 1:

¹⁹ Նույն տեղում

բերմունք չեն հանդես բերել Հովհ. Հովհաննիսյանի նկատմամբ, փորձել են նվազեցնել նրա գրական արժանիքը, նսենացնել նրա կատարած գործը: Այդպիսիներից էր, օրինակ, «Մշակը», հայտարարելով՝ «Հովհաննիսյանի քնարը չափազանց էրոտիկ է ու ասիական»:

«Ղարաբաղը» հասկապես բարձր է գնահատում հեղինակի «Ա'խ, տվե՛ք ինձ քաղցր մի քուն», «Ես քեզ սիրում եմ», «Արի՛, իմ հոգյակ, իմ գիրկը արի», «Դու ծաղկում ես, ինչպես վարդը հարավի» և տասնյակ այլ երգեր, որոնք գրված են անկեղծ, ինքնատիպ, հմայիչ արվեստով:

Թերթը դրվատական խոսք է ասում Գևորգ Դողդոջյանի մասին, որի «Ծիծեռնակ» գողտրիկ երգը մեծ մասապականություն էր վայելում հայկական բոլոր շրջաններում: Բայց ցավալի է, նշում է «Ղարաբաղը», որ նրա մասին շատ քչերը գիտեն, և պատշաճը չի հատուցվում Գ. Դողդոջյանին:

Ինչո՞ւ նրա ստեղծագործությունները չեն հրատարակվում կամ բանաստեղծի մասին դրվատական խոսք չի ստվում, բողոքում է թերթը և բարձրացնում մի նոր հարց. «Ծիծեռնակի» երգիչը սարել է մինչ խորին ծերություն ու քանի տարի առաջ վախճանվել է իր հայրենի Սիմֆերոպոլ քաղաքում: Մի հասնատ հողաթունը զարդարում է նրա գերեզմանը, սակայն նրա հայրենակիցները հարց են հարուցանում արժանավոր մահարձան դնելու նրա շիրիմին...

Ցանկալի է, որ երախտագետ հայրենակիցները ոչ թե միայն մահարձան կանգնեցնեին, այլև հրատարակեին Դողդոջյանի հայտնի և անհայտ ոտանավորները»²⁰:

Արժեքավոր էին թերթի հրատարակած հոդվածները Գարիբեյ Սունդուկյանի, Ղազարոս Սղայանի, Պերճ Պողջյանի և այլ գրողների մասին:

«Ղարաբաղին» հետաքրքրում է ոչ միայն հայ գրողների քախտը, նրանց վաստակը գնահատելու հարցը, այլև հարևան ժողովուրդների մշակութային հարցերը, տաղանդաշատ հեղինակների ստեղծագործությունների մասապականացումը, առանձին գրողների հոբելյանների նշումը և այլն:

«Բեյհնակին և ոռու գրողները» մեծածավալ հոդվածում²¹

²⁰ «Ղարաբաղ», № 51, 1912, հուլիսի 15:

²¹ Տե՛ս թերթի 1911-ի 7-րդ համարը:

«Ղարաբաղը» փորձում է բացահայտել այն վիթխարի դերը, որ խաղացել է Վ. Բեյհնակին ոռու գրականության, պոեզիայի զարգացման ասպարեզում:

«Ղարաբաղում» հաճախ են լույս տեսնում բանաստեղծություններ, պատմվածքներ, ակնարկներ, ֆելիետոններ. հասկապես տպագրվում են ինքնուրույն ստեղծագործություններ: Ընթերցողների ուշադրությունն են գրավում Գրիգոր Ներսիսյանի²², Խորեն Բորյանի²³, Հակոբ Խանկարյանի²⁴, Սիմոն Առա-

²² Ծնվել է 1887 թ., Շուշում: Սկզբնական կրթությունը ստանում է հայրենի քաղաքում. 1913 թ. ավարտում է տեղի թեմական դպրոցը և զբաղվում ուսուցչությամբ: 1915 թ. մեծ դժվարությամբ ընդունվում է Մոսկվայի առևտրական ինստիտուտը, բայց չի կարողանում ավարտել՝ նյութական միջոցներ չունենալու պատճառով: 1917 թ. մտնում է բուլշևիկյան կուսակցության մեջ և ծավալում եռանդուն աշխատանք:

Երկու տարի Ալեքսանդրապոլում աշխատելուց հետո Գր. Ներսիսյանը 1919 թ. ընդմիջտ տեղափոխվում է իր սիրած հայրենիքը՝ Ղարաբաղ: Մանկավարժական գործունեությանը զուգընթաց, նա ակտիվ հասարակական աշխատանք է կատարում: Գրում է մի շարք արժեքավոր ստեղծագործություններ. 1911 թ. լույս են տեսնում «Թախտու երգեր», 1926 թ.՝ «Հոկտեմբերյան երգեր» ժողովածուները: 1937 թ. անհատի պաշտամունքի զոհերից է:

²³ Խորեն Լորենցը (Բորյան) ծնվել է 1892 թ. Հայկական ԽՍՀ Կարմիրի շրջանի Ներքին Շամբարակ գյուղում: Հայրենիքում սկզբնական կրթությունն ստանալուց հետո անցնում է Բաքու և 1911 թ. ավարտում Մեսրոպյան դպրոցը:

Դեռ աշակերտական օրերից նրա մեջ վառվում էր ստեղծագործելու և ժողովրդի համար օգտակար գործ կատարելու տենչը: 1906 թ. նրա ստեղծագործությունները լույս են տեսնում «Պատանի արմանախում», Նոր-Նախիջևանի «Լույս» շաբաթաթերթում և այլ պարբերականներում: 1917 թ. մտնում է բուլշևիկյան կուսակցության մեջ: Մեծ են նրա ծառայությունները Ադրբեջանում հակահեղափոխական բանդաների մերկացման գործում: Զոհվել է 1919 թ. քաղաքացիական կռիվներում:

²⁴ Ծնվել է 1885 թ. Շուշի քաղաքում: 1906 թ. ավարտում է տեղի թեմական դպրոցը. 55 տարի անընդմեջ Շուշիում, Բաքվում, Թիֆլիսում և այլուր զբաղվում է ուսուցչությամբ:

Աշակերտական տարիներին խմբագրում է «Արշալույս» թերթը: Տարբեր ժամանակներում ակտիվորեն աշխատակցել է Թիֆլիսում լույս տեսնող «Լուսա», «Աղբյուր», «Տարագ», «Լուսաբաց», «Դարբնոց», «Կարմիր աստղ», «Մարտակոչ», «Պրոլետար» և այլ պարբերականների: 1916 թ. լույս է ընծայում բանաստեղծությունների ժողովածու: Նրա ստեղծագործությունները թարգմանվել են մի քանի լեզուներով: Հ. Խանկարյանի տեքստերով երաժշտություն են գրել Ազատ Մանուկյանը, Դանիել Ղազարյանը և ուրիշներ: Մահացել է Թիֆլիսում, 1966 թ.:

քելանի, Վ. Հակագի և ուրիշների չափածո ստեղծագործություններն ու գողտրիկ պատմվածքները:

Առաջին բնորոշ գիծը, որ նկատվում է նրանց գործերում, մոսայ կյանքի պատկերումն է, անհրապույր աշխարհում մարդու անելանելի վիճակի արտահայտումը:

Բանաստեղծ Վ. Հակագը ուղղակի ասում է, որ կյանքը մի բեռ է՝ տանջանքներով լի, այն տանելու համար շատ ու շատ զրկանքներ պետք է կրել: Դիմելով ընկերոջը՝ նա գրում է.

Ի՞նչ ես ուզում, դարիք ընկեր,
Որ քեզ համար ես երգեմ,
Ի՞նչ ես ուզում, ջիվան ընկեր,
Որ քեզ համար նվագեմ.
Թե ուրախ կյանք բերկրայից—
Դեռ չի եղած ինձ համար.
Թե հառաչանք, վիշտ կամ թախիծ—
Նորություն չէ քեզ համար:
Թե ծաղկավետ գարուն երգեմ—
Այդ կինի անարդար.
Թե իրական երգ ես ուզում—
Վիշտ է ընտրված մեզ համար:
Կյանքը լի է տանջանքներով,
Որ էլ կամիս դու գնա.
Հայ երգիչը իր քնարով,
Դեռ շատ դարեր պիտ ողբա²⁵:

Ոչ միայն մարդը, այլև ամբողջ տիեզերքը կարոտ է պայծառ լույսի, գրում է Լևոն Աթաբեկյանը²⁶: Մի շարք բանաստեղծություններում

²⁵ «Ղարաբաղ», № 12, 1911, դեկտեմբերի 25:

²⁶ Ծնվել է 1875 թ. Ծուշիում: Նախնական կրթությունը ստացել է տեղի ռեալական դպրոցում: 1893 թ. մտնում է Լալաջիգի համալսարանի հասարակագիտական ֆակուլտետը, իսկ 1897 թվականից սովորում է Բեռլինի համալսարանի բժշկագիտական բաժանմունքում:

1903 թ. վերադառնում է Ռուսաստան: Ռուսական առաջին հեղափոխության օրերին մեծ աշխատանք է կատարում Բաքվի բանվորների շրջանում:

Զբաղվում է նաև գրական գործունեությամբ: 1913 թ. Բաքվում լույս է տեսնում նրա բանաստեղծությունների ժողովածուն: Նրա գրիչը բեղմնավոր էր իբրև րաբող. «Անիվ», «Ծեփոր», «Զոդան», «Առավոտ» և այլ պարբերականներում հանդես էր գալիս «Ռիխարդ», «Սմբատ Սմբատյան» և ուրիշ ծածկանուններով: Նրա մտահղացմամբ 1917 թ. Բաքվում հրատարակվում է «Առողջ կյանք» թերթը, որը հիմնականում պրոպագանդում էր մարդու ֆիզիկական առողջության պահպանման նորմաները: Նախատակվել է 1918 թվականին:

ստեղծություններում ներկայացնելով տաղտկալի միջավայրը, նրա ծանր ու ճնշող վիճակը, նա գեղարվեստական արտահայտչամիջոցներով արտացոլում է մարդկային բանտ-աշխարհը: Եվ պատահական չէ, գրում է բանաստեղծը, որ մեկն իրենց սարն է կարոտում, մյուսը՝ ջինջ հորիզոններ, հայրենի տուն, երրորդը՝ մոր ձայնը, եղբորն ու քրոջը: Լ. Աթաբեկյանի մոտ կարոտը կենսասիրություն է, ձգտում, իղձ ու ցանկություն:

Սրտի թրթիռով ու ներքին անսովոր զգացմունքով է կարդացվում Ղարաբաղի բարբառով գրված «Մոր նամակը»: Սա արձակ բանաստեղծություն է, ուր հիմնականում շեշտված ձևով հրապարակ են գալիս մոր զգացմունքները չորս տարի բանակում գտնվող որդու նկատմամբ: Ծեր կինը, որ մի կերպ էր գոյությունը քարշ տալիս՝ անասնման կարոտում է որդուն և իր նամակում պատմում է տեղի զոոքաների ու թալանչիների, հարստահարիչների ու քյոխվաների մասին: Սա աշխարհ տեսած հայ կնոջ դատավճիռն է շահագործողների նկատմամբ:

Բանաստեղծը «Հոգնության երգերում» նույնպես շարունակում է մերկացնել այլանդակ մարդկանց գործելակերպը, եռագելով երջանկություն և ազատություն: Մարդուն հատուկ չէ լավկանությունը, ասում է Լևոն Աթաբեկյանը, նա պետք է կյանքին նայի համարձակ, պայծառ աչքերով: Այս միտքը լավ է արտահայտված «Լաց մի լինիլ» ստեղծագործության մեջ: Հեղինակի ստեղծագործությունների պատկեր «Ապստամբություն» պոեմն է, որ գրել նա դեռևս Մեծ հոկտեմբերից վեց տարի առաջ: Գեղարվեստական արտահայտման միջոցներով Լ. Աթաբեկյանը ընթերցողին է ներկայացնում բանակ-ամբոխի մուտքը դեպի նոր կյանքի համար մարտը:

Ուշագրավ ստեղծագործությունների հեղինակ է Գրիգոր Ներսիսյանը. սկզբում նա պատկերում է շրջապատը՝ արտաշուք, մոսայ ու անելանելի վիճակով, ապա՝ իր անձնական ապրումները: «Ղարաբաղում» տպագրած անվերնագիր բանաստեղծությունը քնարական ուժով մարմնավորում է հեղինակի հիվանդոտ հոգին «տանջանք-պատրանք» աշխարհում».

2քնաղ լուսնի շողերն ընկան

Զլունով պատած սև սարին.

Բյուրեղները շողեր առան,

Պեծին տվին, փայլ առին...

Բու շաչում է ձմռան քամին,
Մուլում հանդարտ ու վաչում.
Եվ լալիս է իմ հեզ հոգին
Տանջանք, պատրանք աշխարհում...

Մռայ կյանքի անհույս, անլույս,
Մութ ճամփեքում ես ընկած,
Ախ, ինձ համար վառ արշալույս
Հե՛ջ... երկնքում չի ծագած²⁷...

Մարդկային նույն խոր կսկիծն է արտահայտում հեղինակի մի այլ, ավելի ընդարձակ բանաստեղծություն, որի վերնագիրն է «Սև հուշերից»։ Գր. Ներսիսյանը տեսնում էր ոչ միայն ծանր բեռի տակ տնքող, կյանքը մի կերպ քարշ տվող մարդկանց, այլև նրանց, ովքեր կատաղի կրքով են լցված հինը քանդելու, նորը կառուցելու համար։ Ի դեպ, սույն բանաստեղծությունը նվիրված է Ծուշիի թեմական դպրոցի հանդեսին.

Անցել եմ կյանքի հուզիչ փոթորկով,
Անցել եմ, տեսել սուկ-անագղակակ
Սրտեր՝ որ լի են կատաղի կրքով...
Տեսել եմ մարդիկ՝ տանջված, անպաշտպան,
Տեսել եմ հիվանդ, հյուծված մանուկներ,
Տեսել եմ առույգ ու կայտառ ծերեր,
Մեկին կարեկցել, մյուսին նախանձել,
Երկար տանջվելով ես ետ եմ դարձել²⁸...

Բանաստեղծը չի ուզում գնալ դեպի մահ, այլ ընդհակառակն, ձգտում է ապրել վաղվա օրը կռելու համար։

Նա դրվատում է հեղափոխության մարտիկներին, որոնք հերոսաբար հաղթահարում էին բոլոր խոչընդոտները։ Մութ գիշերվա լուսաբացն ու նոր օրերի գալուստը նա տեսնում էր «կյանքի խորհուրդով» քայլելու, թշնամու դեմ անվախ ու անգիշում մարտերի մեջ։

Եվ իր մի բանաստեղծության մեջ («Նոր աչգ»), որ նվիրել է Հովհաննես Հովհաննիսյանին, գրել է.

Անպարիսպ բանտում անշոթա կապված
Դու հողմահաված... քո տոնն է այսօր...
Մեզը պատուած

Նոր աչգն է ծնում նոր կյանք,
նոր խորհուրդ...
Արյունի ծարավ գազան ոռնոցով
Հին կյանքն է առել իր մահ, իր վախճան...
Դու առաջ գնա կյանքի խորհրդով...
Կովիր ու տանջվիր և անվերջ ապրիր²⁹...

Նա հավատացած էր, որ հեղափոխության հաղթանակի համար նոր մարդիկ կելնեն, շատերը բաց աչքերով կնայեն գալիքին և պայքարը հետզհետե նոր ծավալ կստանա։

Թերթի տպագրած մի քանի ստեղծագործություններում վառ գույներով են մարմնավորվում հատկապես հայրենիքի սերը, հայրենի բնությունը, հարազատ շրջապատը.

Տխուր ու հոգնած, դեմքով արևառ,
Ճանապարհների փոշին ուտերիս,
Քո գիրկը ընկա, մայրենի՝ անտառ,
Համբուր բուրեցիր խոնջացած սրտիս...
...
Մայրենի՝ անտառ, աղբյուր ու գետակ,
Իմ լույս մանկության ջերմ հարազատներ,
Հայրենի վայրեր, դաշտեր ու ձորակ,
Դուք նույնն եք դարձյալ... լոկ ես եմ փոխվել...
Ականջ եմ դնում Ձեր սիրո ձայնին,
Իմ սիրտն է, անտես, ձեր սիրով վառվում.
Սրբազան հուշեր, ախ, վայրեր անգին
Իմ հոգին կարծես նոր կյանք է ստնում³⁰...

Խորեն Բորյանի «Գլուղ» վերնագրով բանաստեղծությունը մի ներքող է աշխատանքի, ազատության և բնության գեղեցկության մասին։

Առանձին հեղինակների ստեղծագործություններում, սյուժետային բանաստեղծություններում և փոքրիկ պատմվածքներում նկարագրվում են մարդկային փոխհարաբերությունները, նահապետական սովորություններն ու ժողովրդական բարքերը։

Թերթի էջերում հրապարակվող ստեղծագործությունները հիմնականում համահունչ էին ժամանակի ոգուն, մի քանիսն աչքի էին ընկնում գեղարվեստական արժանիքներով, լեզվամտածողության բարձր մակարդակով։

²⁷ «Ղարաբաղ», № 8, 1912, հունվարի 29:
²⁸ «Ղարաբաղ», № 9, 1912, փետրվարի 5:

²⁹ «Ղարաբաղ», № 38, 1912, մայիսի 24:
³⁰ «Ղարաբաղ», № 1, 1911, նոյեմբերի 17:

«Ղարաբաղ» թերթի էջերում տպագրվում էին նաև հուշեր, հրապարակահոսական ու ճամփորդական նյութեր: Առանձին հուշերում բնութագրվում էին անվանի մարդկանց անցած ուղին, ցույց տրվում նրանց մանկության և պատանեկության հետաքրքիր դրվագները, կյանքի կարևոր մանրամասները: Այդ տեսակետից ուշադրություն է գրավում Պերճ Պոռոջյանի «Մանկական հուշատետրից» գործը, որը լույս է տեսել «Ղարաբաղ» թերթի 1912 թ. № 11-ում:

Ի դեպ, նշենք, որ Պ. Պոռոջյանի սույն գործը մինչև հիմա տեղ չի գտել հեղինակի ո՛չ «Հուշերում» և ո՛չ էլ «Հուշիկներում»³¹: Այլ կերպ ասած, սա անհայտ մի երկ է, որ տպագրվել է միայն Ղարաբաղի գավառային թերթում: Ի՞նչ նպատակ է հետապնդել հայ մեծ գրողը, ինչո՞ւ է Պ. Պոռոջյանը քրքրել իր հուշատետրը և գրի առել պետքական նյութեր: Սա Սմբատ Ծահագիզի հոբելյանի աղթիվ էր: Անհրաժեշտ էր բնութագրել նրա անցած դժվարին, փշոտ ճանապարհը, մյուս կողմից՝ ցույց տալ այն միջավայրը, ուր ծնվել ու հասակ էր առել հայ գրողը: Անկեղծ սիրով է ներկայացվում Ս. Ծահագիզի դպրոցական տարիների առօրյան, անմեղ մանկությունը հայրենիքում՝ Աշտարակում, ապա արդեն ճանապարհորդությունը Մոսկվա, անդամական ծառայությունը մայրենի գրականությանը և այլն:

Թերթն առանձին հոդվածներում տեսական հարցեր է արծարծում, որոնք մեծ նշանակություն ունեին անհատի և հասարակության փոխհարաբերությունը ճիշտ ըմբռնելու, ժողովրդական շահերը բարձր դասելու, երիտասարդ հասարակական գործիչներ պատրաստելու ասպարեզներում: Արժեքավոր է մասնավորապես «Անհատականության սահմանը» ընդարձակ հոդվածաշարը, որը զետեղվում է «Ղարաբաղի» 1911 թ. № 2—3-ում:

Ինքնանպատակ չէ սրա հրապարակումը: Հայտնի է, որ ռեակցիայի տարիներին մտավորականների մի մասը հիասթափվել էր և կյանքի սուսջխաղացման նշաններ չէր տեսնում: «Այդ բանին ավելի ևս նպաստեցին ետհեղափոխության շրջանում հրապարակ հանված բազմաթիվ գրվածքներ, որոնք անհատականության շունչ ու բուրմունք ունեին: Եվ զարմանալի չէ, որ այդ գրվածքներով սնվող մեր երիտասարդ տարրը

դարձավ անհատականության երկրպագու, յուր համար սեփական խիտնջ ստեղծեց և ներս քաշվելով պարփակվեց ինքը յուր մեջ, դադարեց բննադատության տակ դնել յուր գործողությունները, ավելորդ համարեց յուր անհատականը ու հասարակականը հաշտեցնելու մասին մտածել ու հոգալ: Նա նույնիսկ գերագույն ու առաջնակարգ տեղ եղավ յուր անհատականին, սկսեց ապրել միայն ու միայն յուր բավականությանց համար»³²: Այս հանգամանքը վատ է անդրադառնում ոչ միայն հասարակական կյանքի, այլև «հասարակական հաստատությունների առաջխաղացման վրա»: Բննադատելով այդ, միաժամանակ հիշատակվում են պատմական տարբեր ժամանակահատվածներում հասարակական վիթխարի գործ կատարած այն անհատները, որոնք իրենց ամբողջ կյանքը, եռանդը նվիրաբերել են ընդհանուրի շահերին:

Գալով անհատի դերին, նրա ստեղծագործական կարողությունների գործադրման համամարդկային նշանակությանը, թերթն ընդգծում է անհատի և հասարակության գործողությունների պայմանավորվածությունը, անհատականի և հասարակականի փոխներգործությունը: Այս միտքը հանգեցվում է նրան, որ անհատը անհատ է այնքանով, որքանով որ նա առընչվում է հասարակության հետ, ապրում է այդ հասարակության մեջ, սոցիոլոգիա է հասարակական գաղափարներով, դատարարակում է իր մեջ հասարակականը անձնականից վեր դասելու հատկություն: Թերթը խարազանում է այն անձնավորություններին, որոնք հեռացել են հասարակական կյանքից, չեն մտածում ժողովրդի մասին, անձնականը բարձր են դասում հասարակականից:

Անհատի և հասարակության փոխհարաբերության մասին ասվածը, ընդհանուր դատողությունների շրջանակներում հիմնականում ճիշտ լինելով հանդերձ, այնուամենայնիվ, վերացական ու անորոշ է: Մենք այստեղ գործ ունենք վերացական մարդու գաղափարի հետ, որովհետև անձնավորությունը չի դիտարկվում սոցիալ-տնտեսական հարաբերությունների համակարգում, հստակորեն չի նշվում նրա հասարակական դերի մասին:

Թերթում հաճախ էր գործում «Մամուլ» բաժինը: Այստեղ

³¹ Տե՛ս «Գրական թերթ», № 2, 1968, հունվարի 5:

³² «Ղարաբաղ», № 2, 1911, նոյեմբերի 20:

տպագրվում էին բազմաթիվ ինֆորմացիաներ ստանձին ժողովածուների, արմանախների, ամսագրերի, հանդեսների և թերթերի համարների մասին, բացահայտ խոսք էր ասվում դրանցում տեղ գտած թերությունների, անճշտությունների, գտեհիկ քննադատության ու շահադիտական ակտատումներից բխած ելույթների առթիվ:

«Ղարաբաղը» քննադատում էր նաև անուն հանած պարբերականների, որոնք իրենց էջերում տպագրում էին ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող նյութեր և ըստ արժանվույն մասապակասություն էին վայելում: Դրանցից էր, օրինակ, Տ. Նազարյանի «Աղբյուրը»: Եվ ահա, թերթը քննության է առնում ամսագրի 1912 թ. ապրիլի համարը, ուր մի քանի լավագույն հոդվածների կողքին տեղ էին գտել նաև արժեքազուրկ նյութեր:

Նախ, քննադատվում է այն հոդվածը, ուր տերտերը պատմում է մի օրինակ «Աղբյուրի» բաժնեգին ստանալու և դրա համար ուրախանալու մասին: Գաղափարը ոչնչով չի հիացնում ընթերցողին: Երկրորդ, ամսագիրն իր 135-րդ էջում տպագրում է մի նկար «Չայլամ» ընդհանուր վերնագրով: Սրա տակ գրված է հետևյալ հայտարարությունը. «Դպրոցական մեր բաժանորդ օրհորդներից, որ 25 տողով մինչև մայիսի 25-ը նկարագրի ջայլամին և մարդկությանը տված նրա օգուտն ու վնասը և գրվածքը տպագրվի «Աղբյուրի» մանկական աշխարհում, կստանա մի օրինակ ոգի Հայաստանի պատկերը, շրջանակի մեջ»³³:

«Ղարաբաղը» ամսագրի խմբագրությանը քննադատում է ջայլամի իսկական նկարը չտպագրելու համար. դա ոչ թե ջայլամ էր, այլ բոցահավ (ֆլամինգո), որ ապրում է Միջին Ասիայի լճերում:

Այդ նույն համարում «Աղբյուրը» հրապարակում է Ատլրպետի «Կարա-Մուրգա» հոդվածը: Այն ունի այնպիսի բովանդակություն և գրված է մի ոճով, որ ընթերցողը չի հասկանում, թե ո՞րն է հայ երգահանի մեծությունը, երաժշտական գործերի հմայքը, ո՞րն է Կարա-Մուրգայի ստեղծագործության լեյտմոտիվը: Ուստի «Ղարաբաղը» քննադատում է Ատրպետի հոբելյանական այդ խոսքը:

Գալստային թերթը քննադատական խոսք է ուղղում տըպագիր այն օրգանների հասցեին, որոնք անունով աշխատավորական էին, բայց իրականում՝ ոչ: Այդպիսիներից էին 1910 թվականից Նոր-Նախիջևանում հրատարակվող «Լույս» գրական-հասարակական շաբաթաթերթը, 1911 թ. Մոսկվայում լույս տեսնող «Մարտ» գրական-հասարակական երկշաբաթաթերթը և ուրիշներ: Քննադատությունը սուր էր հատկապես վերջինիս նկատմամբ: Խարազանելով «Մարտի» խմբագիր-հրատարակիչ Արշակ Թումանյանին՝ «Ղարաբաղը» ընդգծում է նրա անփառունակ դերը ոչ միայն պարբերական մամուլի, այլև հայ գրականության մեջ: Ա. Թումանյանը վարկաբեկված անձնավորություն էր և չէր կարող պատշաճ հիմքերի վրա դնել «Մարտը»: Եվ «Ղարաբաղը» աներկբա հայտարարում է. «Եթե ասեմ, որ նրա («Մարտի».— Ս. Ա.) խմբագիրն է իննսունական թվականներին գրական ասպարեզում «հոչակ» ստացած Արշակ Թումանյանը— ինձ թվում է, որ ամեն ինչ ասած կլինեմ: Արշակ Թումանյանին ո՞վ չի հիշում՝ սկսած էջմիածնի վարդապետներից, այս ու այն մեծ քաղաքների տերտերներից, մինչև նույնիսկ այս ու այն հարուստը, որոնց դռները լավ գիտեր մաշել այդ «գրագետ» պարոնը»³⁴:

«Ղարաբաղը» հրապարակյալնորեն քննադատում էր ստանձին թերթերի, որոնք վարկաբեկիչ խոսքեր էին տպագրում սրա-նրա հասցեին, իրենց էջերը լցնում բամբասանքներով ու հայհոյանքներով: Այս մասին թերթը հանդես է գալիս մի քանի առիթներով:

Հարմար առիթներով նշվում է մի շարք հայ պարբերականների բարի ծառայությունը, աշխատավորական բնույթը, որոնք պայքարում են վերացնելու կյանքի արատները: Այս առումով դրվատանքի խոսքեր են ուղղվում 1911—1912 թթ. հաքվում լույս տեսնող «Նոր խոսք» գրական, հասարակական ու քաղաքական երկշաբաթաթերթի հասցեին: Սա մարքսիստական առաջին հայերեն լեզու ամսագիրն էր, որ լույս էր տեսնում Ստ. Ծահումյանի խմբագրությամբ: «Ղարաբաղը» գրում է. «Այս հանդեսը— «Նոր խոսք», թողնում է լուրջ և լավ տպավորություն... 1911 թվականին երևան եկող պարբերականներից լավագույնն է. թե կարդալու և թե խորհրդածելու

³³ «Աղբյուր», № 4, 1912 թ.:

³⁴ «Ղարաբաղ», № 4, 1911, նոյեմբերի 27:

նյութեր է տալիս և մանավանդ-հակառակ մի քանի՝ ոսկու քը- սակների առաջ գետնաքարը սողոսկող թերթերի— գիտե ձաղ- կել այն պնակալեզներից, որոնք իրենք իրենց արտացավ «խնա- մակալներ» են հոչակում հայ աշխատավորի համար, սակայն ոչ այլ ինչ են, եթե ոչ՝ կամ հարստահարողների գծուծ սպա- սավորներ, և կամ նոր սկսող կեղեքիչներ»³⁵:

«Ղարաբաղը» որոշ չափով բարի խոսքեր է ասում «Մա- մուլ» շարքաթերթի մասին. «Լուրջ, ողջամիտ հայացքներով և համակրելի ուղղությամբ մի հրատարակություն է դա, որին ամենայն իրավամբ զգվեցրել է մեր մտավոր կյանքի ճահճա- յին մթնոլորտը... Նա գայրույթով նկատում է,— շարունակում է թերթը,— որ ռուսահայերի կենսական և կարևոր հարցերը լոռացության են տրվում մեր մամուլի կողմից, մինչև երկար սյունակներ են նվիրվում՝ կա՛մ խունկ բխելու համար ոսկյա հորթի առաջ և կա՛մ իրար հայհոյելու»³⁶:

Ի դեպ, այս պարբերականին ակտիվորեն է աշխատակ- ցում հայտնի երգիծաբան Աշոտ Աթանասյանը («Սալման» ծածկանվամբ), մի մարդ, որը քիչ ծառայություն չունի հայ պարբերական մամուլի զարգացման գործում: Նա է հրատա- րակել «Աշխատանք» (Թիֆլիս, 1906), «Նոր աշխատանք» (Թիֆլիս, 1907), «Գլուղատնտես» (Թիֆլիս, 1909—1917) և այլ առաջադեմ պարբերականները:

«Մամուլ» խորագրի տակ գետեղված նյութերը պատմում էին ոչ միայն Ռուսաստանի հայաբնակ վայրերում, այլև ար- տասահմանում լույս տեսնող տպագիր օրգանների մասին, փոր- ձեր էր արվում ցույց տալ դրանց քաղաքական ուղղությունը:

Հայ պարբերականների մասին խոսելիս, մի շարք դեպ- քերում «Ղարաբաղ» թերթն ինքն էր ընկնում ծայրահեղություն- ների մեջ, անտեսում գնահատումների զուսպ տոնը: Հայ մա- մուլի պատմության մեջ անջնջելի հետք է թողել «Գարուն» գրական-քննադատական տարեգիրքը, որը լույս էր տեսնում 1910—1912 թթ., Մոսկվայում՝ Վահան Տերչանի, Պողոս Մա- կինցյանի և Ցոլակ Խանգաղյանի խմբագրությամբ: Հրատա- րակված երեք գիրքն էլ, որոնք բավականին ծավալուն են, բովանդակում են արժեքավոր շատ նյութեր, գրականագիտա-

³⁵ «Ղարաբաղ», № 4, 1911, նոյեմբերի 27:

³⁶ Նույն տեղում:

կան հետաքրքիր մտքեր, օբյեկտիվ գնահատականներ մեր ա- ռանձին գրողների ստեղծագործությունների մասին: Զետեղ- վում էին նշանավոր գրականագետների, ժողովրդի շահերին նվիրված ականավոր գործիչների հողվածները, որոնք հիմնա- կանում ճիշտ դիրքերից էին ելնում, գրողին գնահատում էին սանդղջասկա՝ հաշվի առնելով նրա ստեղծագործությունների ոչ միայն գաղափարական, այլև գեղարվեստական արժանիք- ները:

Երրորդ գիրքը (1912 թ.), որ բացվում է Կ. Կոսիկյանի «Հանճարեղ սիրտ» հողվածով, նվիրված է Խաչատուր Աբով- յանին: Հեղինակը պատշաճն է հատուցում հայ մեծ լուսավոր- չին, վերլուծում է նրա ստեղծագործությունները, հրապարակ հանում կյանքի կարևորագույն դրվագները: Կարդում ենք. «Եվ այդ ծագող արշալույսի առաջին գուշակը, այդ վերածնության կարասկետը, անկասկած, Խ. Աբովյանն է, մի գրող, որ իր ինքնատիպ ստեղծագործությամբ եզակի տեղ գրավեց մեր նո- րածիլ գրականության մեջ» (էջ 10):

Կանգ առնելով կյանքի ու գործունեության մի շարք էա- կան հանգամանքների վրա, հողվածի հեղինակը շարունակում է. «Խ. Աբովյանի կյանքը մի բուն ձգտում է դեպի վեհն ու ազնիվը: Դա մի գաղափարական վեպ է, մտքի և զգացմունքի անդուլ աշխատանք: Այսպես էր և նրա գրական գործունեու- թյունը՝ ինքնատիպ գաղափարական, զգացմունքների և գույ- ների մի լայնածավալ շտեմարան» (էջ 19):

Սակայն Կ. Կոսիկյանը փորձում է տեղ-տեղ սառը խոսք ասել Խ. Աբովյանի հասցեին՝ մեղադրելով նրան, մասնավոր- րապես, պարսկատյացության մեջ:

Այդ նույն համարում է գետեղված Ալ. Մարտունու (Ալ. Մյասնիկյանի) «Հ. Հովհաննիսյանի և Ալ. Ծատուրյանի բա- նաստեղծությունների հասարակական արժեքը» հողվածը, որն աչքի է ընկնում բարձր գաղափարայնությամբ, անվիճելի գնա- հատականներով, գրականագիտական վերլուծումներով: Ալ. Մյասնիկյանը ցույց է տալիս երկու գրողների ստեղծագործու- թյունների հասարակական արժեքը, նշում դրանց գաղափա- րական ու գեղարվեստական առանձնահատկությունները:

Ուշագրավ են Ալեքսանդր Ռուբենու («Մմբատ Ծահագիգ»), Պողոս Մակինցյանի («Դիմագծեր») և ուրիշների հողվածները, որոնցում մեծ մասամբ ճիշտ են վերլուծվում հայ գրողների

գեղարվեստական գործերը, թեև գնահատականների մի մասը վիճելի է և այժմ դժվար է դրանց հետ համաձայնել:

Բայց մի թե այդքան իրավունք է տրվում «Ղարաբաղ» թերթին վրդովմունքի ծավալում խոսք գրելու «Գարունի» երրորդ գրքի մասին, նշելով, որ այնտեղ զետեղված հոդվածների հեղինակները խոսքները «մեկ արած արշավանք են սկսել հայ գեղարվեստական գրականության վրա»³⁷: Հայ գրողների նրկատմամբ քննադատական որևէ արտահայտություն գալստալին թերթն ընդունում է խոր գայրություն և խիստ դժգոհություն է հայտնում բոլոր քննադատների նկատմամբ առանց կոնկրետ մոտեցման: Իհարկե, լավ է, որ թերթը պաշտպան է կանգնում հայ գրողներին, բայց տվյալ դեպքում այն պետք է իր խոսքն ասեր ոչ միակողմանիորեն:

Գալստալին օրգանի էջերը տրամադրվում էին նաև արտասահմանյան լուրերի հաղորդմանը: Հետաքրքիր էին հրապարակվող գրույցները մասնավորապես գյուղատնտեսական, ստոլջապահական և այլ թեմաներով:

Ընթերցողներին տեղյակ էր պահվում Ծուշիի նորությունների, իրադարձությունների: Պարբերաբար ինֆորմացիաներ էին տրվում այն մասին, թե առանձին մարդիկ բարեգործական ինչ աշխատանք են կատարում հայրենի երկրի և ժողովրդի համար: Հանդիպում ենք, օրինակ, այսպիսի փաստի. «Հաստատ աղբյուրից տեղեկանում ենք, որ թեմական դպրոցի 75-ամյա հոբելյանի առթիվ հայ հայտնի հրապարակախոս-պատմագետ պ. Լեոն ուրախությամբ է հանձն անել գրելու իր հայրենիքի կրթության այդ յոթանասունհինգամյա հաստատության պատմությունը»³⁸:

Թերթը հաղորդումներ էր տպագրում բնակչության երկաթուղային և տրանսպորտի այլ միջոցներով կատարվող ճանապարհորդությունների, Բաքվում կամ Թիֆլիսում հրատարակված նոր գրքերի, բացված կուլտուր-լուսավորական օջախների մասին:

Ինչպես ժամանակի մյուս թերթերին, այնպես էլ «Ղարաբաղին» աշխատակցում են ոչ միայն գալստի տարբեր շրջան-

³⁷ «Ղարաբաղ», № 33, 1912, մայիսի 17:

³⁸ «Ղարաբաղ», № 34, 1912, մայիսի 10:

ներից և գյուղերից, այլև Բաքվից, Թիֆլիսից, Կիևից, Էջմիածնից, Ղախանից և այլ տեղերից:

Թերթի ճանապարհը հարթ չէր. այն լույս էր տեսնում մեծ դժվարություններով: Սրանով հանդերձ, այն քիչ դեր չի խաղացել Ղարաբաղի հասարակական, մշակութային կյանքում:

Նրա համարներն ավելի բովանդակալից և գաղափարական բարձր մակարդակով էին լույս ընծայվում հատկապես նշանավոր գրող Վրթանես Փափագյանի խմբագիր եղած ժամանակ: Նա ուշադրություն էր դարձնում այն բանին, որպեսզի հրապարակվող նյութերը լինեն բազմաժանր և իրենց մեջ բուլանդակեն կենսական հարցեր կյանքի այս կամ այն բնագավառի մասին: Ծիշտ է, թերթում չի եղել Վրթանես Փափագյանի ստորագրությունը, բայց անհերքելի փաստեր կան, որ 1911 և 1912 թթ. մի որոշ ժամանակ «Ղարաբաղը» լույս է տեսել հայ գրողի ղեկավարությամբ: Ահա այդ հաստատող երկու փաստ:

Գարեգին Լևոնյանին հղած մի նամակում Վրթ. Փափագյանը գրում է. «Սիրելի՛ պ. Լևոնյան.

Ձեզանից դեռևս ո՛չ ես եմ ստացել «Գեղարվեստի» 4-րդ գիրքը, ո՛չ էլ «Ղարաբաղի» խմբագրությունը: Եթե ուզում եք, որ ռեկլամ լինի գրքի մասին և տարածվի, ինձ թվում է, որ «Ղարաբաղին» էլ պիտի ուղարկեք:

Այս առիթով խնդրեմ մի կարծիք, որ ես եմ խմբագրում թերթը, ես և թերթը միևնույն ենք...»³⁹:

Թեմական դպրոցի տեսուչ, բժիշկ Ն. Երամիշյանը, որի ստորագրությամբ էր լույս տեսնում «Ղարաբաղ» թերթը, նույնպես վկայություն է տալիս այն մասին, որ Վրթ. Փափագյանը եղել է թերթի խմբագիրը: «Մշակի» 1912 թ. հոկտեմբերի 6-ի համարում հրապարակված մի ինֆորմացիայում («Ղարաբաղ» թերթի խմբագրի դեմ դատ» վերնագրով) հայտնվում է, որ բժ. Երամիշյանը միայն նոմինալ կերպով է եղել խմբագիր-հրատարակիչ, իսկ փաստորեն թերթը խմբագրել է Վրթանես Փափագյանը:

1912 թ. հունիսի 29-ի համարում թերթը մի առիթով հաստատում է, որ «Ղարաբաղի» խմբագիրներից էր նաև Միսոն

³⁹ «Բանբեր Հայաստանի արխիվների», № 3, 1964, էջ 35:

Տեր-Մինասյանը⁴⁰, մի ճեմարանավարտ երիտասարդ, որ զբաղվել է ուսուցչությամբ և 1910 թվականին Գորիսում հրատարակել «Գալստ» թերթը:

«Ղարաբաղի» դերը գավառի պարբերական մամուլի պատմության մեջ, ինչպես նշեցինք սկզբում, սահմանափակվում է հիմնականում մշակութային հարցերի լուսաբանման շրջանակներում: Արժարժված հարցերը կարևոր էին ժամանակի համար և որոշ օգտակար դեր խաղացին երկրամասի լուսավորության զարգացման գործում:

ԱՐՎԵՍՏԻ ՈՒԺՈՎ

Հեղափոխության զարթոնքի ժամանակաշրջանում Ղարաբաղում որոշակի աշխատանք էր կատարվում նաև մշակութային կյանքի բնագավառում: Հայ և այլազգի անվանի դերասաններն իրենց ներկայացումներով շարունակում էին գեղարվեստական հաճույք պատճառել լեռնաշխարհի մարդկանց:

Ծիշտ է, Ն. Խանդամիրյանի թատրոնի շենքն իր ձևավորումներով հրդեհի բաժին դարձավ 1905 թ., բայց շէին դադարում բեմադրությունները Ծուշիի թեմական հոգևոր դպրոցի և Մելիք-Հայկազյանի տան դահլիճներում, իսկ ամառային ասիաներին՝ քաղաքային ակումբում:

1910-ական թվականներին Ծուշիի դերասանական ամենասիրված խմբերից մեկը Համո Խարազյանի արվեստակիցներն էին: Այդ խմբում էին շնորհալի դերասաններ Մանուշարյան-Խարազյանը, Նիկոնելը, Ամերիկյանը, Մուրադյանը և ուրիշներ:

Ծուշեցիները ցանկանում էին հաղորդակից լինել ոչ միայն հայ և եվրոպական դասական դրամատուրգիային, այլև բեմականացված տեսնել ուս գրողների ստեղծագործությունները:

Ծուշիի աշխատավոր զանգվածներն ուրիշ պահանջներ էլ ունեին թատրոնի նկատմամբ: Նրանք ցանկանում էին թատրոնները դարձնել ժողովրդական, այսինքն արվեստի այնպիսի օջախներ, որոնք իրենց ստորյա նյութը դարձնեն զանգված-

⁴⁰ Ժամանակակիցները պատմում են, որ նա մահացել է «Ղարաբաղի» խմբագրությունում՝ սրտի կաթվածից:

ների կյանքը, նրանց կենսական խնդիրները: Այս առթիվ Ծուշից օր. Վիկտորյա Դավթյանը գրում է. «Գլխավոր խնդիրը մեզ համար այն է, որ մեր թատրոնի վարիչները պետք է շնորհք ունենան թատրոնը հայ հասարակության, մանավանդ գավառացիների համար անհրաժեշտ պահանջ դարձնել: Նախ՝ մեր թատրոնը իր ռեպերտուարով համեմատաբար շատ քիչ է շոշափում հասարակության մեծամասնության համար ստորյա կենսական կարևոր խնդիրներ և ապա այնպես թանկ է նրստում այցելուներին, որ երբեք երազել անգամ չի կարող ժողովրդական թատրոն դառնալ, ինչպես և անհրաժեշտ պահանջ դառնալ մեր հասարակության մեծամասնության համար»¹:

Ծուշեցի օրիորդի բարձրացրած հարցը միանգամայն տեղին էր՝ լուրջ ուշադրություն դարձնել պիեսների ընտրությանը և ապա այնպես ներկայացնել, որ թատրոնն ուղղակի դառնա պահանջ:

Առաջադիմական որոշ քայլերի էր դիմում 1914 թ. Ծուշիում մի քանի թատերասերների նախաձեռնությամբ կազմակերպված Թիֆլիսի հայ դրամատիկական ընկերության ճյուղը: Արցախում դերասանական մշտական խումբ չկար, հիմնականում հանդես էին գալիս հյուրախաղերի եկած դերասանները և տեղացի թատերասերները:

Մի խոսքով, հեղափոխական վերելքի հետ միասին գավառում որոշ աշխուժացում էր նկատվում մասնավորապես թատերական արվեստի բնագավառում: Մի կողմից կարգավորվում էին թատրոն-ակումբային շենքերը, մյուս կողմից բեմադրություններ էին կազմակերպվում հայերեն, ռուսերեն լեզուներով: Բեմադրություններով զբաղված դերասանների մասին թատերախոսականներ էին տպագրում ոչ միայն տեղական, այլև Բաքվում և Թիֆլիսում լույս տեսնող թերթերը:

Ավելին, «Ղարաբաղ» թերթը վրաց մամուլից արտատպում էր թատերախոսականներ հայ գրողների դրամատիկական գործերի մասին: Հատկապես ուշագրավ էր Վրթ. Փափազյանի «Ժայռը» պիեսի մասին տպագրված հոդվածը: Թերթը հայտնում էր, որ «Ժայռը» թարգմանվել է վրացերեն և բեմադրվել Թիֆլիսի վրացական թատրոնում: Պիեսի բեմականացումը արժանացել է վրացական թերթի ուշադրությանը: Եվ 1911 թ. նո-

¹ «Մշակ», № 151, 1914, հուլիսի 12:

լենքերի 24-ի համարում «Ղարաբաղը» թարգմանաբար տպագրում է վրացական «Մնաթորի» թերթի խոսքը: Այնտեղ սսված է, որ վրացիների և հայերի կյանքը ընթանում է տնտեսական ու քաղաքական միևնույն պայմաններում, սոցիալական միևնույն շրջանում: Հասարակական հարաբերությունները նույնպես երկու ժողովուրդների մոտ զարգացել են միատեսակ հորի վրա: «Նոր անողոք ու անհաղթ ուժը՝ կապիտալը կոլում և ոչնչացնում է ֆեոդալական տարրերի իրավունքները, սովորությունները, ծեսերը, կարծիքները և հեռացնում է նրանց երկրից:

Սկսվում է կապիտալի անասան, ամուր և հաղթական ընթացքը, և ահա այս օտար ու խիզախ հյուրը այցելել է վրացիների և հայերի խոլ գյուղերին էլ: Կապիտալը բնակություն է հաստատել գյուղերում և սկսել խոր ու լայն արմատներ օգել...»:

Այսպես է պատկերված ժամանակաշրջանն իր այլևայլ կողմերով Վրթ. Փափազյանի «Ժայռը» դրամայում, շարունակում է թերթը: Մամուլն իր ուրախությունն է արտահայտում վրացիների կողմից հայ պիեսի բեմադրության համար, ճիշտ է գնահատում «Ժայռում» բարձրացված հարցերը, Գրիգոր աղային դիտում ոչ միայն իբրև հայ, այլև վրացի կեղեքիչ, «որ ժողովրդի մարմնին է կպել և ազահությանը ծծում է նրա երակների արյունը...»: Այնուհետև մեկ առ մեկ բնութագրվում են գործող անձինք, նշվում դերակատարների խաղարվեստը, որոնցից մի քանիսը կարողացել են ռեալիստական գունավորմամբ ներկայացնել հեղինակի մտահղացումները:

«Ղարաբաղ» թերթը ոչ միայն հիացական, այլև քննադատական նյութեր է արտատպում մամուլի տարբեր օրգաններից:

Որոշ չափով կարգավորվում է Ղարաբաղի ակումբների աշխատանքը: Այս մասին հանգամանակից տեղեկություններ է հայտնում տեղական մամուլը: «Ծուռու կյանքը 1911 թ.» վերնագրի տակ ինֆորմացիայում «Ղարաբաղ» թերթը գրում է. «Համեմատաբար ավելի եռանդուն գործ է կատարվել քաղաքային ակումբանոցում: Այս հաստատությունն ունենալով իր աչքի զարնող բացասական կողմերը, միակ տեղն է, որ զվարճություններ են արվում ժողովրդին: Այս տարի բարեկորգման է ենթարկվել ակումբանոցի ամստային շենքը... Ամստվա ըն-

թացքում հայ դրամատիկ խմբի կարևոր ուժերից երեքը — տիկ-Մելիքյանը, Ավետիքյանը և Աղայանն աչտեղ էին և մի շարք ներկայացումներ տվին»²:

1910—1912 թթ. Ծուռի քաղաքային ակումբում հաճախակի էին համերգներ լինում անուն հաճած երգահանների և երգիչների ուժերով: Դպրոցականների կազմակերպած ցերեկույթները և երեկույթները միշտ ուղեկցվում էին գեղարվեստական բաժիններով: Բանաստեղծությունների արտասանություններից, ստանձին ստեղծագործությունների բեմականացումից բացի, նրանք մեծ սիրով կատարում էին հայկական ժողովրդական երգեր:

Քաղաքային ակումբում անցկացվում էին կուլտուրական այլ միջոցառումներ. հանդիսավոր պայմաններում նշվում էր այս կամ այն գրողի կամ արվեստագետի հոբելյանը կամ պատմական նշանավոր տարեթիվ. ստեղծագործական երեկոներին հանդես եկող առաջադեմ ուսանողները կարդում էին իրենց բանաստեղծությունները և փոքրիկ պատմվածքները, ինչպես նաև հատվածներ սիրած պոեմից կամ վեպից:

1912 թ. հոկտեմբերին Ծուռիում մեծ շուքով տոնվեցին հայ տառերի գյուտի 1500-ամյա և հայ տպագրության 400-ամյա հոբելյանները: Այս առթիվ զեկուցումներից բացի կազմակերպվեցին գեղարվեստական բաժիններ՝ բարձր դասարանների աշակերտների ու աշակերտուհիների մասնակցությամբ:

Վերելքի տարիներին անուշադրության չէր մատնված նաև գրադարանների աշխատանքը: Համեմատաբար կանոնավոր էր գործում Կովկասյան հայ բարեգործական ընկերության Ծուռի տեղական ճյուղի գրադարան-ընթերցարանը: Նա հարստացել էր հարյուրավոր գրքերով, ստանում էր պարբերաբար լույս տեսնող հայերեն, ռուսերեն թերթեր: Ծուռիի հոգևոր տեսչության տպարանը շարունակում էր տպագրել և՛ ուսումնական, և՛ գիտական-գեղարվեստական գրքեր:

Մերքում Բաբաջանյանի և Բագրատ Տեր-Սահակյանի տրպարանները, հիմնականում ծառայելով թերթերի տպագրության համար, լույս էին ընծայում նաև գրքեր ու գրքույկներ: Նշենք դրանցից մի քանիսը. Գր. Տեր-Պողոսյան, «Լեռնականք Ա. փորձ կովկասյան ժողովուրդների համեմատական ազգագրու-

² «Ղարաբաղ», № 2, 1912, հունվարի 6:

թյան Ուրուսի», Ծուշի (Մ. Բաբաջանյանի տպարան), 1910 թ., Գր. Տեր-Պողոսյան, «Լեռնականք Բ. փորձ կովկասյան ժողովուրդների համեմատական ազգագրության, թագավորյան ազգագրություն», Ծուշի (Մ. Բաբաջանյանի տպարան), 1912 թ., Գր. Տեր-Պողոսյան, «Հովոցի Եղոն», պատմվածք Բալախանու կյանքից. հիշատակարանի փոխարեն, Ծուշի (Մ. Բաբաջանյանի տպարան), 1911 թ., Վ. Փափազյան, «Զրույցներ», Ծուշի (Բ. Տեր-Սահակյանի տպարան), 1911 թ., Գր. Ներսիսյան, «Խորտակված հույսեր», Ծուշի (Մ. Բաբաջանյանի տպարան), 1912 թ., Գր. Տեր-Պողոսյան, «Լևոն Ծանթի «Հին աստվածները» և Ստեփանոս Վանականի հիշատակարանը», Ծուշի (Մ. Բաբաջանյանի տպարան), 1913 թ., Միրզա Տեր-Սարգսյան, «Կաթիլներ», Ծուշի (Մ. Բաբաջանյանի տպարան), 1914 թ., Լևոն Վարդապետյան, «Տառապանքի արցունքներ», Ծուշի (Մ. Բաբաջանյանի տպարան), 1915 թ. և այլն:

Այս գրքերի և գրքույկների հրատարակությունը ինքնաճախարակ չէր. գեղարվեստական գործերում մի կողմից ցույց էին տրվում ռեակցիայի տարիների դաժանությունը, մարդկանց արժանապատվությունն ու վեհ հոգին, միաժամանակ խորտակված հույսերը, մյուս կողմից նշմարվում էին գալիքի պայծառ լույսերը: Առանձին գիտական աշխատություններ հիմնականում նվիրված էին հայ ժողովրդի պատմությանը, ազգագրությանը:

Թեև Գր. Ներսիսյանի «Խորտակված հույսերի» առանցքը կազմում են հեղինակի թախիծն ու խռով հոգին, բայց, այնուամենայնիվ, կան ակնարկներ այն մասին, որ սուսջիկայում փոթորիկ կլինի, և այն կերպի անշեշ սիրով: Ահա պոեմի նախերգանքը.

Սև տարիների, խենթ որոնումի
Մենքինչ կհիքըն իր դպուկ ճակատին՝
Նա ծովն է իջնում... ճըրա հեգ հոգին
Կարոտ է հսկա հողմի մըրըրկին...

Եվ ալիքները խփում են նավին,
Գալիք փոթորկի գույժն երգելով.
Հանկարծ ոռնում է անդորմ թամին՝
Ջինչ ալիքներից անդունդ կազմելով...

Եվ հսկա ծովի սեգ փրփուրների
Մենում անդունդի ճերմակ եզերքով
Մահում է նավը... կարոտ մըրըրկի
Նրա հեգ հոգին թնդում է երգով...

Լևոն Վարդապետյանի «Տառապանքի արցունքներ» փոքրիկ ժողովածուն ընդգրկում է 1912, 1913, 1914 թթ. Ծուշիում գրած բանաստեղծությունները, որոնց մեջ եղանակ են ստեղծում հատկապես «Աշնան երգերից», «Գարուն», «Աշնան գիշեր», «Ընկերներիս» ստեղծագործությունները: Հիմնական լեյտմոտիվը ազատության համար պայքարն է, նոր արշալույսին հասնելու տենչը:

Անուն չվաստակած մի քանի հեղինակների ստեղծագործությունների փոքրիկ ժողովածուներում էլ որոշ չափով մարմնավորվում են դաժան ժամանակաշրջանի գյուղի մշակների անմխիթար կացությունը, խավարի ճիրաններում դեգերող մարդկանց տրամադրությունը:

Սովար հատոր է կազմում Միրզա Տեր-Սարգսյանի «Կաթիլներ» ժողովածուն, ուր ամփոփված են հեղինակի 1884—1914 թթ. տպագրված և անտիպ պատմվածքները, զրույցները: Սրանց մեծ մասը ժամանակին լույս է տեսել «Նոր Դար», «Մշակ», «Բաքվի ձայն», «Ղարաբաղ» և ուրիշ պարբերականներում:

Գեղարվեստական տեսակետից հեղինակի գործերը քրննություն չեն բռնում և չեն կարող այսօր բավարարել ընթերցողների գեղագիտական պահանջները: Բայց որոշ պատմըվածքներում Մ. Տեր-Սարգսյանն արժարծում է կնոջ արժանապատվության, ժողովուրդների բարեկամության, ազնվության և մարդասիրության հարցերը: Նրա հաջողված պատմվածքներից են «Մի անցք», «Արծիվ կամ վանդակ», «Սև թաշկինակը», «Կարկուտը» և այլն:

Ծուշիում լույս տեսած գրքերը անուշադրության չէին մատնելվում պարբերական մամուլի կողմից: Առանձին մեծ ու փոքր գրախոսություններում ու անոտացիաներում փորձ էր արվում երևան հանել դրանց լուսավոր և սովերոտ կողմերը: Գրքերի մասին ջերմ տողեր է գրում մասնավորապես «Հանդես ամսօրյան»: Գր. Տեր-Պողոսյանի «Լեռնականքի» առաջին գրքի մասին կարդում ենք. «Կովկասյան լեռնաբնակ ժողովրդյան համեմատական» ազգագրության ուսումնասիրությանց Ա. պրակն է, գոր մեզի կներկայացնե Գր. Տեր-Պողոսյան՝ իբրև նախապատրաստողական փորձ մը նույն ազգաց իսկական ազգագրության: Առաջին պրակեն կը տեսնվի գործնականապես թե հայ ազգագրության համար անչափ կարևոր է շրջակա՝ կով-

առաջին համարը տպագրվեց 1911 թվականի հունիսի 9-ին: Չորս փոքրածավալ էջերից բաղկացած թերթը լույս էր տեսնում շաբաթը երկու-երեք անգամ: Առաջին 18 համարներում թերթի ճակատի մոտ գրված էր. «Ս. Պետերբուրգի հեռագրական գործակալության հեռագրերով»: Այս նշանակում էր, որ «Շուշինսկի լիստոկը» պարբերաբար հրատարակում էր Պետերբուրգից տրվող հեռագրերը:

«Շուշի, հունիսի 9-ին» վերնագրով անդրանիկ խմբագրականում թերթը հայտնում է, որ այն լույս է ընծայվում շատ դժվարին պայմաններում, երբ բացակայում են կարող ուժերը, անմխիթար վիճակում է տպագրական գործը, գրաշարներ չըկան և այլն:

Թերթի լուսաբանման շրջանակները նեղ էին: Մի քանի խորագրերի տակ (ինչպես՝ «Մեր թղթակիցները», «Ռուսաստանում», «Տեղական խորհիկա», «Թատրոն և արվեստ» և այլն) թերթն իր ընթերցողներին էր հասցնում առանձին նորություններ, հաղորդագրություններ Թիֆլիսից, Բաքվից, Ելիզավետպոլից և ուրիշ նահանգներից: Որոշակի տեղ էր հատկացվում կուլտուրայի, գրականության, դպրոցական հարցերին:

«Թատրոն և արվեստ» բաժնում տպագրվող նյութերը պատմում էին գալստի մշակութային ձեռնարկումների մասին: Օրինակ, հունիսի 19-ին ծանուցվում է, որ Շուշիում կկայանա Ս. Դեմուրյանի և ուրիշների համերգը:

Առանձին նյութեր են տպագրվում հայ գրողների մասին: Հունիսի 23-ի համարում³, Ղազարոս Աղայանի մասին հրատարակված հոդվածում հեղինակը շատ բարձր է գնահատում գրողի դերը մայրենի գրականության զարգացման գործում: Ընդգծվում է նրա հասարակական գործունեությունը և՛ որպես դաստիարակի, և՛ որպես մանուկների բարեկամի: Հոդվածում կարդում ենք. «Աղայանը կապրի, քանի դեռ գոյություն ունի հայկական դպրոցը, քանի մայրենի լեզուն հնչում է հայ դպրոցականի շուրթերից»:

Թերթում հակիրճ հաղորդումներ են տպագրվում Ղարս-

Մամուլում հանդես էր գալիս ոչ միայն «Շ. Ա. Մելիք-Ղարագյուզով», այլև «Շ. Մ.-Կ.» և այլ ստորագրություններով:

³ Թերթը Ղազարոս Աղայանին անդրադառնում է նաև 1911 թ. հունիսի 3-ի համարում:

բաղի բնակավայրերի, աշխարհագրական դիրքի, բնակչության կազմի, զբաղմունքի մասին, ընթերցողներին ծանոթացնում հայրենի երկրի պատմական անցյալի որոշ դրվագների հետ:

«Արտասահմանում» խորագրի տակ երբեմն տրվում էին նյութեր արտասահմանի հայերի կյանքից: «Հայերը Հնդկաստանում» վերնագրով հաղորդագրության մեջ պատմվում է Կավկասայում գործող հայկական կոլեջի և այն մասին, որ ընթացիկ տարում՝ 1911 թվականին, այնտեղ կընդունվի 60 աշակերտ:

Առանձին ինֆորմացիաներում փորձ է արվում ընթերցողներին ծանոթացնել արտասահմանում լույս տեսնող պարբերականներում տպագրված նյութերի բովանդակությանը և քաղաքական ուղղությանը: Բայց այս արվում էր անսխառտ և ոչ կայուն սկզբունքով:

«Շուշինսկի լիստոկի» էջերում հրատարակվող «Բժշկի զըրույցները», ֆիզկուլտուրայի և մարդու գեղագիտական դաստիարակության մասին եղած նյութերը որոշակի հետաքրքրություն են ներկայացնում՝ ժամանակի պայմանները հաշվի առնելով: Թերթի նյութերը հիմնականում հաղորդումներ, ինֆորմացիաներ էին՝ գրված ոչ հարուստ փաստերով, բնորոշ օրինակներով:

Նրա վերջին համարը⁴ լույս է տեսնում 1911 թվականի հոկտեմբերի 23-ին: «Շուշինսկի լիստոկին» ակտիվորեն աշխատակցում էին և՛ հայեր, և՛ թաթարներ, և՛ ռուսներ: Ծիշտ է, թերթը որոշ աշխատանք է կատարում մասնավորապես տեղական և արտասահմանյան կյանքի առանձին հարցերի լուսաբանման տեսանկյունից, բայց նրա էջերում չեն տպագրվում քաղաքական սուր բնույթի հոդվածներ ու թղթակցություններ, չեն բացահայտվում տնտեսական ու մշակութային կյանքի հետամնացության հիմնական պատճառները, քննադատական խոսք չի ասվում նրանց հասցեին, ում թողտվությամբ կատարվում էին հանցագործություններն ու կամայականությունները: Այլ կերպ ասած՝ «Շուշինսկի լիստոկի» արժեքը միայն գալստի տնտեսական ու հոգևոր կյանքի մի քանի բնագավառների լուսաբանման մեջ է: Ընթերցողները թերթի էջերից չէին

⁴ «Շուշինսկի լիստոկի» 37 համարները պահպանվում են Մոսկվայի Լենինի անվան պետական գրադարանում:

ստանում իրենց հուզող հարցերի պատասխանը: Այսբանից հետո պարզ է, որ նա իր էությունը լիբերալ-բուրժուական օրգան էր և չէր կարող բացահայտ խոսք ասել իր տերերի դեմ:

Ռուսական երկրորդ թերթը «Շուշինսկայա ժիզնը» էր, որի առաջին համարը լույս տեսավ 1913 թ. հունիսի 21-ին: Առաջինի համեմատությամբ «Շուշինսկայա ժիզնը» հրատարակվում էր կանոնավոր, ուներ լույս ընծայման հատուկ օրեր (հինգշաբթի, ուրբաթ և կիրակի):



Անդրանիկ խմբագրականում («Շուշի, 21-ը հունիսի») ուսերեն օրգանը իր խոսքն է ուղղում ընթերցողներին՝ հավաստիացնելով, որ կհրապարակի բազմաթիվ նյութեր երկրի կարևոր քաղաքական իրադարձությունների, երևույթների մասին, կձգտի նոր ձևերով լուսաբանել աշխատավորների կյանքը, մտահոլացումները և կելնի միայն ճիշտ դիրքերից: Նորաստեղծ օրգանը հայտնում է նաև, որ լինելով առաջադիմական, կպայքարի վերացնելու կյանքի արատները: Բայց հենց սկզբից էլ նկատելի է, որ նրա նպատակներից դուրս է քաղաքական հարցերի լայն լուսաբանումը: Թերթի կարծիքով, եթե գալստի մտավորականները գործեն միասնաբար, ապա հնարավոր կլինի ծաղկեցնել ոչ միայն հոգևոր, այլև տնտեսական կյանքը:

Թերթը լույս էր տեսնում⁵ այն ժամանակաշրջանում, երբ շարունակվում էր համաշխարհային իմպերիալիստական պատերազմը: Ծիշտ է, «Շուշինսկայա ժիզնը» առանձին ինֆորմացիաներ է տալիս ռազմաճակատներից, գրում ընդհանրապես պատերազմի աղետաբերության և վնասակարության մասին, բայց ոչ մի խոսք չի ասում ընթացիկ պատերազմի համաշխարհային բնույթի և զավթողական էության մասին, ընդհակառակն, տեղ-տեղ փորձում է հավատացնել ընթերցողներին, թե պատերազմը տարվում է ժողովրդի, հայրենիքի համար:

Ռուսական թերթի էջերում ավելի շեշտված են հնչում պատերազմը հաղթանակով ավարտելու կոչերը: Ոչ միայն նման կոչերի, այլև շատ հարցերի լուսաբանման մեջ թերթի խոսքը համոզիչ չէր և չէր կարող որոշակի ազդեցություն ունենալ ընթերցողների վրա: Չհրապարակվեցին նաև այնպիսի հոդվածներ, որտեղ պարզաբանվեին պատերազմների բնույթը, ծագման պատճառները, իմպերիալիստների քաղաքականության էությունը և այլն:

Թերթը խոսք չէր ասում պատերազմի պատճառով Ղարաբաղի աշխատավորության ծայրահեղ վատ վիճակի մասին, այն մասին, որ գյուղական տնտեսությունները գրեթե լիովին զրկվել էին աշխատող ձեռքերից: «Շուշինսկայա ժիզնը», անշուշտ, տեղյակ էր, որ Շուշիի գալստի մի շարք հակակամ գյուղերի տղամարդկանց ճնշող մեծամասնությունը մոբիլիզացված էր, և աշխատունակ շատ քիչ տղամարդիկ էին մնացել տնտեսության մեջ: Աներևակայելի չափերի էր հասել կենսական մթերքների գինը: Շուշիի շուկայում գրեթե բոլորովին հաց չէր երևում, և հացի փոխ առջև օրերով վիթխարի հերթեր էին գոյանում:

Առաջնորդող և խմբագրական հոդվածներում թերթը փորձում էր շեշտել մամուլի խնդիրները ծանր պահերին, և զրտնում էր, որ իր սուրբ պարտականությունն է արտահայտել աշխատավորության ցանկությունը, «կոչ անել բոլոր հասա-

⁵ Վերջին համարը լույս է տեսել 1914 թ. դեկտեմբերի 21-ին (հնարավոր է, որ հետո էլ շարունակել է իր գործունեությունը, բայց մեր ձեռքի տակ առաջին փաստեր չկան):

րակական ուժերին՝ միավորվելու մեծացող աղքատության դեմ պայքարելու համար»:

Նա երերուն դիրք ուներ գավառի տխուր վիճակը ներկայացնելիս, կակիժ էր հայտնում այս կամ այն փաստի վերաբերյալ, բայց ոչ մի խոսք չէր ասում շարիքի արմատների մասին:

Թերթը ընթերցողներին իրազեկ էր պահում զանազան նորություններից, լուսաբանում էր տեղական կյանքը, արծարծում առանձին հետաքրքրություններ կայացնող հարցեր: Նրա էջերում տեղ էին գտնում հաղորդումներ նույնիսկ երկրի նավթային արդյունաբերության վիճակի, Սիբիրի հարստությունների, Մոսկվայում աշխատանքային բորսայի, ոսկու համաշխարհային հանույթի, Փարիզի բնակարանային կարիքների, Գերմանիայում աշխատավորական հարկերի, Բալկաններում պատերազմական գործողությունների մասին:

Ծմարտությունը սակայն այն է, որ թերթի տեղական նյութերը ելնում էին ռուսական լիբերալիզմի դիրքերից: Պատեհ առիթներով խոսվում է ժողովրդասիրության մասին, շեշտվում, որ միշտ էլ ռուսները բարի տրամադրությամբ են համակված եղել մյուս ժողովուրդների նկատմամբ, բայց այս հարցի լուսաբանումն էլ որոշ նպատակամղում ուներ՝ ավելորդ անգամ հակադրել մեկի առավելությունը մյուսի նկատմամբ:

Խոսելով Արևմտյան Հայաստանում հայերի ծանր կացության մասին, տպագիր օրգանը շատ պարզ պատճառով ձրգտում է անպայման նշել Արևելյան Հայաստանի համեմատաբար բարվոք վիճակը: Հատկանշական է նաև հայկական ազգային հարցի լուսաբանումը, որը, հիրավի, Արևմտյան Հայաստանի վերաբերյալ ցարիզմի քաղաքականության պրոպագանդան էր: Եռանդ չէր խնայվում ապացուցելու, որ հայերը միշտ էլ աչքի են ընկել բարեկամական զգացմունքներով, աշխատասիրությամբ ու ստեղծագործական մտքով:

Ռուսերեն թերթի հիմնական օբյեկտը, այնուամենայնիվ, մնում էր Շուշին, նրա առօրյան: Առանձին թղթակցություններում և ինֆորմացիաներում, նամակներում ու հաղորդումներում, թեև թողուցիկ, բայց խոսվում էր բանվորների վատ վիճակի, նրանց կողմից կազմակերպվող գործադուլների մասին: Նա չէր սահմանափակվում գավառի առանձին իրադարձությունների լուսաբանմամբ: Բնորոշ է, օրինակ, թերթի 1913

թվականի օգոստոսի 30-ի համարում զեռտեղված հաղորդումն այն մասին, որ Թիֆլիսի տրամվայի աշխատողները մի շարք պահանջներ են ներկայացրել իրենց տերերին՝ աշխատանքի պայմանները բարելավելու համար: Եվ երբ չեն կատարվել այդ պահանջները, թիֆլիսցիները կանգնեցրել են վագոնների շարժումը, գործադուլ հայտարարել:

Իհարկե, տպագիր օրգանը չի թաքցնում իր դժգոհությունն ստեղծված քառասյին վիճակի նկատմամբ, բայց այս ամենի պատճառը կարծես ցանկանում էր բացատրել ազգաբնակչության հետամնացության, անգրագիտության, կուլտուր-կրթության հետամնացության, անբարեխոսության: «Շուշիական օջախների անբավարար գործունեությամբ: «Շուշիական օջախները որոշ օգտակար մտքեր կարելի է գտնել մասնավորապես դպրոցական, աշխատավորության դաստիարակության, անհատի զարգացման հարցերին նվիրված նյութերի մեջ:

Շուշիում կանանց գիմնագիտյի բացման առթիվ գրված ծավալուն ինֆորմացիայում ընթերցողների ուշադրությունը հրավիրվում է այն բանի վրա, որ կրթությունը չկտրվի ընտանեկան դաստիարակությունից, ամուր լինի դպրոցի և ընտանիքի կապը, երեխաների կրթության և դաստիարակության համար պատասխանատու լինեն ոչ միայն ուսուցիչները, այլև ծնողները:

«Թղթակցություններ», «Աշխատավորների նամակներ» և ուրիշ բաժիններում տպագրված նամակներում սրվում է այն հարցը, որ յուրաքանչյուր շուշեցի պետք է լինի կուլտուրական, դաստիարակված, ջերմ հայրենասիրությամբ տոգորված: Դատապարտվում է նրանց վարքագիծը, ովքեր անազնվություն են հանդես բերում, բանասրկությունների սիրահար են, զուրկ են խղձից ու պատասխանատվության զգացումից:

Կարևոր համարելով աշխատավորների գեղարվեստական ճաշակի բարձրացումը, նրանց բազմակողմանի զարգացումը և ընդհանրապես հայրենի քաղաքում կուլտուրական կյանքի զարթոնքը, թերթը 10-րդ համարից սկսած բացում է «Թատրոն և արվեստ» բաժինը: Զետեղվող նյութերը հետաքրքրություն են ներկայացնում փաստերի մատուցման տեսակետից: Ընթերցողները տեղեկանում են առանձին հաջողված բեմադրությունների, երեկոյաների ու համերգների մասին: Օրինակ, 1913 թ. հուլիսի 12-ի համարում տպագրված մի ինֆորմացիայում հայտնվում է, որ հուլիսի 4-ին տեղական հասարա-

կոթյան ժողովի ամսուային շենքում թաթար դերասանները Գրիգոր Ավետյանի մասնակցությամբ ներկայացրել են Ա. Հախվերդովի հայտնի ողբերգությունը, որի պլոտեն պատմական անցքերն են: Հեղինակը քննադատում է սուսնձին նվաճողների բարբարոսական գործունեությունը: Ներկա դեպքում մերկացված է Իրանի միասեռ Աղա Մահմեդ խան Կաջարը, որը նպատակ էր ունեցել իշխել ամբողջ Պարսկաստանի վրա, գրավել Վրաստանը և տիրանալ Կովկասին, հասնել մինչև Ղարաբաղ: Թերթը համառոտակի տալիս է դրամայի բովանդակությունը և դրվատական խոսք ասում դերասան Գր. Ավետյանի և մյուս դերակատարների մասին:

Սուսնձին նյութեր են տպագրվում հայ, ռուս ականավոր գրողների մասին: Ուշագրավ է 1913 թվականի նոյեմբերի 10-ի համարում «Լ. Ն. Տոլստոյի հիշատակին» հոդվածը, որտեղ գալստական թերթը բարձր է գնահատում ռուս մեծ գրողի գրական վաստակը, հմայիչ խոսքը, արվեստը: Հետաքրքիր փաստ է հաղորդվում թերթի նույն թվականի դեկտեմբերի 22-ի համարում: «Լ. Ն. Տոլստոյի ձեռագրերը» վերնագրի տակ ազդարարվում է, որ 1906 թ. Ա. Տոլստոյան պատմական թանգարանի պահպանությանն է տվել Լև Տոլստոյի մի քանի արկղ ձեռագրերը: Հոր մահվանից հետո, համաձայն նրա կտակի, բոլոր ձեռագրերը դառնում են աղջկա սեփականությունը:

«Շուշինակայա ժիզնը» սուսնձին համարներում թարգմանաբար հրատարակում է հայ հեղինակների մի քանի ստեղծագործություններ: Տարբեր բնույթի էին հրատարակվող ֆելիտոնները: Խարազանվում էին անկուլտուրականությունը, հետամնացությունը, անբարոյականությունն ու երկերեսանիությունը:

«Ֆելիտոն» խորագրի տակ հրատարակվում են ոչ միայն բացասական բնույթի փաստեր, այլև ժողովրդական հեքիաթներ, պատմվածքներ, ակնարկներ, բանաստեղծություններ:

Աչքի էին ընկնում թերթի խմբագիր Ստեփան Մանդինյանի⁶ հոդվածները: Կասկածից վեր է, որ առաջնորդողների,

⁶ Նա մասնագիտությամբ իրավաբան էր: Համաշխարհային պատերազմի տարիներին Շուշիի թեմական դպրոցում ավանդում էր ռուսաց լեզու: Միտում էր լրագրային գործը և մի շարք պարբերականներում (մասնավորապես «Փայլակում») մեծածավալ հոդվածներով հանդես էր գալիս կոո-
190

խմբագրականների մեծ մասը պատկանում է խմբագրին: Մեր համոզմամբ «Տi», «С», «Обозреватель» և էլի ուրիշ ծածկանունների տակ հանդես է եկել Ստեփան Մանդինյանը, որն իր բազմաժանր նյութերում մի կողմից արծարծել է միջազգային կյանքի (շատ համառոտակի տալով քաղաքական տեսություններ), մյուս կողմից՝ կուլտուր-լուսավորական աշխատանքի հետ կապված հարցեր:

Նրա հոդվածները և այլ կարգի նյութերը աչքի էին ընկնում լեզվական կուլտուրայով, փաստի մատուցման որոշակի թարմությամբ:

Թերթի շուրջը համախմբված թղթակիցները, որոնք հիմնականում շուշեցիներ էին, այս կամ այն չափով օգնում էին խմբագրությանը՝ հրատարակելու բազմաժանր նյութեր, թեև դրանց մի մասը քաղաքական, գաղափարական տեսակետից արժեքազուրկ էր և նոր բան չէր ասում ստեղծված իրավիճակի մասին:

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ
ՈՒ ՆՐԱՆՑ ԱՆԼԵԳԱԼ ՕՐԳԱՆՆԵՐԸ
(1912—1917 թթ.)

Սկսած 1912 թվականից, երբ ոչ միայն Ռուսաստանի խոշոր քաղաքներում, այլև հետամնաց գալստներում ծայր էին առել հեղափոխական ընդվզումները, Շուշիի թեմական դրպրոցի սովորողները համախմբված էին աշակերտական երկու կազմակերպություններում՝ «Միություն» և «Միրած»: Երկուսն էլ բավական գործնական էին և ձգտում էին հետք թողնել աշակերտության շրջանում, բայց «Միության» մեջ շատ քչերն էին ընդգրկված և հետզհետե փոքրանում էր նրա կազմը:

1913 թ. հրատարակվում է «Միրած» կազմակերպության համանուն անլեգալ խմորատիպ ամսագիրը, որի յուրաքանչյուր համար ուներ տետրակի 10—12 թերթի ծավալ: Այն տպագրում

պերացիայի, սուտրի հարցերի շուրջը: Խորհրդային տարիներին աշխատում էր Հայաստանում:

էին Սիմոն Ափյանը, Անդրանիկ Ավագյանը, Գևորգ Թովմասյանը և Գրիգոր Խաչիյանը¹:

Ամսագրին աշխատակցում էին սուաշադեմ մարդիկ, որոնք սերտ կապերի մեջ էին աչքի ընկած գործիչների հետ: Առանձնապես նրա խմբագիրը՝ Գրիգոր Մեհրաբյանը և սրբագրիչ Մկրտիչ Մելքումյանը ամեն ջանք ներդնում էին «Միրածը» աշակերտության ընդհատակյա հեղափոխական աշխատանքի կենտրոն դարձնելու համար: Ծառերն էին մասնակցում նրա տպագրությանն ու տարածմանը:

Մեր խնդրանքով գրած հուշերում Ս. Ափյանը պատմում է. «Տպարանը մեր տանն էր... թերթը տպագրում էինք խմորատիպ, այսինքն գործ էինք անում՝ գլիցերին և ժելատին:

Միութենականները շատ են հետևել՝ իմանալու մեր տպարանի տեղը, որպեսզի մատնեն մեզ, բայց մինչև վերջ էլ այդ նրանց չհաջողվեց:

Մեր և «Միության» պայքարը սկզբունքային հարցերի շուրջը մեծ մասամբ կատարվում էր «Միրած» ամսագրի միջոցով: «Միրածը» լույս էր ընծայվում 50—60 օրինակով և մի ժամվա մեջ ցրվում էր: Մեծ էր հատկապես ցրիչ Ծմավոն Ծահնագարյանի եռանդը. նա իսկույն տեղ էր հասցնում բոլոր օրինակները... Այդ կատարվում էր շատ արագ, ուստի կանոնադրումից աննկատ: Համարները գաղտնի թաքցնում էր թեքերի մեջ և մեկ-մեկ տալիս բաժանորդներին:

Ծատ մեծ հեղինակություն ուներ «Միրածը» աշակերտության և ուսուցիչների մի մասի մոտ: Լույս ենք ընծայել այն մինչև 1917 թ. մարտ ամիսը: Վերջին համարներից մի քանիսը անլեզալ ուղարկել ենք անգամ Էջմիածին, ճեմարան, ընկ. Ա. Հովհաննիսյանին և ճեմարանում սովորող մեր տղաներին ու Բաբու՝ մի երկու-երեք ընկերոջ»:

«Միրած» և «Միություն» աշակերտական կազմակերպություններից գառ, 1917 թ. մայիս-սեպտեմբեր ամիսներին Ծու-

շիում գործում էին «Աշակերտական պատգամավորների խորհուրդը» և «Սոցիալիստական երիտասարդության միությունը»:
Սրանք ևս ունեին տպագիր օրգաններ:

1916—1917 թթ. Ծուշիում շարունակում էին լույս տեսնել աշակերտական թերթեր և հանդեսներ, որոնք խոսքի ուժով բացահայտում էին կյանքի արատավոր կողմերը և փորձում էին ճիշտ ուղի գտնել դրանց վերացման համար:

Մեծ անուն էր հանել աշակերտական «Ծիծաղ» խմորատիպ երգիծական ամսագիրը, որն սկսեց լույս տեսնել 1916 թ., Ծուշիում: Նրա ակտիվ թղթակիցները խարազանում էին աշակերտության մեջ տեղ գտած թերությունները, սպանիչ ծաղրի ենթարկում հակահասարակական երևույթները:

Ամսագիրը հաճախակի դուրս էր գալիս դպրոցական շրջանակներից, մերկացնում էր հետամնացությունը, սնտիապաշտությունը, նախապաշարումներն ու գոեհիկ բարքերը: Նա ծաղրում էր նաև այն թերթուկներին, որոնք հանդգնում էին փաստերը ներկայացնել ծուռ հայելու մեջ:

«Ծիծաղի» լեզուն սուր էր, մարտական: 1916 թ. Ծուշիում մի խումբ աշակերտների հրատարակած «Պայքար» խմորատիպ շաբաթաթերթը «Ծիծաղ» ամսագրի հարվածներից հետո ստիպված երկրորդ համարը չունեցավ: Բննադատվեցին նրա միակ համարի նյութերի տոնը, գոեհիկաբանությունները:

«Ծիծաղը» սովորաբար տարածվում էր երեկոները՝ վրտահեղի անձանց միջոցով: Նրա յուրաքանչյուր համարն ընդունվում էր մեծ խանդավառությամբ:

Ծանաշված մանկավարժ Լևոն Վարդունին պատմում է, որ Ծուշիի աշակերտական մամուլի պատմության մեջ կարևոր էջ են կազմում նաև «Սրինգ» և «Աշակերտ» խմորատիպ թերթերը: Երկուսն էլ 1917 թ. հրատարակել են Ծուշիի թեմական դպրոցի աշակերտները: «Աշակերտ» թերթը գլխավորում էին Լևոն Վարդունին և Մովսես Հարությունյանը: Վերջինս գերազանցապես կատարում էր թերթի արտաքին ձևավորումը: Այս թերթն էլ երկար կյանք չունեցավ՝ ընդամենը 5—6 համար: Նա բաղկացած էր 12 փոքրածավալ էջերից և հիմնականում լուսաբանում էր դպրոցական առօրյա հարցերը: Տպագրվում էին մեծ մասամբ երգիծական նյութեր: Ուշադրության է ար-

¹ Գ. Խաչիյանը ծնվել է 1896 թ., Ծուշիում: 1916 թ. ավարտում է տեղի թեմական դպրոցը և ուսումը շարունակում Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: 1920 թ. սկսած կուսակցական լայն գործունեություն է ծավալում Դարաբաղում, եղել է մարզկոմի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի վարիչ, լուսծողկոմի տեղակալ, գյուղատնտեսական տեխնիկոմի դիրեկտոր, «Խորհրդային Դարաբաղ» թերթի խմբագիր և այլն: Մի շարք տարիներ զբաղվել է ուսուցչությամբ: Մահացել է 1963 թ., Մոսկվայում:

ժանի «Վարժապետի երազը» երգիծական նյութը («Ադերուշ-կա» ստորագրությամբ), ուր ծաղրի էին ենթարկվում սոսանձին հետամնաց ուսուցիչներ:

Թերթին ստավել ակտիվորեն էր մասնակցում դպրոցի ստաջադեմ աշակերտ Սարգիս Դանիելյանը² («Դանիելյան» ստորագրությամբ), որի նյութերը խիստ քննադատական էին և հենց սկզբից էլ աչքի էին ընկնում մարտական շնչով: Նրա գրածներն ունեին երգիծական ուժ: Եվ դրա համար էլ Ս. Դանիելյանի նյութերը կարդացվում էին բոլորից շուտ, բոլորից շատ:

Փաստեր կան նաև, որ 1917 թ. սկզբներին Շուշիում լույս է տեսել «Եռանդ»³ աշակերտական թերթը, որն ունեցել է պահպանողական ուղղություն, իր էջերում չի տպագրել քննադատական նյութեր, չի բացահայտել կյանքի արատավոր կողմերը: «Շուշվա «Եռանդը», — գրել է 1917 թ. Գանձակում լույս տեսնող հասարակական, գրական, աշակերտական «Քալեր» ամսագիրը, — ավելի նեղ շրջանակում է պարփակված և բավականաճում է գլխավորապես դպրոցական հարցերով, որոշ չափով հանդես բերելով գավառական բնորոշ պահպանողական ուրվագիծը»⁴:

Որ «Եռանդը» հեռու էր կանգնած ժամանակի կարևոր իրադարձություններից, աշակերտությանը չէր մղում հասարակական խնդիրների լուծմանը, ժամանակակիցներից վկայում են Ա. Առաքելյանը, Ս. Ասիյանը և ուրիշներ:

Սահմանափակ էին «Եռանդի» բաժինները: Եթե այդ ժամանակ թիֆլիսում լույս տեսնող «Միությունը», հաքվում՝ «Մեր

² Ս. Դանիելյանի հո.վածները տպագրվում են ոչ միայն «Փայակի», «Նեցուկի», այլև հաքվում և թիֆլիսում լույս տեսնող հայերեն պարբերականների էջերում:

Խորհրդային տարիներին նա կատարում է հասարակական-քաղաքական աշխատանք երկրի տարբեր վայրերում: Հետագայում մեղադրվեց տրոցկիզմի մեջ:

³ Գ. Առնյանն իր «Հայոց պարբերական մամուլը» (1934 թ.) աշխատության 151-րդ էջում նշում է, որ Շուշիում եղել է «Եռանդ» թերթ, բայց ցույց չի տալիս հրատարակության թիվը:

⁴ «Քալեր», № 4, 1917, էջ 14:

գործը» և աշակերտական այլ պարբերականներ ունեին գեղարվեստական բաժիններ, ապա «Եռանդը» չէր տպագրում բանաստեղծություններ, փոքրիկ պատմվածքներ, միտքը, գաղափարը չէր արտահայտում գեղարվեստական միջոցներով:

1917 թ. սկզբներին նոր լիցք են ստանում նաև աշակերտական կազմակերպությունները:

ՏՊԱԳԻՐ ՕՐԳԱՆՆԵՐԸ 1915—1917 թթ.

ԳԱՎԱՌԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԱՐՏԱՀԱՅՏԻՉԸ

1914—1917 թթ. Ռուսաստանը համաշխարհային իմպերիալիստական պատերազմի մեջ էր: Պատերազմը ներկայանում էր նյութական վիթխարի ռեսուրսներ և մարդկային մեծ ուժ: Քայքայված ժողովրդական տնտեսության պայմաններում աշխատունակ մարդկանց մեծ մասը գորակոչվել էր բանակ, շատ գործարաններ ու արդյունաբերական ձեռնարկություններ, ինչպես նաև գյուղական տնտեսություններ մնացել էին առանց աշխատավոր ձեռքի:

Սակայն իմպերիալիստական պատերազմի ծանր օրերին էլ Ղարաբաղի տարբեր խավերի ներկայացուցիչները մտածում էին տպագիր օրգաններ հիմնելու մասին: Առանձին մարդիկ կոնկրետ քայլերի էին դիմում: Նրանցից էր Եղիշե Թարխանյանը՝ Շուշիի ռեալական ուսումնարանի ուսուցիչներից մեկը: Նրա դիմումները որոշ արդյունքի են հասնում:

Ելիզավետպոլի նահանգի գրասենյակը դեռևս 1914 թ. օգոստոսի 31-ին հայտնում է մամուլի գործերի Թիֆլիսի կոմիտեին, որ թույլատրված է Եղիշե Թարխանյանին Շուշիում հրատարակելու «Արցախ» անունով հայերեն թերթ: Նրա նպատակն էր լայնորեն հրատարակել հայտարարություններ, ինչպես նաև հոդվածներ՝ երկրի արտաքին և ներքին հարցերի, պատմության, գիտության, արվեստի, գրականության ու քաղաքականության վերաբերյալ, տալ ռուսական և արտասահմանյան կյանքի խրոնիկա, տպագրել հեռագրեր, դատական

հաշվետվություններ, ունենալ տեղեկատու բաժին և այլն:

Թույլատրված էր «Արցախ» թերթը հրատարակել Շուշի քաղաքի սուաջին մասում գտնվող Բագրատ Տեր-Սահակյանի տպարանում, շաբաթը 2—4 անգամ: Թերթի վերահսկիչ նշանակված էր Շուշիի քաղաքագլուխ Գրիգոր Քալանթարյանը¹:

Սակայն, ցավոք, պետք է նշել, որ մինչև հիմա անհայտ է մնում, իրոք, լույս տեսե՞լ է «Արցախը» 1914 թվականին, թե՞ միայն արխիվում մնացել են տեղեկություններ նրա մասին:

Գրեթե նույն բախտին է արժանացել 1915 թ. «Ղարաբաղի ձայն» թերթը: Այս մասին ևս վկայում են արխիվային փաստաթղթերը²: Սա էլ միևնույն բաժիններն ու պարբերականությունը պետք է ունենար, ինչ «Արցախը»: «Ղարաբաղի ձայնը» պետք է տպագրվեր Մելքոն Բաբաջանյանի տպարանում և վերահսկիչն էլ լիներ Շուշիի քաղաքային ուսումնարանի ուսուցիչ Հայկ Կոստանդյանը:

Ավելի ռեալ արդյունքներ տվեցին Լևոն Վարդապետյանի³ դիմումները Կովկասի փոխարքայության մամուլի գործերի կոմիտեին՝ Շուշիում «Փայլակ» անունով թերթ հրատարակելու մասին:

Թերթը պետք է հրատարակվեր հետևյալ ծրագրով. 1) սուաջնորդող հոդվածներ՝ հասարակական և քաղաքական հարցերի շուրջը, 2) ներքին տեսություններ, 3) արտասահմանյան կյանքը լուսաբանող նյութեր, 4) թղթակցություններ, 5) ֆելիետոններ, 6) մատչելի հոդվածներ գիտության տարբեր ճյուղերի մասին, 7) արձակագրություն և պոեզիա, 8) քննադատություն և մատենագիտություն, 9) տեղական և կովկասյան խրոնիկա, 10) թատրոն և արվեստ, 11) փոստային արկղ, 12) հեռագրեր, 13) հայտարարություններ:

Թույլատրվում է «Փայլակ» թերթը տպագրել Բ. Տեր-Սա-

¹ Վրացական ԽՍՀ պետական կենտրոնական պատմության արխիվ. ֆ. 480, ց. 2, թ. 1011:

² Նույն տեղում, թ. 1102:

³ Ծնվել է 1884 թ. Ղարաբաղի Գյունե Ճարտար գյուղում: Ավարտել է Շուշիի ռեալական դպրոցը և Մոսկվայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Խորհրդային տարիներին պատասխանատու պաշտոններ է վարել Հայաստանում, եղել է պարենավորման ժողկոմատի կոլեգիայի անդամ, արդարադատության ժողկոմ, հանրապետության դատախազ, գերագույն դատարանի նախագահ և այլն: Վախճանվել է 1943 թվականին:

ճակի առանձին պատճառները, քննադատելու է գյուղական աշխատավորի վաստակը յուրացնողներին, պորտաբույծներին:

Սակայն գավառական թերթի գործունեությունը բեղմնավոր կլինի, շեշտում է նորաստեղծ օրգանը, եթե նրա շուրջը համախմբվեն աշխատավորական լայն խավերի ներկայացուցիչները, եթե նրանք գրիչ վերցնեն ազնիվ նպատակով և անտարբեր չլինեն շրջապատի կարիքների նկատմամբ, մտահոգվեն օրվա հարցերի շուտափույթ լուծմամբ:

Առաջին իսկ համարից թերթին սկսում են աշխատակցել մտավորականներ, հասարակական-քաղաքական գործիչներ: Շատերն ի սրտե ցանկանում էին «Փայլակին» բեղմնավոր կլանք, հաստատուն քայլեր, սկզբունքայնություն, թշնամական գաղափարների դեմ անհաշտ պայքար:

«Փայլակին» ուղարկած նամակում Լևոն Աթաբեկյանը մի շարք ցանկություններ է հայտնում: Նա գրում է. «Եթե ձեր թերթը, պարոն խմբագիր, չպիտի դառնա մի նոր ազգային մեռելատուն, եթե պիտի կարողանա հետևելու իր նուրբ մասներով Ղարաբաղի ժողովրդի կյանքի զարկերակին և պիտի սովորեցնի նրան՝ զսպած արցունքով՝ հուսալ, տոկալ և ապրել, իմ և ինձ պես խորհողների համակրանքն ու աջակցությունը ձեզ կը պատկանե»⁶: Այդպիսի նամակները եզակի չէին:

Թերթը փորձում էր պատասխանել իր համակրողներին, ասել այն մասին, որ ձգտելու է լինել Ղարաբաղի կյանքի, հոգուների արտահայտիչը՝ լուսաբանելով նրա ներկան և անցյալը: Նա խոստանում է նաև, որ անտարբեր չի լինելու աշխատավորների թշնամիների նկատմամբ, քննադատելու է նրանց տպագիր խոսքով:

Եթե ոչ համարձակորեն, բայց, այնուամենայնիվ, «Փայլակը» քիչ նյութեր չի տպագրում մերկացնելու նրանց, ովքեր ոտնահարում են «հասարակ» մարդու շահերը, թալանում նրան: Նա ուղղակի հայտարարում է, որ «դեռ գավառներում վաշխառուները շարունակում են քամել խեղճ գյուղացու արյունը»⁷, հնարավորություն չեն տալիս հողի աշխատավորին՝ տեր կանգնելու իր վաստակին:

Գյուղական շահագործողների, կեղեքիչների ու բռնադա-

տիչների մասին գրված նյութերի տակ հաճախակի ստորագրվում էր «Liga»: Այդ ծածկանվան տակ «Փայլակին» ակտիվորեն աշխատակցում է Սերգեյ Կարգանյանը, մի մարդ, որ ականատես լինելով խեղճուկրակ մարդկանց տառապանքներին, ձգտում էր մամուլի էջերում («Մեր տնտեսական կացությունը», «Գյուղն առանց շաքարի», «Աննախանձելի դրություն», «Բարբարոսական ոճրագործություն» և այլն) մերկացնել բռնադատիչներին ու հարստահարիչներին: Նրա գրած նյութերում նկատվում են քննադատական սուր միտք, համոքչակա-նություն և ներգործելու ուժ:

«Գավառական ցավերից» մի քանի բաժիններով ներկայացվող ծավալուն հոդվածում Ա. Սալանյանը, որը մոտիկից տեղյակ էր գյուղացու հոգսերին և ընդհանրապես զբաղվում էր գյուղատնտեսության հարցերով, «Փայլակում» գրույց է բացում գյուղական բնակիչների տնտեսական ծայրահեղ վատ վիճակի մասին, միաժամանակ շեշտում, որ դրա պատճառներից մեկն էլ գյուղատնտեսական աշխատանքների կատարման նահապետական ձևն է: «Խոսելով գյուղացիների տնտեսական վիճակի մասին առհասարակ,— շեշտում է նա,— չպետք է մոռանալ և այն խոշոր բացը, որի շնորհիվ մեր գեղջուկը տրնտեսապես չի բարգավաճում, չի առաջադիմում: Մեզանում գյուղացիները, շատ սակավ բացառությամբ, դեռևս իրենց տրնտեսությունը— երկրագործական աշխատանքը և այլն— վարում են հին նահապետական ձևի գործիքներով: 80—100 տնից բաղկացած գյուղում հազիվ կգտնվի 4—6 նոր ձևի գույթան, մնացածներն օգտվում են հին ձևի խոփ ու գույթանով. բացի դրանից՝ գյուղացիները գուրկ են գյուղատնտեսական անհրաժեշտ գործիքներից— հետևելով միմիայն ավանդական սովորությունների»⁸:

Թերթը բազմիցս ելույթներ է ունենում թանկության դեմ: Նա ցույց է տալիս մի կողմից տնտեսական անմխիթար վիճակը, մյուս կողմից՝ իմպերիալիստական պատերազմի հետևանքով մթերքների գների անսահման բարձրացումը, որի պատճառով արդեն անկարելի է դառնում աշխատավորների ֆիզիկական գոյության պահպանումը:

⁶ «Փայլակ», № 58, 1916, հուլիսի 31:

⁷ «Փայլակ», № 1, 1915, մարտի 8:

⁸ «Փայլակ», № 5, 1915, մարտի 22:

«Մի կողմ թողնենք այն ծանր հարվածը,— շեշտում է տպագիր օրգանը,— որ հասցրել և հասցնում է պատերազմը ժողովրդի տնտեսության՝ խլելով նրա աշխատավոր ձեռքերը, մի կողմ թողնենք նաև այն ավելորդ ծախսերն ու տուրքերը, որ կապված են պատերազմի հետ...

Սակայն կան բացասական երևույթներ... դրանք մեծ չափով ազդում են ժողովրդի տնտեսության և նյութական կացության վրա: Այդ բացասական երևույթներից առաջինը և գլխավորը կյանքի կենսական անհրաժեշտ մթերքների թանկությունն է, որն զգալի հարված հասցնելով ընդհանուրին՝ անտանելի վիճակ է ստեղծում չունևոր դասի ու աղքատ գյուղացիության համար»⁹:

Եվ «Փայլակը» իրավացի է, երբ գրում է, որ պատերազմից առաջ իրենց կյանքը մի կերպ քարշ տվող մարդիկ այժմ կանգնած են սույի ուրվականի առջև և այդպես շարունակելու դեպքում «պատերազմի զոհերի կողքին կունենանք նոր զոհեր, սույի ու համաճարակ հիվանդությունների զոհեր»¹⁰:

«Հացի խնդիրը Շուշիում» թյուսակցության մեջ գավառական թերթը կրկին ընթերցողներին հայտնում է, որ դրությունը ոչ միայն որևէ չափով չի բարելավվել, այլև սոսկալի է դարձել հատկապես գավառի կենտրոնում՝ Շուշիում, ուր համեմատաբար բարվոք էր հացի մատակարարման գործը, թեև հացի փոխ առջև միշտ էլ չէին պակասում մեծ հերթերը: Թերթը բողոքում է, որ գավառի համար սահմանված առանց այն էլ շատ չնչին քանակությամբ հացահատիկն ու մյուս մթերքները ժամանակին չեն տեղափոխվում Շուշի: Եվ առանց կասկածամտության հայտարարում է. «Գավառի ազգաբնակչության պարենավորման պետքերը բավարարելու այս կարգը չի կարող ծածկել այն ծով կարիքները, որ զգացվում են հայ և մասամբ թուրք ազգաբնակչության մեջ: Վարանդայի և Խաչենի գյուղացիության 75 տոկոսը մնացել է բառիս բուն իմաստով առանց հացի»¹¹:

Այսպիսի պայմանները, ինչ խոսք, ճնշված էին պահում աշխատավոր զանգվածներին, թույլ չէին տալիս նրանց հոգալ

ընտանիքի հոգսերը: Այն ո՞ր անապահով, կուպեկների տեր մարդը, հարց է տալիս «Փայլակը», կարող է հաց ձեռք բերել շուկայից, երբ ցորենի փուխն արժե 12 ուրլի, իսկ ալյուրի պարկը՝ 70—75 ուրլի:

Թերթը շարունակում է լուսաբանել հացի համար գործադրվող մարդկային ճիգերը: Նա գրում է. «Թե ինչպես կանաչք, այրիներ, երեխաներ, ծերեր արտասուքով աղերսում են 10 ֆ. ալյուր տալ ինչ գնով էլ լինի, որի համար նրանք ահագին աննապարհ են կտրում և ոտքով քաղաք գալիս»¹²:

Ժամ վատ էր նաև անասունների դրությունը: «Եվ գյուղացին ստիպված է լինում... կերի բացակայության պատճառով, ծախել իր վերջին աշխատավոր անասունն ու այսպիսով ընկնել տնտեսական քայքայման վերջին աստիճանի վրա»¹³:

Ինչպե՞ս դուրս գալ այդ փակուղուց, հարց է տալիս «Փայլակը» և պատասխանում. «Հասել է ժամը, որ աշխատավոր գյուղացիությունը, հետևելով կազմակերպված բանվորությանը, ինքը տնօրինե յուր բախտը, յուր մասնակցությունը ցույց տա հեղափոխական ներկա ընթացքում, որտեղ քանդվում, տապալվում են հին ռեժիմի կարգերը և շինվում, ստեղծագործվում են նոր հասարակարգի դեմոկրատական հիմքերը:

Եվ գյուղացիությունն ահագին դեր ունի այդ շինարար գործի մեջ, դեմոկրատական ժողովրդական կարգերի հաստատման մեջ»¹⁴:

«Փայլակը» Ղարաբաղի գյուղացիներին կոչ է անում պատրաստվել՝ իրենց իրավունքների նվաճման պայքարում հաղթանակ տանելու:

«Փայլակի» էջերում որոշակի կերպով լուսաբանվում է նաև բանվորների ծանր վիճակը: «Մեր թղթակիցները» ընդհանուր խորագրի տակ թերթը բազմիցս անդրադառնում է Շուշիից մեկ և կես կիլոմետրի վրա գտնվող Քարինտակ գյուղի կապիտալիստ Հարունովի մետաքսակարծակալ-մետաքսադրող ֆաբրիկային, նշում այն մասին, որ կանաչք և անչադրորող ֆաբրիկային, նշում այն մասին, որ կանաչք և անչափահաս երեխաները, աշխատելով արշալույսից վերջալույս, ըստանում են աննշան աշխատավարձ, որը հազիվ մի կտոր հա-

⁹ «Փայլակ», № 6, 1915, մարտի 29:

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Նույն տեղում:

¹² Նույն տեղում:

¹³ Նույն տեղում:

¹⁴ Նույն տեղում:

ցի գին է դառնում: Գործարանատեր Հարունովը լսել անգամ չի ուզում բանվորի աշխատանքի պայմանները թեթևացնելու մասին: Եվ թերթը սուր քննադատության ենթարկելով նրան, պահանջում է վերջ տալ մարդկանց նկատմամբ գալչային վերաբերմունքին:

«Փայլակի» աշխատողներն ականատես են լինում հայրենի քաղաքի անմխիթար վիճակին, տեսնում, թե ինչպես մարդիկ ոչ միայն քաղցած են, բոկոտն, այլև՝ թե ինչպես չի լուծվում ջրի պրոբլեմը, հեռագհետե փողոցներն անանցանելի են դառնում, քայքայվում է կոյուղին և այլն: Այս մասին ուղղակի կարդում ենք. «Ծուշին անմոռաց է յուր դիրքով, յուր բաժին օդով, յուր հմայիչ շրջակայքով, բայց նա չունի բարեկարգ պարտեզ՝ մի պարկ, որտեղ կարողանային վայելուչ հանգիստ ու զվարճություն գտնել թե՛ եկողը, թե՛ քաղաքացին»¹⁵:

Ղարաբաղի աշխատավոր ժողովրդի դրությունը ողբերգական էր նաև բժշկական օգնության տեսակետից: Գյուղական վայրերում չկային ո՛չ բուժկետեր և ո՛չ էլ հիվանդանոցներ: Գլուխ էին բարձրացրել գրքացները և հեշտ ճանապարհով աշխատավորներից փող կորզող մյուս կարգի «բժիշկները»՝ ձրգտելով իրենց սնոտիապաշտական միտքը փաթաթել հավատացյալ բնակչությանը:

«Փայլակին» անհանգստացնում էին նաև դպրոցական գործի բարելավման և ընդհանրապես կուլտուր-լուսավորչական աշխատանքների որոշ չափով կարգավորման հարցերը: Կարևոր է համարվում ինչպես բարձրորակ ուսուցչական կադրեր ունենալը, այնպես էլ ուսուցումը նոր հիմունքներով կազմակերպելը, դպրոցում նոր առարկաներ մտցնելը, լեզուների ուսումնասիրումը և այլն:

«Հայ դպրոցը» հողվածում, բնորոշելով դպրոցի տեղը հասարակական կյանքում, թերթը գրում է. «Դպրոցը մանկավարժական հիմնարկություն է. այդ իսկ պատճառով նրա հիմքում, որպես ամենից ամուր և ամենից ապահով պատվանդան, պիտի դրված լինի մանկավարժական ճշմարտությունը: Իսկ ամեն կրթություն, մտքի, հոգեկան ուժերի, ամեն մշակույթի մանկավարժական բազան այս ճշմարտությունն է. նպատակահարմար

և հասարակագուտ կրթության համար մայրենի լեզուն միակ բնական և անփոխարինելի միջոցն է...»¹⁶:

Մնացած գիտությունների, առարկաների հետ միասին բարձր է գնահատվում մայրենի լեզվի դերն ուսման բնագավառում: Առանց լեզվական խոր և կայուն գիտելիքների դժվար է յուրացնել մյուս առարկաները: Չէ՞ որ լեզուն է հաղորդակցման միջոցը, չէ՞ որ լեզվի միջոցով պետք է պրպտումներ կատարել մյուս գիտությունների աշխարհում, ասում է «Փայլակը»:

Առաջնորդող և խմբագրական հողվածներում թերթը հատկապես շեշտում է հանրօգուտ աշխատանք սիրող և հարգող, դժվարություններից չվախեցող, նպատակ ունեցող և դրա իրականացման համար պայքարող երիտասարդ սաներ պատրաստելու խնդիրը, մի խնդիր, որի լուծման գործում մեծ է դպրոցի դերը:

«Դպրոցական ռեֆորմ» ստաջնորդողում «Փայլակը» բողոքում է, որ հայրենիքի համար չեն պատրաստվում գործույս, կրթված ու բազմակողմանի զարգացած քաղաքացիներ, որոնք հարկ եղած դեպքում բարեհոժար զոհաբերեն իրենց կյանքը, անձնվիրաբար ծառայեն ժողովրդի շահերին:

Գավառական թերթը պակաս կարևոր չի համարում կանանց կրթության գործը: Այս մասին նա խոսք է բացում մի շարք առիթներով: Ուշագրավ է հատկապես ականավոր պատմաբան Լեոյի հողվածը «Փայլակի» 1917 թ. 20-րդ համարում, որ հեղինակը դնում է աղջիկների ու կանանց կրթության, մտավոր զարգացման և դաստիարակության կենսականորեն անհրաժեշտ լինելու խնդիրը: Լեոն գրում է, որ կինը կրթվելով, էական գիտելիքներ ձեռք բերելով, պետք է լինի տղամարդուն հավասար, մեր հասարակության իրավահավասար անդամը: Կրթություն տալու հետ միասին, շեշտում է մեծ հայրենասերը, կնոջը պետք է սովորեցնել կատարելու տարբեր աշխատանքներ, տիրապետելու տարբեր մասնագիտությունների:

Կրթության և դաստիարակության հարցերը պահելով իր տեսադաշտում, այդ մասին հրապարակելով տեղերից ստացվող տասնյակ նամակներ, թղթակցություններ, ինֆորմացիա-

¹⁵ «Փայլակ», № 1, 1915, մարտի 8:

¹⁶ Նույն տեղում:

Մերկացնելով իմպերիալիստական մեծ տերությունների դիվանագիտության ամբողջ նպատակը և կեղծ հումանիզմի էությունը, թերթը հոգատարություն է հանդես բերում խոր գրկանքների մեջ գտնվող մարդկանց նկատմամբ, որոնք անելանելի դրության մեջ են ոչ միայն նյութապես, այլև իրադարձությունների տխուր բերումով գրկվել են տուն-տեղից, հարազատներից... Եվ նա սրությամբ է դնում Թուրքիայի կառավարող հայակործան արյունահեղություններից հրաշքով ազատված, այս ու այնտեղ ապաստան որոնող մարդկանց հարցը: «Փախստականների հարցը» հոդվածում Նորայրը²¹ գրում է. «Տաճիկ կառավարության ինքնակործան անմիտ քաղաքականությունը սուկումի և արհավիրքի մեծ դուռ բաց արեց խաղաղ աշխատանքի սովոր հայ ազգաբնակչության առջև: Հազարավոր բարեկեցիկ ընտանիքներ ստիպված եղան թողնել տուն-տեղ և փախուստի դիմել ձմեռվա ցրտին ու բուքին»²²:

Թերթը կոչ է անում իր հայրենակիցներին՝ օգնության ձեռք մեկնել հայ տարագիրներին, աջակցել նրանց: Եվ երրորդ համարում (1915 թ. մարտի 15) ուղղակի գրում է. «Ղարաբաղի հայը շատ անգամ է ցույց տվել յուր ստատաձեռնությունը դեպի յուր թշվառ եղբայրակիցները, այս անգամ էլ չի զլանա ձեռք կարկառել տարագիր հայ գաղթականներին»:

Այդ նույն հեղինակը՝ Նորայրը, հայ տարագիրներին օգնելու մասին հանդես է գալիս թերթի հաջորդ՝ չորրորդ (1915 թ. մարտի 19) համարում: Հենց հոդվածի վերնագիրը («Կատարել ենք մեր պարտքը») շատ բան է ասում, վերնագրից էլ իմացվում է, թե ինչի մասին է խոսքը, թե ցրված հայ ազգաբնակչությանը կոնկրետ ի՞նչ օգնություն է ցույց տալիս Ղարաբաղը: Այնտեղ կարդում ենք, որ «Ալաշկերտի, Դիադինի, Ղարաբիլիսայի շրջանները տակն ու վրա եղան, արյունարբու դահիճների սրերից ազատվածները գլխապատառ փախուստի դիմեցին ոռոսական հողը և լցվեցին Երևանի, Սուրմալուի և Էջմիածնի գյուղերն ու ավանները: Արդահան, Արդանուշ, Օլ-

²¹ «Փայլակին» մոտիկ կանգնած աշխատակիցներ Լ. Վարդունին և Ս. Կարգանյանը վկայում են, որ «Նորայր» ծածկանվան տակ հանդես էր գալիս Հայկ Հովակիմյանը՝ թեմական դպրոցի հաջոց լեզվի ուսուցիչը: Նա «Փայլակի» նյութերը գրական մշակման ենթարկողներից մեկն էր:

²² «Փայլակ», № 2, 1915, մարտի 12:

թի, մինչև Սարիղամիշ պլան-թալանի մատնվեցին, անաբեկված ազգաբնակչությունը գլուխն ազատեց մի կերպ՝ թափվելով Ալեքսանդրապոլ, Թիֆլիս, Ախալքալաք»: Թերթը հարց է տալիս. այսբանից հետո «Ի՞նչ արեց Ղարաբաղի հայությունը» և պատասխանում է. «Նոյեմբերի 10-ից մինչև փետրվարի 20-ը, ամբողջ 4 ամիս 10 օրվա ընթացքում, ինչպես ցույց է տալիս Շուշիի «Եղբայրական օգնություն» կոմիտեի էլ և՛ մուտի հաշիվը, Ղարաբաղը փախստականներին տվել է ընդամենը 1500 ռուբլի և մոտ 400 ռուբլու հագուստ: Կատարել ենք մեր պարտքը»²³: Թերթը դժգոհ է նման օգնությունից և կոչ է անում Ղարաբաղի հայերին՝ օգնությունը դարձնել ավելի շնչափելի ու կոնկրետ: Օրինակ է բերվում ռուս ժողովրդի ցուցաբերած աջակցությունը հայ փախստականներին: «Պետրոգրադը հայերին» ինֆորմացիայի մեջ պատմվում է, որ պետրոգրադցիները նվիրատվություններ (դրամ և հագուստ) են կատարում հայ բազմաառանջ աշխատավորների համար և ձգտում են անեն կերպ ամոքել թուրք մարդասպանների կողմից հասցրած վերքերը:

Թերթը հույսը չի կորցնում, հավատ է ներշնչում ընթերցողներին, որ դրությունն այսպես երկար չի շարունակվի, մութ գիշերին կհաջորդի լուսաբացը, խավար աշխարհը մի օր արելով կփոխարինվի, և մարդկային կյանքը կդառնա ազատ, անկաշկանդ: «Փայլակը» մեծ մասամբ այդ արտահայտում է գեղարվեստական խոսքով, լեզվական պատկերավոր միջոցներով:

Գրական ստեղծագործություններով հանդես են գալիս մասնավորապես Գրիգոր Ներսիսյանը, Գառնիկ Ղազարյանը²⁴, Լևոն Վարդունին և ուրիշներ:

²³ «Փայլակ», № 4, 1915, մարտի 19:

²⁴ Ծնվել է 1888 թ., Գորիսի շրջանի Բարսիմունջ գյուղում: Պատանի հասակից բանվորություն է անում Բաքվի նավթահանքերում: 1906—1911 թթ. ավարտում է Բաքվի Մեարդյան դպրոցը: 1914 թ. սկսած նրա բանաստեղծություններն ու պատմվածքները լույս են տեսնում պարբերական մամուլում: 1916 թ. դառնում է ՌՍԴ(բ)Կ Թիֆլիսի կոմիտեի անդամ: Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումից հետո նա ծավալում է կուսակցական, խորհրդային Բուհերում աշխատանքը. 1922—1924 թթ. ղեկավարում է կուսակցության Զանգեզուրի գավկոմը, 1925—1929 թթ.՝ «Մանկալ» թերթը, 1929—1938 թթ.՝ Հայաստանի գլավկոմը և ՀՀԳ-ն: Մահացել

Այդ բանաստեղծներից ամենից նշանավորը Գրիգոր Ներսիսյանն էր, բարձր կուլտուրայով ու ձևավորված աշխարհայացքով մի մարդ, որի ստեղծագործություններն անդրկովկասյան հայ մամուլում հրատարակվում էին դեռևս ռուսական առաջին հեղափոխության օրերին:

Առաջին իսկ ռուսավորից բանաստեղծն իր վրա է բեռնում ընթերցող հասարակության ուշադրությունը. երևում է նրա սեփական ոճն ու տաղանդի ինքնատիպությունը, միտքը, գաղափարը գեղեցիկ արվեստի մեջ ամփոփելու կարողությունը:

Գրիգոր Ներսիսյանը կյանքից կտրված ստեղծագործող չէր, նրա խոսքը ներդաշնակ էր իրականությանը և ըստ այդմ էլ հնչում էր աշխատավորի սրտին հարազատ: Նա բանաստեղծությունների շարք ունի՝ նվիրված «Սև հուշերին», որոնց մեջ հիմնականում հրատարակ է հանվում գրողի խիստ դժգոհությունը մոռալ իրականության նկատմամբ: Բայց նա գրեթե բոլոր գործերում էլ զարմանալիորեն կարողանում է կարեկցանքի հետ միասին լավատեսությամբ համակել ընթերցողին, անուղղակի կերպով արտահայտել կյանքի առաջընթացը, երևան հանելով այն ճշմարտությունը, որ ժամանակի հետ փոխվում են իրադրությունը, երևույթները, մարդիկ և որ օր-օրի հզորանում է աշխատավորների ուժը շահագործողական լուծը տապալելու համար:

Բանաստեղծը կոչ է անում ազնիվ մարդկանց՝ միանալ հարյուրների, հազարների, ձուլվել նրանց հոգուն և կյանքի արշալույսը կռել միասնաբար:

Հեղափոխությունից առաջ նրա համար սկսվում է ստեղծագործական մի նոր շրջան, երբ գրողն անվարան կանգնում է աշխատավորների կողմը և պարզ տեսնում, որ սև ամպերը ցրվում են, և արդեն հավվում են «սառցե շղթաները»:

Բանաստեղծը տեսնում է, որ հետզհետե նոր ծավալ է ստանում հեղափոխությունը, հետզհետե հուսալի է դառնում նոր կյանքի այգաբացը: «Նոր այգ» բանաստեղծության մեջ նա ասում է.

Եվ ես տեսնում եմ այդ հուսառու,
Այդ այգը նորոգ հանգիստ կրերի

Սչնտեղ բաներում խավարին գերի
Հեգ բանտարկչային անուժ ու անույս...
Սչգը հուսառու իր նորոգ կյանքի
Հսկա մրրիկից նոր ծավալ կառնե
Կապրի հուսալի ու անշեջ հրով²⁵:

Գրիգոր Ներսիսյանի բանաստեղծություններն ավելի մարտական և ցատունակից են դառնում 1916—1917 թթ., երբ հեղինակն իրերի բերումով գտնվում էր Պետրոգրադում: Անկասկած, հեղափոխության մեծ օրրանը, նրա քաղաքական իրադարձություններն ու խմորումները, մասնաշաղկապ ցույցերը և օրավոր աճող պայքարն իրենց բարերար ազդեցությունն էին ունենում հայ բանաստեղծի վրա: Նա սկանառես էր լինում շատ ու շատ երևույթների և ձգտում էր դրանք մարմնավորել գեղարվեստական խոսքի միջոցով:

Պետրոգրադը նրա համար ոչ միայն հեղափոխական պոռթկումների քաղաք էր, այլև՝ Ռուսաստանի մայրաքաղաք, ուր «եսը ձուլվում էր հզոր մենքի մեջ» և վիթխարի ուժի ստջև օրորվում էր ռոմանովների երեքհարյուրամյա դինաստիան:

Ծիշտ է, նրա մի շարք ստեղծագործություններում, ինչպես օրինակ՝ «Ծովափին», «Ռոմանս», «Լացող աղջիկը» և այլն, հիմնականում արտահայտվում են մարդու անհատական սպրուններն ու մտորումները, ներքին զգացումնքն ու սիրո ելևէջները, բայց սրանց մեջ ևս այս կամ այն չափով ճշմարվում են պայծառ գալիքն ու այգաբացը, գեղարվեստական արտահայտություն են ստանում բարեկամության ու եղբայրության գաղափարները:

Մարտական շնչով է հնչում հեղինակի խոսքը պորտաբույծների հասցեին, որոնք բազմել են այնպիսի տաբուկ ու վեհաշուք պալատների մեջ, որոնց կամարների ներքո ոճիրն է թագավորում: Բանաստեղծն անվարան է իր համոզմունքների մեջ և ապրել է ուզում մինչև այն ժամանակ, երբ հիմնովին կփլվեն այդ տաճարներն ու ամրոցները, և նրանց տեղը կբարձրանան քրտիճքով կառուցված շենքերը:

Գտնիկ Ղազարյանի բանաստեղծություններում նոր օրերի հավատն արտահայտվում է մարտական շնչով: Նրա միտքը, գաղափարը պարզ է, չի խճողվում ավելորդ պաճուճանք-

²⁵ «Փայլակ», № 74, 1916, սեպտեմբերի 25:

ների մեջ: Աշխատավորների բաղձալի ժամը՝ հաղթանակ ձեռք բերելու պահը, նա մարմնավորում է երբեմն պատկերների, երբեմն էլ համեմատությունների ուժով:

Լևոն Վարդուհինն ևս շատ ժամանակ իր տեսակետն ու մտահղացումները հրապարակ է հանում չափածո խոսքի միջոցով: Բանաստեղծը չի ուզում, որ այլևս իր հայրենիքում լինի լաց, հեկեկանք: «Նոր տարուն» բանաստեղծության մեջ նա գրում է.

Թե հայրենիքիս խոսքն դաշտերում
Նորից պիտ լավի լաց ու հեկեկանք,
Եվ դժբախտ հայի ցավատանջ հոգում
Դարձյալ պիտ ծնվի մի նոր տառապանք,
Թե հայը նորից դառնալի լացով
Անտես պիտ թողնի օջախն հայրենի՝
Եվ մերկ ու բոքիկ, բաղցից նվազած՝
Անվերջ պիտ բախի դուռը օտարի,
Իզուր ես գալի,
Այ դու նոր տարի՞՝:

Հեղինակը երգում, դրվատում է այն մարդկանց, ովքեր չէին վհատվում, տոգորված էին անպայման հաղթելու վճռականությամբ, ովքեր հաղթանակը կոռն էին անձնվիրաբար:

«Փայլակում» հանդես եկող հեղինակները դրվատում են հեղափոխության մարտիկներին, նրանց ներկայացնում որպես նոր կյանքի հերոսներ, որոնք օժտված են առասպելական ուժով, ազնիվ են, բարի ու վեհանձն: Արցախի ստեղծագործողները, շահագրգռված լինելով աշխատավորների հոգսերի վերացմամբ, ձգտում էին չափածո և արձակ խոսքի ներգործուն ուժով աջակցել մեծ պայքարի հաղթանակին, դուրս բերել նրանց լուսավոր ափեր:

Թերթի էջերում տպագրվող ինքնուրույն ստեղծագործությունների կողքին տեղ էին գտնում նաև թարգմանական գործեր, մեծ մասամբ նույնիսկ ու պատմվածքներ:

Հետաքրքիր մտքեր են պարունակում գրականագիտական հոդվածները: Երբեմն էլ թերթն առանձին էջեր և նյութեր էր նվիրում այս կամ այն ստեղծագործողին: Արժեքավոր է մասնավորապես 1917 թ. ապրիլի 16-ի համարում տպագրված

«Վշտի երգիչը» ծավալուն հոդվածը՝ Ալեքսանդր Ծատուրյանի հիշատակին: Հոդվածագիրը բավական հարուստ փաստերով ներկայացնում է գրողի կյանքն ու գրական գործունեությունը, կանգ առնում մի քանի բարձրարժեք բանաստեղծությունների վերլուծման վրա:

Տպագրվում էին նաև երգիծական նյութեր, որոնք հիմնականում նվիրված էին Ծուշիի տխուր առօրյայի բացահայտմանը: Երբեմն որոշ փորձեր էին արվում հեզնական տոնով պախարակելու քաղաքի վերադաս մարմինների անգործունեությունը և նրանց ղեկավարման արատավոր ոճը, բայց այստեղ «Փայլակը» համարձակություն հանդես չի բերում և բավարարվում է միայն մի քանի դիտողություններով, այսպես ասած՝ էականը մնում է սուլերի տակ: 1915 թ. ապրիլի 5-ի համարում լույս տեսած «Քաղաքային դումայի նիստը» վերնագրով ֆելիետոնը դրա վկան է: Նշենք նաև, որ տպագրված բոլոր ֆելիետոնները գրված են Ղարաբաղի բարբառով:

Թերթի տեսադաշտից դուրս չի մնում հակահեղափոխական տպագիր օրգանների խարազանումը, որոնք փորձում էին սուտը անցկացնել ճշմարտության տեղ:

Հայտնի է, որ Բաքվում 1914—1919 թթ. լույս տեսնող «Արև» թերթը ազնիվ մարդկանց և բարեգործական քննչությունների հասցեին հերյուրանքներ էր տարածում: Եվ պատահական չէր, որ գրեթե բոլոր առաջադիմական տպագիր օրգանները միշտ էլ հանդես էին գալիս «Արևի» դեմ: «Արևի» կեղծ փաստարկների և նրա անհիմն եզրակացությունների դեմ «Փայլակի» ելույթներն ավելի մարտական էին 1916 թ. սեպտեմբերի 25-ի («Սրտացավ արևը»), 1917 թ. փետրվարի 9-ի («Որոտ «Արևի» էջերից») և այլ համարներում:

«Փայլակը» քննադատում է նաև 1917 թ. մայիսից Ծուշիում լույս տեսնող «Ապառաժ» թերթը, որի խմբագիրը Ղուկասյան դպրոցի տեսուչ Հայրապետ Մուսայելյանն էր: «Ապառաժը» մերկացվում էր հատկապես քաղաքական հարցերում աշխատավորներին ճիշտ ինֆորմացիա չտալու համար:

«Սոցիալիստ» անցիոնալիստների հետևողականությունը»²⁷ ծավալուն հոդվածում «Փայլակը» բավականին հանգամանորեն վերլուծում է «Ապառաժի» 1917 թ. 5-րդ համարում զետեղ-

²⁶ «Փայլակ», № 1, 1917, հունվարի 1:

²⁷ «Փայլակ», № 40, 1917, հունիսի 25:

ված մի հոդվածը, որի հեղինակը («Գ. Կիր.» ստորագրությամբ) միանգամայն սխալ կարծիք ուներ համաշխարհային պատերազմի ծագման ու նպատակների մասին:

«Փայլակը» ուղղակի ասում է, թե «խնայերիալիստների ռեկլամներով սուղորված «սոցիալիստը» (խոսքը «Ապատաժում» տպագրված հոդվածի հեղինակի մասին է.— Ս. Ա.) իզուր է կոչ անում հայրենակիցներին կուլելու հանուն բուրժուազիայի աշխարհակալական ձգտումների, այժմ ամեն մի զինվոր գիտե իր անելիքը»²⁸:

«Փայլակը» տպագրած նյութերով նպաստում էր այնպիսի դեմոկրատական կարգերի ստեղծմանը, որոնք ապահովեին ազատ ու խաղաղ կյանքը, ստեղծագործական աշխատանք կատարելու անհրաժեշտ պայմանները: Նա պաշտպանում էր այն ստողջ միտքը, որ միայն Ռուսաստանին ապավեն լինելով հնարավոր է լիովին ազատագրվել անցյալի մղձավանջից, բռնել իսկական ուղի, որ տանում է դեպի գեղեցիկ ապագան:

«Փայլակը» մեծ ցնծությամբ է ընդունում Շուշիում սոցիալ-դեմոկրատական կազմակերպություն ստեղծելու լուրը: Թերթի խմբագրականը վերնագրվում է՝ «Ռոջումում ենք»: Ահա ինչ ենք կարդում այստեղ. «Փայլակի» անցյալ համարում հաղորդել էինք, որ Շուշիում արդեն կազմակերպվում է սոցիալ-դեմոկրատական կուսակցություն...

«Փայլակը», որ այդ գաղափարների ջերմ պաշտպանն է հանդիսացել ու ջանացել է այդ գաղափարներին ծառայել՝ չնայած աննպաստ պայմաններին, չի կարող իր խնդակցությունն ու անհուն ուրախությունը չհայտնել, որ վերջապես մեր գավառական նեխված իդեական մթնոլորտում հանդես է գալիս մի թարմ գավառական հոսանք, որ մեծ դեր ունի կատարելու և նույնքան ավելի մեծ, հսկայական աշխատանք ունի արժարժելու տեղական բաղաբանական-հասարակական կյանքի բարեփոխության մեջ»²⁹:


1917 թ. 33-րդ համարից սկսած «Փայլակն» իր ճակատին գրում է «Քաղաքական-հասարակական սոցիալ-դեմոկրատական թերթ» և «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք»: Թերթըն իր էջերում լայն տեղ է տալիս Ռուսաստանի սոցիալ-

դեմոկրատական բանվորական կուսակցության Շուշիի բյուրոյի աշխատանքը լուսաբանող նյութերին:

Ի՞նչն է «Փայլակին» ավելի հետաքրքիր դարձնում ընթերցողների շրջանում. այն, որ վերջիններս այնտեղ գտնում են իրենց հուզող առանձին հարցերի որոշակի պատասխանները, և միտքը պատշաճ մարմնավորվում է լրագրային տարբեր ժանրերով գրված նյութերի մեջ:

Շատ հարցեր էր բարձրացնում «Փայլակը» և իր համեստ ուժերով ձգտում էր նպաստել դրանց լուծմանը: Նա իր շուրջը համախմբել էր Ղարաբաղի առաջավոր մտավորականներին, բանվորներին և գյուղացիներին, այդ թվում նաև Շուշիի ռեսուլյան, Մարիամ-Ղուկասյան օրիորդաց, հայոց թեմական դրպրոցների բարձր դասարանների աշակերտությանը:

Թերթի խմբագիր-հրատարակիչ Լևոն Վարդապետյանը (մեծ մասամբ «Լ. Վ.» ստորագրությամբ) հիմնականում գրում էր պատերազմական իրադարձություններին նվիրված ակնարկներ, քաղաքական կյանքը լուսաբանող տեսություններ, պամֆլետներ և այլն: Արժանատաճողական մակարդակից և ոճից ըզգացվում է, որ թերթի մի շարք առաջնորդողների ու խմբագրականների հեղինակը Լ. Վարդապետյանն է: Այդ կարգի հոդվածների նյութը հիմնականում տեղական ստորյան է, գավառի հոգսերը, գյուղացիության ծանր վիճակը, հետամնացությունն ու տգիտությունը:



«Փայլակ» թերթի խմբագիր-հրատարակիչ Լևոն Վարդապետյան:

«Նստուման» ծածկանվան տակ հաճախ հոդվածներ ու թրղթակցություններ էր տպագրում Առաքել Սուաքելյանը, որը մտահոգված էր մասնավորապես կուլտուր-լուսավորական հարցերի

²⁸ Նույն տեղում:

²⁹ «Փայլակ», № 28, 1917, ապրիլի 28:

լուսաբանմամբ: Նրան հետաքրքրում էր նաև բանվորների և գյուղացիների տնտեսական տխուր կացությունը: Այդ շարքի նյութերից էին «Միլիտարիզմը և գյուղացիությունը» (№ 39, 1917 թ., հունիսի 22), «Ծաքարի բաշխումը Ծուշի քաղաքի մեջ» (№ 35, 1917 թ., հունիսի 8) և այլն:

Մեծ մասամբ տեսական հոդվածներով հանդես էր գալիս Սարգիս Դանիելյանը («Ս», «Ս. Դանիելյան», «Մուր. Դան», «Ս. Դ.» և այլ ստորագրություններով): Արժե նշել նրա հոդվածներից, օրինակ, «Ինչպե՞ս էին մեզ թալանում հին կառավարության ժամանակ կամ ինչպե՞ս էին հարկեր հավաքում» (№ 30, 1917 թ., մայիսի 4 և այլ համարներում), «Պահպանողական կամ բուրժուական սոցիալիզմը համերաշխության պատգամներով» (№ № 37 և 38, 1917 թ., հունիսի 15 և 16), «Գավառի կազմակերպության խնդիրը» (№ 27, 1917 թ., ապրիլի 23) և ուրիշներ: Նրա գրիչը սուր էր, մարտական, հեղինակն աչքի էր ընկնում նյութը մատչելի, անպաճույճ մատուցելու շնորհքով: Իր հոդվածներում մերկացնում էր նրանց, ովքեր անասան չէին իրենց դիրքերում և բավարարվում էին միայն բանվորների անուճից ելույթ ունենալով:

Բավական ակտիվ էր գործում Խաչիկ Սամվելյանը³⁰, որը հանդես էր գալիս «Նիմանդ», «Խ. Ա.» և այլ ծածկանուններով: Մի որոշ ժամանակ դառնում է «Փայլակի» խմբագիրը (1917 թ., № 33-ից մինչև № 40-ը): Նրա հոդվածները շոշափում էին ամենատարբեր հարցեր, երբեմն հանդես էր գալիս արտաքին դրության, առանձին երկրների հարաբերությունների վերաբերյալ կազմած տեսությամբ, մի այլ անգամ խոսում էր գավառի հոգուերի մասին, մերկացնում էր անազնիվ, երկերեսանի մարդկանց: «Արձագանքներ» ընդհանուր վերնագրի տակ Խ. Սամվելյանը գետեղում է «Թող են փշում մեր աչ-

³⁰ Ծնվել է 1873 թ., Կերչ քաղաքում: Սկզբում ավարտել է Թեոդոսիայի գիմնազիան, իսկ 1900 թվականին՝ Պետերբուրգի համալսարանը: Սովորում է նաև արտասահմանում՝ Յենայի համալսարանում: Ակտիվորեն մասնակցում է ուսանողական շարժումներին: Նրա գործունեությունը հիմնականում ծավալվում է Կովկասում: 1921 թ. տեղափոխվում է Երևան և 1922-ից դասախոսական աշխատանքի անցնում պետական համալսարանում: Գիտամանկավարժական աշխատանքի հետ միասին նա հետաքրքիր հոդվածներով հաճախ հանդես է գալիս խորհրդահայ պարբերականներում: Մահացել է 1940 թ.:

քերին...» հոդվածը, ուր քննադատում է այն մարդկանց, ովքեր «աշխարհիս ուժեղների սուսչ սողալիս ու քծնելիս» գիտեն պահել իրենց գոռոզ ու ինքնահավան, «կոխկրտելով ըստանձնած հասարակական պարտականությունները, ծակ ու ծուկ են որոնում հերոսական փախուստի, միայն թե փրկեն իրենց թանկագին կյանքը»³¹: Այդ միտքը նա զարգացնում է մի այլ՝ «Ծաղր թե՞ ապտակ» հոդվածում: Նա գրում է, որ մարդը պարտաճանաչ պետք է լինի իր պարտականությունների կատարման մեջ և ուժերի ներածին չափով նպաստի մարդկության բարօրության գործին:

Նրա խմբագրական աշխատանքն ուներ ուսանելի որոշ կողմեր, պատմում է Ս. Առաքելյանը: Սիրում էր տպագրել լրագրային բոլոր ժանրերով գրված նյութեր, բայց գերադասում էր ֆելիետոնը: Նա խնդրում էր առանձին մարդկանց հանդես գալ ֆելիետոններով: Չնայած ավարտել էր ուսական գիմնազիան, բայց տիրապետում էր աշխարհաբարին և գրաբարին:

Հոդվածներով, թղթակցություններով և նամակներով հանդես էր գալիս թերթի պատասխանատու քարտուղար, բոլշևիկ Մելիքետե Եսայանը՝ հաճախ «Մելք. Եսայան», «Մ. Ե.» ստորագրություններով: Նրա նյութերը մեծ մասամբ տպագրվում էին «Մեր թղթակիցները» ընդհանուր խորագրի տակ: Նա պարսավանքի էր ենթարկում նրանց, ովքեր գիտեին միայն կուրծք ծեծել, ծրագրեր կազմել, բայց իրականում ոչինչ չէին անում:

Սարկազմով էին համեմված թերթի մեկ այլ ակտիվ աշխատակցի՝ Գր. Տեր-Ավետիսյանի հոդվածներն ու թղթակցությունները: Նա կոչ էր անում ընթերցողներին՝ հանդես բերել եռանդ ու անկոտրում կամք հարցերի լուծման մեջ: Պետք է լինել գործի և ոչ թե խոսքի մարդ, ասում էր նա: «Պետք է գործել» հոդվածում Գր. Տեր-Ավետիսյանը գրում է. «Երկրներ են ավերվել, քաղաքներ ու շեն գյուղեր սրի ու կրակի ճարակ դարձել, իսկ բնիկները մերկ ու սոված, կյանքի անողոք ակատագրին մատնվել:

Ամենուրեք՝ կրակ, մահ, սարսափ:

Ընդհանուր լքման ներկա օրերում, վախկոտներն ու աշխատեցվածներն են միայն, որ կարող են հուսահատվել ու լռել:

³¹ «Փայլակ», № 1915, մարտի 8:

Ամբողջ մտքից բխող խոսք ու այդպիսով առաջնորդվող գործ է պահանջվում մեզանից, որին և ձգտելու ենք ըստ չափ ու կարողության, հնարավոր սահմաններում»³²:

Տարբեր թեմաներով գրված թղթակցություններով և նամակներով «Փայլակի» էջերում հանդես էին գալիս գալստական դպրոցի ուսուցիչներ Ս. Տեր-Գասպարյանը, Ստ. Շերմազյանը, Տեր-Հովհաննիսյանը, Տ. Տեր-Գրիգորյանը, իրավաբան Ստ. Մանդինյանը և շատ ուրիշներ:

Ընթերցողներն անհամբեր սպասում էին «Փայլակի» հերթական համարի լույս ընծայմանը: Նա բազմաթիվ բաժանորդներ ուներ նաև Ղարաբաղի սահմաններից դուրս, որոնցից շատերը թերթին աշխատակցում էին մեծ եռանդով, ուղարկում էին բազմաժանր նյութեր, գրական ստեղծագործություններ: Սերգեյ Կարգանյանը մեզ համար գրած հուշերում պատմում է. «Երիտասարդ բանաստեղծ Գրիգոր Ներսիսյանը Ղարաբաղի հայոց թեմական դպրոցն ավարտելուց հետո բանակ է գորակոչվում: Նա գտնվում էր Պետրոգրադում և կանոնավոր ստանում էր «Փայլակը», բանաստեղծություններ ու նամակներ ուղարկում խմբագրությանը: Նրա նամակագրական կապը խմբագրության հետ մեծ օգուտ էր բերում: Խմբագրությունը նրա միջոցով իրազեկ էր ցարական Ռուսաստանի մայրաքաղաքի՝ Պետրոգրադի եռուզեռին, քաղաքական ու հասարակական կյանքին, աշխատավորների տրամադրություններին, նույնպես և հեղափոխական ելույթներին:

1916 թ. դեկտեմբերն էր. ծանր ձմեռ էր, դուրսը ցուրտ. տողերիս գրողը խմբագրության քարտուղար Մելիքսեթի հետ գրուցում էր, իսկ բանվորները պատրաստվում էին թերթի հերթական համարի տպագրմանը, երբ ներս մտավ խմբագիրը, մի ծրար ձեռքին: «Այս նամակը նոր ստացա. բանաստեղծություն է ուղարկել Գր. Ներսիսյանը, որից կարելի է կուսիել, որ Պետրոգրադը հողի է հեղափոխական ելույթներով: Այս համարում բանաստեղծությունը պիտի անպայման տեղավորել», — ասաց խմբագիրը:

Տպարանատեր Մ. Բաբաջանյանի բողոքին հակառակ, գրաշարը, առանց մեր խնդրանքի, վերցրեց բանաստեղծությունն ու սկսեց շարել և յուրաքանչյուր տողը վերջացնելուց

³² «Փայլակ», № 58, 1916, հուլիսի 31:

քարձրաձայն ոգևորությանը ընթերցել: Բանաստեղծությունը տեղավորվեց էջում. մենք դուրս եկանք տպարանից, երբ տրպագրիչն սկսեց տպել, մեզ հետ տանելով «Փայլակի» թարմ համարը, որում զետեղված էր գալիք հեղափոխական պոռթկումների մարգարեությունը»:

Հետզհետե աճում էր թերթի հեղինակությունը: Դրա արտահայտություններից մեկն այն էր, որ «Փայլակի» օրինակով Ծուշիի դպրոցներում ստեղծվում էին խմորատիպ թերթեր, որոնք պայքարում էին թշնամական գաղափարների դեմ:

«Փայլակը» գործել է դժվարին պայմաններում: Այս մասին թերթը մի քանի ատիթներով է հիշում: 1916 թ. դեկտեմբերի 1-ի համարում «Փայլակի» ընթերցողներին» հողվածում ասվում է. «Երկու տարի, փոքր ընդմիջումներով, մեր թերթը կարողացավ պարբերաբար լույս տեսնել և իր գոյությունը ապացուցել, թե որքան անհրաժեշտ է նա զգացվել մեր գաղափարական իրականության մեջ:

... Ահա այն անհրապույր հանգամանքներում է գործել «Փայլակը», այդ դաժան պայմաններում է նա քարձր բռնել իր դեմոկրատիկ դրոշակը և ներածին չափ ծառայել գալստի կուլտուրական զարգացման ու մտավոր առաջադիմության...»: Իրոք, թերթը քիչ բան չարեց գալստի առաջադիմության համար մղվող պայքարում:

«Փայլակին», ինչպես ասվեց սկզբում, աշխատակցում էին և բոլշևիկներ (Ս. Դանիելյան, Գր. Ներսիսյան, Գ. Ղազարյան, Լ. Վարդունի, Մ. Եսայան և ուրիշներ), և մենշևիկներ: Սա պատահական երևույթ չէր: Ոչ միայն Ղարաբաղում, այլև Անդրկովկասի մի շարք այլ վայրերում մինչև 1917 թ. առաջին մի քանի ամիսները բոլշևիկներն ու մենշևիկները գործել են միասին և միացյալ ուժերով էլ հրատարակել են տպագիր օրգաններ: Ամենից առաջ հիշենք 1915 թ. Թիֆլիսում լույս տեսնող «Պայքար» թերթը:

Հին բոլշևիկներ Լևոն Վարդունին և Սիմոն Ավիյանը գրավոր կերպով հավաստում են, որ Ծուշիի ս-դ. բոլշևիկյան ու մենշևիկյան կազմակերպությունները աշխատում էին միասին մինչև 1917 թ. հուլիս ամիսը, որից հետո տեղի է ունենում պաշտոնական բաժանումը:

Ծիշտ է, որոշ ժամանակ «Փայլակի» խմբագիր-հրատարակիչ Լևոն Վարդապետյանը գտնվել է մենշևիկյան կուսակցու-

թան մեջ, բայց նշենք նաև, որ պատասխանատու քարտուղարը բոլշևիկ էր: Եվ, վերջապես, Լևոն Վարդապետյանը պատահական մարդ չէր, նա իր հեղափոխական գործունեությունը սկսել է Բ. Կոմունյանցի և մյուսների հետ, մասնակցել մի շարք գործադրումների: 1920 թ. գտնվելով Վրաստանում, բոլշևիկների շարքերն է մտել մինչև այդտեղ խորհրդային կարգերի հաստատումը:

Եթե քաղաքական-գաղափարական տեսակետից «Փայլակը» սուր սայթաքումներ գրեթե չէր կատարում (հատկապես վերջին շրջանում), ապա նույն բանը չի կարելի ասել քաղաքական կոլտուրայի, գետնովող նյութերի որակի, թերթի ձևավորման մասին: Այնուամենայնիվ, նա ամբողջությամբ, մասնավորապես արձարժված հարցերի տեսակետից, կարևոր էջ է կազմում Արցախի նախախորհրդային շրջանի պարբերական մամուլի պատմության մեջ:

«ԾԻԱԾԱՆ»

Գեղարվեստական խոսքի միջոցով մարդու հուզաշխարհը, ակնկալություններն ու իդեերը արտացոլվում են պատկերավոր, տպավորիչ: Եվ պատահական չէր, որ նախախորհրդային շրջանում Ղարաբաղի մտավորականության ուժերով հրատարակվում էին նաև գրական ամսագրեր, հանդեսներ, ժողովածուներ, որոնք բովանդակում էին արձակ և չափածո ստեղծագործություններ:

Ինչ խոսք, գրական այդ պարբերականներն ու ժողովածուները լույս էին տեսնում մեծ դժվարությամբ. անմխիթար էր ոչ միայն տպարանական բազան, այլև չկային ֆինանսական միջոցներ: Պետությունը ոչ մի կոպեկ չէր տրամադրում ազգային լեզուներով որևէ թերթ կամ ամսագիր հրատարակելուն:

Կոլտուրական-լուսավորական որևէ գործ ձեռնարկելու համար անհրաժեշտ էր դրամական միջոցների հայթայթում: Ահա թե ինչ է պատմում Լևոն Վարդունին մեզ համար գրած իր հուշերում. «1915 թվականին էր. մեր Ծուշի հոշակապ քաղաքի գեղեցիկ ամառն էր. ես թեմական դպրոցի վերջին ավարտական դասարանի աշակերտ էի. գրում էի բանաստեղծություններ և գրավոր կապ ունեի մի շարք երիտասարդ գրողների՝ Գառնիկ Ղազարյանի, Ավագ Կոծինյանի¹, Խորեն Լորենցի հետ, որոնք հենց այդ ամառ պետք է գային Ծուշի՝ հանգրս-


¹ Ծնվել է 1891 թ., Գուգարքի շրջանի Համգաշիման գյուղում: Հայրենի ծխական դպրոցն ավարտելուց հետո 1907 թ. ընդունվում է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, ուր և մասնակցում է դասադուլներին: Բարձր մտտիկից ծանոթանում է բանվորական կյանքին, ստեղծելով մի շարք գեղարվեստական պատկերներ: Գրել է բանաստեղծություններ, պատմվածքներ, ֆելիետոններ: Մահացել է 1918 թ.՝ քաղաքացիական կռիվների ժամանակ:

տանալու: Այդ ամստ Շուշի էր եկել Ազատ Վշտունի², եկան նաև վերոհիշյալ ընկերները, և սկսվեց մեր գրական կյանքը: Ամեն օր հավաքվում էինք և ընթերցում մեր բանաստեղծությունները. արձակ գրում էր միայն Ավագ Կոծիկյանը: Մի օր որոշեցինք հիմնել ամսագիր, բայց որովհետև բոլորս երիտասարդ էինք, մեզ չէին թույլատրի հրատարակելու: Այդ ժամանակ Շուշիում էր ուսուցիչ և գրող Միսաք Պետրոսյանը³, որը տարիքով բոլորիցս մեծ էր. նա հավանություն տվեց մեր մտահղացմանը և համաձայնվեց լինել պաշտոնական խմբագիր: Դժվարությունը միայն նյութականի հարցն էր: Ես այդ ժամանակ լավ ձայն ունեի և Շուշիում եղած բոլոր համերգների մասնակցում էի: Որոշեցինք կազմակերպել մի համերգ: Այդպես էլ եղավ. կազմակերպեցինք համերգ Ղուկասյան օրիորդաց դպրոցի դահլիճում: Համերգում երգելով հանդես եկա ես, կիթառով՝ իմ ընկերներից մեկը՝ Հովհաննես Թորոսյանը, իրենց բանաստեղծությունների արտասանությամբ՝ Ազատ Վշտունին, Գառնիկ Ղազարյանը, Խորեն Լորենցը:

Այդ տարի հյուրախաղերով Շուշի էր եկել Հովհաննես Աբելյանի խումբը, Արուս Ոսկանյանը նույնպես այդ խմբում էր: Խնդրեցինք Արուսին հանդես գալու մեր համերգին՝ իր արտասանությամբ: Նա իմանալով մեր համերգի նպատակը, ուրախությամբ համաձայնվեց: Նրա մասնակցությունը բարձրացրեց մեր համերգի հեղինակությունը: Դահլիճը լեցուն էր. համերգն անցավ մեծ հաջողությամբ, և ստացած եկամուտով մենք պատրաստեցինք մեր ամսագիրը, որն անվանեցինք «Ծիածան»:

² Ի դեպ, այդ մասին խոսում է նաև մեծատաղանդ արտիստ Վահրամ Փախազյանը «Հետադարձ հայացք» գրքի (Երևան, Հայպետհրատ, 1956 թ.) 373-րդ էջում, ընդգծելով, որ 1915—1916 թթ. Ազատ Վշտունին իր ամենաչերմ ու արտամոտ ընկերն էր Շուշիում:

³ Ծնվել է 1886 թ., Շուշի քաղաքում: Սկզբնական կրթությունը ստացել է ծննդավայրում, ապա Երևանի թեմական դպրոցում: 1908—1919 թթ. զբաղվել է մանկավարժությամբ, միաժամանակ հանդես գալով մամուլում: Խորհրդային տարիներին նա աշխատում էր ԼՂԻՄ Ասկերանի շրջանի Դաղբուլաղ գյուղում իբրև ուսուցիչ: Անտիպ մի շարք աշխատություններ ունի՝ մասնավորապես մանկավարժության դժով:



Այսպիսով «Ծիածանը» լույս ընծայեցինք 1916 թ.՝ միայն մեկ համար, որին մասնակցեցինք մենք բոլորս մեր ստեղծագործություններով:

Իհարկե, դժվարությունը միայն ֆինանսական միջոցներ ձեռք բերելու մեջ չէր, անհրաժեշտ էր վերադառնալ մարմինների թույլությունը:

Սկզբում հատուկ խնդրանք է ներկայացվում Ելիզավետպոլի նահանգապետին, ապա 1915 թ. հոկտեմբերի 29-ին հայտնվում է մամուլի գործերի Կովկասի կոմիտեին, որ վերջնականապես թույլատրվի Շուշի քաղաքի բնակիչ Միսաք Պետրոսյանին՝ տեղում հրատարակելու «Ծիածան» անունով ամսագիր:

Այն կազմված էր հետևյալ ծրագրով. 1. գրականություն՝ արձակագրություն և պոեզիա, 2. արվեստ, 3. գրաքննադատություն, 4. հայտարարություններ և 5. փոստարկղ⁴:

Թույլտվության մեջ շեշտվում էր, որ ամսագիրը պետք է լույս ընծայվի Մ. Բաբաջանյանի տպարանում, ամիսը մեկ անգամ: «Ծիածանի» վերահսկիչ էր նշանակված Շուշիի քաղաքային ուսումնարանի ուսուցիչ Հայկ Կոստանդյանը:

Ամսագիր-ժողովածուն լույս աշխարհ եկավ և իր մեջ ամփոփեց մի քանի գրողների ստեղծագործություններ: Տպագրվեցին Ա. Վշտունու «Կա և չկա, չէ...», «Անապատի մեջ» չափածո գործերը, Խ. Լորենցի «Ծակատագիր» բանաստեղծությունը, Լ. Վարդունու «Էլեգիա» արձակ բանաստեղծությունը, «Օձաբերդ» ժողովրդական լեգենդը, «Հարսնաբերդ» պոեմը, Գ. Ներսիսյանի «Ես գիտեմ» չափածո, Գ. Ղազարյանի «Ծաղիկը» արձակ և ուրիշ հեղինակների ստեղծագործություններ:

«Ծիածանն» ամփոփում էր մի կողմից՝ ռեակցիայի տարիներին ունեցած մարդկանց հիասթափությունը, թախիծը, իսկ մյուս կողմից՝ նրանց ձգտումը ազատության և երջանկության համար: Առանձին գործերում, թեև ոչ ուղղակի կերպով, բողոք է հայտնվում բուրժուական աշխարհի ապականության դեմ, մի աշխարհ, որ սերը, ընտանիքը, բարոյականությունը ունահարված են, և ամեն ինչ կառուցված է «դեղին սատանայի» ուժով:

⁴ Տե՛ս Վրացական ԽՍՀ պետական կենտրոնական պատմության արխիվ, ֆ. 480, ց. 2, գ. 1118, թ. 1:

Ա. Վշտունու «Կա և չկա, չէ...» բանաստեղծությունը զգացմունքային մի ստեղծագործություն է, որը մարմնավորում է մարդկային ներաշխարհը, տխրությունը, վհատ տրամադրությունը: Ծանր են դեպի հաղթանակ տանող ուղիները, բայց պետք է հաղթահարել, կոչ է անում հեղինակը: Մի այլ ստեղծագործությունում («Անապատի մեջ») հեղինակը ժամանակի համար կարևոր հարց է առաջ քաշում: Դա ճշմարտության վերահաստատումն է իրականության մեջ: Նա տալիս է մարդու, հասարակ մարդու երազանքը՝ ամեն ինչ ռեալ իրականության պես ճշմարտացի տեսնելու և անհողորդ պայքար մղելու՝ կյանքի արատները վերացնելու համար:

Միսաք Պետրոսյանի ստեղծագործությունների հերոսները նույնպես երազում են լավ օրեր, ձգտում նոր կյանքի, հեքիաթային աշխարհի: Սա մասնավորապես արտահայտվում է նրա «Կարավանս գալիս է» բանաստեղծության մեջ:

Բայց չգիտեմ
Ի՞նչ է բերում ինձ համար.
Նոր կյանք, մութագ,
Թե սին երա՞գ...

Իսկ «Հերոսի երազը» փոքրիկ պոեմի հերոսը ցանկանում է ոչ միայն նոր կյանք, այլև սերտ մտերմություն, ազնիվ սեր:

... Մեզ համար էլ թող ծաղկի
Նոր Արշալույս, Նոր-Տարի,
Մի տեղ ձուլվենք նոր կյանքում,
Հյուսվի մի՛ սիրտ, մի՛ հոգի...
Մեզ օրորեն անընդհատ
Նոր կյանք, Երազ ու Հեքիաթ:

Հեղինակը մի շարք ստեղծագործություններում⁵ (մի մասը՝ անտիպ) մարմնավորում է հայրենիքի սերը, կոչ անելով մարդկանց՝ ոչինչ չխնայել հայրենի տունն ու օջախը ազատ ու անկաշկանդ պահելու համար:

⁵ Վերջերս Միսաք Պետրոսյանի դուստրը՝ Արևիկը, որ բնակվում է Լեռնային Ղարաբաղի Ասկերանի շրջանի Ասկերան ավանում, մեր խնդրանքով մեզ տրամադրեց հոր անտիպ ստեղծագործությունները. դրանք արտահայտում են բանաստեղծի դժգոհությունը մուսլիմ իրականությունից: Խորհրդային շրջանում նրա գրածները հիմնականում հայրենասիրական երգեր են:

Խորեն Լորենցն իր ստեղծագործությունների մեջ փորձում է պայծառ կյանքի հավատը արտահայտել հետաքրքիր պատկերներով, ցույց տալ, որ մարդկությունն իր ուսերից դեն կըլպըրտի դարավոր լուծը և, ի վերջո, ուրախությունը կհամակի լայն զանգվածների: Սա պատկերվել է հատկապես «Ծակատագիր» բանաստեղծության մեջ, որով հենց բացվում է «Ծիածանը»:

Հեղափոխական մտքերով տոգորված բանաստեղծը կոչ է անում մարդկանց՝ խիզախորեն մտնել կյանքի հորձանուտը, չխուսափել դժվարություններից: Այս միտքը նա հյուսում է սիրած գույգի փոխհարաբերության ֆոնի վրա, շեշտելով, որ չպետք է վախենալ սև ճակատագրից:

«Ծիածանում» տեղ են գտել նաև Գառնիկ Ղազարյանի ստեղծագործությունները: Հեղինակն անմիջական է և իր սրտի խոսքը, զգացմունքը հրապարակ է հանում հուզաթաթավ կերպով: Նրա մոտ իշխում է կյանքի նկատմամբ ունեցած լավատեսությունը: Գորիսից ուղարկած մի անվերնագիր բանաստեղծության մեջ նա ուղղակի ասում է, որ արդեն «մոտ է վախճանը այս սև գիշերվա», որ «դրսում հնչում է աղմուկը կյանքի, զանգերը ուրախ դողանջներ են հյուսում»:

Գ. Ղազարյանն իր համեստ գրչով դրվատում է մարդկային առաքինությունները, շեշտում սիրո հավերժությունը: Առանց սիրո, ասում է հեղինակը, չկա կյանք, մարդկային սիրտ: Այս տեսակետից ուշագրավ է հատկապես «Ծաղիկը» արձակ բանաստեղծությունը, որը գրավում է «Ծիածանի» մեկ էջը: Ստեղծագործությունն ավարտվում է այս տողերով. «Եթե բնության մի խաղով պարտեզիս վարդերը չորանան ու կորչեն հավետ, ես արցունքիս բյուրեղներով կլցնեմ նրա բաժակը և նա չի թառամի...»:

Հեղինակը սերը համարում է բնությունից մարդուն տված ամենամեծ պարգևը: Սա սուսկ սիրո դրվատում չէ կամ էլ մաքուր սիրո գովերգում: Նման կարգի քնարական ստեղծագործությունների մեջ Գ. Ղազարյանը յուրահատուկ կերպով երգում է կենսասիրությունը, կյանքի հավերժական լինելը:

«Ծիածանում» տպագրվում է նաև շնորհալի պոետ Գրիգոր Ներսիսյանի բանաստեղծությունը՝ «Ես գիտեմ» վերնագրով: Նա աշխարհը համարում է ունայն, բայց սերը՝ հավեր-

ժական: Նա դեմ է վշտերին, լաց ու կոծին: Եվ սիրածին է դիմում կյանքի ուրախ շրջան թևակոխելու կոչով.

Այս, ես չեմ ուզում, որ դու լաս մի օր...
Մոռացիր դու ինձ, մոռացիր անգին...
Ես գիտեմ՝ կյանքը կանցնի նոր շրջան...

Լ. Վարդունին ձգտում է գեղարվեստի ուժով մարմնավորել կաշկանդված սերը, սիրո ողբերգությունը: Հեղինակն իր ուժերը փորձել է մի քանի ժանրերում. գրել է բանաստեղծություններ ու պոեմներ, լեգենդներ ու պատմվածքներ, որոնց մեջ, սակայն, կարևոր տեղ են գրավում նրանք, որոնց նյութը վերցված է ժողովրդական բանահյուսությունից: Նա միաժամանակ իր ստեղծագործությունների մեջ զարգացնում է ժողովուրդների բարեկամության գաղափարը:

Այս գրական ամսագիր-ժողովածուի թեմատիկան հարուստ է, ընդգրկում է կյանքի շատ բնագավառներ: Ուշադրությամբ է ընթերցվում նաև Ավագ Կոծիկյանի փոքրիկ պատմվածքը, որի վերնագիրն է՝ «Ատեսատառը»: Հեղինակը փոքրիկ մանրամասներով պատկերում է մարդու ցնծությունը կրթության վկայական ստանալու պահին: Պատմվածքի հերոսը՝ Մարությանը, օժտված է լավատեսությամբ, կյանքի նկատմամբ պայծառ հավատով: Նա պատրաստ է իր կյանքը նվիրաբերել հայրենիքին և ժողովրդին: Եվ այդ նպատակով փորձում է սիրած աղջկա՝ Մարգարիտի հետ մեկնել գյուղ:

Փոքրիկ մի պատկեր է Բ. Տեր-Դանիելյանի «Ո՛ր եմ, ո՛ր...» բանաստեղծությունը, որտեղ պատկերվում է մարդու թախիծը հարազատներին կորցնելու կամ նրանցից հեռու լինելու պահերին:

«Ծիածանում» տպագրված մի շարք ստեղծագործություններում երգիծական խոսքի ուժով ծաղրվում են գովողները, ուրիշի վաստակը յուրացնողները, քննադատվում են անբարոյականությունն ու ալլասերվածությունը: Առանձին գործերում աշխատանքի մարդը հակադրված է բուրժուական-քաղքենիական ճահին:

«Ծիածանի» արժեքը ամենից առաջ պայմանավորված է նրա արծարծած՝ այդ օրերին համահնչուն կարևոր հարցերով:

1917 թ. փետրվարյան բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունից հետո երկրի իրավիճակը մնում էր լարված: Ցարիզմի տապալումից հետո սկսվել էր նոր ժամանակաշրջան, իրադրությունը պահանջում էր նոր տակտիկա, ստրատեգիական նոր պլան: Իրավիճակից դուրս գալու ճիշտ ուղին ցույց տվեց հեղափոխության մեծ առաջնորդը իր «Նամակներ հեռվից» հոդվածների շարքում:

Բոլշևիկները հետզհետե ուժեղացնում էին քաղաքական աշխատանքը զանգվածների շրջանում: Ամենից առաջ նրանք շեշտում էին ամբողջ երկրում բանվորների ու գյուղացիների դեպուտատների խորհուրդներ, սահմանափակումներ, Կարմիր գլխարկի շուկատներ ստեղծելու կենսական անհրաժեշտությունը: Լենինը Ապրիլյան թեզիսներում որոշակիորեն սահմանել էր բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը սոցիալիստականի վերաճելու կուրսը:

Սա նշանակում էր, որ աշխատավորական լայն զանգվածների համար սկսվում է քաղաքական մի նոր շրջան, երբ երկ-իշխանությունը պիտի ավարտվի պրոլետարիատի դիկտատուրայի հաստատումով: Վ. Ի. Լենինը գրում է. «Ռուսաստանում ընթացիկ մոմենտի առանձնահատկությունը **անցումն է** հեղափոխության առաջին էտապից, որը պրոլետարիատի բավականաչափ գիտակից և կազմակերպված շիներու պատճառով իշխանությունը տվեց բուրժուազիային, **դեպի** նրա **երկրորդ** էտապը, որն իշխանությունը պետք է տա պրոլետարիատի և գյուղացիության ամենաչքավոր խավերի ձեռքը»¹:

Վ. Ի. Լենինը միաժամանակ բնութագրում է գալիք հեղափոխությունում բանվորների և գյուղացիների դերը և շեշտում, թե իշխանության կազմավորման քաղաքական որ ձևն է ավելի հարմարը: Եվ նա հանգում է Խորհուրդների հանրապետության ձևին:

Այդ օրերին բոլշևիկների կուսակցությունը առաջ քաշեց «Ամբողջ իշխանությունը Խորհուրդներին» լոզունգը: Այս ամենից առաջ նշանակում էր վերացնել երկիշխանությունը, ամբողջ

¹ Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 31, Ե., 1980, էջ 137:

իշխանությունը հանձնել բանվորների և զինվորների դեպուտատների խորհուրդներին:

Եթե մինչև հուլիսի 4-ը կուսակցությունը վարում էր հեղափոխության խաղաղ զարգացման քաղաքականություն, ապա դրանից հետո սկսվում է զինված ապստամբության կուրսը, որը ընդունեց կուսակցության 6-րդ համագումարը:

Համագումարի որոշումները կենսագործելու համար լայն պայքար ծավալվեց նաև Անդրկովկասում: Բոլշևիկներն օգտագործում էին բոլոր հնարավորությունները՝ հասնելու այն բանին, որ քաղաքային դումաներում և գյուղական ինքնավար օրգաններում ստեղծեն իրենց ֆրակցիան, առաջ քաշեն ամբողջ իշխանությունը ժողովրդին հանձնելու պահանջը, մերկացնեն և ձախողեն բուրժուական և մանրբուրժուական կուսակցությունների պլանները:

Հակահեղափոխական տարրերի մերկացման և նոր մարտերի պատրաստվելու համար բոլշևիկները օգտագործում էին ոչ միայն միտինգներն ու ցույցերը, այլև թերթերն ու հանդեսները: Նրանք իրենց հրապարակախոսական ելույթներում շեշտը դնում էին այն բանի վրա, որ բոլոր ազգությունների բանվորներն ու գյուղացիները ամուր պահեն պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշը և միասնաբար, համախմբված բոլշևիկների շուքը, գոտեպնդվեն շահագործողների դեմ վճռական մարտի:

Շատ բոլշևիկյան օրգաններ հանդես էին գալիս խմբագրությունների անունից, կոչ անելով բանվորությանը՝ ընթացալ սոցիալիզմի ուղիով: Մարտական էին հնչում 1917 թ. հունիս-հուլիս ամիսներին Ալեքսանդրապոլում հրատարակվող «Նոր կյանք» բոլշևիկյան օրգանի հետևյալ խոսքերը. «Բարձր բռնած **բոլոր ազգությունների** բանվորության և թշվառ գյուղացիության արյունաներկ կարմիր դրոշակը, «Նոր կյանքը» գնալու է մարդկության լավագույն ասպագայի՝ **սոցիալիզմի** անշեղ ուղիով»²:

Նույնաման կոչեր և մարտական շնչով գրված հոդվածներ են տպագրում Բաքվում լույս տեսնող «Սոցիալ-դեմոկրատը», «Բակինսկի ուսքոչին» և բոլշևիկյան այլ օրգաններ: Թերթերը լայնորեն լուսաբանում էին Անդրկովկասի տարբեր վայ-

² «Նոր կյանք», № 1, 1917, հունիսի 22:

րերում կատարվող հեղափոխական պայթյունները, ցույց էին տալիս դրանց քաղաքական կարևորությունը և նպատակամղումը:

Գալատներում էլ էին ակտիվացել աշխատավորական ընդվզումները: 1917 թվականի հունիս-օգոստոս ամիսներին Արցախում նոր ուժ ու որակ էին ստանում հեղափոխական խմբումները: Այդ նկատելի էր ոչ միայն Շուշիում, այլև գյուղերում: Գյուղացիներն այլևս չէին համբերում և չէին ենթարկվում տեղական իշխանություններին ու բեկերին:

Գյուղացիական հուզումներ տեղի ունեցան մի շարք գյուղերում: Գյուղացիները գրավում էին բեկերի հողերը, հրաժարվում հարկ վճարելուց, հարկահաններին դուրս էին վաճառում գյուղերից:

Ինչպես մյուս մի քանի գավառներում, այնպես էլ Շուշիում ստեղծվեցին արհեստակցական միություններ, որոնց նպատակն էր աշխատավորներին համախմբել իրենց շուրջը, շարունակել պայքարը լիակատար ազատության համար:

Ծարունակում էր իր անփառունակ գործունեությունը «Ժամանակավոր կառավարության Ղարաբաղի գործկոմը», նրա հետ զուգահեռաբար գործում էր բանվորների, զինվորների և գյուղացիների դեպուտատների խորհուրդը³: Առաջինին օժանդակում էր «Ազգային խորհուրդը»:

Բանվորներն ու գյուղացիները խիստ դժգոհ էին «Ազգային խորհրդի» և «Ժամանակավոր կառավարության Ղարաբաղի գործկոմի» գործունեությունից: Շուշիի բանվորների, զինվորների և գյուղացիների դեպուտատների խորհուրդը կոչ է անում քաղաքի և գավառի բնակիչներին՝ բարոյական և նյութական օգնություն ցույց տալ խորհրդին, համախմբվել նրա շուրջը, ամեն կերպ ամրապնդել 1917 թ. բուրժուա-դեմոկրատական հեղափոխությամբ ձեռք բերած նվաճումները:

Օրեցօր խտանում են հեղափոխականորեն տրամադրված մարդկանց շարքերը. շատերը, որ մի ժամանակ անտարբեր

էին քաղաքականության նկատմամբ, պթափվում են, ակտիվանում, մասնակցում կարևոր հարցերի լուծմանը:

Հեղափոխության աճին ու զարգացմանը մեծապես խթանում են տեղերում լույս տեսնող բոլշևիկյան տարբեր օրգանները, որոնց ոգին մարտական էր, խոսքը՝ ազդու, ներգործուն: Մամուլը կրթությամբ է պաշտպանում աշխատավորների շահերը և քաղաքական ճիշտ ուղի ցույց տալիս նրանց, կոչ անում լայն զանգվածներին՝ սերտորեն համախմբվել բոլշևիկյան կուսակցության շուրջը: Այդպիսի օրգաններից մեկն էր Շուշիում հրատարակվող «Նեցուկ» թերթը: Հենց առաջին համարից (1917 թ. օգոստոսի 18) նա իր ճակատին կրում էր «Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցություն» անունը և փաստորեն հանդիսանում էր ՌՍԴ(բ)Կ Շուշի կազմակերպության օրգանը:

«Նեցուկը» լավ է բնորոշում իր հրապարակ գալու նպատակը: «Ուրբաթ, 18-ին օգոստոսի» վերնագրի տակ կարդում ենք. «Ասպարեզ է իջնում մեր թերթը պաշտպանելու բանվորության և սեփականագուրկ գյուղացիության շահերը, դասակարգային գիտակցության հրավիրելու ժողովրդական ճնշված խավերին»⁴:



³ 1917 թ. մարտին Շուշիում ստեղծվեց բանվորների, զինվորների և գյուղացիների դեպուտատների խորհուրդ, որտեղ սկզբում մեծամասնությունը էին կազմում մանրբուրժուական կուսակցությունների ներկայացուցիչները: Բոլշևիկների համառ ու հետևողական պայքարի հետևանքով սեպտեմբերին հաջողվեց նոր ընտրությունների միջոցով փոխել խորհրդի կազմը և այնտեղ ուժեղացնել բոլշևիկների ազդեցությունը:

Նրա լույս ընծայումը լայն արձագանք է գտնում Անդրկովկասի մի շարք թերթերում և ամսագրերում: Թիֆլիսում

⁴ Տե՛ս անդրանիկ համարը:

լույս տեսնող բոլշևիկյան «Բանվորի կոիվը» 1917 թ. սեպտեմբերի 10-ի համարում բավականին ծավալուն ինֆորմացիա է տպագրում «Նեցուկ» վերնագրի տակ: Ամենից առաջ նա նշում է տպագիր օրգանի նշանակությունը գավառում և ապա շեշտում բոլշևիկյան թերթի դժվար ուղին: «Ծուշիում սկսել է լույս տեսնել Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության տեղական կազմակերպության օրգան «Նեցուկ»-ը, — գրում է «Բանվորի կոիվը»:

«Բակինսկի ուսքոչին» 1917 թ. սեպտեմբերի 13-ի համարի խորհրդակցության մեկում հայտնում է. «Նոր թերթ: Ծուշիում սկսվել է հայերեն լեզվով հրատարակվել տեղական բոլշևիկյան ընկերների «Նեցուկ» թերթը»: Թերթի աշխատանքները տարվում են լրջորեն, և այդ բոլորը ամենից առաջ նրա խմբագիր, հին բոլշևիկ, հասարակական-քաղաքական նշանավոր գործիչ Աշոտ Հովհաննիսյանի ջանքերի շնորհիվ:

Որո՞նք էին բոլշևիկյան այդ թերթի արծարծած հիմնական հարցերը, ի՞նչն է եղել նրա լուսաբանման հիմնական օբյեկտը:

«Նեցուկի» գլխավոր խնդիրն էր պրոպագանդել լեհինչյան գաղափարները, աշխատավորներին հասցնել կուսակցության օրվա լոզունգներն ու ցուցումները, բարձրացնել նրանց հեղափոխական ոգին, մարտունակությունը: Թերթի հինգերորդ համարում հրատարակվում է Վ. Ի. Լենինի «Լոզունգների մասին» նշանավոր հոդվածը, որն ուղեցույց էր բոլշևիկյան գործունեության լայն ծավալման համար:

Թերթի տեսադաշտում էին գտնվում առօրյա հարցերը: Նա ձգտում էր բոլշևիկյան սկզբունքայնությանը ցույց տալ հեղափոխական խմորումները, երևան հանել պատճառները, աշխատավորների ուժերը մոբիլիզացնել խորհրդային իշխանության ստեղծման համար: Նա ճիշտ դիրքերից բնութագրում էր բանվորներից և զինվորներից կազմված Խորհուրդների դերը երկրի կառավարման գործում:

«Նեցուկը» մի շարք հոդվածներում նշում է, որ Ծուշիում էլ պետք է պայքարը նոր թափով տարվի հակահեղափոխական, մուօ ու հեղհեղուկ տարրերի դեմ, ամեն գույնի նացիոնալիստների ու նրանց հովանավորողների դեմ, բոլոր նրանց դեմ, ովքեր ոտնահարում են աշխատավորների շահերը, չեն մտածում նրանց մասին: Այս տեսակետից բնորոշ են թերթի երկրորդ համարի «Ղարաբաղի գործադիր կոմիտեն» և «Ծու-

շիի բանվորական ներկայացուցիչների խորհրդի վերակազմության խնդիրը» հոդվածները:

Առաջինում «Նեցուկը» քննադատում է Ժամանակավոր կառավարության Ղարաբաղի գործադիր կոմիտեին, որը ոչինչ չի անում աշխատավորների համար, ընդհակառակն, թուլացնում է հեղափոխության գործը, քաջալերում է մուօ ու կասկածելի տարրերին: «Թե ինչ դրոյումներից է այս մարմինը իր նակատը զարդարել երկրի անփառունակ անցյալի անունով, — գրում է «Նեցուկը», — երբ մեր հայրենիքում տիրում էին ֆեոդալիզմի պաշտպան թուրք խաներն ու հայ մելիքները, մնում են անհայտ: Երևի կոմիտեի մեջ բազմաձև երկրի բախտը տնօրինողներից ոմանք հասած են համարում ժամը՝ կրկին պաշտեցնելու հավիտենական խոր քնից խաների, մելիքների ու աղալարների մոռացված ու խունացած սուլերները... Ո՞վ գիտե: Համենայն դեպս Գործադիր կոմիտեի անվան պատմական այդ բովանդակությանն է համապատասխանում նրա գործունեության ընթացքն ու հասարակական ռեալ արժեքը»⁵:

Թերթը շեշտում է, որ անհրաժեշտ է Ղարաբաղում «կատարյալ լիկվիդացիայի ենթարկել հին ռեժիմը և սրա բոլոր արտահայտությունները պետական կյանքի խորշերում», իսկ «ի՞նչ է արել այդ իմաստով Ղարաբաղի Գործադիր կոմիտեն: Վարչական կազմից նա հեռացրեց գավառապետ Դրոյմենկոյին և մի քանի ոստիկաններ և ուրիշ ոչինչ»⁶: Կառավարչական մարմինների մեջ մնացել են նույն մարդիկ, նույն դեմքերը, նույն գործելակերպը: Այդ մասին պարզ է ստված Ծուշիի գավառում Անդրկովկասյան կոմիտեի հատուկ լիազորի 1917 թ. հուլիսի 20-ի զեկուցագրում. «... Ի՞նչ է տեսնում գյուղացին. պաշտոնական թերթով գյուղ են գալիս նույն պահնորդները, որոնք նախկինում մտրակով ծեծում էին նրան, Ժամանակավոր կառավարության տարբեր հանձնարարություններով հայտնվում էին ծանոթ վերակացուների, նախկին տանուտերերի, կալվածատերերի ու բեգերի կերպարանքները և կասկածանքն ու անվստահությունը ակամայից սողոսկում է նրա տանջված հոգին: Այս ի՞նչն է, ինչն է, ինչն է, որոնց պաշտպանությունը Ժամանակավոր կառավարությունը հանձ-

⁵ «Նեցուկ», № 2, 1917, օգոստոսի 24:

⁶ Նույն տեղում:

նարարում է հեղափոխության հետ ընդհանուր ոչինչ չունեցող մարդկանց»⁷:

Բայց միայն սա չէ կարևորը. «Նեցուկը» հարցը դնում է սկզբունքորեն և ուղղակի. ստեղծել այնպիսի իշխանություն, որի ղեկավարությունը պատկանի բանվորներին ու գյուղացիներին:

Մերկացնելով Ղարաբաղի Գործադիր կոմիտեի անփառունակ գործունեությունը, որը ոչինչ չարեց բանվորական ծամյա աշխատանքային օր սահմանելու և պարենավորման սուր նգնաժամը վերացնելու գործում, թերթը կոնկրետ շեշտում է գավառի մետաքսագործարաններում շարունակվող «երեխաների ու կանանց աշխատանքի շահագործումը», կոնկրետ փաստեր հրապարակում նրանց անամոքելի պայմանների և չնչին աշխատավարձի մասին:

Ավելին, Ժամանակավոր կառավարության Ղարաբաղի Գործադիր կոմիտեն ոչ միայն շահագրգռված չէր աշխատավորների դրության բարելավմամբ, այլև ընդհակառակը, պաշարում էր հեղափոխության նվաճումների դեմ:

Պարզ ու համոզված է ասում Ծուշիի բոլշևիկների օրգանը, որ «միայն դեմոկրատական մասսաների կազմակերպված քայլերը կարող են փրկել մեր երկիրը հակահեղափոխական կազմակերպությունների ազդեցությունից և հենակետ լինել հեղափոխական կենտրոնների վճռական պայքարին»⁸:

Կենտրոններում և տեղերում, ինչ խոսք, վճռական պայքարի հենակետը հանդիսացան հեղափոխական կոմիտեները: Սրանք իրենց մեջ կենտրոնացնում էին մարտնչող մասսաների կամքը և ուժ հավաքում դիմադրելու հակահեղափոխականների բոլոր գրոհները: Հեղափոխական ամուր հենակետ ստեղծելու համար «Նեցուկը» մեծ պարտականություն է դնում Ծուշիի բանվորական, զինվորական և գյուղացիական խորհուրդների առջև՝ համախմբել «այն բոլոր հասարակական տարրերին, որոնք վճռական պայքար պիտի մղեն տիրող դասակարգերի դեմ՝ ընդլայնելու և խորացնելու հեղափոխության սոցիալական և քաղաքական բովանդակությունը»⁹: «Նեցուկի» խորին համոզմամբ աշխատավորների միակ բարեկամը բոլշևիկ-

ներն են և այն Խորհուրդները, որոնց մեջ ընդգրկված կլինեն միայն բանվորների և գյուղացիների ներկայացուցիչները:

Ժամանակը, շարունակում է թերթը, կենսական պահանջ է դրել նաև Ծուշիի հեղափոխական-դեմոկրատական ուժերի առջև՝ գործել Ռուսաստանի օրինակով: «Ինչպես Ռուսաստանի բոլոր վայրերում,— գրում է «Նեցուկը»,— այնպես և մեզանում (Ծուշիում.— Ս. Ա.) հեղափոխական ուժերի հավաքումը, նրանց կենտրոնացումը պայքարող դեմոկրատիայի պատասխանատու մարմինների մեջ վայրկյանի հրամայական պահանջն է»¹⁰: Ուրեմն պետք է ավելի ուժեղացնել հեղափոխական աշխատանքը զանգվածների շրջանում՝ պարզաբանելով նոր իրադրությունը: Կրկին առաջ քաշվեց «Ամբողջ իշխանությունը Խորհուրդներին» լոզունգը: Սա նշանակում է արդեն պատրաստվել զինված ապստամբության՝ բուրժուական կառավարությունը տապալելու և պրոլետարական դիկտատուրա հաստատելու համար: «Նեցուկը» կոչ է անում աշխատավորներին՝ Խորհուրդներից հետ կանչել Էսեռո-մենշևիկյան դեպուտատներին և աջակցել բոլշևիկներին, ապահովել նրանց լիակատար հաղթանակը Խորհուրդներում: «Նեցուկը» հարցը դնում է ուղղակի. Ղարաբաղում ևս կիրառել բոլշևիկյան կուսակցության կոմիտեի օրվա լոզունգը՝ «Ամբողջ իշխանությունը Խորհուրդներին»:

Այդ օրերին թերթի էջերում հրապարակվում են մի շարք առեսական հոդվածներ, որոնց նպատակն էր զանգվածներին պարզաբանել բոլշևիկների և մենշևիկների դիրքորոշումը քաղաքական կարևոր հարցերում:

Երկրորդ, երրորդ և չորրորդ համարներում թերթը հրապարակում է Աշոտ Հովհաննիսյանի մեծածավալ հոդվածը «Ռուսական հեղափոխությունը և պրոլետարիատի տակտիկան» վերնագրով, որտեղ լեհիկյան դիրքերից հիմնավորվում են գալիք մարտերում բանվոր դասակարգի հաղթանակը, հեղափոխության միակ ելքը և այդ գործում աշխատավորների անելիքները:

Մեկնաբանելով մենշևիկների դիրքը բուրժուական հեղափոխության նկատմամբ, հեղինակը քննադատում է նրանց սրխալ գիծը պրոլետարիատի քաղաքական դիկտատուրայի, հե-

⁷ «Սովետական Ղարաբաղ», № 81, 1967, ապրիլի 6:


⁸ «Նեցուկ», № 2, 1917 թ., օգոստոսի 24:

⁹ Նույն տեղում:

¹⁰ Նույն տեղում:

գեմոնիայի վերաբերյալ, նշում բոլշևիկների տակտիկան, հեղափոխության մեջ պրոլետարիատի վճռական դերի նշանակությունը, նրա առաջ մղիչ ուժը:

«Հասարակական ուժերի ուրույն փոխհարաբերության շրջափոխումը, — ասվում է հոդվածում, — բուրժուական հեղափոխությունների մեջ շարժման առաջ մղիչ ուժը անպայման բուրժուազիան չէ, այլ հաճախ դեմոկրատիան՝ պրոլետարիատը և մանր բուրժուական դասակարգերը: Հեղափոխությունների ժամանակ առաջացող ժամանակավոր կառավարությունները՝ ենթարկվելով պրոլետարիատի կամ մանր-բուրժուական դեմոկրատիայի գերիշխանությանը՝ որպես հեղափոխական օրգաններ կոչվում են ապահովելու հեղափոխության **անմիջական** հաղթանակը, խեղդելու հակահեղափոխական շարժման վերահաս վտանգը և ոչ՝ իրագործելու բուրժուական հեղափոխության սլաոմական միսիան»¹¹:



«Նեցուկ» թերթի խմբագիր, նշանավոր սլաոմաբան Աշոտ Հովհաննիսյան:

բերության, հեղափոխության մեջ նրանց դերի մասին:
Նա մեծ տեղ է հատկացնում բանվորական, զինվորական

և գյուղացիական դեպուտատների խորհուրդներին, որոնց մեջ պետք է մեծամասնություն կազմեն հեղափոխության հաղթանակի գործին նվիրված մարդիկ: Նրանք զորավիգ պետք է լինեն Ռուսաստանում հասարակական-քաղաքական քայքայված օրգանիզմի վերականգնմանը, լուծեն պրոլետարական իշխանության նվաճման դժվարին հարցը: Պրոլետարիատի «ջանքերով է, — շեշտում է հեղինակը, — որ ուս հասարակության կապիտալիստական հարաբերությունները սխառեմատիկ օրենսդրության և կազմակերպված աշխատանքի միջոցով պետք է վերածվեն սոցիալիստականի»¹²:

Հեղինակի եզրակացությունը ելնում է Վ. Ի. Լենինի և մարքսիզմի մյուս դասականների՝ պրոլետարական հեղափոխության և նրա հեղեմուն ուժի մասին ունեցած դիրքերից, այն բանից, որ բուրժուա-դեմոկրատական հեղափոխության մեջ ղեկավար դերը պատկանում է պրոլետարիատին: Հոդվածը Ղարաբաղի աշխատավոր զանգվածներին պարզորոշ ցույց տրվեց, թե գալիք հեղափոխության մեջ վճռական ինչ դիրք պիտի ունենա պրոլետարիատը, որն աշխատավոր գյուղացիության հետ դաշնակցած՝ կոսապալի բուրժուական կառավարությունը:

Ա. Հովհաննիսյանի սույն հոդվածի տպագրումը ևս պատահական չէր: Հայտնի է, թե 1917 թ. աշնանը Ղարաբաղում քաղաքական ինչպիսի բարդ իրադրություն էր ստեղծվել, և ինչն էր անհետաձգելի դարձել այդ իրավիճակից հաղթանակով դուրս գալու համար: Ամենից առաջ անհրաժեշտ էր որոշակիորեն սսել մարդկանց, թե հեղափոխության լիակատար հաղթանակի համար ինչ դիրք պիտի բռնեն պրոլետարիատն ու գյուղացիությունը և ինչ դիրք՝ բուրժուազիան:

Անհրաժեշտ էր հեղափոխության հաղթանակի համար պայքարող մարտիկներին զինել մարքս-լենինյան տեսությամբ, պարզ պատկերացնելու համար այն բանը, թե սկսված շարժումը արմատական ինչ փոփոխություններ կմտցնի երկրում, թե նրա գլուխ կանգնեն հենց իրենք՝ բանվորները:

Հոդվածը Ղարաբաղի բոլշևիկներին օգնության եկավ նաև պատերազմի և խաղաղության հարցերը ճիշտ որոշելիս, նրանց խորապես համոզելով, որ պետք է օրեցօր ուժեղացնել իմպե-

¹¹ Նույն տեղում:

¹² «Նեցուկ», № 4, 1917, սեպտեմբերի 7:

րիալիստական պատերազմը քաղաքացիականի վերածելու ջանքերը, ամրապնդել պայքարը Խորհրդային հանրապետություն ստեղծելու համար: Թերթը առիթը բաց չի թողնում մերկացնելու հեղափոխության թշնամիներին, մասնավորապես մենշևիկներին և էսէռներին, որոնք ժխտում էին բանվոր դասակարգի վճռական դերը երկրի հեղափոխական վերակառուցման գործում:

«Նեցուկը» բացահայտում էր Փետրվարյան հեղափոխությանը ստեղծված Ժամանակավոր կառավարության հակաժողովրդական էությունը և համոզում ընթերցողներին, որ այդ կառավարության մեղքով աշխատավորները գտնվում են անելանելի վիճակի մեջ, որ «երկիրը քաղցում է և տանջվում: Ժողովրդի ամենալայն խավերը կարիքի և գրկանքի են մատնված»¹³:

Թերթը ոչ միայն ստեղծված պատկերն է ներկայացնում, այլև նշում է այդ վիճակից դուրս գալու ճիշտ ելքը. «Պետք է ջանալիս կապիտալի տիրապետությունը — վերջ տալ պատերազմին: Հարկավոր է բանվորական կոնտրոլ, հսկողություն արտադրության վրա, արդյունաբերական իրերի բաշխման կազմակերպում թե քաղաքում, թե գյուղում»¹⁴:

Բոլշևիկյան օրգանն ակտիվորեն պայքարում է կապիտալի տիրապետությունը աշխատավորական իշխանությանը փոխարինելու համար, ստեղծելու այնպիսի իշխանություն, երբ արտադրության ու բարիքների տերը կլինեն ոչ թե ահարոնյաններն¹⁵ ու վելիբեկովները¹⁶, ոչ թե մի խումբ կապիտալիստներ ու կալվածատերեր, այլ՝ աշխատավոր մարդիկ, իսկ սա հնարավոր է, երբ բարիքների բաշխումը քաղաքում և գյուղում կկատարվի բանվորների և գյուղացիների միջոցով:

Այս հարցերը մասնավորապես շեշտվում են «Բանվորությունը և գյուղացիական չքավորությունը» և ուրիշ հոդվածներում: Թերթը պահիվ քննադատող չէր, բոլշևիկյան կրթությունը մերկացնում էր տեղական կառավարությանը, «սոցիա-

լիստ» մինիստրներին, որոնք իրականում գործում էին ժողովրդի շահերին հակառակ, բաց փորձում էին ապացուցել, որ իբր իրենք աշխատավորների բարեկամներն են:

Ինչի¹⁷ մասին է խոսում այն փաստը, գրում է «Նեցուկը», որ հետզհետե աշխատավորների դրությունը դառնում է անտանելի: Մի՞թե սա չի վկայում այն մասին, որ բուրժուազիան բոլորովին շահագրգռված չէ փոխելու հին կարգերը, վերացնելու շահագործման լուծը, սահմանելու դեմոկրատիկ իշխանություն: Նա կոչ էր անում զանգվածներին՝ տապալել բուրժուական տիրապետությունը, ստեղծել աշխատավորական կառավարություն: Իսկ այդ իրականացնել կարող է միայն բանվոր դասակարգը: Այստեղ բոլշևիկյան օրգանը հատկապես սրում է բանվորների և չքավոր գյուղացիության դաշինքի ամրապնդման հարցը՝ ելնելով Վ. Ի. Լենինի այն հայտնի ասույթից, որ «միմիայն պրոլետարիատը կարող է դեմոկրատիզմի համար պայքարող հեռուողական մարտիկ լինել: Նա դեմոկրատիզմի հասարակապետական մարտիկ կարող է լինել միայն այն պայմանով, եթե նրա հեղափոխական պայքարին միանա գյուղացիության մասսան»¹⁷:

Մերկացնելով մենշևիկների և հակաբոլշևիկյան մյուս տարրերի սխալ պնդումը, թե գյուղացիությունը ոչ միայն չի կարող պրոլետարիատի դաշնակիցը լինել, այլև ըստ էության ռեակցիոն է, տպագիր օրգանը հաստատում է բոլշևիկյան գծի ճշմարտացիությունը նաև այս հարցում, գտնելով, որ հեղափոխության հաղթական ավարտով շահագրգռված պրոլետարիատի ամենամոտ դաշնակիցը մնում է միայն չքավոր գյուղացիությունը:

Մարտական շնչով է գրված «Նեցուկի» երրորդ և չորրորդ համարներում լույս տեսած «Կարմիր գծեր» հոդվածը: Հոդվածագիրը չի թաքցնում իր դժգոհությունը ստեղծված վիճակից և կարողանում է հույս ներշնչել մարդկանց, բարձրացնել նրանց տրամադրությունը և ուժերն ուղղել մեծ պայքարի հաղթանակին:

Թերթի շատ նյութեր բովանդակում էին ժամանակի կարևոր հարցերը, համարձակորեն վերլուծության ենթարկում երկրի քաղաքական իրադրությունը:

17 Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 11, Ե., 1977 թ., էջ 60:

¹³ «Նեցուկ», № 5, 1917, սեպտեմբերի 14:

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ Դ. Ահարոնյանը Քարին-տակ գյուղի մետաքսադորման ֆաբրիկայի տերն էր:

¹⁶ Վելիբեկովը Ջիվանջիի գավառի նշանավոր կալվածատեր-հողատեր էր:

«Նեցուկը» 6-րդ համարում (1917 թ. սեպտեմբերի 21) տուր ծաղրի է եկեթարկում Կերենակուն, որի «կատապարտությունը հենվում է բուրժուազիայի և քաղքենիության քաղաքական կռաւիցիայի վրա» և գբաղված է միայն ժողովրդին կեղծ խոստումներ տալով:

Թերթի տեսադաշտից դուրս չի մնում կոռնիլովշիևայի մերկացումը: Միանգամայն իրավացի կերպով շեշտվում է, որ Կոռնիլովը սոցիալիստական հեղափոխության կատաղի թըշնամի է, ուսգմական մի դիկտատոր, որը ձգտում էր օտարերկրյա ուսգմական ուժերի աջակցությամբ իրագործել իր պըլանները: «Դիկտատորների մեհամարտում պրոլետարիատի կուսակցությունը,— ընդգծում է թերթը,— չպետք է փնտրի «չարիքների փոքրավորը»: Դիկտատորների մեհամարտում հաղթող լինել չի կարող ոչ Կերենակին, ոչ Կոռնիլովը, ոչ երկդիմի քաղքենիությունը, ոչ բախտախնդիր բուրժուազիան: Բուրժուական հակահեղափոխությունը չի կարող տապալել ոչ ոք, բացի հեղափոխական պրոլետարիատից: Բուրժուական դավադրությունը չի կարող արմատախիլ լինել նախքան կապիտաղի իշխանության լիակատար տապալումը»¹⁸: Հարկավոր է լիկվիդացնել դավադրությունը, վիժեցնել բուրժուական քաղաքականության մաներները, հասնել այն բանին, որ խայտառակաբար պարտվի քաղքենիական սոցիաղիզմը, մերկացվեն նրա շատագովները:

Բոլշևիկյան օրգանը դատապարտում է ոչ միայն կոռնիլովականներին, այլև այն բոլոր ուսգմամուներին, որոնք պատերազմը դիտում են որպես շահույթի աղբյուր, ուրիշների դիակների վրայով հարստություն կորգելու հարմար միջոց:

Տարբեր աղիթներով «Նեցուկն» իր խոսքն է ասում պատերազմի և խաղաղության մասին՝ ցույց տալով միաժամանակ արդարացի և ոչ արդարացի պատերազմների էությունը, նպատակը: «Պատերազմը» վերնագրով հողվածում, անդրադառնաղով 1914—1917 թթ. առաջին համաշխարհային պատերազմի զավթողական, նվաճողական քաղաքականությանը, թերթը ուղղակի գրում է. «Պատերազմը քայքայում է չքավոր ժողովրդին. նա ոսկու աղբյուր է աշխարհակեր կապիտաղիստներ

րի համար: Պատերազմը ժողովրդինը չէ, նա պրոլետարիատի և չքավոր գյուղացիության թշնամունն է»¹⁹: Ասված է շատ պարզ և որոշակի: Ներկա պատերազմը ծագել է միայն տիրապետող դասակարգերի մեղքով՝ շահույթի նոր աղբյուրներ որոնելու համար:

«Նեցուկը» հայ պրոլետարիատի և չքավոր գյուղացիության բարեկամն էր, նրա խորհրդատուն և իղձերի արտահայտիչը: Թերթը քաջ գիտեր, որ աշխատավորները լսել անգամ չեն ուզում իմպերիաղիստական պատերազմի մասին, որ այն հրահրում են միայն կապիտաղի տերերը:

Բոլշևիկյան օրգանի էջերում քիչ նյութեր չեն հրապարակվում Շուշիի կուսակցական կազմակերպության առօրյաղի, բանվորական շարժումների, օրվա կարևոր իրադարձությունների մասին:

Ուշագրավ է թերթի երկրորդ համարում տպագրված «Բանվորական շարժում» հաղորդումը: Թղթակիցը Քարին-տակ գյուղից հաղորդում է, որ ավելի է վատացել մետաքսագործարանի բանվորների վիճակը, որ նրանք օրական աշխատելով ավելի քան 12 ժամ, ստանում են աննշան աշխատավարձ և չեն կարողանում հայթայթել ապրուստի նվազագույն միջոցները: Եվ իբրև բանվորների համարձակ ելույթի պատասխան, գործարանատերը բանվորներին գրկել է աշխատելու հնարավորությունից, փակել է գործարանը:

«Նեցուկը» բողոքում է այս վիճակի դեմ և գործարանատիրոջից պահանջում, որ բանվորներին ապահովի օրական ութժամյա աշխատանքով:

Մեկ այլ հաղորդագրությամբ թերթը բողոքում է բանվորների անելանելի վիճակի դեմ՝ բացեիբաց մերկացնելով նրանց, ովքեր զավթել են աշխատանքի միջոցները՝ իսկական տերերին մատնելով սովամահության:

«Նեցուկի» էջերում գործնական նյութերից բացի տեղ են գտնում նաև տեսական հողվածներ, որոնք մարքսիզմ-լենինիզմի դիրքերից պարզաբանում են ժամանակի շատ կնճոտ հարցեր: Ուշագրավ է հատկապես թերթի 6-րդ համարում գետեղված այն մեծածավաղ հողվածը, որի վերնագիրն է՝ «Ո՛ւմ է ձեռնառու հողի «սոցիաղիզացիան» և ո՛ւմ է շահավետ բոլոր

¹⁸ «Նեցուկ», № 4, 1917, սեպտեմբերի 7:

¹⁹ «Նեցուկ», № 6, 1917, սեպտեմբերի 21:

հողերի նացիոնալիզացիան»։ Այստեղ մատչելի լեզվով ընթերցողներին աավում է, որ վերացնելով հողի մասնավոր սեփականությունը և այն բաժանելով աշխատավորներին, գյուղացիները իրենց օգտագործման տակ կունենան լավորակ հողամասեր, որոնցից և կստանան առատ բերք։ Դրա հետ միասին թերթը բացատրում է, թե այդ ճշմարտության դեմ ինչպիսի աղմուկ են բարձրացնում հակաբոլշևիկյան տարրերը։

«Նեցուկի» էջերում հողվածներ լույս տեսան պրոլետարական դիկտատուրայի, բանվորների և գյուղացիների դաշինքի, դասակարգային պայքարի, պատերազմի, խաղաղության և այլ հարցերի մասին։

Հարկ է նշել, որ մինչև հիմա հայտնի էր «Նեցուկի» յոթ համարի գոյությունը։ Սակայն թերթի խմբագիր Ա. Հովհաննիսյանը ժամանակին մեզ տրամադրեց «Նեցուկի» ութերորդ համարը։

Այս համարի լույս ընծայումը (1917 թ. հոկտեմբերի 20) հետապնդում էր որոշակի նպատակ. սկսվել էին Ծուշիի քաղաքային դումայի ընտրությունները, և «Նեցուկը» պետք է բացարձակ ասեր իր խոսքը, բնութագրեր բոլշևիկներին և նրանց հակառակորդներին, բացատրեր, թե ինչ են ցանկանում կոմունիստները։

Ընտրություններն անցկացնելու համար ծավալվում է սուր պայքար, առաջ է քաշվում մի քանի ցուցակ։

Թերթը ամբողջ առաջին էջի վրա խոշոր տատերով գրում է, որ Ծուշիի աշխատավորները պետք է ձայն տան երկրորդ ցուցակի օգտին, որի մեջ մտնում են միայն բանվորական գործին նվիրված մարդիկ։ Այդ ցուցակում կային 9 հոգի (Աշոտ Հովհաննիսյան, Մելիքետ Եսայան, Հակոբ Բեջանյան, Վարվառա Մելիք-Հայկազյան, Արմենակ Ղարազյուզյան, Գրիգոր Ներսիսյան, Սերգեյ Իսախանյան, Գրիգոր Հակոբյան, Նիկիտա Դանիելյան)։ Սրանցից մի քանիսը մտավորականներ էին՝ պատմաբան, ուսուցիչ, իսկ մի քանիսն էլ՝ բանվոր, գրաշար։

Իր խոսքն ուղղելով բանվորներին, բանվորուհիներին, զինվորներին և բոլոր չքավոր գյուղացիներին, «Նեցուկը» նշում է, թե ինչ հայացքներ ունեն սոցիալ-դեմոկրատ ինտերնացիոնալիստները, որն է նրանց պայքարի նպատակը։ Նա գրում է. «Սոցիալ-դեմոկրատ ինտերնացիոնալիստները դեմ են ժողովրդական միջոցներով մղվող թալանչիական, միլիոնավոր

մարդկանց ոչնչացնող պատերազմին, կոպում են բուրժուաների աներևակայելի ավազակային օգուտների և պատերազմի առաջացրած սպեկուլյանտների անկուշտ ակտրժակների դեմ, պահանջում են, որ կառավարությունը բաղկացած չլինի կապիտալիստներից և կալվածատերերից, որոնք հանգցնում են հեղափոխական խարույկը, դեմ են թալանչիական պատերազմը պաշտպանող՝ այսպես կոչված ազատության փոխառությանը, դեմ են ցարական և սև հարչուրակային դումային, որ ուժ է հավաքում՝ հեղափոխությունը ճնշելու և որն այժմ պահանջում է ցրել խորհուրդները, պահանջում են ժողովուրդների եղբայրությունն ստեղծող շուտափույթ հաշտություն...»։ Այս ծրագրային փաստաթուղթը ավարտվում է հետևյալ մտքով. «Սոցիալ-դեմոկրատ ինտերնացիոնալիստները «կռիվ են մղում լայնացնելու, խորացնելու համար հեղափոխության նվաճումները, հեղափոխություն, որ կդառնա միջազգային և կբերի խաղաղություն, հաց, ազատություն։ Աշխատավորները պահանջում են միակ ժողովրդական իշխանություն, որ ելնելու է բանվորների, զինվորների պատգամավորների խորհուրդներից» (բոլոր ընդգծումները թերթինն են. — Ս. Ա.)։

«Նեցուկը» հրապարակում է «Մեր մունիցիպալ պատֆորմը» բավականաչափ ծավալուն հողվածը, որտեղ խոսվում է տվյալ պահին հեղափոխական սոցիալ-դեմոկրատական կազմակերպության առջև կանգնած կարևոր խնդիրների մասին։ Հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան անհրաժեշտ է համարում կյանքում իրականացնել քաղաքային ինքնավարության լրիվ դեմոկրատիզացիան, լիկվիդացնել պարենավորման ճրգնաժամը և այլն։ Այնտեղ պարզ տրված է հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի տեսակետը պրոլետարական զանգվածների դասակարգային պայքարի մասին, գրված է նաև, որ «քաղաքային ինքնավարության ամբողջ քաղաքականությունը, քաղաքային տնտեսության ամբողջ կազմակերպությունը հիմնովին պիտի փոխվեն։ Մունիցիպալիտետը (դուման) պիտի դադարի մի խումբ բուրժուական տարրերի շահերի պաշտպանը լինելուց...»։

Այդ հողվածը, որն, ի դեպ, գրավում է թերթի 2-րդ, 3-րդ և 4-րդ էջերի «ներքնամասերը», ավարտվում է հետևյալ կոչով. «Հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան, ինչպես դասակարգային և ինտերնացիոնալիստական կուսակցություն, մունի-

ցիպալ քաղաքականության շրջանում ևս պետք է եռանդուն կերպով պայքար մղի ամեն մի **շովինիզմի ու ևնացիոնալիզմի դեմ**, որ ձգտում է բաժան-բաժան անել տարբեր ազգության պատկանող բանվորներին. նա,— հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան,— միշտ և անհապաղ կոչ կանի բոլոր ազգերի պրոլետարներին և կիսապրոլետարներին, ի մի խմբված սոցիալիզմի կարմիր դրոշի տակ, կռիվ մղել կապիտալիզմի դեմ:

Նրա նշանաբանն է՝ «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք»:

«Նեցուկի» վերջին համարում տպագրվում է «Մենշևիկ-պահպանողականներն ու սոցիալիստ-հեղափոխականները» վերնագրով հոդվածը: Այստեղ համոզիչ փաստերով բացահայտվում է մենշևիկների և մյուս հակահեղափոխականների **անփառունակ գործունեությունը**: Հողվածագիրը համոզված էր, որ վերահաս սոցիալիստական հեղափոխությունը կիրկի բանվորներին ու գյուղացիներին և պայմաններ կստեղծի նոր, ազատ կյանքի համար:

Մի այլ ընդարձակ հոդվածում («Մեր հակառակորդները և մենք») «Նեցուկը» նշավակում է բուրժուական և մանրբուրժուական տարրերին, որոնք մեծ վնաս են հասցնում աշխատավոր ժողովրդի ազատագրման գործին: Նրանց մեղքով է, գրում է թերթը «Քաղաքային ընտրությունները» վերնագրով հոդվածում, որ թշվառության մեջ են Շուշին և նրա բնակիչները: Ի՞նչ է հարկավոր, որպեսզի վերականգնվի «նրա կյանքի քայքայված մեխանիզմը»: Դիմելով բանվորներին և բոլոր քաղաքացիներին, տպագիր օրգանը գրում է. «Դուք պետք է կազմակերպված վերցնեք այդ տնտեսությունը և դնեք նրան նոր դեմոկրատական հիմքերի վրա: Անհրաժեշտ է վերակազմել քաղաքի ամբողջ կյանքը չքավոր դասակարգի կարիքների համաձայն»²⁰:

Ներկայացնելով աշխատավորության մոսկոսյան, թերթը շեշտում է, որ կյանքը այդպես էլ կշարունակվի, քանի իշխանության գլուխ կանգնած են կապիտալիստներն ու նրանց արբանյակները: Եվ բացահայտ հայտարարվում է. «Նրանք, որոնք կոչ են անում պաշտպանելու արյունահեղ պատերազմը, բուրժուական ու կոալիցիոն կառավարությունը, որոնք գաղտնի և համարձակ պաշտպանում են ցարի ոստիկանու-

²⁰ «Նեցուկ», № 8, 1917, հոկտեմբերի 20:


թյունը, սակայն խոստանում են լավ օրենքներ, հաց և ազատություն— ժողովրդի եղեռնագործ թշնամիներ են:

Կ՛չ մի հավատ այդ հանդուգն գիշատիչներին, ոչ մի ձայն հեղափոխության այդ գերեզմանափորների²¹:

«Նեցուկը» և նրա ակտիվ աշխատակիցները մտահոգվում են հալոթենի քաղաքի և ընդհանրապես ամբողջ աշխատավորության կենսական պայմանների բարելավմամբ, ցավում չքավորների անելանելի վիճակի համար:

«Նեցուկին» եռանդուն աշխատակցում էին շատերը: Նըշենք միայն մի քանիսին: Հակոբ Հովհաննիսյանը (1875—1941) շուշեցի մտավորական էր, որ բարձրագույն կրթություն էր ստացել Բեռլինի և Հայդելբերգի համալսարաններում, ուներ դոկտորի գիտական աստիճան, 1917 թ. բոլշևիկյան կուսակցության անդամ էր, գործունյա մասնակցություն էր ունեցել Անդրկովկասի հեղափոխական շարժումներին: Նրա հոդվածները և՛ տեսական բնույթի էին, և՛ գործնական, որոնց մեջ միտքը արտահայտվում էր պարզ, փաստորեն հաջորդում էին հիմնավոր վերլուծումներն ու տրամաբանական եզրահանգումները:

«Նեցուկի» էջերում հանդես է եկել Ալեքսանդր Ծատուրյանը («Ալ. Ռոբեկնի»), որն աչքի էր ընկնում իր սկզբունքայնությամբ, կրքոտ ելույթներով: Նա 1917 թ. հունիսին Շուշիում ստեղծված Ղարաբաղի բոլշևիկյան կազմակերպության հիմնադիրներից մեկն էր, նրա անդամի



Քաղաքական գործիչ և հրապարակախոս Ալեքսանդր Ծատուրյան (Ալ. Ռոբեկնի):

Գախազահը:

²¹ Նույն տեղում:

Հակոբ Կամարու հոդվածները՝ «Կարմիր գծեր», «Բանվորությունը և գյուղացիական շքավորությունը», «Միջազգային պրոլետարիատը և միջազգային բուրժուազիան», «Պատերազմը» և այլն, հագեցված էին կոմունիստական գաղափարներով և նպաստում էին բոլշևիկյան դիրքերի ամրապնդմանը: Նա կարողանում էր իր հոդվածները համեմել գեղարվեստական խոսքի արտահայտչական միջոցներով, միտքը հաղորդել պատկերավոր:

Թերթի սուաջնորդողները գրում էր Աշոտ Հովհաննիսյանը: Դրանք և «Նեցուկի» էջերում հրատարակված այլ ժանրի նյութեր գրված են բարձր գաղափարայնությամբ, մարքսիզմ-լենինիզմի խոր իմացությամբ:



Քաղաքական գործիչ և հրատարակախոս Հակոբ Բեջանյան (Կամարի):

որոնցում աշխատավորները ստանում էին իրենց հետաքրքրող հարցերի պատասխանները:

«Նեցուկի» շորջը համախմբվեցին ճ ե մ ա բ ա: Ա ի (խոսքը Էջմիածնի Գևորգյան ճեմարանի մասին է. — Ս. Ա.) ... բոլշևիկյան խլմբակի անդամներից Ե. Ներսիսյանը, Գ. Աղապյանը, Գ. Թովմասյանը և ուրիշները»²², — իր հիշողություններում գրում է Գառնիկ Ղազարյանը: Այդ ակտիվ աշխատողների ջանքերով էր, որ «Նեցուկը» իսկապես դարձավ ժողովրդական զանգվածների հեղափոխությանը: Նրա բաժիններն ունեին հետևյալ խորագրերը՝ «Կուսակցական կյանք», «Պրոֆեսիոնալ կյանք», «Արտասահմանյան», «Գավառ», «Լրատու» և այլն,

Ուշագրավ էին նույնիսկ «Կուսակցական կյանք» խորագրի տակ գետեղված այն փոքրիկ հաղորդումները, որոնք ոչ միայն խոսում էին Ծուշիի կուսակցական կազմակերպության ստորյայի, այլև աշխատավորների համար կարդացվող զեկուցումների մասին: Այսպես, թերթի 5-րդ համարում ծանուցվում է, որ «մոտ օրերս ընկ. Աշ. Հովհաննիսյանը հրատարակական դասախոսություն կկարդա «Ի՞նչ է բոլշևիզմը» թեմայով: Կամ, 4-րդ համարում՝ «Արշավիր Քամալյանը թեմական դրպրոցի դահլիճում գրուցեց քաղաքային ընտրությունների մասին», կամ՝ «Ղուկասյան դպրոցի դահլիճում ՌՍԴ(բ)Կ ծրագրի մասին դասախոսում է ընկ. Փառանձեմ Գևունյան-Ռիզելը» և այլն:

Թերթի խմբագիրը աշխատում էր երկար կյանք ապահովել «Նեցուկին»: Դրա համար էլ կազմակերպվել էր հրատարակչական ֆոնդ, որի մասին գրեթե յուրաքանչյուր համարում հաղորդում էր արվում: Բայց, այնուամենայնիվ, կարճ եղավ «Նեցուկի» կյանքը, որն առաջին հերթին բացատրվում էր նյութական սուղ պայմաններով: Թերթը փաստորեն հրատարակվում էր խմբագրի միջոցներով: Նա էր հոգում նաև տպարանի միակ աշխատողի՝ գրաշար-տպագրիչի նյութականի մասին: «Հոնորարի մասին խոսք լինել չէր կարող, — պատմում է «Նեցուկի» հրատարակիչ-խմբագիրը, — և սոհասարակ, այն ժամանակ իրենց հրատարակախոսական հոդվածների համար հոնորար էին ստանում շատ քիչ մարդիկ»:

«Նեցուկի» ութ համարներն էլ մեծ դեր խաղացին Ծուշիի և, ընդհանրապես, Ղարաբաղի քաղաքական և հասարակական կյանքում: Նա ծնվեց այն օրերին, երբ Ղարաբաղը, իրոք, «նեցուկների» խիստ կարիք ուներ, երբ անհրաժեշտ էին բոլշևիկյան տպագիր օրգաններ, որոնք բարձր պահեին հեղափոխական դրոշը, պարզ ու հասկանալի լեզվով խոսեին իրավազուրկ մարդկանց հետ:

Իսկ այդ գործը «Նեցուկը» պատվով կատարեց: Նրա աշխատանքը բարձր գնահատեց ՌՍԴ(բ)Կ Թիֆլիսի կոմիտեի օրգան «Բանվորի կոիվը»: «... Գալով թերթին, նրա բովանդակությանն ու ուղղությանը, — շեշտեց բոլշևիկյան օրգանը, — պետք է գովեճք մեր ընկերների եռանդն ու կորովը... Կենտ-

²² Հին բոլշևիկների հիշողություններ, գիրք առաջին, Ե., 1958, էջ 223:

րոնի գործիչները շատ մեծ կարիք ունեն նման «նեցուկների»,
եթե միայն վերջիններն ունենան դիմացկունություն և, որ գլլ-
խավորն է, նյութական միջոց:

Ողջուն «Նեցուկին»²³:

²³ «Բանվորի կոիվը», № 23, 1917, սեպտեմբերի 10:

Գ Լ Ո Ւ Խ 7

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ 1918—1920 ԹԹ.

1918—1920 թվականներին Ղարաբաղի մամուլի պատմու-
թյանը հայտնի են դառնում մի քանի տպագիր օրգաններ: 1918
թ. օգոստոսի 29-ին հրատարակվում է «Ղարաբաղի» սուրհան-
դակ» թերթը, որն ունենում է մեկ համար¹: Թերթը Ղարաբա-
ղում գործող կուսակցությունների (բոլշևիկներ, մենշևիկներ և
այլն) ներկայացուցիչներից ստեղծված կոալիցիոն կառավա-
րության օրգանն էր, որի էջերում տպագրված մի շարք նյու-
թեր այս կամ այն չափով հետաքրքրություն են ներկայացնում:
Այստեղ հրատարակվում են պաշտոնական փաստաթղթեր,
շրջաբերականներ, կարգադրություններ և լրագրային նյութեր,
որոնց մեջ որոշակի վերաբերմունք է ցույց տրվում ուսական
մեծ հեղափոխությանն ակատմամբ: Թերթում կարդում ենք.
«Ռուսական մեծ հեղափոխությունը ոչնչացրեց ցարական բրո-
նականությունը և նրա դարերի ընթացքում ստեղծած կառավա-
րական ձևերը: Արմատախիլ արվեց այն ամենը, ինչ ժառան-
գություն էր մնացել անցյալից»:

Այնուհետև պատմվում է, որ «հեղափոխության ալիքը հե-
ղեղեց և Կովկասը», նոր պահանջներ դրեց աշխատավորների
առջև և թե ինչպիսի դժվարություններ ստաջացան Հոկտեմ-
բերի գաղափարները Ղարաբաղում տարածելու համար: Հատ-

¹ Դժբախտաբար համարի բնօրինակը չի պահպանվում երկրի ոչ մի
արխիվում կամ գրադարանում: Այդ միակ համարի պատճենահանած նյու-
թերը մեզ տրամադրել է Արշավիր Քամալյանը:

կապես քննադատվում է Կովկասյան կոմիսարիատը՝ անվանվելով «անհուսալի տաշեղ քաղաքական կյանքի պեկոծվող ծովի վրա»:

Շեշտելով ռուսական մեծ հեղափոխության վճռական դերը նաև Անդրկովկասի աշխատավորության ազատագրության գործում, նշվում է. «Գիտակցելով, որ միայն համառուսական հեղափոխությունն է, որ երաշխավորում է ամբողջ անդրկովկասյան աշխատավոր ժողովրդին ազատ և բարեկեցիկ կյանք, Ղարաբաղի համագումարը գտնում է, որ ժողովրդի կյանքի ապահովությունը և լիակատար ազատությունը կարող է երաշխավորված լինել միայն ռուսական հեղափոխության տիրապետության տակ, դեպի որը և պիտի լարե իր ամբողջ ուժերը»:

Հրապարակված նյութերում ընդգծվում է գոյություն ունեցող անիշխանության և ճնշումների դեմ ծավալվող պայքարի, արդարացի որոշումներ կայացնելու, ճնշվածներին, կեղեքվողներին պաշտպանելու, ինքնադատատան գործողությունների վերացման, բեզական հողերի բռնագրավման, ֆինանսական ծանր դրության կարգավորման, ընտրական սկզբունքի սահմանման անհրաժեշտությունը:

1919 թ. Ղարաբաղի հայոց «Ազգային խորհուրդը» ստեղծում է «Արցախ» անունով թերթ: Այն ունեցել է առնվազն յոթ համար², որտեղ հիմնականում տպագրվում էին պաշտոնական նյութեր, կոչեր, շրջաբերականներ: Յոթերորդ համարի առաջնորդողի տեղը հատկացվում է «Ղարաբաղի հայ ժողովրդին» կոչին³:

Ղարաբաղի հայոց Ազգային խորհուրդը շատ մեծ հույսեր էր կապում դրսի ուժերի, մասնավորապես օտարերկրյա տերությունների հետ, անտեսելով նրանց զավթողական, երկդիմի նկատառումները:

Վերը նշված կոչի մեջ գովերգվում է անգլիական միսիան: Չգիտես ինչը նկատի ունենալով, Ազգային խորհուրդը աշխարհով մեկ հայտարարում էր. «Անգլիական կառավարությունը, որը հրապարակորեն հայ ժողովրդին ճանաչել է իբրև իր դաշ-

նակցի, կընդառաջի նրա բուն տենչանքները...» և բոլոր պայմանները կստեղծի իր մտահոլացումներն իրագործելու: Պատմությանը հայտնի են արևմտյան տերությունների բազմաթիվ խոստումներ՝ հայերին օգնելու, «Հայոց հարցը» լուծելու, բայց վերջին հաշվով դրանք միշտ մնացել են լոկ խոստումներ:

«Արցախի» երկրորդ, չորրորդ և յոթերորդ համարներում գետեղվում է «Մոտիկ անցյալից» ծավալուն ինֆորմացիան: Առատ փաստեր են բերվում Ադրբեջանի տարբեր շրջաններում և գյուղերում տեղի ունեցող ազգամիջյան ընդհարումների, գողությունների, սպանությունների մասին: Թեև հաճախ է դըրվատվում անգլիական միսիայի գործունեությունը, բայց մի պահ «մոռանալով» այդ, Ազգային խորհրդի տպագիր օրգանը երբեմն իր դժգոհությունն է հայտնում, նշելով որ նա կոնկրետ միջոցներ չի ձեռնարկում, տարված է միայն դատարկ խոստումներով: Թերթը ստիպված սատր խոսքեր է ասում «բարեբարների» հասցեին:

«Արցախը» արտատպում էր նաև իր գաղափարական բարեկամների՝ դաշնակցական «Արևի» և մյուս տպագիր օրգանների նյութերը:

Պատմական այդ ժամանակահատվածում հրատարակվում էր նաև «Նոր կյանքը», որը լույս էր տեսնում Ծուշիում, շաբաթը մեկ անգամ: Սա ևս ունեցել է մի քանի (հինգից ոչ պակաս) համար⁴, ուր հիմնականում նյութեր են տպագրվել Ղարաբաղի գյուղական մասսաների առօրյայից, նրանց նիստու կացից, սպրեյակերպից:

Թերթի առաջին համարը լույս տեսավ 1919 թ. հունվարի 30-ին: Հենց անդրանիկ համարում տպագիր օրգանը մեծ խոստումներ է տալիս, ընթերցողներին ձգտում է համոզել («Բուպեի պահանջը» խմբագրականում), թե իբր հրապարակ է գալիս «Ղարաբաղի աշխատավոր գյուղացիության կյանքի ուղին գծելու», անարխիան վերացնելու, ծայրահեղորեն վտանգված վիճակը բարելավելու համար: Նա փորձ է անում առանց կոնկրետ հասցեի քննադատական խոսք ասելու ինչ-ինչ մուօ անձնավորությունների հասցեին, որոնք զբաղվում են թալանով, վտանգելով գյուղացու տնտեսությունը:

² Յոթերորդ համարը, որը լույս է տեսել 1919 թ. մարտի 23-ին, պահպանվում է ԽՍՀՄ-ին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղում:

³ Ծարված է թավ, խոշոր տառերով:

⁴ Առաջին և հինգերորդ համարները պահպանվում են ԽՍՀՄ-ին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղում:

գոյությունը՝ առաջավոր բանվորներից, գյուղացիներից և մտավորականներից կազմված իշխանության իրավասությունը:

«Նոր կյանքում», այնուամենայնիվ, կան օգտակար մշտքեր, գաղափարներ, որոնց անդրադառնալը այս կամ այն չափով բացահայտում է նրա դրական և սովետոտ կողմերը: Նա հատկապես մտահոգվում է աշխատավորների ստողծապահության հարցերի կարգավորմամբ: Օրինակ է բերվում, թե ինչպես գավառում սաստիկ տարածվել է տիֆը, ամեն օր մահանում են տասնյակներով մարդիկ, բայց ոչ մեկը, ինչպես հարկն է, չի զբաղվում այդ հարցով: Քննադատությունն առաջին հերթին ուղղվում է քաղաքագլխին: «Եվ ի՞նչ է արված», — հարցնում է «Նոր կյանքը» ու պատասխանում. «Քաղաքագլուխը վերցնելով գումարը (խոսքը ստողծապահության գծով նախատեսված գումարի մասին է— Ս. Ա.), չհանձնելով ոչ մի պատասխանատու օրգանի, որից վաղը կարելի լիներ պահանջել և՛ աշխատանք, և՛ հաշիվ համաճարակի դեմ պայքարելու, շատ հասարակ կերպով հրավիրում է բժիշկներին, քաղաքը բաժանում ուսուցիչների և որոշում բանալ տարախոսիկ հիվանդների բարաք և միմիայն»⁷ այդ, ուրիշ ոչինչ:

Թերթը առաջ է քաշում աշխատավորների շրջանում բժըշկագիտության գրավոր և բանավոր պրոպագանդայի հարցը, շեշտում այն մասին, որ անհրաժեշտ է մարդկանց ասել, թե ինչպես պետք է նախազգուշանալ հիվանդություններից, կովել նրանց դեմ: «Ազգաբնակչությանը հայտնված չէ մինչև իսկ ուսուցանական բժիշկների գոյության մասին, — գրում է թերթը, — ոչ մի բրոշյուր, ոչ մի թերթիկ չի հրատարակված, թե ինչպես նախազգուշանալ, ինչպես կովել տիֆի դեմ: Դեղատներում ամենատեսակի սպեկուլյացիա է տիրում, չհանդիպելով ոչ մի արգելքի, դեղորայքը սպառվել և սպառվում են, ոչ ոք սրա մասին հոգ չի տանում»⁸:

Կոնկրետ փաստերով նշվում է գավառում տիրող սովի մասին, որ վարակիչ հիվանդության պես դառնում է մահվան պատճառ: Անտանելի էին դարձել մթերքների գները, սպրեկ այլևս հնարավոր չէր: Այս բոլորի մեջ մեծ մեղքն ընկնում էր տեղական իշխանությունների, առաջին հերթին՝ դումայի վրա:

⁷ Նույն տեղում:

⁸ Նույն տեղում:

«Մենք պահանջում ենք, որ դուման ցրվի», — գրում է թերթը, — մանավանդ, որ նրա լիազորության ժամանակը արդեն լրացել է: Նա ոչինչ չի անում և ոչինչ չանելով նա հանցավոր է: Մենք պահանջում ենք նրանց հեռանալը»⁹:

Ժողովրդի տնտեսական ծանր դրության պատճառներից մեկը թերթը համարում է պատերազմը, որը քամում էր աշխատավորների ֆիզիկական գոյության ամենաաղքատիկ աղբյուրները:

«Նոր կյանքը»¹⁰ դեմ է բռնակալական, զավթողական պատերազմներին, երբ մի ժողովուրդ իր կամքն է թելադրում մյուսին: Այդ չէ հերոսությունը, այլ այն, որ կարողանա յուրաքանչյուրին թույլ տալ ի հայտ բերելու իր ստեղծագործական ունակությունները: Նա շեշտում է նաև, որ երկրի արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման համար անհրաժեշտ են հաղորդակցման լայն հնարավորություններ, ժողովուրդների միջև բարեկամական կապեր, տնտեսական համագործակցություն: Մուրացկաններ են անվանվում ոչ միայն նրանք, ովքեր սոված են, ստիպված վաճառքի են հանում «տնային ամեն տեսակ գործածված իրերներ», այլև նրանք, ովքեր քաղաքականապես կույր են և ուրիշներին են առաջարկում որոշելու իրենց բախտը: Քննադատելով նման վիճակը, թերթն ընդգծում է, որ պետք է ստեղծել «զանազան կազմակերպություններ, որոնք ամենից առաջ հենց իրեն՝ այդ հասարակության միջոցներովն են ստեղծված դրությունը թերեկվացնում: Մեր մեջ այդ գիտակցությունը բացակայում է»¹¹: Պետք է կարողանալ լավ պատկերացնել իրադրությունը և հրստակ տարբերել լավն ու վատը:

«Նոր կյանքը» իր վերաբերմունքն է ցույց տալիս փետրվարին տեղի ունեցած Ղարաբաղի հայության չորրորդ համագումարի նկատմամբ: Հրապարակած նյութերի մեջ ուշագրավ է խմբագրական հոդվածը՝ «Ղարաբաղի համագումարի շուրջը» վերնագրով: Նշելով նրա բացերը, թերթը ամենից առաջ բացահայտեց նրա ոչ ներկայացուցչական լինելը, որ «Ղարաբաղի ամբողջ հայությունը չէր ներկայացված նրա մեջ... ո՛ւմ

⁹ Նույն տեղում:

¹⁰ «Նոր կյանք», № 5, 1919, փետրվարի 27:

¹¹ Նույն տեղում:

Էր հարկավոր գյուղացիության այդ մասին գրկել իրեն վերաբերած ձայնի իրավունքից,— չգիտեմք...— գրում է հյւսոցիալ-դեմոկրատական խմբակի օրգանը:— Այս քաղաք մի՞թե նա ներկայացված էր, ե՞րբ և որտե՞ղ ժողովներ տեղ ունեցան՝ ներկայացուցիչներ ընտրելու համար: Արդյոք պարտեղի ունեցա՞վ այնպիսի կոորդինալ հարցի շուրջը, որպիսին Ղարաբաղի համար իրավասու մարմին ընտրելն էր Ոչ, հազար անգամ ոչ: Տեղի են ունենում համագումարի նիստերը և այս մեռյալ քաղաքի հանգիստը ոչ ոք ոչնչով չի ցանկանում վրդովել: Հասարակությանը հեռու պահել իրեն իմ վերաբերող խնդիրների քննությունից և մասնակցությունից դա անչափահաս քաղաքագետին կամ չարամիտ պոլիտիկանին միայն կարող է ձեռնառու լինել»¹²:

Քննադատվում է համագումարի նիստերի անկազմակերպ անցկացումը, որ ավելի շատ խոսվում է անձնական, քան ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցերի մասին. անգամ համագումարի նախագահը «ամենատարակալ ըմբռնողությունը չունեք դրված հարցերի լրջության վերաբերմամբ»: Եվ պատահական չէր, ընդգծում է թերթը, որ համագումարը չկարողացավ վերջ տալ գավառում տիրող անիշխանությանն ու քառսին, անտարբերությանն ու խառնաշփոթությանը, որից այնքան տուժում են աշխատավոր մարդիկ:

Թերթն ընդգծում է այն հանրահայտ նշմարտությունը, որ յուրաքանչյուր կառավարություն կամ կառավարական սիստեմ ուժեղ կարող է լինել, եթե ղեկավարները կապված են զանգվածների հետ, հաշվի են առնում նրանց կարծիքը: «Եթե անցած կազմակերպությունների ու հասարակության մեջ անկատելի էր խոր անջրպետ, եթե շնորհիվ այդ հանգամանքի ըստեղծվել էր երկու հակասակորդ բանակ,— դա պիտի համարել անցած կազմակերպության ամենամեծ սխալը. նա չի կարողացել կապ հաստատել իր և հասարակական լայն մասսաների մեջ. նա այդ ուղղությամբ աշխատանքներ չի կատարել կամ ուղղակի աչքաթող է արել հասարակական կազմակերպված կարծիք ունենալու անհրաժեշտությունը: Այս վերջին հանգամանքի վրա մենք շեշտում ենք նրա համար, որովհետև մեր մեջ քիչ չեն անհատներ, որոնք ինքնիշխան անպատասխար

նատու գործեր և աշխատանքներ կատարելու հիվանդությունն ունեն»¹³:

«Նոր կյանքը» արծարծում է նաև այլ կարգի հարցեր, որոնք վերաբերում են գավառի ներքին ու արտաքին կյանքին: Թերթի ինֆորմացիաներից մեկում պատմվում է Ներքին Թաղավարդ գյուղում կատարվող ոտնձգությունների, զոփումների և քաղաքից եկող չարչիների, առևտրական սպեկուլյացիայի մասին:

Ընթերցողները տեղեկանում են նաև Վարազաբունի, Փիրջամախի, Նախիջևանի, Քյաթուկի և Դահրազի բնակիչների առօրյայի մասին, այն, որ նրանք արդեն գյուղ են վերադարձել՝ իրերի տխուր բերումով երկար ժամանակ հայրենիքից դուրս գնալուց հետո և սկսել են տնտեսության վերականգնման աշխատանքները: Որոշ հետաքրքրություն են ներկայացնում լուրերը կուլտուրական կյանքի, արվեստի ու գրականության մասին:

¹³ Նույն տեղում:

¹² Նույն տեղում:

ԼՐԱԳՐԱՅԻՆ ԺԱՆՐԵՐԸ ԳԱՎԱՌԻ ՊԱՐՔԵՐԱԿԱՆՆԵՐՈՒՄ

Դժվարին, բայց պատվավոր ուղի է անցել Ղարաբաղի նախախորհրդային շրջանի առաջադիմական մամուլը:

Նրա գրեթե մի ամբողջ հարյուրամյակի պատմությունը վկայում է, որ տպագիր խոսքը, թերթերն ու հանդեսները այստեղ ծնունդ են առել տեղական անհրաժեշտության բերումով, ապրել հասարակական-քաղաքական կյանքով՝ դառնալով գավառի յուրատեսակ հայելին, պայծառ ու սովերոտ կողմերի արտահայտիչը: Այդ մամուլի բնորոշ առանձնահատկություններից մեկն այն էր, որ միտքը արտահայտվում էր պարզ, հասկանալի, առանց ավելորդ պաճուճանքների ու հանդիսության: Զգացվում է, որ խմբագրությունները, ձգտելով պահպանել թղթակիցների, հոդվածագիրների լեզվաճանկան առանձնահատկությունները, մտածողության անհատականությունը, լուրջ ուշադրություն են դարձրել ընթերցողին մատչելի լինելու նպատակին: Անկասկած, նման գործելակերպը նպաստել է ընթերցողներին հետաքրքրող նյութեր մատուցելու, մյուս կողմից հեղինակային ակտիվի հրապարակախոսական-ժողովրդային հատկանիշները զարգացնելու գործում:

Առանձին պարբերականներ առավել ուշադրություն էին դարձնում այն բանին, որ հրապարակվող նյութերը լինեն տարբեր ժանրերի, փաստերն ու երևույթները ընթերցողներին մատուցվեն բազմազան ձևերով: Սա նպաստում էր թեմայի ավելի դյուրին բացահայտմանը, շեշտը դրվում էր բովանդակության արտահայտման էական կողմերի վրա:

Յուրաքանչյուր լրագրող կյանքից վերցրած փաստերն ու

երևույթները ավելի հեշտ էր մարմնավորում իր նախասիրած ժանրի միջոցով: Ղարաբաղի պարբերական մամուլը լրագրային ժանրերից մեծ մասամբ օգտագործել է հոդված, թղթակցություն, ինֆորմացիա, նամակ, ֆելիետոն, մամուլի տեսություն և գրախոսություն:

Հոդվածները հաճախ կա՛մ առաջնորդողներ էին, կա՛մ էլ խմբագրական: Առաջնորդող հոդվածները, որպես կանոն, վերնագրվում էին տվյալ թերթի լույս ընծայման օրվա և հրատարակության տեղի նշումով: Այսպես, օրինակ, եթե «Նեցուկի» հերթական համարը լույս է տեսնում օգոստոսի 31-ին, ապա նրա առաջնորդողն ունենում է «Ծուշի, 31-ին օգոստոսի» վերնագիրը: Սա հատուկ էր ոչ միայն Ղարաբաղի, այլև ամբողջ Կովկասի հայ պարբերական մամուլին:

Առաջնորդողներում հիմնականում ցուցադրվում էին կյանքի հետ անմիջապես առնչվող փաստեր, երևույթներ, հետևում էին դրանցից բխող եզրակացությունները: Ծիշտ ներկայացնելով ստեղծված իրադրությունը, առաջադիմական թերթերի և հանդեսների խմբագրությունները ձգտում էին, առանց նախաբանի և ավելորդ ձգձգվածության, ասել կարևորը, նշել բարձրացված հարցի կամ պրոբլեմի լուծման նպատակահարմար միջոցները:

Ծառ առաջնորդողներ ուղղակի սկսվում են գլխավոր փաստի հրապարակումից. «Ծուշի, 14 սեպտ.»-ի տակ «Նեցուկը» գրում է. «Եվ այսպես, դավադրությունը վիժել է, խոսվությունը ենթարկվել «լիակատար լիկվիդացիայի»: Երեկ Կերենսկին «փրկեց» հեղափոխության բոլշևիկյան «անարխիստի վտանգից», այսօր նա «ազատում է պետությունը կոռնիլովյան մոնարխիստի սպառնալիքից: Հաղթանակը լիակատար է և փայլուն: Կոռնիլովը ձգտում էր վերականգնելու միապետությունը՝ Կերենսկին հռչակում է ռուսական հանրապետություն: Զորքի և նավատորմի գլուխ էր կանգնած հայրենիքի դավաճան ու մատնիչը՝ Կոռնիլովը, նրան փոխարինում է «ժողովրդի սիրեցյալ հերոսը»՝ Կերենսկին»¹:

Թերթը բնութագրում է կատարված փաստը, տալիս իր վերաբերմունքը դրա նկատմամբ:

«Նեցուկի» և մյուս առաջադեմ թերթերի ու հանդեսների

¹ «Նեցուկ», 1917, սեպտեմբերի 14:

խմբագրությունները կարևոր նշանակություն էին տալիս ստույգ փաստերի հավաքմանն ու հրատարակմանը և այդ անում էին նպատակալաց ու խելամտորեն: Նյութերի ու բերված օրինակների մեջ նկատելի էր բնորոշի ու բնութագրականի ընտրությունը: Հատկապես բոլշևիկյան «Նեցուկը» կարողանում էր հրատարակի վրա դնել բնորոշ փաստերը, դրանք ներկայացնել իրականության հետ սերտորեն կապված, ամբողջության մեջ: Այդ՝ մի կողմից, մյուս կողմից՝ նկատելի էր փաստերի ու երևույթների խոր վերլուծությունը, մի բան, որ խոսքը ավելի ներգործուն էր դարձնում: Մանրաթեմայնությունը և ինքնաբավ փաստագրությունը խորթ էր թերթի համար:

«Հասարակական երևույթների բնագավառում չկա ավելի տարածված և ավելի սնանկ եղանակ,— շեշտել է Վ. Ի. Լենինը,— բան առանձին մանր փաստեր դուրս կորզելը, օրինակախաղ խաղալը: Առհասարակ օրինակներ գտնելը ոչ մի ջանք չի պահանջում, բայց և դա ոչ մի նշանակություն էլ չունի կամ գուտ բացասական նշանակություն, որովհետև բանն ամբողջովին առանձին դեպքերի պատմական կոնկրետ իրադրությունն է: Փաստերը, եթե դրանք վերցվեն իրենց ամբողջության, իրենց կապի մեջ,— ոչ միայն «համատ» են, այլև անվերապահորեն ապացուցիչ բան են: Մանր փաստերը, եթե դրանք վերցվում են ամբողջությունից դուրս, կապից դուրս, եթե դրանք կցկտոր և կամայական են, միայն խաղալիք են կամ որևէ է՛լ ավելի վատ բան»²:

Հատկապես առաջնորդողներն ու խմբագրականները վկայում են, որ Ղարաբաղի նախախորհրդային շրջանի առաջադեմ պարբերականները կարևոր էին համարում ոչ միայն կոնկրետ փաստից բխած եզրահանգումը, այլև որոշակի հանձնարարականի հրատարակումը: Ընթերցողներին պարզ ասվում էր, թե խմբագրությունը տվյալ պահին ինչն է կարևոր համարում, և ինչ է հարկավոր առաջ քաշված հարցը կամ խնդիրը լուծելու համար:

Խոսելով կոոնիլովշիանյի պարտության վճռական նշանակության մասին, «Նեցուկը» իր ասելիքը ավարտում է հետևյալ ցուցումով. «Կոոնիլովշիանյի պարտությունը հեղափոխության համաշխարհային հաղթանակի մեջ է: Հեղափոխու-

թյան արտաքին քաղաքականությունը պետք է մտնի պրոլետարական-ինտերնացիոնալիստական շավիղի մեջ: Անհրաժեշտ է խզել բոլոր կապերը իմպերիալիստների հետ և ձեռք մեկնել «դաշնակից» ու «թշնամի» երկրների բանվորությանը: Ռուսական հեղափոխության պայմանները պետք է հաշտարարել ոչ թե խոսքով, այլ գործով: Այլ կերպ չկա փրկություն»³:

Մյուս բնորոշ գիծը, որ նկատվում էր առաջնորդող և խմբագրական հոդվածներում, ճշմարտացի փաստերի առկայության պայմաններում խոսքի ներգործությունն էր, մարտունակությունը: Այս առավելապես դրսևորվում էր այն հոդվածներում, որոնց հեղինակները գինված էին տեսական խոր գիտելիքներով:

«Նեցուկը» և մյուսները իրենց խոսքի ուժը տեսնում էին ոչ միայն բնորոշ փաստերի, այլև մտքի պարզության, այն բանի մեջ, թե ինչքանով է հաջողվում բացահայտել հակառակորդի գաղափարական սնանկությունը:

Ինչ խոսք, չոր, «գրասենյակային» լեզվով գրված նյութերը, օտար բառերի անհարկի օգտագործումը, դարձվածքների առատությունը ուժ չեն ունենա հակառակորդի դեմ մարտ վարելիս: Պաշարին չեն օգնի ամպագոգոո բացականչությունները, այս կամ այն անձնավորությունից բերված քաղվածքները: Հոդվածի մարտունակության համար անհրաժեշտ է հենց սկզբից մինչև վերջ ասելիքն ասել համոզված, փաստերի վերլուծությամբ, չտարվել հակառակորդին խոսքախեղդ անելով կամ պիտակներ կպցնելով:

Կարևոր հանգամանք է նաև ընթերցողին ճանաչելը: Խմբագրությունը և հեղինակը պետք է լավ իմանան, թե ո՞ւմ համար են գրում, կհասնի՞ արդյոք ընթերցողին տվյալ միտքը, գաղափարը: Եվ լրագրային նյութը այն ժամանակ կլինի մատչելի, երբ ունենա ոչ միայն պարզ լեզու, այլև՝ երկաթե տրամաբանություն, կուռ միտք, այդ մտքի տրամաբանական զարգացում: Եթե հոդվածում կամ այլ ժանրի պատկանող նյութերի մեջ քառասյին վիճակում լինեն փաստերը, իրողությունները, եզրակացությունները, դրանք չբխեն մեկը մյուսից, թույլ լինի դատողությունների ներքին կապը, պարզ է՝ միտքը չի հասնի ընթերցողին:

² Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 30, Ե., 1980, էջ 430:

³ «Նեցուկ», 1917, սեպտեմբերի 14:

Իրոք, քիչ չեն այն լրագրային նյութերը, որոնք առաջին պահ թվում են անթերի, բայց դժվարանում են հասկանալ, թե հեղինակները ինչի են հետամտում, ո՞րն է նրանց ելակետը և նպատակը: Այս տեսակետից էլ հեշտ չէ հրապարակախոս-լրագրողի գործը. այն կապված է մի կողմից գիտելիքների խոր իմացության, մյուս կողմից՝ գրչին տիրապետելու հետ: Եվ դա անհրաժեշտությունն է: Լրագրողը պետք է կարողանա ճիշտ կողմնորոշվել փաստերի, երևույթների և ստեղծված իրադրու-թյան մեջ, արդիական հարցերը լուսաբանել այնպես, որ օգնի աշխատավորներին:

Արցախի նախախորհրդային շրջանի մամուլի պատմությու-նը վկայում է, որ առաջադեմ օրգանները, առաջին հերթին «Գործ» հանդեսը, «Նեցուկ» և «Փայլակ» թերթերը չեն շըր-ջանցել «հիվանդոտ հարցերը», մի կողմ չեն քաշվել, չեն կտրը-վել իրականությունից, հարկ եղած պահին բանավեճ են մղել աշխույժ փաստերի և ճիշտ եզրակացությունների ուժով: Այդ նկատելի է հատկապես տեսական, պրոպագանդիստական հոդվածներում. առաջ քաշված միտքը կամ ուղղակի ամբողջ նյութը հագեցված էր բարձր գաղափարայնությամբ, պարզ էր հոդվածների նպատակը, ուղղությունը, դրույթները հիմնավոր-վում էին համակողմանիորեն:

Մամուլի էջերում մեծ տեղ է հատկացվում նաև ինֆոր-մացիային՝ լրագրային այն ժանրին, որով հնարավոր է օպե-րատիվ կերպով լուսաբանել տվյալ բնագավառը, օբյեկտը: 2Է՞ որ ինֆորմացիան իրողությունների և փաստերի պրոպա-գանդա է, «լուսանկարում»՝ լեզվի և մտածողության ուժով:

Նախախորհրդային շրջանում ևս ինֆորմացիան հանդես էր գալիս մի բանի ձևերով. սեղմ ինֆորմացիոն հաղորդումներ, երբ հրապարակվում է միայն փաստը՝ առանց որևէ մեկնա-բանումների. ծավալուն ինֆորմացիոն հաղորդումներ, երբ փաս-տին հաջորդում են որոշ վերլուծումներ, համեմատումներ՝ ցույց տալով դրության փոփոխությունը, և ակնարկային տիպի ին-ֆորմացիոն հաղորդումներ, որոնց ժամանակ փաստին և մեկ-նաբանություններին զուգակցվում է նկարագրությունը:

Եղել են, իհարկե, և այլ կարգի ինֆորմացիաներ, մաս-նավորապես, հաշվետվություններ (սեղմ և ծավալուն), որոնք հիմնականում նվիրված էին դպրոցների և կուլտուր-լուսավո-րական օջախների գործունեությանը:

Նշենք նաև, որ ինֆորմացիաները վերաբերում էին և՛ դրական, և՛ բացասական երևույթներին:

Բայց ինֆորմացիայի բոլոր նշված ձևերի համար հատ-կանշականը հակիրճությունն էր, լակոնիկ ոճը: Հանրահայտ է, որ հատկապես ինֆորմացիայում չպետք է տեղ գտնեն ընդ-հանուր խոսքեր: Հենց սկզբից նրան հատուկ պետք է լինի փաստի հրապարակումը:

Քիչ չեն պարբերական մամուլում տպագրված այն ինֆոր-մացիաները, որոնք ընթերցողի ուշադրությունը գրավում են և՛ վերնագրից, և՛ առաջին իսկ տողից: Հակիրճ ոճով գրված ինֆորմացիաներ կան «Ղարաբաղ», «Փայլակ», «Նեցուկ» և այլ թերթերում:

«Ղարաբաղի» ինֆորմացիաներից մեկն ուղղակի սկսվում է այսպես. «Հորիզոնի» մեջ Սուրեն Նազարյանը մի հոդվածով՝ «Գրական քննադատությունը մեր մեջ», մատնանիշ է անում այն խայտառակ ձևը, որով մեր «քննադատները» մոտենում են հայ գրականության մեջ երևան եկող գրքերին կամ հեղի-նակներին»⁴:

Ծատ ինֆորմացիաներում չեն նկատվում շաբլոնն ու ստանդարտը, միտքը շարադրվում է ազատ, աշխույժ լեզվով, ներառնելով երբեմն գեղարվեստական տարրեր: Ահա «Փայ-լակում» տպագրված «Չար լեզուների» սկիզբը. «Քոր են գա-լիս լեզուները...: Եվ, ահա, բամբասանքը ծովացած չափում է յուր ալիքներով մարդկանց մտքերը... չար օձերը Ֆշշալով, սողոսկելով մտնում են ծակ ու ծուկ, սև թույն թափում մարդ-կանց սրտերին...»⁵: Իհարկե, հետո բերվում է փաստը և ա-վելի պարզ է դառնում միտքը, բայց մի բան սկսնհայտ է, որ այսպիսի ինֆորմացիաները մատչելի էին և կարդացվում էին:

Լիճում էին դեպքեր, որոնց մասին կարելի էր գրել ներա-ծական խոսքով՝ ընթերցողին բացատրելով տվյալ երևույթի կամ փաստի կարևորությունը: Բայց նախախորհրդային շրջա-նի շատ լրագրողներ խուսափում էին այդ ձևից և սկսում էին կոնկրետ նյութից: «Ղարաբաղ» թերթի ինֆորմացիաներից մե-կը սկսվում է այսպես. «Խանքենդի, Ամսույս 17-ին (1911 թ., նոյեմբեր.— Ս. Ա.) տեղիս ծխ. դպրոցի դահլիճում տեղային

⁴ «Ղարաբաղ», 1912, մայիսի 10:

⁵ «Փայլակ», 1915, ապրիլի 2:

սիրողները դերասան Քոչարյանի ղեկավարությամբ խաղացին «Ասլան բալասի» և թուրքերեն «Ես մեռա» վոդևիլը: Խաղանցավ հաջող, հասարակությունը գոհ արտով հեռացավ»⁶: Կամ այդ թերթի մի ուրիշ ինֆորմացիա՝ «Ժայռը» վրաց բեմի վրա» վերնագրով: Այստեղ կարդում ենք. «Մեր աշխատակից պ. Վ. Փափազյանի «Ժայռը» հայտնի պիեսը թարգմանված է վրացերեն և վերջերս խաղացվել է Թիֆլիսի վրաց բեմի վրա:

Այդ պիեսի մասին վրաց մամուլը յուր քննադատական ռեցենզիաներն է տպում. թարգմանաբար ստաջ ենք բերում «Մնաթոբի» վրացական հայտնի թերթի քննադատականը»⁷:

Ղարաբաղի նախախորհրդային շրջանի մամուլի էջերում քիչ չեն նաև այնպիսի ինֆորմացիաները, որոնք ձգձգված են չարաշահում են ընթերցողի համբերությունը և բավական մեծ ծավալ է կազմում ներածականը. գլխավոր միտքը երբեմն խրճողվում է դատողություններով, ընթերցողի համար պարզ չի լինում, ո՞րն է կարևորը, որը՝ երկրորդականը: Բավականաճանք միայն մի օրինակով: Այսպիսին է «Բժշկական օգնության կարիքը» ծավալուն ինֆորմացիայի սկիզբը. «Ներկա գյուղական իրականությունը դառնում է և անմխիթար, կարիքներով ծանրաբեռնված, տնտեսական ճգնաժամի մեջ տառապող մեր գյուղացիությունը գտնվում է անօգնական վիճակի դժվարին կացության, ճակատագրական պայմանների մեջ:

Եվ երբ մի ակնարկ ես ձգում ընդհանրապես մեր գյուղացիության ներկա կացության վրա, հիասթափությամբ նկատում ես, որ նա կարծես դեռևս գտնվում է կյանքի այն հեռու, նախնական շրջանում, երբ ամեն ինչ պայմանավորված էր բնության խորհրդավոր երևույթներով:

Դեռ մի կողմ թողած անողորք ու դժնդակ պայմանների խտացումը, հայ գյուղացին մինչև այժմ իր մեջ ոչինչ գիտակցական չունի: Հաճախակի կրկնվող յուրաքանչյուր երևույթ, նա կապում է մի ինչ-որ խորհրդավորության, անորոշության և կամ ճակատագրի ու անիմանակի նախախնամության բարեհալեցողության հետ: Ուրիշ կերպ էլ լինել չի կարող. կարո՞ղ է արդյոք մտավորապես դեռևս ցածր, համարյա նախնական վիճակի մեջ գտնվող գյուղացին ըմբռնել այս կամ այն երե-

վույթի, այս կամ այն դրության գաղտնիքներն ու շարժառիթները...»⁸: Եվ այսպես հեղինակը շարունակում է խոսել հայ գյուղացու դառն վիճակի մասին, բայց դեռ հեռու է բուն նյութին անդրադառնալուց, ընթերցողներին չի հայտնում, թե բըժըշկական օգնության ինչ կարիք ունի գյուղական բնակչությունը: Ասվում է, բայց ինֆորմացիայի միայն միջին մասում: Նյութի կեսից ավելին դառնում է այնպիսի փաստի անհարկի, ընդհանուր նկարագրությունը, որ վաղուց է հայտնի ընթերցողներին:

«Ղարաբաղում», «Նեցուկում» և մյուս թերթերում հրատարակվում էին շատ ինֆորմացիաներ, որոնց մեջ գլխավոր փաստի հետ միասին ուշադրություն էին գրավում նաև առանձին մանրամասները: Դրանք ինֆորմացիան դարձնում էին արտահայտիչ: Այստեղ որոշ չափով պատկերվում էին մարդու հոգեկան աշխարհը, նրա զգացմունքներն ու ապրումները: Ինֆորմացիան իր կառուցվածքով մոտենում էր ակնարկին: Իրոք, պատահում էին ինֆորմացիաներ, որոնց մեջ իշխում էին գրական տարրերը՝ նկարագրությունը, հնարանքները: Այդպիսիք էին ոչ միայն գավառի ներքին, տնտեսական կյանքի, այլև քաղաքական թեմաներով գրված ինֆորմացիաները: Ուսանելի օրինակներ էին տալիս առավել աչքի ընկած հրապարակախոսներ Ա. Հովհաննիսյանը, Հ. Կամարին, Ս. Դանիելյանը, Ա. Ծատուրյանը և ուրիշներ:

Լրագրային կարևոր ժանրերից է նաև թղթակցությունը, որը լայնորեն օգտագործվում էր Ղարաբաղում լույս տեսնող թերթերում, ամսագրերում ու հանդեսներում:

1874 թվականի ապրիլից սկսած, երբ Ծուշիում լույս էին տեսնում «Հայկական աշխարհը», այնուհետև «Գործը», «Ազգագրական հանդեսը», թղթակցությունը դիտվում էր որպես միջոց՝ «կյանքի մի կտորը» լուսաբանելու համար: Հրապարակելով տեղերից ստացվող թղթակցությունները, պարբերականները ձգտում էին ընթերցողներին տեղյակ դարձնել տիրող իրավիճակին, արտահայտել մարդկանց խոհերը, տրամադրությունները:

Ի տարբերություն ինֆորմացիայի, թղթակցության մեջ վերլուծվում են ոչ թե մեկ, այլ մի քանի փաստեր: Այստեղ էլ

⁶ «Ղարաբաղ», 1911, նոյեմբերի 24:

⁷ Նույն տեղում:

⁸ «Ղարաբաղ», № 5, 1911, դեկտեմբերի 1:

կարևորը փաստի հաշող ներկայացումն է և նրա մեկնաբանումը, այն հաշվով, որ երևա իրականության կենդանի պատկերը: Այս բանին կարող է հասնել թղթակցության հեղինակը, եթե օժտված լինի ոչ միայն գրելու, այլև օգտագործվելիք փաստերը համեմատելու, գործնական առաջարկություններ և եզրակացություններ անելու ունակությամբ:

Թղթակցությունը, ինչպես հայտնի է, հնարավորություն ունի արտահայտելու հեղինակի վերաբերմունքը այս կամ այն փաստի կամ երևույթի նկատմամբ: Այդ ժանրում հարցերը պետք է դրվեն իրենց ամբողջ հրատապությամբ, ելնելով օրվա պահանջից: Եթե ինֆորմացիային հատուկ է հակիրճությունը, ապա դրանք պարտադիր չեն թղթակցության համար: Թղթակցության հեղինակը հնարավորություն է ունենում իր մտքերը ընթերցողին հաղորդել ավելի լայն մասշտաբով: Այստեղ լրագրողը կարող է օգտագործել գրական կերպարներ, ստաճներ, թևավոր խոսքեր, կատարել համեմատություններ:

Գավառի նախախորհրդային շրջանի թերթերի և հանդեսների էջերում գետեղվում էին **ինֆորմացիոն-նկարագրական, նկարագրական, վերլուծական-քննադատական, հարցադրման** և այլ տիպի թղթակցություններ:

Ինֆորմացիոն-նկարագրական թղթակցությունները փաստորեն ծավալում ինֆորմացիաներ էին, պատմում էին այս կամ այն երևույթի մասին, ունեին նկարագրական մաս և բովանդակում էին թվեր ու փաստեր: Ահա թե ինչպես է սկսվում «Ղարաբաղում» տպագրված այն թղթակցությունը, որի վերնագիրն է «Կենսական մթերքները»։ «Զյուն ու ձմեռ դեռ չի թևակոխել մեր երկրում և շրջակա գյուղերի ու քաղաքի փոխադարձ երթևեկությունը անընդհատ շարունակվում է բանուկ ու աղմկալից:

Չնայած կենսական մթերքների սոստ պաշարը բեռներով, սայլերով անընդհատ փոխադրվում է քաղաք, բայց և այնպես թանկությունը չոր սև ճանկերով սկսել է ընդգրկել մեր քաղաքը»⁹:

Սակայն այս նկարագրությամբ ընթերցողը չի համոզվում, որ իսկապես Շուշի քաղաքում 1911 թ. վերջերին կենսամթերքների գները բավականին բարձրացել են, անտանելի է դարձել

կյանքի վիճակը: Եվ ահա թղթակիցը կոնկրետ կերպով հաղորդում է, թե ինչ արժե նավթի, ածխի, հացի, մսի, պանրի, յուղի, մեղրի, կարտոֆիլի, կաղամբի և այլ կենսամթերքների գինը:

Մամուլի էջերում շատ քիչ էին տպագրվում սուկ նկարագրական թղթակցություններ: Դա հասկանալի էր: Պետք էր հիմնականում տալ դրական փաստի նկարագրությունը, գեղարվեստական որոշ տարրերի օգտագործման շնորհիվ ցուցադրել այն ուսանելին, օրինակելի երևույթը, որ կատարվել էր հետամնաց գավառում:

Նկարագրական թղթակցությունները հիմնականում նվիրված էին հոբելյանական արարողություններին կա՛մ նորաբաց գրադարանին ու ակումբին, կա՛մ էլ որևէ ուսումնական օջախի հանդիսավոր նիստերին:

Ե՛վ «Գործ» հանդեսում, և՛ «Ղարաբաղ» ու «Փայլակ» թերթերում քիչ չէին այն թղթակցությունները, որտեղ պատմվում էին ստանձին նշանավոր մարդկանց մեծարման երեկոների մասին, նկարագրվում ոչ միայն հանդիսավոր մասը, այլև՝ թե ինչպես անցավ գեղարվեստական բաժինը, ովքեր ելույթ ունեցան, ինչպես կատարեցին այս կամ այն երգը:

Ղարաբաղցու կյանքի դստն իրավիճակը ներկայացվում էր վերլուծական-քննադատական թղթակցություններով: Դրանք արժարժում էին մարդկանց հուզող շատ հարցեր: Այստեղ ոչ թե նկարագրական տարրն է ուժեղ, այլ դրության ներկայացումը պարզ ու հասարակ լեզվով:

Այս կարգի թղթակցություններով հանդես էին գալիս և՛ խմբագրությունների աշխատողները, և՛ թղթակիցները, նրանք, ովքեր այս կամ այն չափով շահագրգռված էին աշխատավորների կյանքի բարելավմամբ: Իհարկե, շատ քիչ էին տպագրվում բացահայտ քննադատական թղթակցություններ, մեծ մասամբ խոսքն ընդհանուր էր, ստանց կոնկրետ հասցեագրման:

«Թղթակցություններ» ընդհանուր խորագրի տակ «Ղարաբաղը» տպագրում է մի ուսուցչի խոսքը, որտեղ ասված է. «Մի քանի տարի ապրելով Ղարաբաղի գյուղերից մեկում ուսուցչի պաշտոնով, ես հիմնավորապես ծանոթացա այն դրություններին, պայմաններին, որոնց մեջ ապրում է Ղարաբաղի գյուղացին:

⁹ «Ղարաբաղ», 1911, նոյեմբերի 20:

Տեսա նրանց, այդ «սալան-բալաներին», խեղճացած աղալիս սրա-նրա ոտի տակ ու անընդհատ կեղեքվելիս:

Տեսա այդ հուժկու տղամարդկանց դեմքերին դրոշմված անհուն վշտի խոր ակուններին, կորացած մեջքները անպտուղ աշխատանքից ու չարքաշ կյանքից:

Տեսա նրանց Ղարաբաղի չոր սպառած ժայռերի կործաները մշակելիս և սպա այդ չարչարանքով ձեռք բերած մի կտոր հացը սոված գայլերից, ուրիշներից խելիս...»¹⁰:

Այստեղ լավում է հեղինակի և՛ տրտունջն ու կսկիծը, և բողոքի թույլ ձայնը:

Հարցադրման թղթակցությունները մեծ մասամբ տպագրվում էին մամուլի օպերատիվ օրգաններում, այն թերթերում, որոնք լույս էին տեսնում պարբերաբար: Հազվադեպ չէին «Փայլակում», «Ղարաբաղում» և այլ թերթերի էջերում այս կամ այն հարցը բարձրացնող թղթակցությունները. մի տեղ խոսվում էր, որ դպրոցական շենք կամ բժշկական կետ չկա այսից, գյուղում, մի այլ տեղ՝ մանկապարտեզի մասին մտածող չկա և այլն: Իհարկե, պարբերականներում հրապարակվող հարցադրման թղթակցությունների լուծումը կախված չէր «հասարակ» մարդուց, և դրանց մեծ մասը մնում էր անհետևանք:

Մի խոսքով, Ղարաբաղի նախախորհրդային շրջանի մամուլի էջերում տպագրվող թղթակցությունները աչքի էին ընկնում ոչ միայն լեզվի պարզությամբ, փաստերի ճշմարտացիությամբ և հագեցվածությամբ, այլև թղթակցության տեսակների բազմազանությամբ: Ծառ թղթակցություններում բացահայտվում էին իրականության հետ անմիջական կապ ունեցող երեվոյթներ, փաստեր, և հենց դրանում էր արտահայտվում նրանց ուժը, ազդեցությունը:

Կարևոր հարցեր էին բարձրացվում նաև մամուլներում: Սա լրագրային այն ժանրն է, որն ավելի սերտ է դարձնում խմբագրությունների կապն ընթերցողների հետ: Նամակը հարըստացնում է թերթը: Խմբագրությանն ուղարկած մամուլների քանակը շատ բան է ասում, վկայում է այն մասին, որ աշխատավորները հույսեր են կապում թերթի հետ, նրա օգնությունն են խնդրում: Միաժամանակ մամուլների միջոցով խմբագրությունները հարցեր են բարձրացնում, անմիջապես առնչվում

ընթերցողին և դրանով իսկ ավելի հետաքրքիր դարձնում յուրաքանչյուր համարը: Այս մասին Վ. Ի. Լեհինը գրել է. «Ձեռք թերթը այնպիսի մի բան չէ, որ ընթերցողը կարդում է, գրողը գրոտում: Թերթն ինքը պետք է փնտրի, ժամանակին գտնի և իր ժամանակին զետեղի հարկավոր նյութը: Թերթը պետք է որոնի և գտնի իրեն հարկավոր կապեր»¹¹:

Այս բանը մասամբ հաջողվում էր «Նեցուկին», «Փայլակին» և «Ղարաբաղին»: Թերթերը ձգտում էին տպագրել այնպիսի նամակներ, որոնք արժարժում էին առօրեական հարցեր: Դրանք բազմազան էին և զետեղվում էին «Նամակ խմբագրությանը», «Նամակ տեղերից», «Մեզ գրում են», «Նամակ» և այլ խորագրերի տակ:

Նամակները հիմնականում լինում էին բողոքի և շնորհակալական, երբեմն էլ դրվատական բնույթի: Մի քանի տողով արտահայտված մամուլներում ուղղակի նշվում էր փաստը, շեշտվում, որ այս բանը չկա, պետք է ստեղծել կամ էլ շնորհակալական խոսք էին ասում առանձին բարեգործ մարդկանց կամ ընկերությունների հասցեին: Կարճ գրած մամուլներում երբեմն տրվում էին որոշ բացատրություններ՝ թերթում կամ ամսագրում սպրդած թյուրիմացությունների և սխալների մասին: Ծավալուն մամուլները տալիս էին հարցի պատմությունը, պարզաբանում որոշ հանգամանքներ, արտահայտում ցանկություններ: Այդ կարգի մամուլներից վերլուծենք միայն մեկը:

«Նամակ Հաղրույթից» վերնագրի տակ «Ղարաբաղ» թերթը ընթերցողներին պատմում է Հաղրույթի երկսեռ երկդասյան դպրոցի անմխիթար վիճակի մասին, հատկապես շեշտում, որ նա մինչև հիմա չունի շենք, և ստիպված պարսպամուկներն անցկացնում են խուլ բնակարանում: Նամակի հեղինակն արդեն տալիս է որոշ բացատրություններ և հանգում եզրակացությունների: «Հասկանալի է, իհարկե, — կարդում ենք այնտեղ, — թե ինչպիսի անախորժ դրություններ ու հանգամանքներ կարող են ստեղծվել նման դեպքում դպրոցի շուրջը, երբ մանավանդ պակաս է հսկող ձեռքերի թիվը:

Այդ բոլորը նկատի ունենալով, դպրոցի ավագ ուսուցչի առաջարկությամբ երեխաներին հնարավորություն տվին եկեղեցու բակում խաղալ... (բակը դպրոցին մոտ է) և թովալ՝

¹⁰ «Ղարաբաղ», 1911, նոյեմբերի 27:

¹¹ Վ. Ի. Լեհին, ԵԼԺ, հ. 48. Ե., 1983, էջ 140:

իրենց ազատ զգալով զանազան անկիրթ և կուպիտ կանանց հայհույանքից»¹²:

Արանով չի բավականանում մամակի հեղինակը. նա արտահայտում է իր վերաբերմունքը և ցանկությունը. «Բայց եթե հաղորդեցիները ուզենային, վաղուց դպրոցը իր սեփական շենքը կունենար, քանի որ սրատրաստի հող կա, իսկ նյութականը հեշտությամբ կարող էին ձեռք բերել...»¹³:

Առանձին ծավալուն մամակներում թերթերը բարի խոսքեր էին ուղղում այն ընկերություններին, որոնք հանրօգուտ գործունեություն էին ծավալում, նպաստում կուլտուր-լուսավորական օջախների հիմնադրմանը, հանգանակություններ էին աւանում և այլն:

Բնորոշ է «Համակրելի գործունեություն» վերնագրով մամակը, որը «Ղարաբաղ» թերթին է ուղարկվել Ղափանից: Այն սկսվում է այսպես. «Երկրորդ տարին է, որ գոյություն ունի մեզանում Կ. Հ. Բ. (Կովկասյան Հայկական Բարեգործական.— Ս. Ա.) ընկ. Ղափանի ճյուղը: Մի շրջան, ինչպես Ղափանը, իր հազար ու մի կարիքներով, չէր կարող լայն ասպարեզ բաց անել զանազան հանրօգուտ ընկերությունների գործունեության առաջ, որոնցից առաջին անգամ ոտ դնողը եղավ Կ. Հ. Բ. ընկերությունը, որի մուտքը և գտավ հաջող ընդունելություն ազգաբնակչության կողմից՝ հանձին նրա գիտակից տարրի: Յուրաքանչյուր կուլտուրական գործ, նույնպես և տեղիս ճյուղն, ունի իր փշոտ ճանապարհը, իր սկզբնավորման դժվարությունները, ժողովրդականացման եռանդուն աշխատանքը, որ շրնորհիվ գործի վարիչների, հարթվում է և դառնում է մի գործուն ուժ՝ ժողովրդի առաջադիմության գործում: Տեղիս ճյուղը իր գործունեությունը սկզբնավորեց գրադարան-ընթերցարանով, որպես մի անհրաժեշտություն այս խավար անկյունում, որպես միակ միջոցը գիտակցորեն առաջադիմելու»¹⁴:

Այնուհետև նշվում է նրա արդյունավետ գործունեությունը: Նամակի հեղինակը ցույց է տալիս նաև գրադարան-ընթերցարանի ձեռնարկումները և օգնությունը դպրոցահասակ երեխաներին. «Որոշ չափով կարգավորված նորաբաց գրադարանը

մեծ նեցուկ է շրջանիս դպրոցներին: Վարչությունը սիրալի կերպով ընդառաջ է գնում խնդրող ուսուցիչներին՝ ձրի օգուվելու գրադարանից երեխաներին բաժանելու համար և ձեռնարկել է գրադարանում ունենալ մանկավարժական գրքերի բաժին: Այս քայլը նույնչափ ուրախալի, գովելի է»¹⁵:

Ընթերցողները տեղյակ են դառնում, որ ուսուցիչների և ուսանողների ուժերով «կկազմակերպվեն ժողովրդական ներկայացումներ, դասախոսություններ, երեկոյթներ և այլ կրթական գործեր...»¹⁶: Նամակներում նկատելի էին հարցի հստակությունը և նրա համակողմանի նշանակությունը:

Ինչպես ինՖորմացիաներում ու թղթակցություններում, այնպես էլ այս ժանրում ծանրակշիռ փաստեր էին ներկայացվում, բերվում էին կոնկրետ թվեր, մարդկանց անուններ՝ համոզելու ընթերցողին, որ իրոք դրությունն այդպես է, և անհրաժեշտ է որոշակի մոտեցում ունենալ տվյալ երևույթի նկատմամբ:

Նամակներում ևս ակտիվ էր հեղինակների միջամտությունը, դրևսորվում էր նրանց վերաբերմունքը այս կամ այն հարցի նկատմամբ: Սա ոչ միայն թերթի թղթակիցների, այլև խմբագրության աշխատակիցների արտացավության, աշխատավորների համար փոքրիշատե բարվոք պայմաններ ստեղծելու մտահոգության արտահայտություններից է:

Ուշագրավ էին դրանց թեմատիկ բաժինները, անշուշտ, ոչ այսօրվա հասկացությամբ, ուր զետեղված երկու-երեք մամակները արծարծված հարցերով սոնչվում էին իրար, մոտ էին բովանդակությամբ: Որոշակի թեմայով մամակները տպագրվում էին երբեմն առանց խորագրերի կամ ընդհանուր վերնագրերի:

Աչքի էին զարնում նաև ահազանգող մամակները, որոնք մի քանի տողով դիտողություններ էին առանձին հարցերի մասին:

Ֆելիետոնը նույնպես պարբերաբար տեղ էր գտնում գավառի մի շարք թերթերում, մասնավորապես «Ղարաբաղում» և «Փայլակում»: Դրանցում հեղինակները ձգտում էին սուր խոսխարսզանել կրթական գործի հետամնացությունը, մարդկանց տգիտությունը, ինչպես նաև անարժան հոգևորականությանը, առանձին «բարեգործական» ընկերությունների և այլն:

¹² «Ղարաբաղ», 1912, մայիսի 10:

¹³ Նույն տեղում:

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ Նույն տեղում:

քով, երբեմն՝ գեղարվեստական արտահայտչական ձևերի օգնությամբ մերկացնել բուրժուական հասարակության բարբերը,

«Փոքրիկ ֆելիետոն» ընդհանուր խորագրի տակ «Փայլակը» տարբեր առիթներով մերկացնում էր Էջմիածնի բարձրաստիճան հոգևորականությանը, նրա կենցաղավարությունն ու սովորությունները: Երգիծական այդ նյութերը աչքի էին ընկնում սարկազմով, հետաքրքրական համեմատություններով, այլաբանություններով: Դրանք կարդացվում էին ուշադրությամբ, հենց սկզբից տրամադրում ընթերցողին: «Զարմանալի ժողովուրդ մե սա հայ ժողովուրդը,— գրում է «Փայլակը»,— որչափ հրաշքներ կը գործվին անոր մեջ: Եվ որչափ տաղանդավոր են սա հրաշքները, որ կը կատարվին Հայաստանին ու հայ ժողովուրդին մեջ:

Չէ՞ք հավատար ինձի, կեցի՞ք, ահախափկ թվեմ ձեզի մեկեհնիմեկ բոլոր հրաշքները.— Էջմիածինը բազմակնություն մուծած եպիսկոպոսներուն մեջ: Միքայել Վարանդյանը մամուլի տակեն նոր լույս տեսած է, որպես Հայաստանի ներկայացուցիչ Ստոկհոլմի սոցիալիստներու համագումարի մեջ, կոմսոնիստ Վորոնցովյան խնդրած է Մեսրոպ սրբազանին ձեռք և սա ալ բնավ մերժած չէ անոր ձեռք, Սամսոն Չերքեզյան կուսակրոնություն ընդունված է...»¹⁶:

Ֆելիետոնի հեղինակը աստիճանաբար բացում է փակագծերը և ասում իր խոսքը, մերկացնում «ազգասեր» այն գործիչներին, որոնք անուն ունեն, բայց «ամանում չկան»: Դրանցից են նաև Էջմիածնի վարդապետները:

Վառ է հեղինակի երևակայությունը, գույները թեև խոսցված են, բայց համոզիչ են, բնութագրական: Վերջում լռիվ արտահայտվում է ֆելիետոնի նպատակը, երևում է վերնագրի («Լուսինին խավարումը») երկիմաստությունը:

Տպագրված ֆելիետոններում բացահայտվում էին նաև հայրենի քաղաքի՝ Շուշիի, բնակիչների անմխիթար վիճակը, սնրհամայնության պակասը, շենքերի, փողոցների անբարեկարգ վիճակը: 1913 թ. հուլիսի 3-ի համարում «Շուշիակա ժողովրդ» տպագրել է ֆելիետոն «Ամեն ինչի մասին մի քիչ կամ բաղաձայնի բարեկարգման շուրջը» վերնագրով:

Այս ծավալուն ֆելիետոնում թեև ոչ սուր կերպով, այնուամենայնիվ ծաղրի են ենթարկվում տեղական իշխանություն-

ները, որոնք հոգ չեն տանում Շուշիի պես քաղաքի բնակչությանը որակյալ ջրով ապահովելու մասին և այդ այն դեպքում, երբ նրա մերձակայքում կան հիանալի շատ աղբյուրներ:

Թերթի առանձին ֆելիետոններում մերկացվել են թեթևամիտ «դերասանուհիները», մարդկանց նախանձը, բժիշկների անփորձությունը հիվանդի նկատմամբ և այլն: Ո՞րն է այդ ֆելիետոնների մեջ ընդհանուրը, բնորոշը. դա մտահոգությունն է կյանքի, շրջապատի արատները վերացնելու համար:

Սակայն սա չի նշանակում, թե նախախորհրդային Ղարաբաղի մամուլի էջերում տպագրված բոլոր ֆելիետոնները գրված են վարպետորեն, համարձակորեն ու սկզբունքայնությամբ: Մասնավորապես «Շուշիակա ժողովրդ» քիչ չեն այն «ֆելիետոն» կոչվածները, որոնք շատ քիչ բանով են զանազանվում ծավալուն թղթակցություններից կամ նամակներից: Իրականում դրանք մակերեսային ձևով գրված նյութեր են, ուր փաստերը շարադրված են երբեմն պարզ, երբեմն էլ՝ խճողված, անհասկանալի: Եվ եթե մի դեպքում ծայրահեղորեն կծու լեզվով է ներկայացվում փաստը, երևույթը, ապա մի այլ դեպքում, ընդհակառակը, շատ սառնարյուն կերպով խոսվում է նրա մասին՝ առանց հարկավոր վերաբերմունքի, պակասում է փաստը երգիծական ուժով մատուցելու վարպետությունը, չկա ոճի միասնություն. մի տեղ՝ ուղղակի պատմվում է ինչ որ բանի մասին, մի այլ տեղ՝ արձանագրական ոճով շարադրվում է եղելությունը և այլն:

Սա վկայում է ոչ միայն լրագրողի շնորհքի պակասի, այլև այն մասին, որ «ֆելիետոնի» հեղինակը չի խորացել երևույթների մեջ, չի կարողացել բացահայտել պատճառները և թեթեվակիրներն է անցել փաստերի, իրադարձությունների կողքով կամ էլ, ինչ խոսք, չէր կարող ցարական կառավարության դատապարտման պայմաններում քննադատական սուր խոսք ասել վերածան մարմինների հասցեին: Լիարժեք ֆելիետոնը պահանջում է առողջ դատողություններ, գրական մշակում, լեզվապատճառական պատշաճ միջոցների գործադրում:

Արցախի թերթերում, ամսագրերում և հանդեսներում տրպագրված գրախոսությունները, թատերական քննախոսությունները նույնպես պակաս դեր չէին խաղում գավառի կյանքում: Դրանք նպաստում էին բնակչության քաղաքական-հասարակական դաստիարակությանը, զինում էին մարդկանց գրակա-

¹⁶ «Փայլակ», 1917, հունիսի 25:

նագիտական գիտելիքներով, պրոպագանդում այս կամ այն հաջողված գիրքը, բեմադրությունը և, ընդհակառակը, ցույց տալիս առանձին աշխատությունների, դրամատիկական գործերի թերությունները:

Քննախոսականներն ավելի շատ ինֆորմացիոն բնույթ ունենին և միայն փաստն էին արձանագրում ծավալուն կերպով, ընթերցողը հաղորդակից չէր լինում նյութի բովանդակությամբ, առանձին կերպարների ներաշխարհի և գործելակերպի էությունը: Այնինչ, անհրաժեշտ էր հենց սկզբից խոսել նյութի հրատապության, քաղաքական-հասարակական նշանակության և ապա՝ գրողի, ստեղծագործողի վարպետության մասին:

Հաճախ մամուլում տպագրվում էին անուտացիաներ՝ նոր տպագրված գրքերի, ստեղծագործությունների մասին: Բայց գրեթե չէին կազմվում տեսություններ, ուր հակիրճ կերպով խոսվեր հարակից և առանձին թեմաներով հրապարակ եկած աշխատությունների կամ թատերական, երաժշտական ստեղծագործությունների մասին:

Շեշտենք նաև, որ հազվագյուտ չէին ոչ օբյեկտիվ դիրքերից գրված գրախոսություններն ու թատերական քննախոսականները մասնավորապես «Շուշինսկայա ժիզն» և «Ղարաբաղ» թերթերում: Դա բացահայտվում է, երբ քննական մոտեցում ենք ցուցաբերում ժամանակի պարբերական մամուլի նկատմամբ:

Արցախի մամուլն ուժերը ներածին չափով պայքարում էր, որպեսզի հայրենի գավառում հարգի լինեն ստեղծագործական միտքը, կուլտուրան, գեղագիտական ճաշակը: Այդ նպատակով տպագրվում էին գրականագիտական հոդվածներ: Սըրանք ունեին լուրջ բովանդակություն և ոչ քիչ դեպքերում նըվիրվում էին առանձին գրողների, ստեղծագործողների, երգահանների հոբելյաններին: Թերթերը, մյուս պարբերականները ընթերցողներին ծանոթացնում էին հայ, ռուս և արտասահմանյան գրականության լավագույն ստեղծագործությունների հետ, նրանց մեջ սեր պատվաստում դեպի գեղարվեստական խոսքը, արվեստը: Այդ նպատակով քիչ նյութեր չէին տպագրում մասնավորապես «Գործ», «Քնար խոսնակ», «Ծիածան» հանդեսները, «Ղարաբաղ» և «Փայլակ» թերթերը:

Պատահական չէ նաև, որ պարբերականներում ավելի հաճախ տպագրվում էին տեղի հեղինակների ստեղծագործություն-

ները: Հատկապես «Ղարաբաղ» և «Փայլակ» թերթերի էջերում գետնելվում էին ղարաբաղցիների այն բանաստեղծությունները, պոեմները, պատմվածքները, որոնց մեջ մարմնավորվում էին հայրենասիրությունը, աշխատավորների հոգսերը, մարդկային ներաշխարհը, անձնական գեղեցիկ զգացմունքները:

Պատկերելով աշխատավորությանը հուզող հարցերը, հայրենասիրությունն ու մարդասիրությունը, անհատի կամքի ուժն ու տոկունությունը Արցախի գրողներից շատերը, մասնավորապես Գ. Ներսիսյանը, Լ. Աթաբեկյանը իրենց ստեղծագործական խոսքը հրապարակ էին հանում գեղարվեստական տրպավորիչ միջոցներով:

Իհարկե, առանձին ստեղծագործություններում կային ընդհանուր դատողություններ, վերացական մտքեր, բայց հիմնականում նրանց նյութը բխում էր ռեալ իրականությունից: Մի բնորոշ գիծ, որ նկատելի էր գրական գործերում՝ գաղափարի, մտքի առաջնությունն էր. ուղղակի ասենք, որ բովանդակությունն իշխում էր ձևի վրա, թույլ էր ձևի և բովանդակության միասնությունը:

Երկրամասի նախախորհրդային շրջանի մամուլը պայքարում էր մարդասիրության և ժողովուրդների բարեկամության ամրապնդման համար: Ոչ միայն գրական ստեղծագործություններում, այլև բազմաթիվ հոդվածներում, ինֆորմացիաներում, թղթակցություններում, նամակներում ու լրագրային այլ ժանրի նյութերում ընդգծվում էր այն միտքը, որ բոլոր ժողովուրդներն էլ, անկախ իրենց լեզվից, դավանանքից, սովորություններից, բարեկամներ են, որոնց օգնությունն ու համագործակցությունը կենսական անհրաժեշտություն է:

Գավառի առաջադեմ թերթերում և ամսագրերում չի տպագրվել որևէ նյութ կամ գրական գործ, որտեղ անտեղի ժողովուրդների ազգային արժանապատվությունը, մեկը շույլի կամ մյուսը ներկայացվի բացասական գծերով: Եթե տարբեր առիթներով դրվատական խոսքեր են ուղղվել հայ գրողներին, լուսավորիչներին, անվանի մանկավարժներին, ապա առանձին հոդվածներ են տպագրվել Պուշկինի, Լերմոնտովի, Գրիբոյեդովի, Գոգոլի, այլազգի նշանավոր ստեղծագործողների, գերասանների մասին:

Գրական ժողովածուներում և հանդեսներում գետնելվել են ռուսական և արտասահմանյան գրողների լավագույն գործե-

րից ստանձին նմուշներ: Ուշադրության է արժանի հատկապես «Բնար խոսնակը», մի ժողովածու, որ ստանձին բաժնովներկայացնում է ռուս և եվրոպական դասական գրողներին:

Առանձին թերթերի՝ և հանդեսների էջերում մի շարք նյութեր են տպագրվել ոչ միայն հայկական, այլև ռուսական դրպրոցների մասին, շեշտվել է այն, որ ռուսումնասանները պետք է գործեն կանոնավոր, խոր գիտելիքներ հաղորդեն աշակերտներին, նրանց մեջ սեր առաջացնեն դեպի հայրենիքը, ժողովուրդը, դեպի գիտությունը, արվեստը, գրականությունը: Պայքարի սուր պաքը ուղղվել է նրանց դեմ, ովքեր անհոգի վերաբերմունք են ունեցել մատաղ սերնդի, երիտասարդության և ընդհանրապես աշխատավորության լուսավորության գործի նկատմամբ:

«Գործը», «Փայլակը» և մյուս պարբերականները տանյակ նյութեր են տպագրել հասարակական գրադարաններ, ակումբներ ստեղծելու մասին, հանդես են եկել թատերական խմբեր կազմակերպելու, բարձրորակ ներկայացումներ, համերգներ տալու առաջարկով:

Պարբերական մամուլը ուշադրության կենտրոնում էր պահում աշխատավորության օրվա հոգսերի լուսաբանումը: Թերթերը և մյուս պարբերականները գրում էին այն մասին, որ Արցախի աշխատավորության կյանքը հետզհետե վատանում է, սպառվում են նրա ապրուստի միջոցները, չկան բնակարաններ, սննդամթերք, վատելիք: Եվ մամուլի էջերում փոքր ու մեծ չափով միշտ էլ առկայծել է ազատության հասնելու կրակը: Հատկապես հեղափոխության վերելքի ժամանակաշրջանում «Նեցուկը» կոչ էր անում աշխատավորներին՝ գոտեպնդվելու վճռական մարտերի, համախմբվելու բոլշևիկների կուսակցության շուրջը, մերկացնելու բոլոր այն տարրերին, որոնք ոչ մի սունչություն չունեն աշխատավոր ժողովրդի հետ: Առաջավոր մամուլը բարձր է պահել հաղթանակի հասնելու դրոշը, ընթերցողներին բացատրել իրերի բուն էությունը, զինել նրանց կենսահաստատ գաղափարներով:

Իրոք, անուրանալի է Ղարաբաղի նախախորհրդային շրջանի մամուլի կատարած դերը հասարակական-քաղաքական, մշակութային կյանքի ստանձին բնագավառներում: Մամուլի դերն ավելի արգասավոր կլիներ, եթե չլինեին խանգարիչ որոշ հանգամանքներ՝ ցարական խիստ գրաքննչությունը, ֆի-

նանսական միջոցների սղությունը, պոլիգրաֆիական թույլ բազան, խմբագրական և տպագրական գործի հմուտ կադրերի պակասը և այլն:

Իհարկե, Ղարաբաղի մամուլը բավական սովերոտ կողմեր էլ ուներ՝ մասնավորապես միտքն ավելի համարձակ ասելու, քաղաքական շատ հարցեր արծարծելու, նյութերը գրական մշակման ենթարկելու, լեզվական կուլտուրան բարձրացնելու, թերթերի և հանդեսների համարները ձևավորելու և տպագրության տեխնիկական բարելավելու տեսակետից:

Արցախի նախախորհրդային շրջանի մամուլի պատմությունն ունի ճանաչողական նշանակություն և վավերագրի ուժ, օգնում է յուրացնելու այն լավը, օգտակարը, որ գալիս է անցյալից, լրագրական-հրատարակչական աշխատանքի հարուստ փորձից:

**ՂԱՐԱՔԱՂՈՒՄ ԼՈՒՅՍ ՏԵՍԱԾ
ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԽ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
(1874 — 1920 թթ.)**

Հ Ա Յ Ե Ր Ե Ն

1. **«Ազգագրական հանդես»:** Առաջին գիրքը հրատարակվել է Շուշում, 1896 թվականին: Խմբագիր-հրատարակիչը Երվանդ Լալայանն էր: Աշխատակցել են անվանի գիտնականներ Հր. Աճառյանը, Մ. Աբեղյանը, Ստ. Մալխասյանը, Թ. Թորամանյանը, Ե. Շահագիզը և ուրիշներ:
2. **«Աշակերտ»:** Աշակերտական խմորատիպ թերթ: Լույս է տեսել Շուշում, 1917 թ.: Ուներ առաջադիմական ուղղություն: Խմբագրել են Լևոն Վարդունին և Մովսես Հարությունյանը: Տպագրվել է մի քանի համար:
3. **«Սպառաժ»:** Դաշնակցական թերթ: Լույս է տեսել 34 համար, Շուշում, 1917 թ.: Խմբագրել է Հ. Մուսայելյանը:
4. **«Արցախ»:** Հասարակական, քաղաքական և գրական շաբաթաթերթ: Հրատարակում էր Ղարաբաղի Ազգային խորհուրդը: Լույս է տեսել 7 համար, 1919 թ., Շուշում:
5. **«Գործ»:** Գրական, քաղաքական և ազգային հանդես: Հրատարակվել է Շուշում—Թիֆլիսում, 1882—1884 թթ.: Լույս է տեսել երեք համար: Խմբագիր-հրատարակիչը Սիմոն Հախումյանն էր: Ակտիվորեն աշխատակցել են Հ. Առաքելյանը, Ալ. Քալանթարը, Հ. Խոջամիրյանը, Մ. Առուստամյանը, Ն. Տեր-Ավետիսյանը և ուրիշներ:
6. **«Եռանդ»:** Աշակերտական թերթ: Լույս է տեսել Շուշում, 1917 թ.: Ուներ պահպանողական ուղղություն: Տպագրվել է մի քանի համար:
7. **«Ծիածան»:** Գրական-գեղարվեստական ամսագիր: Լույս է տեսել Շուշում, 1916 թ.: Խմբագիր-հրատարակիչը Միսաք Պետրոսյանն էր: Աշխատակցել են Ա. Վշտունին, Խ. Լորենցը, Գ. Ղազարյանը, Գր. Ներսիսյանը, Լ. Վարդունին, Բ. Տեր-Դանիելյանը և ուրիշներ: Հրատարակվել է միայն մեկ համար:
8. **«Ծիծաղ»:** Աշակերտական խմորատիպ երգիծական ամսագիր: Լույս է տեսել Շուշում, 1916 թ., ուներ բուլշևիկյան ուղղություն: Տպագրվել է մի քանի համար:
9. **«Հայկական աշխարհ»:** Գրական-մանկավարժական, ապա նաև՝ կրոնական ամսագիր: Շուշում լույս է տեսել առաջին համարը 1874 թ. ապրիլին: Ունեցել է չորս համար: Խմբագիր-հրատարակիչը Խորեն Ստեփանն էր, ակտիվ աշխատակիցը՝ Գրիգոր Արծրունին:
10. **«Ղարաբաղ»:** Գրական-հասարակական եռօրյա թերթ: Լույս է տես-

ել Շուշում, 1911—1912 թթ.: Ունեցել է 74 համար: Խմբագրել են թիշկ Ն. Երամիշյանը, գրող Վ. Փափագյանը և Ս. Տեր-Մինասյանը: Աշխատակցել են Տնրվաշի Խաչանը, Գր. Ներսիսյանը, Խ. Լորենցը, Լ. Աթաբեկյանը, Հ. Խանլարյանը և ուրիշներ:

11. **«Ղարաբաղի սուրհանդակ»:** Հասարակական-քաղաքական թերթ: Լույս է տեսել Շուշում, 1918 թ.: Ուներ առաջադիմական ուղղություն: Հրատարակվել է միայն մեկ համար:

12. **«Միրած»:** Աշակերտական խմորատիպ ամսագիր: Լույս է տեսել Շուշում, 1913—1917 թթ.: Ուներ բուլշևիկյան ուղղություն: Խմբագրել է Գրիգոր Մեհրաբյանը: Աշխատակցել են բուլշևիկներ Ս. Ասիսյանը, Ա. Ավագյանը, Գր. Խաչիսյանը և ուրիշներ: Տպագրվել է մի քանի համար:

13. **«Միություն»:** Աշակերտական խմորատիպ ամսագիր: Լույս է տեսել Շուշում, 1913 թ.: Ուներ դաշնակցական ուղղություն: Տպագրվել է մի քանի համար:

14. **«Նեցուկ»:** Հասարակական-քաղաքական շաբաթաթերթ: Լույս է տեսել Շուշում, 1917 թ.: Ուներ բուլշևիկյան ուղղություն: Խմբագրել է Աշոտ Հովհաննիսյանը: Աշխատակցել են Հ. Հովհաննիսյանը, Ա. Ծատուրյանը (Ռուբենից), Հ. Կամարին, Ս. Դանիելյանը և ուրիշներ: Հրատարակվել է ութ համար:

15. **«Նոր կյանք»:** Հասարակական-քաղաքական թերթ: Հրատարակում էր Շուշիի սոցիալ-դեմոկրատական խմբակը: Լույս է տեսել 1919 թ., Շուշում: Ունեցել է ճիճ համար:

16. **«Պայքար»:** Աշակերտական խմորատիպ շաբաթաթերթ: Լույս է տեսել Շուշում, 1916 թ.: Ուներ դաշնակցական ուղղություն: Տպագրվել է միայն մեկ համար:

17. **«Սրինգ»:** Աշակերտական խմորատիպ թերթ: Լույս է տեսել մի քանի համար Շուշում, 1917 թ.: Ուներ առաջադիմական ուղղություն: Խմբագրել է Եղիշե Ներսիսյանը:

18. **«Փայլակ»:** Քաղաքական-հասարակական, սոցիալ-դեմոկրատական թերթ: Լույս է տեսել Շուշում, 1915—1917 թթ.: Հիմնականում ունեցել է բուլշևիկյան ուղղություն: Խմբագիր-հրատարակիչը եղել է Լևոն Վարդապետյանը, իսկ վերջին մի քանի համարները խմբագրել է Խ. Սամվելյանը: պետյանը, իսկ վերջին մի քանի համարները խմբագրել է Խ. Սամվելյանը: Աշխատակցել են Լ. Աթաբեկյանը, Լևոն, Գր. Ներսիսյանը, Գ. Ղազարյանը, Ս. Դանիելյանը, Լ. Վարդունին, Ա. Առաքելյանը և ուրիշներ: Լույս է տեսել 191 համար, որից 1915 թ.՝ 51, 1916 թ.՝ 97, 1917 թ.՝ 43 համար:

19. **«Բնար խոսնակ»:** Գրական-պարբերական ժողովածու: Լույս է տեսել Շուշում, 1881 թվականին: Ունեցել է միայն մեկ համար: Խմբագիր-հրատարակիչը Նիկողայոս Տեր-Ավետիսյանն էր:

Ռ Ո Ւ Ս Ե Ր Ե Ն

1. **«Շուշինսկի լիստոկ»:** Հասարակական-քաղաքական շաբաթաթերթ: Լույս է տեսել 1911 թ., Շուշում: Խմբագիր-հրատարակիչը Ծամիլ Մելիք-Ղարապետովն էր: Հրատարակվել է 37 համար:

2. **«Շուշինսկայա ժիզն»:** Հասարակական-քաղաքական թերթ: Լույս է տեսել 1913—1914 թթ., Շուշում: Խմբագիրը Ստ. Մանդիկյանն էր: Ունեցել է 54 համար:

S U M M A R Y

Gharabagh is a little province (about 4—4.5 square kilometers). This beautiful place was once one of the fifteen provinces of Historical Armenia, Artzakh by name, which is well-known for its enchanting landscape, pure air and water, rich soil, impressive mountains and lush vegetation. There have been many who have admired Gharabagh, especially its former centre Shushi, which many famous Armenian and foreign scientists, writers and military leaders visited and where they spent many years of their lives.

Gharabagh has been a storehouse of material and spiritual culture from ancient times. Amaras (beginning of the fourth century), Gtcha, Khuta or Datir (6th century), Gandzasar (the beginning of the thirteenth century) and many other churches thrill the spectator with their wonderful architectural invention and complex structure.

For ages the Gharabagh people have struggled against the foreign invaders preserving unaltered their language, religion, culture, all their national features and traditions of their mother land.

As far back as the first half of the 19th century Gharabagh was well-known as the main centre of Armenian literature, education, art, printing, etc. In Shushi printing began earlier than in any other major town of the Caucasus. The first book was printed here in 1828, whereas in Baku the first book was printed in 1872.

Later on new publications such as literary collections, magazines, newspapers were issued in Shushi. Between 1874 and 1920 the number of periodicals published here in this province reached 21, of which 19 were in Armenian and 2 in Russian.

Some of the periodicals which were published here were manuals issued by the organizations "Mirazh" (Mirage) and "Miutiun" (Union).

Among the most noteworthy magazines and newspapers that were published belongs "Haikakan Ashkhar" (Armenian World), "Knar Khosnak" (Melodious Lyre), "Gorts" (Work), "Azgagrakan Handess" (Ethnic Journal), "Gharabagh", "Pailak" (Dawn), "Nor Kiank" (New Life), "Netzuk" (Pillar). These publications and other newspapers report on life not only in the province but also round the world.

The contributors to the newspapers numbered among them many outstanding writers of this period, notably Vrtanes Papazian, Perch

Proshian, Leo, scientists Ashot Hovhannisian, Arakel Arakelian, many public and political figures such as Hakob Kamari, Alexander Tsaturian, Hakob Hovhannisian. In their works poets and writers paid tribute to their native land, at the same time pointing out indirectly the sufferings of the people, arousing a sense of political consciousness and desire for liberation.

Gharabagh is one of those provinces where Armenian literature has always been a guiding light for the people. The publishing houses in Gharabagh issued not only periodicals but also the works by individual authors, scientists and scholars.

In this respect we can mention Mikael Chamchian's manual "Grammar of the Haikazian Language" (1933), in which he describes the wordstock, the case system and parts of speech in the Armenian language. It was in Shushi that Byron's "The Prisoner of Chillon" was published. It was the great English poet's first book to be successfully translated into Armenian by the talented Armenian literary figure Movses Zohrabian. Quite a few publishing houses attached to parish schools were founded. The most noteworthy among them is the Shushi seminary opened in 1838 which kept on functioning until 1920. The existence of the publishing houses facilitated the publication of a great number of books. "The Opening of St. Mariam's Young Lady's School in Gharabagh" by Perch Proshian is worth mentioning among those books issued in the first year. Here, among other things, the author welcomes the introduction of women's education in Shushi. The same publishing house issued a historical investigation into the "Home life of Ancient Armenia" translated from Russian by P. Proshian.

Great attention was also paid to the publication of text-books. 1866 saw the publication of "The Concise History of Armenia" which intended to give children an idea about the historical past of the nation. The periodicals published in Shushi never ceased propagating the idea that a student should read a good book systematically, investigating the problem raised in it. More than that, some of the periodicals aimed at improving both Armenian orthography and speech. One of these periodicals, "Armenian World", edited by Knoren Stepaneh—based its theory of "spelling reform" on the principle of bringing spelling and pronunciation into one-to-one correspondence. Considerable attention was paid to problems in education, therefore the journal abounded in articles on methods of teaching Modern Armenian and its style, and also the role of school and family in the development of a child's character.

These periodicals attach great importance to the reader's aesthetic education. In this respect we must more particularly mention the following periodicals: "Knar Khosnak" (1881), "Tsiatsan" (Rainbow, 1916), issued works by Pushkin, Lermontov, Heine, Goethe, Chiller, Byron and others which are noted not only for their progressive ideas, but also for their great aesthetic and literary value.

The publisher of the journal "Gorts" Simon Hakhumian wrote a new page in the history of the prerevolutionary press. He actively contributed to both Russian and Armenian papers, "Mshak" (Worker) and "Ardzagank" (Echo) in particular. He was a versatile man who knew several languages and was especially noted for his objective analysis of events.

Tigran Nazarian was one of those devotees of the publishing business, who founded a publishing office in Shushi in 1881 and issued six books and pamphlets. He also concerned himself with the all important job of training journalists and publishers and set up a two-year-course for reporters. Another prominent figure of Gharabagh was K. Melik-Shakhnazarian who was famous as a public speaker and humorist. His works under the pseudonym of Tmblachi Khachan appeared in various periodicals.

The great Armenian historian, writer and publicist Arakel Babakhanian (pseudonym Leo) made a large contribution to the development of the publishing and printing business. His highly valued articles were published in "Mshak", "Ardzagank" and other periodicals.

Much was also done by Mariam Alexanian, Sofia Arakelian, Victoria Davtian and others on whose initiative many cultural happenings took place, among them the publication of important works.

The contributions made by Gharabagh to the development of Armenian culture, education and publication has indeed been great.

РЕЗЮМЕ

Невелик Карабах (всего 4,4 тыс. кв. км.). Прекрасный этот край был одной из 15 больших областей исторической Армении и носил имя Арцах. Известен этот край своей чарующей природой, чистым воздухом и водой, плодородной землей, живописными горами, богатой растительностью.

Многие восторгались Карабахом, бывшим его центром—городом Шуши. Бывали здесь выдающиеся ученые, писатели, военачальники, многие из них провели в этом городе-курорте часть своей жизни.

Основные жители Карабаха—армяне.

Из глубины веков дошли до нас сокровища духовной культуры Карабаха. Амарас (начало IV в), Гтча, Хута или Дати (VI в.), Гандзасар (начало XIII в.) и другие монастыри изумляют своей величественной архитектурой, чудесной резьбой по камню.

С первой половины XIX в. Карабах известен как важнейший очаг армянского просвещения, печати, искусства, литературы. Книгопечатание в Шуше началось раньше, чем в других крупных городах Закавказья, населенных армянами. Первая книга была издана в Шуши в 1828 г.—в Баку только в 1872 г. В разное время в Шуши выходят сборники, журналы, газеты и т. д. В 1874—1920 гг. количество изданий в провинции доходит до 21, из которых 19—на армянском языке, 2—на русском. Некоторые из них—органы ученических организаций «Мираж» и «Союз».

Из периодических изданий Карабаха заслуживают внимания «Айкакан ашхар» («Армянский мир») и «Кнар хоснак» («Певучая лира»), «Гори» («Дело»), «Азгатракан андес» («Этнографический журнал»). «Карабах», «Пайлак» («Зарница»), «Нецук» («Опора»), «Нор кянк» («Новая жизнь») и другие. В них публиковали разнообразные и разножанровые материалы, которые представляли не только будни провинции, но России и заграницы.

Подобные материалы можно было встретить в газетах «Карабах», «Пайлак» и «Нецук». Здесь активно сотрудничали выдающиеся представители интеллигенции—писатели Вртанес Папазян, Перч Прошян, ученые—Ашот Иоаннисян, Аракел Аракелян, общественно-политические деятели—Акоп Камари, Александр Цатурян, Акоп Иоаннисян и

другие, местные молодые литераторы—Григор Нерсисян, Левон Вардуни, Акоп Ханларян, Мисак Петросян и многие другие.

В поэтических и прозаических произведениях воспевалась родная страна, страдания трудящегося народа, необходимость вести борьбу за свободу.

Карабах—один из тех краев, где рано начало развиваться издательское дело. В 1828 г. в типографиях М. Тер-Акопяна, Б. Тер-Саакяна, М. Мелконяна и других выходила в свет не только периодика, но книги, брошюры, литературные сборники, представлявшие писателей, ученых, учителей. Следует особо отметить учебное пособие «Грамматика армянского языка» Микаэла Чамчяна (1833 г.).

В 1837 г. в Шуши вышел в свет «Шильонский узник» Дж. Байрона. Это была первая книга великого английского поэта на армянском языке, в переводе знатока армянского языка, литературоведа Мовсеса Зограбяна.

В Карабахе активно действовали типографии, созданные при школах. Среди них заслуживает внимания открытая в 1838 г. в г. Шуши армянская духовная семинария, которая действовала до 1920 г. (более 80 лет). Среди книг, изданных в семинарии, особое место занимает труд известного армянского романиста Перча Прошяна—«Открытие карабахской женской школы Пресвятой богородицы Девы Марии», в котором писатель с теплотой описывает время, когда было положено начало образованию армянских женщин в Шуши. В этом же издательстве вышла в свет работа Карапета Езяна «Внутренняя жизнь древней Армении—исторический экзамен».

Типография епархиальной школы уделяла серьезное внимание созданию учебных книг. Следует упомянуть вышедшую в свет в 1866 г. работу «Краткая история армянского народа», цель которой—помочь армянским детям составить представление о прошлом родного народа. Принцип орфографической реформы редактора «Айкакан ашхар» Хорена Степане, имел целью привести письмо в полное соответствие с разговорной речью. Он уделял большое внимание воспитанию читателя, периодически публиковал материалы о состоянии педагогики, усовершенствовании правил современного армянского языка, его стилистики, роли школы и семьи в воспитании подрастающего поколения.

Журналы, выходящие в свет в Шуши, уделяли особое внимание эстетическому воспитанию читателей. В связи с этим надо отметить журналы «Кнар хоснак»—1881 г., «Циациан» («Радуга»)—1916 г. Например, в «Кнар хоснак» печатались произведения Пушкина, Лермонтова, Гейне, Гете, Шиллера, Байрона.

Перу Никогойоса Тер-Аветисяна—издателя журнала «Кнар хоснак», принадлежат 12 книг, переводы.

В истории досоветской армянской печати значительное место занимает издатель журнала «Горц» Симон Ахумян, который активно сотрудничал в армянской и русской печати, в частности в «Мшаке» («Труженик»), «Ардзаганке» («Эхо»). Он обладал глубокими позна-

ниями, владел несколькими языками, его работы отличает достоверность, обилие фактологического материала, верная интерпретация событий.

Тиграң Назарян был одним из зачинателей и активным организатором газетно-издательского дела в Карабахе. В 1881 г. он основал в Шуше издательскую контору, где вышли в свет шесть книг и брошюр. Озабоченный подготовкой будущих издателей и журналистов, он основал двухгодичные курсы для работников печати.

Константин Мелик—Шахназарян тоже уроженец Карабаха, известен публицистическими и сатирическими произведениями. В карабахских изданиях разных лет часто встречаются статьи, подписанные его литературным псевдонимом «Тмблаци Хачан». Он активно сотрудничал в газете «Нор дар» («Новый век») и в журнале «Ахпюр» («Родник»).

Большой вклад в издательское дело и печать г. Шуши внес выдающийся историк и писатель, публицист Лео (Аракел Бабаханян). Его статьи публиковались в «Мшаке», «Ардзаганке», «Таразе», «Ахпюре» и в других изданиях.

Значительную роль в газетно-издательском деле сыграли женщины—Марнам Алексаян, София Аракелян, Виктория Давтян и другие. Они организовывали многие культурные мероприятия, содействовали изданию отдельных книг, занимались переводами.

Книжка (школа, культурно-просветительные очаги всегда рассматривались в Карабахе (Арцахе) как средство удовлетворения духовных потребностей человека.

Край этот всегда был одним из важнейших очагов армянской культуры, в частности, армянской печати.

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	3
ԳԼՈՒԽ 1	
ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԾԱՆԱԳԱՐՀԻՆ	16
Տպագրության սկզբնավորումն ու առաջին քայլերը Ղարաբաղում	16
Հայոց հոգևոր տեսչության տպարանը	20
Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցը և հրատարակչական գործը	35
Ցարական գրաքննչությունը՝ լուսավոր մտքի թշնամի	40
ԳԼՈՒԽ 2	
ՀԱՍՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏՔԻ ՈՐՈՇ ԱՇԽՈՒԺԱՅՈՒՄ	46
Կոլտուր-լուսավորական ձեռնարկումներ	46
Նոր զբքեր ու պարբերականներ	54
«Քննար խոսնակը»	71
«Գործ» հանդեսը	78
Տիգրան Նազարյանը և ուրիշներ	103
ԳԼՈՒԽ 3	
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԶԱՆԳՎԱԾՆԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ	115
ԳԼՈՒԽ 4	
ՀԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ՊՈՐԹԿՈՒՄՆԵՐ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐ ԽԱՎԵՐՈՒՄ	133
ԳԼՈՒԽ 5	
ՄԱՄՈՒԼԸ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՂԱՐԱՔԱՂՈՒՄ 1910—1914 թթ.	148
«Ղարաբաղ» թերթը (1911—1912)	148
Արվեստի ուժով	176
Ռուսերեն պարբերականները	183
Աշակերտական կազմակերպություններն ու նրանց անլեզալ օրգանները (1912—1917 թթ.)	191
ԳԼՈՒԽ 6	
ՏՊԱԳԻՐ ՕՐԳԱՆՆԵՐԸ 1915—1917 թթ.	196
Գավառական կյանքի արտահայտիչը	196
«Ծիածան»	221
«Նեցուկ»-ի պայքարը նոր կյանքի համար	228

ԳԼՈՒԽ 7	
ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ 1918—1920 թթ.	249
ԳԼՈՒԽ 8	
ԼՐԱԳՐԱՅԻՆ ԺԱՆՐԵՐԸ ԳԱՎԱՌԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐՈՒՄ	258
Ղարաբաղում լույս տեսած պարբերական մամուլի մատենագիտություն (1874—1920)	278
Summari	281
Резюме	284

ՂԱՐԱԲԱՂԻ ՄԱՄՈՒԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
(0261—8281)

Հրատարակության է ներկայացրել
համալսարանի ժուռնալիստիկայի ամբիոնը

Հրատարակչության խմբագիր՝ Գ. Գ. Բրուտյան
Գեղարվեստական խմբագիր՝ Ն. Ա. Թովմազյան
Տեխնիկական խմբագիր՝ Գ. Վ. Նալբանդյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ս. Ա. Ղալթախչյան

ԻԲ 863

Հանձնված է շարվածքի 30. 05. 1989 թ.: Ստորագրված է տպագրության
10. 10. 1989 թ.: ՎՖ 00132: Չափաը 84×108^{1/32}: Թուղթ՝ № 1: Տարա-
տեսակը՝ «Նորք»: Տպագրության եղանակը՝ «Բարձր»: Հրատարակչական
13,0 մամուլ: Տպագրական 9,0 մամուլ = 15,1 տպմանական մամուլի: Տպա-
քանակ՝ 5000: Պատվեր՝ 744: Գինը՝ 2 ո. 10 կ.:

Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, Մուսվան փ. № 1:
Издательство Ереванского университета, Ереван, ул. Мравяна № 1.

Երևանի համալսարանի տպարան, Երևան, Արուսյան փ. № 52
Типография Ереванского университета, Ереван, ул. Абовяна № 52.

Հ Ռ. 10 ԿՐԳ.

"ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՀՐԱՏԱՐԱՎԵՈՒԹՅՈՒՆ"